







*Buchdruckerei von W. Heinrich in Wien.*

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ

Գ Է Ո Ր Գ Ա Յ Գ .


ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ


ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՏՊԱԳՐԵԱԼ ԾԱԽԻԻԲ

ՄԵԹԱՊԱՏԻԻ ՄԿՐՏԻ ՍԱՐԳՍԵԱՆ

Տ . ՄԱՆԱՍԱՐԵԱՆՑ





## Ա Ջ Գ

Գրքոյկիս այլ պարագաների կամ ինչ կերպ գործադրու թեան մասին թող տեսնի բնթերցողը մեր յառաջարանի մէջ Երրորդ Գրքում, ուր գտնում են նաև թուանշանների մեկնութիւնները, ժամանակագրութեան աղիւսակներն և այլ միջանի պատմագրական հատուածներ: Բնագրիս մէջ մակակէտը՝ նշանակում է այն պատմի խօսքի սկիզբը, որի անունը որ նշանակուած է լուսանցքում: Մովորական փակագծի ( ) մէջ են պատմիչների խօսքերը, իսկ մանր փակագծերի՝ մէջ են մեղանից աւելացուցած խօսքերը, որոնք տեղ տեղ կարելի որ էին մտքի պարզութեան կամ ոճի հեշտութեան համար:

---



# ՀԻՒՍՈՒԱԾՔ

ՀԱՅՈՑ ՀԻՆ ՊԱՏՄԱԳՐՆԵՐԻ ԽՕՍՂԵՐԻՑ

Բ՝



# Հ Ի Ի Ս Ո Ւ Ե Ն Ի

ՀԱՅՈՑ ԻՆ ՊԱՏՄԱԳՐՆԵՐԻ ԽՕՍՔԵՐԻՑ

Ա. ՀԱՅՈՑ ՄԱՐԶՊԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԿՈՒԹԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

Վ.Է.ՄԻՀՐՇԱՊՈՒՀ — Վ.Ա.ՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԳՐԱԲԱՐԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ

## Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ԳՐԱԳ ԵՐԿՐՈՐԳ

«Թեպև եւ էմ արտ քոք, եւ չնք  
այլոյ յայն անցով անանկու թողաւս.  
բառնաւմ, սակայն արգաւ զարք տրաւ.  
Թեպև գրանքն քոքն ի անոս՝ այլոս-  
քն եւ արտանքն քոքն յայտարարի : ..


ԽՈՐԵՆՑԻ :



Վ.Է.Ն.Ն.Ա 1877.



85872  
11  
1877



# ԳԼՈՒԽ Ա.

## Արշակունեաց անկումը:

Վ. Բ. Բ. Զայոց վերայ թագաւոր է դնում Երտաշէս Գ. Ին (426 թ.) Երտաշէսն անկարգ է վարում իւր կեանքը: Նախարարները կամենում են բողոքել Վ. Բ. Բ. Զայոց Սահակ Պարթեւն արգելում է: Նախարարները բողոքում են Վ. Բ. Բ. Զայոց կանչում է իւր մտա Երտաշէսին եւ Սահակ Պարթեւին: Սուրեն Պահլաւը յորդորում է Սահակ Պարթեւին՝ միարանելու նախարարների մասնութեանը. բայց նա հրաժարում է: Մեծ հարցափորձի ժամանակ Վ. Բ. Բ. Զայոցը զրկում է Երտաշէսին թագաւորութիւնից եւ Սահակ Պարթեւին էլ կաթուղիստութիւնից. (432 թ.) Վ. Բ. Բ. Զայոցը սարսիկը նշանակուում է մարգպան Զայաստանի վերայ:

Այնքէ որ կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ եւ մտքն ազգաստացան, այնպիսին սղորմելի է քան զբազումս: Լաւ է կոչր աշոր՝ քան կոչր մտաբան  
ԵՂԻՇԷ:

Պարսից Շապուհ թագաւորի որդու Յագկերտի\* մեռնելուց յետոյ՝ թագաւոր եղաւ նորա որդին Վ. Բ. Բ. Զայոցը: Եւ Զայաստանի իշխաններն եկան Վ. Բ. Բ. Զայոցի մտա եւ խնդրեցին իրենց համար մի թագաւոր ցեղով Երշակունի<sup>2</sup>: Նա էլ թագաւոր կարգեց նոցա վերայ Վ. Բ. Բ. Զայոցի որդուն Երտաշէսին՝ Զայոց թագաւորների ցեղից՝ 426 թուին:

Երտաշտի՝ Երտաշէսի՝ թագաւորելուց յետոյ՝ մեր երկիրը փոքրիշատե խաղաղացաւ Պարսից գնդի շիթթմունքներից եւ արքունի հարկերի դիւանները կրկին բացուան, որովհետեւ հինգ տարի հարկ եւ զօրք չէին տալիս Պարսից թագաւորին:

Եւ Երտաշէսը մի դեռահաս եւ իգամոյ մարդ էր ու մեծ անառակութեան մէջ էր անցկացնում

\* Յագկերտ Վ. Բ. Բ. Զայոց:

իւր թագաւորութեան 'օրերը': Եւ Հայոց նախա-  
րարները <sup>3</sup> չկարողանալով Արտաշէսի այդ տեսակ

Խորհի.

զեղի ու մոլեկան վարքին դիմանալ՝ եկան միասին  
սուրբ Սահակ մեծ քահանայապետի մօտ՝ եւ գան-  
գատ արին 'նորա վերայ'՝ հրախրելով նորան իրենց  
օգնելու, որ շարախօսութիւն անեն Պարսից թա-  
գաւորի առաջ եւ 'խնդրեն' հրաժարեցնել իւրեանց

Հագար.

թան: «Էլ չենք կարող, ասում են, համբերել թա-  
գաւորի այս տեսակ պիղծ եւ անօրէն գործերին,  
որովհետեւ աւելի լաւ ենք համարում մեռնել՝  
քան թէ ամենայն օր այս տեսակ կեղտոտ գործեր  
տեսնել ու լսել: Մենք էլ ուրիշ ելք գտնել չենք  
կարող, բայց միայն գանգատել Պարսից թագաւո-  
րին, որ թագաւորութիւնից հրաժարեցնէ նորան:  
Աղաչում ենք, որ դու էլ ընկերանաս մեր այս խոր-  
հըրդին:»

Խորհի.

Իսկ նա 'Սահակ' ասաց. «Ես չեմ ասում, թէ  
դուք սուտ էք խօսում. ես ինքս էլ լսած եմ նորա  
խայտառակ գործերի մասին եւ շատ անգամ էլ  
յանդիմանած եմ. 'բայց նա' տէրը չեղաւ, ուրա-  
ցաւ: Աւրեմն պէտք է մի փոքր դիմանալ այդ մար-  
դու պակասութեանը, մինչև որ Յունաց Թէոդոս  
կայսեր օգնութեամբ գորա ճարը տեսնել կարողա-  
նանք, եւ ոչ թէ անօրէնների ձեռքը մատնենք, որ  
ծաղր ու կատակ լինինք:» Բայց նորա չյօժարացան եւ  
աշխատում էին համաձայնեցնել նորան իրենց հետ:

Հագար.

Իսկ սուրբ կաթողիկոսն երբ լսեց եւ հաստատ  
իմացաւ, որ երկրի բոլոր մեծամեծները նոյն մտքին  
հաստատ են, հրաժարուաւ պատասխան տալ նոցա  
երկար օրեր եւ առանձնացաւ իւր սենեակը. միայն

ողբի եւ հառաչանքի ձայներ էին լսուում՝ այնտեղից՝ որովհետեւ նա Սահակ՝ տեսնում էր, որ միանգամայն կորչելու վրայ է Հայոց աշխարհքը:

Միքանի օր յետոյ եպիսկոպոսներից եւ տուական քահանաներից ու սարկաւապներից միքանիսը, որ նոյն սուրբ հայրապետի հետ մէկ խօսք էին, նաեւ Հայոց ազատ մեծամեծներից ոսանք՝ համարձակութիւն գտան ներս մտնելու, եւ սկսեցին խօսել նորա հետ միսիթարական խօսքեր, այսպէս՝ միմեքոր հանդարտեցաւ սուրբ քահանայապետը:

Նորից ժողովուրան նորա մօտ Հայաստանի բոլոր ազատները եւ միււնոյն բողոքը կրկնեցին Հայոց սուրբ կաթողիկոսի առաջ եւ տօխումսի խնդրում էին, որ նա էլ միարանի նոցա հետ:

Իսկ Սուրբը տեսաւ, որ նորա բնաւ յետ չեն կացած առաջուայ մտադրութիւնից, ըստորում թագաւորի կեղտոտ գործերի աւելանալն օրէցօր աւելացնում էր եւ իշխանների միարանութիւնը՝ նորա անձը կորցնելու համար: Աստի ձայն բարձրացրեց ողբալով ու ասում էր. Ննկարելի բան է, որ իմ մոլորեալ ոչխարս գայլերին մատնեմ եւ չպատեմ նորա կոտրածը եւ կամ հիւանդ տեղը, այլ գահավէժ անեմ: Ըստորում՝ եթէ հաւատացեալ թագաւորի առաջ լինէր, կ'շտապէի կ'երթայի եւ յետ չէի ձգեր, յոյս ունենալով՝ որ գլորեալը կրկանգնի: Բայց հեթանոսներին՝ մատնել՝ եւ յանձնառու չեմ լինիր, որովհետեւ՝ աւազանով դրոշմուած է. թէպէտեւ անառակ է, պոռնիկ է, բայց քրիստոնեայ է. մարմնով ախտի մէջ է, բայց հօգուով անհաւատ չէ. վարքով զեղիւ է, բայց կրակապաշտ չէ. դէպի կանայք տկար է, բայց տարեւբ պաշտօղ

խորհր.

շաղախ. չէ. 'մէկ ցաւով Տիւանդացած է, բայց ամէն ցաւե-  
րով վարակուած չէ, ինչպէս Հեթանոս:) Եւ ի՛նչ-  
պէս փոքր մեղք ունեցողին տանիմ' ամէն մեղքե-  
րով ամբարշտացած մարդու ձեռքը մատնեմ', որ  
մեռցնէ. չէ, որդիք, այդ բանը մտքերէդ հանեցէք,

Խորհէ. ինչպէսոր ձեր նախնիքներից ոմանք 'արին': 'Ի՛նչ-  
պէս կարող եմ ես՝ իմ Տիւանդ ոչխարս փոխել այն  
առողջ գազանի հետ, որի առողջութիւնը մեզի վնաս  
է: Իսկ նախարարները մտածեցին, [Թէ գուցէ խա-  
բելով ուզում է 'Սահակ' յետ ձգել նոցա, որ թա-  
գաւորին պատրաստէ. ասացին ամէնքը "որովհետեւ  
դու չուզեցար մեր կամքը կատարել, որնա՝ 'Արտաշիր'  
չթագաւորէ, ուրեմն մենք էլ չենք ուզենար, որ դու  
մեզի քահանայութիւն՝ կաթուղիկոսութիւն՝ անես:,"

Եւ բոլորը մէկ եղան ու գնացին Պարսից Վաւամ  
թագաւորի մօտ՝ Սուրմակ անունով մի Արծկէացի  
փառամոլ քահանայի հետ մեկտեղ, որ չարախօսու-  
թիւն անեն Արտաշիր եւ Սահակ մեծի վերայ, որպէս  
Թէ սոքա Յոյների կողմն են իրենց սրտերովը:

Թագաւոր. 'Սկսեցին զանազան ասիւղիկեղ խօսքերով զրպար-  
տութիւն անել Սուրբ Սահակի վերայ, որպէս[Թէ  
նա չի կամենում, որ Պարսիկներն իշխեն եւ հարկ  
առնեն ու զօրք պահեն՝ շայտատանում', այլ Յոյ-  
ների իշխելն է ցանկանում. եւ իրենց խօսքերի  
հաւատարմութեան համար առել էին Սուրբ Սա-  
հակի թղթերը՝՝ կայսերն ու հայրապետին՝ գրած'.  
յառաջ էին բերում եւ Մեսրոպի ու Վարդանի  
Յունաստան գնալը, Անատոլի գալն ու Կարին  
գաւառի մէջ քաղաք շինելը:

Շուտով դեսպան ուղարկեց 'Վաւամն' Արտա-

Բով

չէս թագաւորի յետեւից եւ հրամայեց, որ շտապա-  
իւր մօտ գայ. նորան գրեց, որ Սահակ մեծ քահա-  
նայապետն էլ գայ: Երբ նորա Գուռն եկան, Պար-  
սից թագաւորն յառաջ Հայոց թագաւորին հարց-  
րեց առանձին, թէ “Ե. յս ինչ բան է, որ քեզ վե-  
րայ գանդատում են Հայոց նախարարները”: Եւ  
էլ պատասխան տուեց եւ ասաց թէ “Ես ամենեւին  
չգիտեմ, թէ ինչ են խօսում գորա, եւ ինչոր  
խօսում են, զրպարտութիւն է, ինչպէսոր սովոր են  
իրնէ իրենց տէրերին զրպարտելու, ըստորում  
գորա միշտ իշխանախօս եւ տիրատեաց մարդիկ են  
եղել”:

Եւ Առամբ հրաման տուեց մէնակ Սահակին  
կանչել իւր մօտ առանձին, եւ ուզում էր նորանից  
ամէն բան լսել. իսկ նա պատասխան տուեց եւ  
ասաց, թէ “Ես չգիտեմ, նորա ինչ են խօսում.  
Շաւ է թող իրենք ասեն եւ դուք լսեցէք. ինձ  
բան միք հարցնէր, որովհետեւ այդ շարախօսու-  
թեան վերայ ինձանից ոչինչ լսելու չէք՝ լաւ կամ  
վատ”:

Յետոյ կանչեց Առամն իւր հաղարապետ Սու-  
րէն Պահլաւին, որ Սահակի՝ ազգակիցն ու տոհ-  
մակիցն էր՝ եւ պատուիրեց նորան՝ յօժարեցնելու  
Սահակին՝ որ Հայոց նախարարների հետ ընկերանայ  
եւ վկայութիւն տայ նոցա շարախօսութեանը:

Եւ էլ Սուրէն՝ անուշ լեզու թափելով՝ ասում <sup>խօսեց.</sup>  
է Սահակին. “Արովհետեւ դու իմ արենակիցս ու  
ազգականս ես, քեզ ասում եմ՝ օգուտդ իմացիր.  
Թէ որ այժմ ընկերանաս այդ նախարարներին, մեծ  
պատիւ կ'ստանաս Պարսից թագաւորից. քու թո-  
ռիդ՝ Արքանին էլ Հայոց վերայ՝ գլխաւոր՝ կը-

նշանակէ՝ պատուով եւ իշխանութեամբ թագաւորին հաւասար <sup>6</sup> :

Բայց նա 'Մահակ' յանձնառու չեղաւ. "Ինչպէս, ասում է, դատարկ փառքի եւ իշխանութիւն գտնելու համար ընկերիս վերայ զուր բան խօսիմ. կամ թէ ինչու դուք այդպէս ցանկանում էք Արտաշէին գահընկէց անելու. ըստորում ինձ յայտնի չէ, որ նա ապստամբելու միտք ունեցած լինի: Իսկ թէ նորա անառակ վարքի համար է՝ որ նորա գանգատ են անում, դուք նորան պատուի արժան պիտի համարէք՝ ձեր անմաքրասէր օրէնքին համաձայն, թէպէտ մեր օրէնքով նա գատապարտելի է: Այնու առնայնիւ ինձանից ամենեւին բան լսելու չէք:"

Գործար.

Սուրէնն, այս պատասխանը որ լսեց մեծ հայրապետից, գնաց պատմեց թագաւորին. թագաւորն էլ սաստիկ բարկացած, զայրացած՝ հրամայեց այնուհետեւ բազմամբոխ ատենի մէջ հարցնելու Հայոց նախարարներին եւ Արտաշէսին:

Եւ Հայոց իշխանները շատ կեղտոտ բաներ ու զանազան անվայել խօսքեր խօսան իրենց թագաւորի վերայ. ըստորում ո՛չ թէ նորա մէջ եղած բաներն էին ասում, այլ ինչպէս թշնամիք ուրիշ աւելորդ բաներ եւս ասելով՝ մեծ յանցանք բարգեցին նորա վերայ: Եւ Արտաշէին ականջ չդնելով՝ յօժարութեամբ ըսում էր 'Ղուամ' չարախօսաների 'ասածին', մանաւանդ Սուրմակի խօսքերին: Արովհետեւ նախարարները խոստացել էին նորան 'Սուրմակին' եպիսկոպոսապետութեան ամրաւոր, այդ պատճառով նա էլ ինքնասիրութեամբ պատրաստել էր իւր լեզուն 'ինչպէս' մի սուր սատակիչ:

Խորհն.

Արտաշէսն իւր վերայ չառաւ՝ <sup>704000.</sup> և պատասխանեց՝ թէ «Այդպէս չէ», բայց լսողները չհաւատացին՝ մտքերը դրած ունենալով ջնջել մէջտեղից Արշակունեաց ցեղի թագաւորութիւնը. մանաւանդ՝ որ լսեց թագաւորը՝ <sup>Վ. Ա. ամ՝</sup> Արտաշէսի գատասաղներից, թէ «Եւ ի՞նչ պէտք է մեզի թագաւոր՝ ունենալ», թող մի պարսիկ իշխան գայ ժամանակաւոր վերակացութիւն անէ մեր մէջ, և ամէնմէկիս հպատակութիւնն ու անհպատակութիւնն իմանայ և յայտնէ ձեզի:»,

Այս որ լսեց Վ. Ա. ամ՝ Գրան աւագանու հետ միասին, շատ ուրախ եղաւ և շուտով հրաման տուեց խլել թագաւորութիւնն Արտաշէսից. <sup>800000.</sup> և իսկոյն կապել նորան և նորա ցեղի բոլոր ստացուածքը թագաւորական գանձարանն առնել. նմանապէս մեծ Սահակին էլ արգիլել և կաթողիկոսութանը արքունական շինել, <sup>700000.</sup> այն պատճառով, որ նա չընկերացաւ. Հայոց նախարարների հետ միասին վկայութիւն տալու. <sup>800000.</sup> և նորա փոխանակ Հայոց եպիսկոպոսապետութեան աստուր տալ այն Սուրմակին: Եւ մեծ պարգևներով արձակեց նախարարներին՝ մի Պարսիկ մարզպանի՝ հետ միասին, որի անուան էր Վեհմիհրշապուհ \* . սա մարզպանութիւն արաւտաներէք տարի: <sup>Սահ. ֆ. նպիս. ֆ. 700000.</sup> Այնուհետև վերացաւ թագաւորութիւնն Արշակունեաց ցեղի միջից Արտաշէսի թագաւորութեան՝ վեցերորդ տարին՝ 432 թուին. և Հայաստանն ընկաւ Պարսից անօրէն իշխանների ծառայութեան լծի տակ: <sup>8</sup>

\* Ըստ Թովմայի «Մշկան»: ,

## Գ Լ ՈՒ Խ Բ .

Հ ա յ ա ծ ա ն ք :

Յազկերտ Բ. ասպատակում է Հոռոմոց դաւանները եւ հալածում քրիստոնէականերին: Արարգիւզան Աիւնին ընդունում է մոզական կրօն: Յազկերտ Բ. Միհրանեսի եւ մոզական խորհրդով կանչում է քրիստոնէաց զորքերին եւ հաստատում բունակ Հանաց դէմ: Կորա ամբարտաւանութիւնը եւ պարտական միջոցներով քրիստոնէականերին նեղացնելը: Պարեզին նախարարի գիմարձութիւնն եւ պատժուիլը:

« Որոց ոգիքն թուաքցեալ են յերկնս որ առաքիմութենէն՝ յոյժ ընդ ահիս անկեալ է բնութիւն մարմնոց, յամենայն հոգեոյ շարժի, յամենայն բունէ խոսքի, եւ յամենայն իրոց զոգոյ: Երբազգէս է այնպիսին ի կեանս իւրում, եւ յանգիւտ կորուսան՝ յազգարկի ի մահուան իւրում: »

ԵՂԻԸԷ:

ՅՊՅԷ.

Արշակունեաց ցեղն որ զըկուաւ ի չխանութիւնից, Հայաստանին տէր կզան պարսիկ Սասանեանները, որոնք իրենց տէրութիւնը մոզերի կանոններով<sup>1</sup> էին կառավարում եւ շատ անգամ կռիւներ էին անում նոցա հետ՝ որոնք այդ կանոնների տակ չէին մանում: Այս անում էին նորա Արշակ թագաւորի<sup>2</sup> ժամանակից սկսած մինչեւ Արտաշէս թագաւորի վեցերորդ տարին: Երբ սորան էլ թագաւորութիւնից զըկեցին, այն ժամանակ թագաւորութիւնն Հայոց նախարարների ձեռքն անցաւ. որովհետեւ՝ թէպէտ հարկը Պարսից թագաւորին էին զըկում, բայց Հայոց պրուծին<sup>3</sup> ՝ զօրքը՝ ամբողջապէս նախարարների առաջնորդութեան տակն էր լինում պատերազմի ժամանակ: Այս պատճառով էլ աստուածապաշտութիւնը յայտնի եւ անխափան կատարուում էր Հայաստանի մէջ մինչեւ Յազկերտի թագաւորութեան երկրորդ տա-

432.

րին: Այս Յազկերտը հաւատացեալներին համարում էր իրեն թշնամի եւ հակառակորդ. այս պատճառով յարձակեցաւ Յունաց երկրների վերայ. հասաւ մինչեւ Մծրին քաղաքը, շատ շուտոց <sup>4</sup> գաւառներ աւերեց ու կողոպտեց եւ բոլոր եկեղեցիները կրակ-ձգեց, վառեց: Թէոդոս կայսրը, որովհետեւ խաղաղութիւն սիրող մարդ էր, Անատոլ անունով մէկին, որ արեւելքի սպարապետն էր, շատ գանձերով ուղարկեց Յազկերտի մօտ. եւ ինչոր այն ժամանակն ասաց 'Յազկերտ', ամէն բան նորա խօսքովը կատարեց 'Թէոդոս': Եւ 'Յազկերտը' դարձաւ նորից իւր Տիգրան <sup>5</sup> քաղաքը:

Անօրէն իշխանն, երբոր տեսաւ, թէ իւր չարութիւնն յաջողում է, շարժեց շատերին քրիստոնեաների՝ սուրբ ուխտից. միքանիսին սպառնալիքներով, միքանիսին կապելով ու չարչարելով:

Յազկերտը մի հազարապետ ունէր Միհրանես <sup>7</sup> անունով, մի չար եւ վատհոգի մարդ. սա շատ տարիներ յառաջ մտքէն անցրել էր մի վատ խորհուրդ՝ թուլասիրտ հոգիները կորցնելու մասին. եւ գտաւ մի չար օգնական եւ խորհրդատու եւս իւր այս անօրէն մտածութիւնը կատարելու համար. դա էր Միւնեաց Վարազվաղան անունով իշխանը, Վասակի փեսան, որն՝ ինչպէս ասում են իւր կնոջ, այսինքն Միւնեաց իշխանի աղջկայ հետ՝ սիրով չէր ապրում. այս պատճառով աղջկայ հայրն էլ իւր փեսայի վերայ վատ աչքով էր նայում, այնպէսոր մինչեւ անգամ հալածեց դուրս արաւ նորան Հայաստանի միջից. չարհոգի Վարազվաղանն էլ հասկանալով, որ Վասակն ուրախ է նորա հեռանալուն, եւ մանաւանդ չէր էլ կարող նորա բռնու-

Թեանը գիմանալ, փախաւ Պարսից երկիրը եւ եկաւ Մեհրներսէհի մօտ. այն տեղ ինքնակամ ուրանալով այն սուրբ հաւատը, որ քարոզեց սուրբ Գրիգոր, բոլոր տկարամիտ մարդիկների հոգու կորստեանը պատճառ եղաւ անօրէն Մեհրներսէհի հետ միասին:

Խորատ էր տալիս Մեհրներսէհը Ղարազվաղանին եւ ասում. “Նայէ մէկ մտքիդ աչքովն ու տես, ահա մի այնպիսի թագաւորութիւն, որն հզօր է եւ բոլոր թագաւորութիւններից բարձր. դորան համեմատ էլ մեր հաւատքն այսպիսի մեծ թագաւորութեանն արժանի կերպով ընտրուած է, ինչպէս մի սոցոյգ եւ վայելուչ հաւատք. ըստորում” ո՞վ չի տեսնում ամբողջ տիեզերքի մէջ արեգակի փառաւորութիւնը. նորա ճառագայթներից լոյս են առնում ամէն արարածները. նորանով կերակուր են գտնում եւ ուրախանում ամէն բանաւորները. նորանով են լցուում, հասունանում են բոյսերն ու սերմերը եւ մարդուս ապրուստ հասցնում եւ ուրախութիւն: “ Ղարազվաղանն այս անմիտ վարդապետութիւնը լսելով՝ պատասխան տալ չկարողացաւ, որովհետեւ իւր աներոջ նախանձովը կապուել էր լեզուն: Ինքն իրեն միտք արաւ՝ թէ այս իմ արարքս երկու կողմով էլ ինձ օգուտ կըբերէ. կամ Հայերը կը համաձայնին եւ կուրանան իրենց հաւատը, այն ժամանակ ես մեծ պարգեւների եւ պատուի կը հասնիմ Պարսկների կողմից, ինչպէս մէկ հաւատարիմ մարդու այսպիսի մեծ ու կարեւոր օգուտների ճանապարհ ցոյց տուող. կամ եթէ չյօժարանան Հայերն ու դէմ կենան, այսպիսի մի մեծ ոյժի առաջը չկարողանալով գիմանալ, պիտի կորչին միանգա-

մայն, կրկորչի թերեւս եւ իմ թշնամիս 'Վասակը'  
այդ բանի մէջ:

Այս բանը որ լսեց Միհրնեբսէհն՝ ուրախուրախ  
մտաւ թագաւորի մօտ, խօսաւ նորա հետ առանձին  
կերպով ու ասում է. «Տէրերին վայելում է՝ չէթէ  
մէնակ օգուտ քաղել իրենց ծառաներից, այլ եւ  
նորանց հոգիները գտնելու վերայ եւս մտածել:  
Քանի երկիր կայ ահա, որոնց վերայ դուք իշխում  
էք ինչպէս Աստուած, առաջինը Հայաստանն է. նորա  
հետ էլ Վրաստանն ու Աղուանքը. դուք միայն նոցա  
բերած օգուտին էք նայում, բայց՝ որ ամենքից  
կարեւորն եւ մեծն է՝ այնչափ կորած հոգիների  
փրկութեան վերայ բնաւ չէք էլ մտածում: Գուք  
ինքերդ գիտէք եւ բոլոր Արիքն եւս, թէ ինչպէս  
մեծ եւ պիտանի երկիր է Հայաստանը. կայսեր 'Յու-  
նաց' իշխանութեանը մօտիկ եւ սահմանակից է եւ  
միեւնոյն հաւատքն ու աստուածպաշտութիւնն ունի  
ինչոր Յոյները: Թէոր նորանց մեր հաւատքին  
դարձնէք, այնուհետեւ նոքա ձեզ կրսիրեն եւ  
Արեաց երկիրը. երբոր Հոյերը մեզ հետ սերտ  
լինին, Վրացիք ու Աղուաններն էլ մերն են ու  
մերը: — Ես թէ եւ այս բանի վերայ աւելի վաղ էի  
մտածած, բայց առաւել հաստատութիւն գտայ  
այս իմ մտածութեանս մէջ այն Միւնեաց իշխանի  
'Վարազվաղանի' պատճառով, որն հասկացաւ թող-  
նել իւր սխալ հաւատքը եւ ընտրել մեր ճշմարիտ  
ու հաստատուն հաւատքը, որն եւ յօժարութեամբ  
ու սիրով յանձն առաւ 'պաշտելու'. նորա պատ-  
ճառով աւելի հասկացայ այն հոգււոր եւ մար-  
մնաւոր օգուտը, որն այս գործերից հասնելու է ձեր  
թագաւորութեանը: Այլ եւ նա, որ սերտ սիրով

անձնատուր եղաւ, իւր ընկերներէից եւ տոհմակիցներէից աւելի արժան է բարձր փառքերի հասնելու. որպէսզի նորա տոհմը եւ բոլոր Հայոց մեծամեծները տեսնելով այն բարիքն ու շքեղութիւնը, որ դուք տալիս էք նորան, նախանձին եւ իրենք էլ յօժարութեամբ կատարեն ձեր հրամանը: — Եթէ այս ամէնը այսպէս չլինի, կասկածում իմ, որ յետոյ՝ չլինի թէ ինչ ազգի հաւատքին որ հաստատ են, նորան եւ ծառայութիւն անել ցանկանան 'Հայերը':»

Երբոր Յազկերտն այս ամէնը լսեց հազարապետից, հաւանեցաւ նորա դատողութեանը եւ գոչելով՝ յայանեց նոյնը մոզերին եւ մեծամեծներին:

Նոյնը:

Ասում են մոզերը՝ «Քաջ թագաւոր, աստուածները տուել են քեզ տէրութիւն եւ յաղթութիւն եւ նոքա կարօտ չեն բնաւ մարմնաւոր մեծութեան. միայն թէ բոլոր ազգերին, որ քու տէրութեանդ մէջն են, մէկ հաւատի դարձնել կարողանաս, այն ժամանակ Յունաց երկիրն էլ կը հնազանդի եւ կը մտնի քոյ օրէնքիդ տակ: Աւրեմն, զօրք ժողովէ եւ գունդ կազմէ, ել գնա դէպի Քուշանաց աշխարհը. բոլոր ազգերին հաւաքէ ու անցնել տուր Պահ-դանից ներս, եւ գու այն տեղ հաստատէ քոյ բնակութիւնդ. երբոր արգելես բոլորին եւ փակես այն հեռաւոր օտարութեան մէջ, քոյ խորհուրդդ եւ կամքդ կրկատարուի. կըտիրես դու Քուշանների երկրին, Յոյներն էլ քոյ իշխանութեանդ դէմ չեն ելնիր: Միայն թէ քրիստոնեաների ազանդը մէջտեղից վերցուր:»

Այս խորհուրդին հաւանեցան թագաւորն եւ մեծամեծները. հրովարտակներ ուղարկեց իւր տէրութեան բոլոր տեղերն այսպէս:

“Առանց ձեզի նեղութիւն տալու ելանք գնացինք Յունաց երկիրը, եւ առանց կռուի նուաճեցինք բոլոր երկիրը մեզ ծառայելու. դուք ուրախ եղէք. մենք մտքերս դրել ենք մեր ձեռքի տակ քաշելու եւ քուշանների տէրութիւնը. հրովարտակս տեսնելներուդ պէս շուտով այրուծի գումարեցէք եւ ինձանից յառաջ՝ ճանապարհ ելէք՝ ու ներկայացէք ինձ Ապար՝<sup>8</sup> աշխարհքում:”

Այս օրինակով հրովարտակ գնաց Հայաստան, Արաստան,<sup>9</sup> Աղուանք<sup>10</sup> եւ ուրիշ շատ հետու տեղեր: Գունդ կազմուաւ Հայաստանից, Արաստանից, Աղուանքից եւ ուրիշ զանազան երկրներից, որոնք ամէնքն էլ հաւատացեալներ էին: Առանց հասկանալու թագաւորի երկդիմի նպատակը ճանապարհ ընկաւ ամէնն իւր երկրից միամիտ սրտով եւ տիրատէր մտքերով. նաեւ տարան իրենց հետ սուրբ կտակարանները, շատ պաշտօնեաներ եւ աւելի շատ քահանաներ. ժողովրդին էլ հրաման տուին, որ չլինի, թէ նոցա կենդանի վերադառնալուն յոյս ունենան, այլ նոցա մահուան օրերին սպասեն. ըստօրում՝ իրաւ է թագաւորի միտքը նորանց յայտնի չէր, բայց ամէնքն էլ կասկածի գնացին. մանաւանդ երբոր Յոյների զօրութիւնն էլ ընկճուած տեսան: Միտք էին բերում Պողոսի ասածը թէ՛ “Ծառաներ, հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին”, եւ սուրբ Հոգւոյն յանձնեցին իրենց, ու գնացին ներկայացան թագաւորին՝ կատարելով նորա կամքը: Շատ ուրախ եղաւ թագաւորն, երբոր տեսաւ բարբարոսների<sup>11</sup> “Հայերի” գնդի բոլոր կազմութիւնն ու բազմութիւնը, որոնք միամիտ սրտով եկել էին թագաւորին ծառայելու:

Ելաւ գնաց Հոնաց երկրի վերայ եւ երկու տա-  
րու շափ կռուելով՝ բոլորովին չկարողացաւ ազգել  
նոցա վերայ. մարձիկներին արձակեց ամէնին իւր  
տեղը, եւ նոցա փոխանակ ուրիշներին կանչեց իւր  
մօտ նոյն դործի համար: Եւ յսպէս՝ տարեցտարի  
սովորութիւնն արաւ եւ իւր բնակութեան տեղն  
էլ հէնց այն տեղ հաստատեց՝ իւր թագաւորու-  
թեան չորրորդ տարուց սկսած մինչեւ մետասանե-  
րորդ տարին: Երբոր տեսաւ թէ Առումները հաս-  
տատ մնացին իրենց խօսքին եւ խայլնդուրները <sup>12</sup>  
դադարեցան ճորայ պահակից <sup>13</sup> դուրս գալու, եւ  
Հոնաց թագաւորին էլ նեղ տեղը ձգեց, այն ժամա-  
նակ աւեախս զրկեց իւր տէրութեան բոլոր ատրու-  
շանները, <sup>14</sup> սպիտակ ցուլեր եւ գիսաւօր նոխազ-  
ներ մատաղ արաւ առատութեամբ. պսակներով ու  
պատիւներով մեծարեց մոզերից եւ մոզպետներից  
շատերին: Նմանապէս հրաման տուեց, որ յափշ-  
տակեն Պարսկաստանում գանուօղ քրիստոնեաների  
կայքն ու կայանքը: Եւ յսպէս՝ հպարտացաւ նա ինքն  
իր մօքում, եւ իրեն մի մեծ բանի տեղ էր դը-  
նում, շատ էլ բարկանում էր Քրիստոսի անուան  
վերայ, երբ լսում էր, թէ նա տանջուաւ, խա-  
չուաւ, մեռաւ ու թաղուաւ: Հայոց երիտասարդ  
նախարարներից մէկը միանգամ՝ նորա գէմ խօ-  
սաւ եւ ասում է «Քան թագաւոր, ինչտեղից  
գիտես դու այգպիսի բան խօսել մեր տիրոջ վերայ:»  
Թագաւորն ասաց. «հէնց իմ առաջս կարդացել են  
ձեր մօլորութեան գիրքը:» Պատասխան տուեց  
պատանեակն եւ ասում է. «Ինչու միայն մինչեւ  
այգտեղը կարդալ տուիր. միփոքր աւելի կարդալ  
տայիր եւ կրլսէիր նորա յարութիւնն առնելը, շա-

տերին յայտնուիլը, երկինք վերանալը, Հօր աջ կողմը նստիլը, երկրորդ անգամ՝ դալու մասին խոստանալը, արդար գատաստանով համառօտ հատուցմունք տալը:» Թագաւորը թարձրաձայն ծիծաղեցաւ\* ու ասաց. «այդ ամէնը խաբէութիւն է:» Պատասխանեց Քրիստոսի զինուորն եւ ասաց. «Թէոր քու աչքիդ հաւատալի են երեւում՝ նորա մարմնաւոր չարչարանքները, առաւել հաւատալի պէտք է լինի նաեւ նորա երկրորդ ահաւոր դալուստը:» Այն ժամանակ թափեց բոլոր բարկութիւնն այն երանելի մարդու վերայ, որի անունը Վարեգին էր, եւ երկու տարու չափ չարչարել տալով նորան՝ խլեց ձեռքէն տանուախրութիւնը<sup>15</sup> եւ՝ Վարեգինն՝ ընդունեց մահու վճիռ:

\* Եղիշէի սյո հատուածն երկու կերպ է դրչագրների մէջ. Ինչոր հիւլ վեր է վար ծիծաղեցաւ. — Ի իոր ինչիւլ վեր է վերայ ծիծաղեցաւ:

## ԳԼՈՒԽ Գ.

Ա Ո Ս Զ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ն Ա :

Յազկերտը խորամանկութիւններ է անում քրիստոնեաներին դայթակղեցնելու : Յայտնի հրամայում է մեզու թիւն պաշտելու եւ բացարձակ հալածում է հաւատացեալներին : Գենըապուհ պարսիկը դալիս է Հայաստան եւ ծանր փոփոխութիւններ է ձգում : Յազկերտը նամակ է գրում քրիստոնեայ հպատակներին եւ պահանջում է ուրացու թիւն :

« Այլ էթէ ընդ մարդոց է ուխտ հուսու-  
տաց մերոց, էթէ պատրիցիմք երբեւ գողոցո-  
ւոյլ ընդ Աստուծոց : » ԵՂԻՇԷ :

Փոքիւն :

Վրիստոնեաները, որ բանակումն էին, սկսեցին բարձր ձայնով հոգեւոր երգեր երգել եւ բոլոր բանակի առաջն յայտնի կատարել ժամասացութիւնը : Անօրէն իշխանն՝ Յազկերտ՝, որ իմացաւ թէ իւր խորամանկ խորհուրդները յայտնի եղան, սկըսեց յառաջ քաշել փոքրերին մեծերի միջից, աննշաններին երեւելիների միջից, օգէտներին գիտունների միջից եւ թող վախկոտ մարդոցը՝ քաջերի միջից : Արին ոսկեով ու արծաթով էր խաբում, որին առատ պարգևներով . մի քանիսին էլ մեծամեծ պատիւներ ու իշխանութիւններ տալով . մինչեւ անգամ հայրուորդուն էլ բաժանում էր իրարուց : Կեղծաւորութեամբ խոնարհում էր բոլորի առաջ, երեսանց սէր ցոյց տալով, որպէսզի կարողանայ խորամանկութեամբ որսալ նոցա՝ ինչպէսօր իւր խորհրդականները խրատ էին տուել յառաջուց :

441-448

Այս անում էր իւր թագաւորութեան չորրորդ տարուց սկսած մինչեւ մետասաներորդ տարին : Երբոր տեսաւ, թէ իւր ծածուկ հնարագիտութիւնը բանի տեղ չանցաւ, ակամայ յայտնեց իւր խոր-

Հուրդը եւ ասում է, «Ի՞նչ աղգ, ինչ լեզու որ իմ իշխանութեանս տակ կայ, ամէնքն էլ պիտի թողնեն իրենց սխալ հաւատը եւ միմիայն արեգակին պիտի երկրպագութիւն անեն — կրակ պաշտելով եւ մոգութեան օրէնքները կատարելով:»

Իւր թագաւորութեան երկոտասաներորդ տարին անհամար բազմութեամբ յարձակեցաւ Քաշանաց երկրի վերայ, շատ բերդեր ու քաղաքներ առաւ եւ շատ գերի ու աւար ժողովեց:

Այնուհետեւ իւր սխալ կարծիքը նորից հաստատեց մտքումն եւ ասում է. «Ի՞նչ կարող ենք հատուցանել աստուածներին մեր այս մեծ յաղթութեան փոխարէն»: Մոգերն ու քաւգէններն ասում են նորան. «Աստուածները տէրութիւն տուին քեզի եւ յաղթութիւն քու թշնամիներիդ վերայ. նոքա քեզանից ոչ մի բան խնդրելու կարօտութիւն չունին, միայն թէ վերցնես մէջտեղից մարդուս բոլոր սխալ ուսմունքները եւ բոլորին էլ միեւնոյն զրադաշտական հաւատն ընդունել տաս»: Խորհուրդ արին եւ այդ խրատը յաղթեց: Պահ-գրան ներսի կողմիցն արգելեց շայոց, Աքաց եւ Աղուանից այրուծին, սաստիկ հրաման արաւ դռնապաններին, որ «եթէ գէպի արեւելք գալօղ լինի, ներս թողնին, իսկ արեւելքից արեւմուտք գնացողների համար անանց լինի ճանապարհը:»

Այն ժամանակ սկսեց ստիպել մեծ չարչարանքներով ու տանջանքներով, որ ուրանան ճշմարիտ Աստուածը: Զօրականներն առհասարակ միաբերան աղաղակում էին ու ասում. «Երկինք երկիր վկայ են, որ մենք երբէք թոյլ չենք եղել արքունի ծառայութեան մէջ. զ՛ուր անողորմ են այդ հարուած-

ները, որ մեզ տալիս էք:» Թագաւորն էլ երգումով հաստատում էր ու ասում. « Աշմէկիդ էլ բաց թողնելու չեմ, մինչեւ որ իմ կամքս չկատարէք:»

Ցասներկու օրից յետոյ հրաման տուեց, որ առաա ընթրիք պատրաստեն, եւ քրիստոնեայ զինուորականներից շատին էլ հրաւիրեց. սիրով խոնարհութեամբ խօսում էր նոցա հետ, որ գուցէ հաւանին զոհած միս ուտելու. բայց՝ երբ նոքա յանձնառու չեղան, բնաւ չտոխեց, այլ հրամայեց, որ սովորական կերակուրը տան նոցա: Եւ երբոր այնանդից դուրս եկան արքունի սրահը, միքանիսին բռնեցին ձեռքերն յետեւները կապեցին եւ զգուշութեամբ պահեցին՝ ոմանց երկու օր եւ ոմանց երեք: Գունդգունդ ուղարկում էին նոցա հետու երկիրներ՝ թագաւորի թշնամիների դէմը կռուելու համար. եւ բոլորի թոշակը նշանակածից պակաս էին տալիս. անօթի ծարաւ պահում նեղացնում էին նոցա. եւ վատ տեղերն էին նշանակում նոցա համար ձմերանոց: Ինչքանոր շարութիւնն աւելացնումէր նոցա անարգութիւնը, նոքա՝ քրիստոնեայ զինուորները՝ եւս առաւել զօրանում էին քրիստոսի սիրով: Միայն թէ նոցա արտաքին տեսքը շատ ողորմելի էր օտարութեան մէջ. այնպիսի պատուական զինուորները հասել էին անշուք եւ անպատիւ վիճակի. եւ մեր հօյրենեաց ազատների՝ դասը մի սարսափելի ծառայութեան մէջն էր գազան բռնաւորի ձեռին:

Յազկերտն Հայաստան ուղարկեց Գենշապուհին, որ աշխարհագիր անէ բոլոր երկրի մէջ՝ որպէս թէ հարկերից ազատելու եւ այրուծին թեթեւացնելու մտքով: Բայց Գենշապուհը՝ նախ՝

եկեղեցու ազատութիւնը խլեց՝ այսինքն եկեղեցու վերայ էլ հարկդրեց՝ երկրորդ՝ վանքերում բնակող միայնակեաց քրիստոնեաներին էլ նոյն աշխարհագրի մէջ մոցրեց. երրորդ՝ ժողովրդի վերայ աւելի ծանր հարկեր դրեց. չորրորդ՝ բանսարկութեամբ նախարարներին իրար դէմ հանեց. եւ այս ամէնն արաւ՝ այն մոքով՝ որ գուցէ՝ միարանութիւնը քանդէ, եկեղեցական ուխտը ցիրուցան անէ եւ գիւղականներին էլ խեղճութեան մէջ ձգէ, որպէսզի սաստիկ աղքատութիւնից ստիպուած ակամայ գիմեն մոգութեան օրէնքն ընդունելու. հինգերորդ՝ չայոց՝ հաղարապետի <sup>2</sup> դէմ՝ դրգիոններ հանեց եւ գանդատներ անել տուեց ու գործից հրաժարեցրեց, նորա տեղը մի պարսկի բերեց շայաստան եւ մի մոգպետի էլ գատաւոր նշանակեց շայերի համար:

Ըյս ամէն գործերը որ կատարուան՝ շատ սարսափելի բաներ էին: Ըստորում էլ օվ կարող է խօսել հարկերի ծանրութեան վերայ. կամ թէ լեռների, դաշտերի եւ անտառների <sup>3</sup> համար որոշած բաժերի ու հասերի վերայ: Պարսիկներն իրենք անգամ զարմանում էին, թէ ինչտեղիցոր այս բոլոր գանձը գուրս է գալիս՝ ինչպէս կարող է այն երկիրը շէն մնալ տակաւին:

Երբ որ տեսան Պարսիկները՝ թէ այս բոլոր ծանրութիւններով չկարողացան ձանձրացնել՝ մեղ՝, այնուհետեւ յայտնի հրաման տուին մոգերին եւ մոգպետներին այսպիսի մի նամակ գրելու՝ թագաւորի բերանից:

«Միտք բերինք թէ՛ ինչպէսոր մեր իշխանութեան տակ գանուող ամէնմէկ մարդուց օգուտ եւ <sup>2</sup>»

Հպատակութիւն ենք վայելում, այնպէս էլ պարտաւոր ենք նոցա բոլորի հոգու փրկութեան վերայ հոգս քաշելու. եւ թէոր այդպիսի մի մեծ հոգացողութեան մէջ ծոյլ գտնուինք, տեղեկացանք մեր օրէնքներից, որ ծանր պատուհաս կ'ստանանք աստուածներից: Արեմն թէոր մենք պատիժ պիտի ստանանք այն պատճառով, որ ձեր միտքը շնք ձգում այդ բանը, դուք եւս առաւել պիտի վախենաք, թէոր թոյլ գտնուիք ամենմէկիդ հոգու օգուտը ձանաչելու, ըստորում այն ժամանակ դուք պատժուելու էք մեղանից եւ աստուածներից: Այս պատճառով մեր ճշմարիտ եւ արդար հաւատքի վարդապետութիւնը ահա գրել տուի եւ ուղարկեցի ձեզ. եւ կամենում ենք, որ ինչպէս դուք օգտակար էք մեր տէրութեանը եւ սիրելի, այնպէս եւ մեր ճշմարիտ ու նշանաւոր հաւատքն ուսանիք ու ընդունէք եւ չպաշտէք մի այնպիսի հաւատք, որն ամէնքիս էլ յայտնի է թէ՛ սուտ է եւ անօգուտ: Այլ եւ հրամայում ենք, որ ձեր կարծեցեալ հաւատի վարդապետութիւնն էլ գրէք՝ եւ զրկէք՝ մեզ:»

Վհա եւ մոգական կրօնի վարդապետութիւնն ըստ  
Եղիշէի՝

Եղիշէ:

«Արմիզդն ստեղծեց երկինքն ու երկիրը. Արհմեր նորան հակառակ գործեց. ամենայն լաւ բան, որ երկնքի եւ երկրի մէջ լինում է, Արմիզդի գործն է. եւ ամենայն վատ բան, որ երկնքի եւ երկրի մէջ լինում է, Արհմնի գործն է. յաջողութիւնը, տէրութիւնը, փառքը, պատիւը, մարմնու առողջութիւնը, գէմքի գեղեցկութիւնը, լեզուի ճարտարութիւնը, մարդուս երկարակեցուցութիւնը՝ այս ամէնը

Որմէ՞ղի գործն է. եւ ամէն բան, որ այդպէս չէ, նորա  
մէջ չարի մատը խառն է: Մարդիկ սխալուում են,  
որ ասում են, թէ մահն Աստուած ստեղծեց եւ  
չարն ու բարին նորանից են լինում. մանաւանդ՝ ինչ-  
պէս քրիստոնեաներն են ասում, թէ Աստուած  
նախանձոտ է՝ մէկ թզի համար մահ ստեղծեց. նո-  
քա ասում են, թէ այն՝ որ երկինքն ու երկիրն  
ստեղծեց, կնոջից է ծնել: Թէոր Բոյները սգիտու-  
թեամբ մոլորուած են եւ զրկուած են մեր կատա-  
րեալ հաւատքի շնորհից, իրենց վերայ է մեղքը-  
գուք ինչո՞ւ. նոցա մոլորութեան յետեւից էք գնում.  
Ինչ հաւատք որ ձեր տէրն՝ թագաւորն՝ ունի, նոյնն  
էլ գուք ընդունեցէք, ըստորում Աստուծոյ առաջ  
'մենք' պէտք է համար տանք ձեր մասին: Միք  
հաւատար ձեր առաջնորդներին. նոքա ինչոր լե-  
զուով սովորեցնում են, գործով կատարել կամ  
յանձն առնել չեն կարող. վատը լաւից վեր են  
դասում. մեռնելը գովում են եւ ապրելը պարսաւում.  
Եւ որ ամէնից վատն է, քարոզում են, թէ Աստուած  
խաչուել է մարդիկների ձեռքով, մեռել է, թա-  
ղուել է եւ ապա յարութիւն առել ու համբարձել  
երկինք: Ուրեմն երկու բան կայ ձեր առաջը. կամ  
խօսք խօսք պատասխան տուէք նամակիս, կամ թէ  
ո՛չ՝ վե՛ր կացէք, եկէ՛ք Ղուռը եւ ներկայացէ՛ք մեծ  
հրապարակին:»<sup>5</sup>

Նամակի հետ միասին հրամայեց Բաղկերտ առ-  
բուշաններ եւ փուշտիպաններ<sup>6</sup> եւ քրմեր ուղար-  
կել մեծամեծների ձեռքով. նոքա եկան Հայաստան  
եւ տուին նամակը մեծ նախարարներին:

Մտեցի-  
կարգի-

# ԳԼՈՒԽ Դ.

Պ ա տ ա ս յ ա ն :

Հայոց Յովսէփ կաթողիկոսն Արտաշատի ազգային ժողովով պատասխանում է Նամակին: Նամակի բովանդակութիւնն ըստ Եղիշէի եւ Ղազարու:

«Այլ է եկեղեցի շինուած մարդոյ, ոչ պարզիւք թագաւորաց եւ ոչ արուեստ ճարտարութեանց. հիմունք նորա ոչ ներքինը շարժել կարեն՝ եւ ոչ վերինը զբողոքեացունել, եւ զոր երկինք եւ երկիր ոչ զսպարոյցանէ մի՛ որ ի մարդկանէ իրսխտառոյն յողթել նմաւս: ԵՂ.Շ.Ե.՝

Ղազար.

Եղիշէ.

Մտնք. հայրանք.

Ղազար.

Արքայ Հայոց մեծամեծներն պսսպիսի մի հրովարտակ ստացան, այնու հետեւ Հայոց տանուտէրների հրամանով հաւաքուան՝ Արտաշատ՝ քաղաքում իւրաքանչիւր գաւառի սուրբ եպիսկոպոսներն եւ պատուական քահանաներն ու վանականները. 'եկաւ' եւ Յովսէփը, որ թէեւ ձեռնադրութեամբ քահանայ էր, բայց Հայոց կաթողիկոսի պաշտօն էր կատարում այն ժամանակ, եւ միասին խորհուրդ արին ու գրեցին թագաւորին մի շատ բիրտ եւ պինտ պատասխան իրենց կրօնի մասին՝ այս օրինակով:

«Մեր լուսաւոր եւ ճշմարիտ օրէնքի մէջ գրուած է, թէ «Ծառաներ հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին՝ ինչպէս Աստուծոն.» մենք էլ՝ թէ մեր օրէնքի այդ հրամանից երկիւղ կրելով եւ թէ ձեր մեծ թագաւորութիւնից, մտքերս գրել ենք՝ չէ՛ թէ երկիւղից ստիպուած, այլ կամաւ եւ յօժարութեամբ կատարել ձեր կամքը եւ ծառայել ձեզ ոչմիայն մեր ունեցած չունեցածը ծախսելով, այլ եւ մեր եւ մեր որդւոց արիւնը ձեզի համար թափելով:

Բայց ինչոր մեր հոգիներին կրվերարբերի,

այդ կողմից դուք ոչմի նեղութիւն միք քաշեր. եւ այն պարզեւի կամ պատուհասի մասին, որ ահ էք քաշում աստուածներից, այն թող մեր գլխին լինի, թէ օգուտը եւ թէ Աստու պատիժը: Արովհետեւ անկարելի է մեզ, որ սկզբից այս հաւատն ուսել եւ պահպանել ենք, այդ հրամանին միտք դարձնել եւ հաւանիլ. մենք լոկ խօսքերով լսել անգամ չենք կարող, որովհետեւ չենք էլ ուզում:

Ինչոր ձեր հաւատքին կրվերարբերի, որ գրել տուել եւ զրկել էիր մեզ, մենք ձեզ երբէք ահանջ գնելու չենք, թող թէ գրածներդ կարդալու կամ լսելու յօժարութիւն էլ ունենանք. բայց ձեր թագաւորութիւնն աւելի պատուելու համար գրածներդ բանալ եւ տեսնել անգամ չուղեցինք, որովհետեւ այն հաւատքը, որ գիտենք թէ սուտ է եւ անմիտք, նորա մասին ոչ կարդալ է պէտք եւ ոչ լսել, ըստորում կարդալուց կ'ստիպուինք ծաղր անել, որով հաւատքն էլ, նորա առաջնորդն էլ եւ նոքա, որոնք այդպիսի խարէութիւններ են պաշտում, բոլորը մեկտեղ պիտի թշնամանուին:

Այս պատճառով մենք էլ անպատշաճ համարեցինք մեր հաւատի ուսմունքը ձեզ գրելու եւ զրկելու, ինչպէսոր ձեր հրամանն էր. ըստորում թէոր ձեր սուտ եւ ծաղրելի ուսմունքը արժան չհամարեցինք կարդալու, որ ձեզ չթշնամանենք, ինչպէս կարող էինք այսպիսի աստուածասէր եւ ճշմարիտ ուսմունքը ձեր անգիտութեանը գրելու, որ նորա վերայ ծաղր անէք եւ թշնամանէք:

Այս մէկը միայն թող լաւ յայտնի լինի ձեզ մեր հաւատից, որ մենք տարերքին չենք ծառայում. ձեզ նման արեգակ, լուսին, հողմեր ու կրակ չենք

պաշտում. որովհետև մենք մի միայն ճշմարիտ  
Աստուած ենք ճանաչում, որն Երկիրքն, Երկիրն ու  
բոլոր նորա միջի բաներն ստեղծեց. և նա է բոլոր  
ձեր ասած աստուածների Աստուածն ու ստեղծողը:

Եզեհ.

Մենք այսպէս ենք ճանաչում Աստուածն և  
այսպէս էլ հաւատում ենք առանց Երկրայու-  
թեան: Ոչոր չէ կարող մեր այս հաւատքը տեղից  
չարժել. ոչ մարդիկ, ոչ սուրբ և ոչ հուրը: Մեր  
բոլոր հարստութիւնն ու կարողութիւնը քու ձեռք  
է, և մարմիններս էլ քու առաջդ. արա քու կամ-  
քովդ ինչոր ուզում ես: Թէոր այսպիսի մի պա-  
տասխանի (վրայ) դարձեալ մեզ բան հարցնելու  
լինիս, ահա պատրաստ կանգնած ենք, և մարմին-  
ներս էլ քու ձեռք ենք տալիս. շուտով կատարե՛  
ինչոր կամքդ է՝. քեզնից չարչարանք, մեզնից համ-  
բերութիւն, քու սուրբ, մեր պարանոցները. մի՛թէ  
մենք աւելի լա՞ւ ենք մեր նախնիներից, որոնք միւ-  
նոյն հաւատի համար տուին իրենց հարստութիւնն  
ու կարողութիւնը և մինչև անգամ իրենց գլուխ-  
ները. մենք էլ կրմե՞նինք ինչպէս մահկանացու  
մարդիկ, որ մեր մահն ընդունուի ինչպէս անմա-  
հութիւն:»

Սահֆ.  
Էզեհէ.

Եւ դեռ պանները դարձան ու տուին պատաս-  
խանը թագաւորին:

## ԳԼՈՒԽ Ե.

Նախարարների գնալը:

Յազկերտն եւ իւր պաշտօնեաներն Հայերի պատասխանից անբաւական են թուում: Հայոց եւ այլ բրիտանեաների գլխաւոր նախարարները կոչուում են դուռը: Նորա բերանացի եւս մեթում են Յազկերտի առաջարկութիւնը. բայց նորա սպառնալիքներից ստիպուած խնդրում են մտածելու ժամանակ:

« Ձու գութինն է մայր բարեաց. անգութութինն ծնող չարեաց: » ԵՂԵԷ:

Յազկերտն հրամայեց կանչել մոգերին եւ զազարբոյր մեծամեծներին, բանալ տուեց Հայերի զոկած նամակն ու կարգալ բոլորի յառաջ:

Հատերը, որ լսեցին, գովեցին պատասխանը. Եզդէ. ոչ այնքան նորա ճարտար լեզուով գրուած լինելուն էին զարմանում, որքան Հայերի համարձակութեանն եւ աներկիւղութեանը:

Երբոր նամակի խօսքերին ականջ գրեց պրծալ թագաւորը, այն ժամանակ հարցրեց մոգերին եւ բոլոր Արեաց մեծամեծներին, թէ ձեզ ինչպէս է երևուում, ծառաները կարո՞ղ են այդպիսի համարձակութեամբ նամակ գրել իրենց տիրոջը: Մոգերն եւ բոլոր մեծամեծները ոտքի կայնան, ասացին, թէ «նոցա կորչելու ժամանակն հասել է արդէն. բայց թէ դուք ինչպէս պէտք է ճանաչեցնէք նոցա, որ դուք նոցա տէրն էք եւ նոքա ձեր ծառաները, այն ձեր գիտնալու բանն է: Թէոր նոքա մէկ ուրիշ տեղից օգնութեան յոյս չունենային, այդպէս բան իրենց մտքերիցն անցնել անգամ չէին համարձակիր, ուրթէ նամակով գրէին ձեր թագաւորութեանը:»

Իսկ մոգպետը մեծ հազարապետի հետ միասին Եզդէ.

ձայն արձակեց եւ ասում է. «Ոչոքի ազատ թողնելու չեմ մեծմեծ պատիժներից, մինչեւ որ իրենք ահամայ յետ կայնին այնպիսի սխալ ուսմունքներից. թէ որ շատ մօտիկ բարեկամներիցս մէկն էլ պատահի, նորա զլխին էլ նոյն բանը կը բերեմ:»

(Գագ.)

Թագաւորը ներս կանչեց զպրապետին եւ հրամայեց հրովարտակ գրել՝ երեք երկիրներն էլ՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից՝ եւ ոչ թէ առաջուայ սովորութեամբ, այլ ինչպէս թշամիներին՝ հրաման տալով, որ կանչեն անունանուն այս մարդիկներին՝ Սիւնեաց Վասակին, Արժրունեաց Ներշապուհին, Ռշտունեաց Արտակին, Խորխոռունեաց Գագէշոյին, Մամիկոնեանց Վարդանին, Մոկաց Արտակին, Ապահունեաց Մանէճին, Ամատունեաց Վահանին, Ահաշեունեաց Գիտին եւ Անձեւացեաց Հմառնին: Այս 10 նախարարներին կանչեցին թագաւորի Գուռը:

Հագար .

Երբոր երեք երկիրներն էլ հասաւ այս հրովարտակը եւ իմացան, որ բոլորին այդպէս շտապով կանչում են, իսկոյն հասկացան զորա պատճառը: Այնուհետեւ երեք երկիրներն էլ (Հայոց, Վրաց եւ Աղուանից) իրարու պատգամաւորներ զրկեցին. ու խօսք կապեցին եւ շատ երգումներ ուտելով Աւետարանի վրայ՝ հաստատեցին (իրենց խոստումը): Մտածում էին, որ եթէ չերթան, ապստամբութիւն կրկարծուի, իսկ եթէ գնան . . . մոլորանքն իրենց առել էր. երթալն աւելի լաւ համարեցին եւ Աստուծոն իրենց օգնական կանչեցին գործի վախճանի մասին: Բայց իրենց նպատակները, խօսքերը եւ խորհուրդները սուրբ աւետարանի միջնորդութեամբ հաստատ առանց երկմտութեան որո-

չեցին եւ 'Յովսէփ 'կաթուղիկոսի' ձեռքով նոյն <sup>Ծղծէ.</sup> խոստումի մէջ հաստատուան ու ճանապարհ ընկան: Շատ շտապում էին այն եղբայրների, որդիների եւ սիրելի դայեկասնունդ աղբակիցների համար, որոնք սաստիկ մեծ նեղութեան մէջ էին 'Պարսից բանակում': Երբոր հասան թագաւորի Գուռը, զատկի շարած օրը ներկայացան թագաւորին. թէ եւ տեսնում էին, թէ ինչպէս մեծ ցաւերի <sup>2</sup> մէջն են իրենց եղբայրները, բայց երեսով բնաւ ցոյց չտուին հրապարակին իրենց տրտում կամ տխուր լինելը:

Առաջուայ ժամանակները սովորութիւն էր, երբոր Հայերի կողմից պրուծի էր դալիս Գուռը, մի պատուաւոր զօրապետի հետ մարդիկ էր զրկում 'թագաւորը' նոցա դիմաւորելու, եւ հարցնել էր տալիս Հայաստանի դրութեան եւ խաղաղութեան մասին. ինքը թագաւորն անձամբ տեսնում էր գնդի հանդէսը, նոցա գալը մեծ շնորհակալութեան արժանի էր համարում եւ յիշում էր նոցա նախնեաց ծանօթութիւնները: Այն օրը՝ ոչ մի սյսպիսի բան չիշեց.՝ այլ հրաման տուեց, որ 'վաղը' բոլոր մե- <sup>Չագար.</sup> ծամեծներն երեւելի մոգերի հետ միասին՝ գան նորա վրանը. եւ թագաւորի ասածը կատարուաւ միւս օրը: Ապա հրամայեց, որ Հայաստանից, Արաստանից ու Աղուանքից եկած 'նախարարներին' ներկայացնեն Ատեանը: Ամէնից յառաջ Հայոց տանուտէրներին եւ իշխաններին հարցրեց թէ "ինչ էք կարծում, ես ինչ եմ, ասացէք ինձ:" Նորա էլ պատասխան տուին եւ ասում են. "մերք ձեզ թագաւոր ենք ճանաչում, ինչպէս ամէնքի վերայ, եւս առաւել մեզ վերայ. իշխանութիւն ունիս,

ինչպէս Աստուած, մեր վերայ եւ բոլոր թագաւորութեանդ մէջ եղօղ մարդիկնների վերայ. կարող ես մեզ սպաննել եւ ապրեցնել. մեր կեանքն էլ մահն էլ քու ձեռք են: «Յազկերտն այսպիսի պատասխան որ լսեց նոցանից, ասում է նոցա. «ձեր այդ պատասխանը շատ հեռու է այն նամակի մտքից, որն ուղարկել էիք ինձ եւ ամենեւին նման չէ. որովհետեւ այն նամակում յայտնել էիք թէ «կայ բան՝ որի համար քեզ ծառայել եւ քու կամքիդ ու հրամաններիդ հնազանդել կարող ենք. բան էլ կայ՝ որ ոչ դու պէտք է ասես եւ ոչ էլ մենք պէտք է լսենք եւ կատարենք: Արդ՝ ես կամենում եմ պատուով ու մեծմեծ փառքերով թողնել ձեզ ձեր աշխարհքը՝ գնալու՝, միայն՝ թէ որ այն իմ կամքս էլ կատարելու լինիք, որ ձեր հոգու փրկութեան համար մտածել եմ, եւ յետ կենաք ձեր կորստեան ճանապարհից: Իսկ թէ որ մտքերիցդ ուրիշ բան անցնելու լինիք, էլ նայելու չեմ ձեր ցոյց տուած այնչափ ծառայութեանն եւ օգտին, այլ կնոջով, զաւակներով եւ ազգութակով կրկորցնեմ՝ աշխարհիս միջից: Երգուել եմ մեծ աստուած արեգակի անունով, որ եթէ վաղն առաւօտը՝ նորա դուրս գալու ժամանակ՝ ամէնմէկդ ինձ հետ միասին նորան երկրրպագութիւն չտաք եւ աստուած չանուանէք, ոչ որքիդ էլ ազատ թողնելու չեմ ամէն տեսակ նեղութիւններից, մինչև որ ակամայ կատարէք իմ կամքս:»

ՅԵՍԱԻ.

ՉԳՊԱՆ.

Իսկ հաւատացեալները զուարթ երեսով եւ համեստ լեզուով պատասխան տուին թագաւորին եւ ասում են. «Քանչ թագաւոր. միտդ ենք ձգում Շապուհի ժամանակները. <sup>3</sup> Աստուած որ նորան ժառանգել տուեց շայոց երկիրը, էլի այս հաւատն

էր, որն այժմ մենք ունինք. մեր հայրերն ու մեր պապերը սիրով կատարում էին նորա բոլոր հրամանները և նորանից մեծ մեծ պարգևներ էին ընդունում: Կենք էլ նոյն կերպ ծառայում ենք՝ քեզ աւելի լաւ քանձէ քու նախորդներին: Այժմ աւելի շատ հարկ է վճարում մեր երկիրը՝ քանձէ քու հօրդ ժամանակ. սուրբ և կեղեցին անգամ, որ սկիզբից ազատ էր մեր նախնեաց կանոններով, դու այժմ հարկի տակ դրիր. մենք քու տէրութեանդ սիրուն՝ ամենևին չընդդիմացանք քեզի: Աւրեմն ասա՛ մեզ, մի՞ձէ մեր հաւատը կարող է պատճառ լինել, որ դու մեզ անօգուտ համարես քու առաջդ:»

Իսկ դեւն՝ Յազկերտ՝ ասում է. «Վնաս եմ համարում ձեր հարկը իմ թագաւորական գանձիս մէջ ընդունելու և անօգուտ ձեր քաջութիւնը: Արովհետեւ տգիտարար մոլորած էք մեր ճշմարիտ հաւատից. գուցէ աստուածները բարկանալով՝ ձեզ համար մեզանից առնեն վրէժը: Թէ որ ուզում էք կեանք ունենալ և պատուով յետ դառնալ, ինչոր ասացի՝ վաղն առաւօտեան կատարեցէք անպատճառ:»

Երբ լսեցին բոլոր երեք երկրի իշխաններն այս <sup>դուրս</sup> խօսքերը, մի փոքր լուռ մնացին ուրիշները. բայց առաջ անցաւ աներկիւզ և քաջ սրտով Մամիկոնէից Տէր և Լայոց սպարապետ Աւարգանը, պատասխան տուեց Յազկերտին բոլոր բազմութեան առաջ և ասում է. «Այս երեք երկրի իշխանների մէջ շատերը կան՝ որ գահով՝ և տարիքով ինձանից վեր են, շատերն էլ ինձանից ստոր են. այն օգուտն և հպատակութիւնը որ պէտք է ծառաներն իրենց տէրերին ու թագաւորին ցոյց տան,

դու՝ որ ամէնքիս տէրն ես, եւ բոլոր Արիքը, շատ լաւ գիտէք, եւ ինձ կամ սոցանից մէկնումէկին հարկաւոր չէ բնաւ իւր բերած օգուտը կամ արած ծառայութիւնը ձեզի հասկացնել: Աս պոսպէս եմ մտածում, որ պսուհետեւ, ինչպէս եւ յառաջ, եթէ հնար լինի՝ մէկ անձս շատ անձինք շինեմ եւ իմ կեանքս ու կարողութիւնս, ինչոր տանս մէջն ունիմ, ձեզի տամ եւ Արեաց թագաւորի ու Արեաց աշխարհքի համար մաշեմ: Բայց այն հաւատքը որ ես մանկութիւնիցս ուսել եմ, թողնել եւ մարդուց ահ քաշելու պատճառով՝ մի ուրիշ հաւատքի հետ՝ փոխել անկարելի է. քաւ լիցի: Իմ պատասխանս այս է, որի վերայ եւ ցանկանում եմ մեռնիլ, քանթէ ուրացութեամբ ապրիլ առանց Աստուծոյ: Իսկ միւսները, որոնք պատեղ ահա՛ ձեր առաջն են ամէնքն էլ, իւրաքանչիւրն իւր անձի համար պատասխան տալ կարող է:»

ՉԿՆԻ:

Եւ երանելի նախարարներն ասում են բոլորի առաջ. «Չէ, թագաւոր, դու մի ասեր մեզ այդ բանը. եկեղեցին մարդուս շինածը չէ, ո՛չ էլ արեգակի տուածը. ո՛չ թագաւորներն են պարգևել մեզ եւ ո՛չ ճարտարները կազմել, ո՛չ իմաստունների գտած հնարած բանն է նա եւ ո՛չ զինուորների իախցրածը: Նորա հիմքը ո՛չ մարդիկ կարող են շարժել եւ ո՛չ հրեշտակները դրդուեցնել: Եւ ինչոր երկինքն ու երկիրը դողացնել չեն կարող, թող մարդիկներից ո՛չ մէկը չհամարձակի յաղթել նորան: Աւրեմն ինչոր կամենում ես, կատարէ, պատրաստ ենք բոլորս էլ այն ամէն տեսակ տանջանքները քաշելու, որ դու մեզ սպառնացար, ո՛չ միայն շարչարուելու, այլ մինչեւ անգամ մեռնելու:»

Երեք չորս անգամ կրկնեց թագաւորն իւր <sup>Պատմ.</sup>  
անսուտ երգումը արեգակի անունով ևւ ասաց.  
«Չեմ թողնիր ձեզ, որ շուտով հասնիք ձեր ու-  
ղածին. այլ ձեզ բոլորիդ ևւ նոցա, որոնքոր այս  
տեղ զօրքիս մէջն են, անձանապարհ տեղերով քը-  
տորել կըտամ ամուր բերդերն ու անել բանտերը  
անթիւ զօրքեր կըղօկեմ փղերի հետ միասին գէպ ի  
ձեր աշխարհքը, ձեր կանայքն ու որդիքը տանել  
կըտամ Խուժաստան, <sup>5</sup> ձեր եկեղեցիներն աւերել  
կըտամ ևւ ապականել:»

Երեք երկրի իշխաններն այս որ լսեցին, պա-  
տասխան տուին թագաւորին ևւ ասում են. «Թող  
ներէ մեզ թագաւորը, մի քանի օր մտածելու  
իրար հետ, որ հաստատ պատասխան տանք բոլորս  
միասին: Արովհետեւ մեր հողիների ընտրողութեան  
համար է լինելու պատասխանը. ևւ դուք մեր նախնի  
ևւ հայրենական աւանդութիւնը քանդել էք պա-  
հանջում, ևւ ստիպում էք այնպիսի մի հաւատք  
ձանաչել, որը ոչ մէնք ենք ընդունել ու սիրել՝ ևւ  
ոչ մեր հայրերը:»

Թագաւորն իւր մեծամեծների հետ միասին  
ընդունեց նոցա ասածը. շնորհեց նոցա խնդրած  
ժամակալութիւնը, ևւ արձակեց ատեանը \*:

\* Եղիշէի ասածով. «Հրամայեց մեծ անպատուութեամբ  
գորս տանել նոցա ևւ դահճապետին ասաց, որ դգու-  
շու թեամբ պահեն նոցա՝ առանց կապանքի ամենին իւր  
իջևեանու մը:»

## ԳԼՈՒԽ Զ.

### Նախարարների խորհուրդը:

Նախարարները խորհուրդ են անում միասին, թէ ինչպէս ազատուին Բազկերտի ձեռքից, եւ որչափ են առժամանակ երեսանց ու բանալ քրիտանէ ու թիւերը: Այսպէս Վարդան Մամիկանեանն հակառակում է նոցա որոշմանը, բայց երբ նախարարները երգումով ու խոսում են հաստատ մնալ իրենց որոշմանը, յոժարանում է: Բոլորն էլ հրապարակաւ երկրպագութիւն են անում արեւակին եւ կրակին: Բազկերտը նախարարների հետ մոզեր է ուղարկում Հայաստան կրակադաշտաւ թիւն ասարածելու:

«Եթէ գերծուցես զմեզ յարգույթազիր թշնամոյն, ամենայն ատոցեւոյց ի բն լուիցուք՝ հեղուզ զարեւն մեր ի վերայ ամենայն աշխարհին փրկութեան: Ղ.Ն.Յ.Ն.Բ.»

Ենթ. 4.

Հաւատացեալները՝ նախարարք՝ ոչ թէ թուլացան եւ զրգուեցան սուրբ վարդապետների առջին խրատիցը՝ այլ հնարք էին փնտռում, թէ ինչպէս անեն, որ իրենց սիրելիներին այն մեծ նեղութեան միջից հանել կարողանան: Այն մեծամեծներին, որոնք Գրանն իրենց օգնում էին, մեծմեծ խոստմունքներ էին անում եւ բաւականին դանձ էլ հէնց այն միջոցին թափեցին նոցա առայլ: Արբահամի օրինակն աչքի առած՝ ասում էին. «Ընդունէ, Աստուած, այս մեր կամաւոր զոհը, եւ մի թողնիր որ այս անօրէն իշխանը խայտառակէ քո եկեղեցիդ:»

Թագաւորի ներքին խորհրդականներից մէկը, որ կենդանի աւազանում մկրտուած էր, շատ հոգս էր քաշում վշտացեալների վերայ: Աս՝ երբոր ստուգեց իմացաւ, թէ ինչոր թագաւորն այնպէս խիստ սպառնացաւ, ամէն փորձանք ուղում է բն.

բել շայաստանի գլխին, մի հնարք սովորեցրեց՝ որ նորա իրենց գլուխն աղատել կարողանան առ այժմ:

Երբ գունդ էին պատրաստում, որ նոցա դէպի <sup>Հոսթոն</sup> անդարձ օտարութիւն արսորեն, քուշանների կողմից մի գուժկան եկաւ յայտնեց, թէ թշնամիների միջից մի գունդ վրայ պրծաւ եւ աւերեց թագաւորական գաւառները:

Աստուծոյ երկիւղածները 'նախարարք' այս որ լսեցին, աղօթք արին եւ ասացին. "Հարժէ, Տէր, նենդաւորի կամակոր խորհուրդները եւ խափանէ նորա շար կամքը ու դարձուր մեզ խաղաղ խորհրդով դէպի սուրբ եկեղեցին:":

Այն ժամանակ ժողովուան միասին բոլոր երեք երկրի նախարարները, մի երկ'օր խորհուրդ արին. եւ վերջն այս մտքին եկան առ ժամանակ՝ թէ "Ա՛լ ուրիշ ճար չունինք այս որոգ այժից աղատելու, բացի այն՝ որ երեսանց կատարենք առ այժմ թագաւորի հրամայածը, եւ երբ ամէն մէկս մեր երկիրները հասնինք, այնուհետեւ կամ ապրինք՝ այնտեղ՝ Քրիստոսի ճշմարիտ հաւատը պաշտելով, կամ թողնինք մեր երկիրները եւ ամէն մարդ իւր կինն ու որդիքն առնի գնաց օտարութիւն: Իսկ թէ որ մենք միայն մեր անձերի փրկութիւնն աչքի առաջ ունենալով՝ դէմ կենանք այս անօրէն իշխանի հրամաններին, դորանով մենք կը լինինք պատճառ, որ անթիւ մարդիկ ու կանայք, ծերեր ու տղայք յաւիտենական կերպով կը կորչին:":

Բայց չէին վստահանում իրենց մտածածը յայտնել շայոց զորավար Աւարդան Մամիկանէին, որովհետեւ գիտէին, որ նա այդպիսի խորհուրդին հաւանելու չէ. չէին էլ կարող համբերել, որ նո-

բան չյայտնեն ևւ չպատմեն այդ ամէնը, որովհետեւ  
գիտէին, որ առանց նորան բոլոր այդ խորհուրդները  
թերի ևւ անկատար կրման. մանաւանդ տեսել  
էին ամէնքը ևւ գրքերից էլ լաւ իմանում էին, որ  
ամէն այդպիսի գործերը իսկզբանէ անտի մեծ մա-  
սամբ Մամիկոնեան ցեղի ձեռքով ևւ նոցա Մամի-  
կոնեանների՝ միաբանութեամբ են գլուխ եկել: Այս  
ամէնը որ միտք բերին բոլոր նախարարներն ու իշ-  
խանները, ամէնքը միասին եկան Մամիկոնէից տէր  
Վարդանի մօտ ևւ յայտնեցին նորան իրենց խոր-  
հուրդն ու ասացին. «նայէ մէկ առաջդ ևւ տես,  
թէ ի՞նչ տեսակ սարսափելի ցաւեր պիտի պատա-  
հին. յիշէ մնցրերի հառաչանքը, միտք բեր երեսա-  
ների լացը ևւ բոնութեամբ օտարութիւն քշուող  
ծերերի ու պառանների ողբը. եթէ մէնակ մար-  
մնաւոր նեղութեամբ ևւ մեռնելով վերջանալու  
լինէր այդ ամէնը, դարձեալ ծանր կը լինէր միան-  
գամայն ևւ անտանելի. ուր մնաց որ առհասարակ  
հոգու ևւ մարմնու կորուստ է ևւ դայթակղութիւն.  
ևւ չէթէ լոկ հարեւանցի կը լինի այդ եկած փոր-  
ձանքի վերջը, այլ միշտ մինչեւ յաւիտեան պիտի  
խտտութեամբ տիրէ մեր եկեղեցիներին, ժողովրդի,  
կանանց ու զաւակների վերայ ամբարշտութեան  
խաւարը: Եթէ դու մեր խորհուրդն ընդունես ևւ  
կարողանաս քու միտքդ առայժմ յօժարացնել,  
գիտենք, որ շատերս ողորմութիւն կը գտնինք ևւ  
մեր երեք երկրի եկեղեցիներն առհասարակ չեն  
աւերուիր ու նոցա բոլոր բնակիչներն էլ դերի չեն  
տարուիր: Արովհետեւ 'այդպիսով' սուրբ հաւատը  
տեղից չի շարժիր, այլ թէ ևւ մի փոքր կըխախտուի,  
սակայն Ամենակալի աջը նորից կը կանգնեցնէ հաս-

տատ ու կ'ամրացնէ: Եւ 'այդ' հաստատ կըլինի  
այդպէս, թէ որ կարողանաս մի փոքր հիւանդանալ  
մեզ համար, որպէսզի ամենագթած բժիշկ Բանն  
Աստուած մեզ էլ քեզ հետ միասին առողջացնէ:»

Այս ամէնը որ լսեց Վարդան՝ Հայոց, Վրաց եւ  
Աղուանքի նախարարներից, յանձնառու շեղաւ բո-  
լորովին լսել կամ համաձայնիլ այդպիսի գործի  
կամ գոնէ մասնակից լինիլ այդպիսի մի խորհուր-  
դի, այլ սաստիկ նեղանալով՝ բարձրաձայն ասաց  
բոլորի առաջ. «Անկարելի է, որ ես ստեմ իմ  
Արարիչս եւ ուրանամ նորան, որն ուրանալու է  
իւր շօր եւ սուրբ հրեշտակների առաջ իրեն ու-  
րացող մարդոց. քաւ լիցի, ես չեմ կարող կնոջս  
կամ որդւոցս կամ ազգատոհմիս կարիքն ու ցաւերը  
միտք բերելով մոռացութեան տալ նորան, որն  
ասաց, թէ «Վալեր իւր կինն եւ որդիքն ինձանից  
աւելի է սիրում, նա ինձ արժանի չէ: «Կսկ դուք  
երեք երկրի տանուտէրներդ ու իշխաններդ, որ  
այժմ եկել էք 'ինձ մօտ', ամէնմէկդ կարող էք  
ձեր անձի տեղը պատասխան տալ եւ ինչպէսոր  
մտած ումէք, կարող էք կատարել:»

Այս բոլոր խօսածները որ լսեցին նախարար-  
ները Վարդանից, ազատ չթողին նորան այդ առա-  
ջարկութիւնից, այլ հաւարուան միասին եւ կանչե-  
ցին իրենց մօտ Մոկաց Արտակ իշխանին եւ շտա-  
պեցրին նորան, որ առանձին նստի եւ խօսի իրենց  
սպարապետի հետ: Նա ինքը 'Արտակ' համեստ ու  
խելացի եւ քաջ մարդ էր եւ Վարդանը նորան  
աւելի պատուում էր եւ սիրում. այդ պատճառով  
նա էլ հաւանեցաւ նախարարների առաջարկու-  
թեանը եւ յանձն առաւ աշխատել եւ անդադար

աղաչել նորան՝ երբեմն առանձին ու երբեմն Հայոց մեծամեծների հետ միասին: Արբ երեք երկրի նախարարներն ու իշխանները տեսան, թէ Աւարդանի կամքը անշարժ է, չի համաձայնում նոցա խօսքերին ու աղաչանքին, բերին այնուհետև սուրբ գրքից պատշաճաւոր առակներ՝ օրինակներ, որ համոզեն՝ նորան ինչպէս մի ուսեալ եւ տեղեակ մարդու, (որովհետև շատ հմուտ եւ բնակացած էր սուրբ գրքի վարդապետութեանը, եւ սովորել ու խրատ էր առել իւր պապ սուրբ Սահակ Հայրապետից), յիշեցնում էին Պօղոսի ասածը Արարչի համար, թէ «նա՛ որ մեզք ասած բանը չգիտէր, մեզի համար մեզք արաւ\*», եւ դարձեալ Պօղոսի իրեն զիջանիլը, թէ «Աս ի՛նչս սրտով կ'ուզենայի, որ Քրիստոս ինձ նղովէ իմ մարմնաւոր եղբայրներիս, զաւակներիս ու ազգականներիս պատճառով»: Արբ այսպիսի շատ խօսքեր ու անդադար աղաչանքներ էին դնում Աւարդանի առջ, բերին այնուհետև սուրբ աւետարանն եւս, ամենքը առհասարակ զրին իրենց ձեռները նորա վերայ, երդում կերան եւ ասացին. «Ի՛նչ որ դու միտորք միայն կարողանաս երեսանց կատարել թագաւորի ասածը եւ մեզի ազատես, բոլոր քու ասածներիդ կը լսենք յետոյ եւ կը կատարենք՝ զնելով մեր անձը մեր սուրբ ուխտի վերայ եւ արիւն թափելով մեր ամբողջ երկրի փրկութեան վերայ: Եւ եթէ հարկն ստիպէ մեզ թողնել մեր երկիրն եւ բոլոր մեր ստացուածքը եւ օտար երկիր փախչել,

\* Սուրբ Գրքի ուղիղ ընթերցումն այս է. («Հայրն Աստուած) զայն, որ ոչն գիտէր զմեզս (զՔրիստոս) վասն մեր մեզս արար, զի եզիցուք մեր նովաւ արգարս թիւն. տես Բ. Վարնթ. Ե. 21: Իսկ թէ Փարպեցու պատմութեան մէջ այլ կերպ է կարգացուում, այդ թերեւս օրինակողների սխալն է:

կ'ընդունենք կնոջով եւ զաւակներով միասին ու սիրով անձերս կ'առնինք աղքատութիւն եւ մուրացկանութիւն. միայն թէ մէկ այս բարկութիւնից գլուխներս ազատենք:,,

Երբ երեք երկրի իշխանների բերանից լսեց այս ամէնը, եւ տեսաւ որ ամէնքն էլ սարսափելի երգումով վերջացրին իրենց խօսքը՝, արտասուք թափելով յանձն առաւ երեսանց ուրանալ՝ երեք երկրի եւ նոցա մէջ գտնուող մարդոց եւ կանանց համար:

Այսպէս՝ մէկ խօսք եղան ամէնքը, որ իրենց խորհուրդն ամուր պահեն, եւ նոյն խրատ տուող մարդու ձեռքով պատգամ զրկեցին ներս թագաւորին, թէ նորա կամքը կատարելու են: Եղիշե.

Մոխրանոցի տան մէջ նոցանից՝ նախարարներից՝ միքանիւր միայն, այլ ոչ բոլորը՝ այն էլ երեսանց, եւ ոչ ճշմարտութեամբ՝ ցոյց տուին իրենց գլուխների խնարհումը սնտոի պաշտաման առաջ: Չորսոր.

Թագաւորը շատ ուրախացաւ. թափեց գիղեց նոցա առաջ շատ երկրաւոր պարգեւներ. երեւելի էր ցոյց տալիս նորանց իւր բոլոր տիեզերական իշխանութեան մէջ. թագաւորական ազարակներ ու գիւղեր էր բաշխում նոցա. տանուտէրներին եւ սեպուհներին թագաւորական զգեստներով էր զարդարում՝ սիրելի եւ բարեկամ էր անուանում նոցա: Շատ այրուծի գումարեց ու եօթը հարիւր վարդապետից՝ մոգից՝ աւելի այդ այրուծիուհետ զրկեց ու մէկ մեծ մոգպետ էլ նոցա վերայ իշխան նշանակեց: Այսպէս ճանապարհ ձգեց նոցա դէպի Հայոց երկիրը: Գեռ Հայոց երկիրը չհասած՝ փայտ էին գձում եւ վիճակ բաց անում, թէ որ ազգը որ խմբին պիտի աշակերտ դառնայ: Եղիշե.

Թագաւորի հրամանն էր, որ ամէն տեղ եկեղեցու կարգը վերցուի, սուրբ տաճարների դռները փակուին, նուիրուած սպասները գրով համարով թագաւորական 'գանձարանն' առնուին, քահանաները չհամարձակին իրենց տներում ուսում տալ ժողովրդին, զանազան մենանոցներում բնակող մարդիկն ու կանայք փոխեն իրենց հագուստը աշխարհականի ձևով. նախարարների կանայքը, ազատների ու գիւղականների տղայք ու ազգականները կրթութուն մոգերի հրապարակներում. սուրբ ամուսնութեան օրէնքը վերցուի, մի կնոջ տեղ շատ կանայք առնին, որ Հայոց ազգն աճի ու բազմանայ. աղջկները հայրերի հետ պսակուին եւ քոյրերը եղբարց . . . պատուածակներն 'մորթելու անասունները' առանց յաղելու չմեռնին, խմորն առանց փանգամ չչաղուի <sup>3</sup>, ձեռքերն առանց գոմէղ չլուացուին <sup>4</sup>:

Չագար.

Յորդորում էին ծաղրելի "չնչմանց" ուսումը սովորիլ, պատուիրում էին, երեք երկրի մէջ էլ խարէութեան դպրոցներ բանալ եւ բոլորին առհասարակ սովորեցնել թէ մարդոց եւ թէ կանանց:

Եղեշէ.

Մինչեւ տարուայ վերջը բոլորն էլ պիտի կատարեն այս ամէնն ինչոր ասացինք <sup>5</sup>:

# ԳԼՈՒԽ Է.

Մ Ի Ս Գ Ո Ւ Ն Թ Ի Ն Ա :

Նախարարներն եւ մոզերը Պարսկաստանից ճանապարհէն ընկնում գէպի Հայաստան: Պարսից բանակի միջի բրիտանեաները բողբոմ են նախարարների ու բացութեան գէմ, եւ զեսպանով իմաց են տալիս առաջուց եպիսկոպոսների ժողովն: Եպիսկոպոսներն եւ նախարարների զերգաստուններն հանդիպում են նոցա: Աւարդան Մամիկանեանն իւր զերգաստանով ընտրում է ստարութիւն գնալ: Աստակ Արնին եւ միւս իշխանները զեսպան են ուղարկում եւ յետ բերում նորան: Աւարդանն աշխատում է ապստամբութեան գործն սկսել, բայց զեռ չի վճռուում:

«Մարգիկ որ սիրտն Աստուծոյ վտակալ էին, զուրացութիւնն մտեալութիւն վարկանէին:» ԵՂԻՇԷ:

Այնուհետեւ մնասրարով ասացին բոլորին երկք <sup>Չարստ</sup> երկրի՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից նախարարներն. առան իրենց հետ մոզերի զազմութիւնն ու դարձան ամէնքը գէպի իւրեանց երկիրները՝ շատ անգամ նորից հաստատելով ճանապարհին նոյն խոստումը սուրբ աւետարանի անունով. եւ բաժանուելով իրարուց՝ գնացին ամէնն իւր տեղը: Բայց Վրաց Աղուշայ բղեշխին եւ Արնեաց Աստակ իշխանի երկու որդւոցը՝ Բարիկին եւ Ամիրներսէհին չթողեց Յազկերտ:

Այժմ պատմենք փոքրիշատէ՝ թէ ինչ անցք <sup>ԵՂԻՇԷ</sup> պատահեցաւ այնտեղ՝ Պարսկաստանում՝ կարաւանի մէջ: Պարսից մեծ բանակում զանազան ազգերից, ինչոր Քրիստոնեայ մարգիկ կային, երբոր Հայերի ուրացութիւնը տեսան, սաստիկ զարմացան. եկան ու յանդիմանեցին նախարարներին եւ քահանաներին ու ասում էին. «Դ՛նք առաքելական քարոզու-

Թիւններ սովորեցնող էիք, այժմ ինքերդ պիտի մոլար խարէութեան աշակերտ լինիք. դ՛ուք ճշմարտութեան ուսուցիչ էիք, այժմ պիտի մոգերի ստութիւնը սովորեցնէք ուրիշներին եւ տարերբը իրրեւ Աստուած պիտի ճանչէք. հրով եւ հոգւով մկրտուած էիք, այժմ պիտի մոխրի ու մրուրի մէջ թաթախուիք. դ՛ուք էիք մեր յուսոյ ամուր պարիսպը. եթէ մեզի պատեղ վտանգ պատահելու լինէր ձեզանով պիտի ազատուէիք. մինչև հիմայ ձեր ճշմարիտ հաւատ ունենալուցը՝ մեզ էլ խնայում էին փոքրիշատէ. այժմ ձեր պատճառով մեզ էլ պէտք է անողորմաբար դատեն:»

Այս ու սորանից աւելի շատ բաներ խօսան մեծամեծների հետ եւ ցաւ ցաւի վերայ աւելցրին: Յայտնել եւ ցոյց տալ նոցա իրենց գաղտնիքը չէին կարող նախարարները՝ լռել ու պատասխան չտալն էլ անհնար էր: Նոցա հետ միասին լսողներն էլ տեսնողներն էլ գառնացած՝ անմխիթար սուգ էին անում ամէնքը:

Քահանաները, որ այնտեղ զօրքի մէջն էին, նախարարներից եւ բոլոր բազմութիւնից ջոկուան, եւ շտապով մի ձիաւոր զօրկեցին շայաստան. գոյժը բերանն առած, օձիքը պատառելով հասաւ նա (ձիաւորը) եպիսկոպոսների ժողովները, <sup>1</sup> եւ պատմեց բոլոր նեղութիւնների մասին, բայց գաղտնիքը չյայտնեց նոցա:

Յրուուան եպիսկոպոսներն իւրաքանչիւր իշխանութեան մէջ եւ ուղարկեցին քորեպիսկոպոսներին գիւղերն ու ագարակները եւ լեռնային գաւառների շատ ամուր տեղերը. զրդեցին ժողովեցին շատ արանց ու կանանց բազմութիւն. իրատ

գրին, ամբացրին եւ բողբոբին էլ Քրիստոսի զինուոր շինեցին: «Հարազատ եղբօր ձեռքը, ասացին, թող իւր մերձաւորի գլխին բարձրանայ, թէ որ սա Աստուծոյ պատուիրանքից հեռացած է: Աստուածային օրէնքները թող լինին թագաւոր ամէնքի վերայ. եւ այն օրէնքներից միայն թող գտնին պատիժ յանցաւորները:» Արբօր այս այսպէս հաստատուաւ, ամէնքն էլ երեւում էին զինուած, սաղաւարտուած: Իսկ Հայոց գունդը մոզերի բազմութեան հետ միասին՝ շորրորդ <sup>2</sup> ամսում եկան հասան Հայաստան եւ մտան Անգղ անունով մեծ գեօղաբաղաբը:

Նոցա զիմաւորելու եկան Քրիստոսի պաշտօն <sup>Հարգութեամբ</sup> նեաները, բերելով երենց հետ կենսատու սուրբ խաչի նշանը եւ սուրբ առաքելաման նահատակ Գրիգորի նշխարները: Աւ այնտեղ պէտք էր տեսնել՝ թէ ինչ լաց ու ճիշ բարձրացրին ամէնքը. ինչ գոռում գոչում էր լսում ամէն կողմից: Արեւխաները, որ հայրերին կարօտացած էին, փախնում եւ փախչում էին նոցանից՝ կարծելով՝ թէ այլափոխուել են նոքա եւ նոյն առաջուայ կերպարանքը շնկասելով՝ զաբհուրում էին եւ շուտշուտ նայում էին մայրերի երեսը, որոնք լալիս ու արտասուք էին թափում. այս պատճառով իրենք էլ լաց էին լինում եւ դայեկներից կամ գաստիարակներից ոչմէկը չէր կարող նոցա ձայնը կտրել տալ: Եւ նոքա՝ որ երեսանց այլ ոչ ճշմարտութեամբ արացել էին իրենց հաւատը, երբ նկատեցին այս ամէնը, ուզում էին հէնց այն բողբոբին վերկենալ եւ իրենց սրերի վրայ ընկնել իրենց սպանել, որովհետեւ ոչոք չէր ուզում նոցա հետ մի սեղան նստել, ոչ կին, ոչ որդի, ոչ ազատ, ոչ էլ ծառայ

կամ սպասաւոր: Եւ սուգ ու շիւանը ձգած լաց էին լինում մեծ իշխանների կանայքը. այրիները հրապարակներում, մանկամարդ կանայքն եւ օրիորդները փակուած սրահներում եւ հարսները սենեակներում: Պուրբ եպիսկոպոսները քահանաների եւ եկեղեցական դասի ծերերի, եւ մանուկների եւ բոլոր ժողովրդի բազմութեան հետ միասին վայնասունը ձգած լաց էին լինում Աստուծոյ տան մէջ. եւ պէտք էր տեսնել թէ ի՞նչպէս ծեփուել էին արիւնով ու զղափառ մարդոց երեսները:

Մոգերի գնդերն էլ բռնի ստիպում էին տանել կրակները Տիրոջ սուրբ տաճարը եւ ուրիշ ականաւոր ու գեղեցիկ տեղերում կրակատուններ շինել եւ անյագ շաստուածի բորբոքման համար փայտ բերօղ բեռնակիրներ նշանակել:

Այս ամէն անբախտութիւնքը որ տեսաւ Մամիկոնէից տէր եւ Հայոց սպարապետ Աարդանը, կանչեց մօտը բոլոր իւր գերդաստան մարդոցը, սկսեց խօսել նոցա հետ եւ ասում է. «ոչ թէ կամքով կամ վախից ստիպուած ուրացել եմ ես իմ Արարիչս, քան լիցի. եւ շեմ էլ մերժած ինձանից այն հաւատն ու սուրբ աւետարանի վարդապետութիւնը, որը սովորեցրել է ինձ եւ հաստատել է իմ մէջ՝ իմ ճշմարիտ պապս տէր Մահակը, բայց առժամանակ մինչեւ այս բողոքին հասնելը ձեր բոլորի փրկութեան համար կորայ երեսանց, որ յետոյ գանիմ ինձ ձեզ հետ միասին, ապաշխարեմ ու փրկուիմ: Այժմ, որովհետեւ ես առժամանակ ձեզի համար թողի նորան (Արարչին) երեսանց, կամենում եմ աշխարհքիս բոլոր գործերը թողնել բոլորովին եւ ովոր ձեզանից յանձն առնել կարող

է, պատրաստ եմ ձեզ հետ միասին քրիստոսի անուան համար օտար երկիր գնալ»:

Պատասխան տուեց նորան երանելի Հմայեակ եղբայրն եւ ասաց. «Աշխատիր շուտով կատարել ինչոր մտածել ես եւ մի ուշացներ. թէ որ ապրելու լինինք, Աստուծով առանց խղճահարութեան մեր կատարածին կը հասնինք, մուրացկանութեամբ կը լինի, թէ օտարութիւն քաշելով՝ այնքան լինի, որ նորանով (Արարչով) ապրինք եւ ուրացութեան անունը մեղանից հեռու լինի»:

Այսպէս ամէն մի սնտի մեծութիւն արհամարհելով՝ ճանապարհ ընկան դէպի Յունաց իշխանութեան տակի երկրները եւ եկան հասան մի գիւղ, որի անունն Արամոնայ <sup>4</sup> է, Բազրեւանդ <sup>5</sup> նահանգի մէջ Բասենին <sup>6</sup> եւ Տուարածատափին <sup>7</sup> սահմանակից. եւ այնտեղ մնացին հանգչելու:

Յանկարծ լուր հասաւ Վիւնեաց Աստակ իշխանին, որ այն ժամանակ Հայաստանի մարզպանն էր, եւ բոլոր Հայոց տանուտէրներին ու իշխաններին, թէ Աւարդան մեծ սպարապետն եւ իւր եղբարքը տնով տեղով ելան եւ գնացին Հայաստանից. շատ կօտրուաւ նոցա՝ նախարարների՝ սրտերը եւ ահ ընկաւ. որովհետեւ լաւ տեղեակ էին եւ գիտէին, որ առանց նորա առաջնորդութեանը ոչ մի գործ գլուխ չէ եկած Հայաստանում. խորհուրդ կաղմեց Վիւնեաց Աստակ իշխանը, եւ բոլորին էլ իւր մտքին յօժարեցրեց ասելով՝ թէ «պէտք է շուտով ընտիր քահանաներ եւ Հայոց տանուտէրներից մեծ մարդիկ զրկել Աւարդանի յետեւից՝ եւ աղաչանքով յետ դարձնել նորան այս կողմը: Եւ նամակ գրեց Վիւնեաց Աստակ իշխանն ու հրամայեց,

որ Հայոց ուրիշ մեծ տանուտէրներն էլ նամակներ գրեն և և կնքեց նամակները ամէնմէկի մատանուով, բերել տուեց և և կնքած աւետարանը. քահանաներից էլ Ղևւոնդ երէցին ու Երեմիային՝ Նորքազարից, Մրենցի Խորէնին, և և Հայոց տանուտէրներից մեծ մարդիկներին ընտրեց ու տուեց նոցա նամակներն ու երգումի աւետարանը և և դեսպան զրկեց Ղարդանի մօտ:

Նորա հասան և և գտան Ղարդանին յիշեալ Արամանայ գիւղում՝ և և իմաց տալով՝ ներկայացան նորան. պատմեցին երանելի Ղարդանին և և նորա կղբարցը Հմայեակին և և Համազասպին՝ իրենց շտապաւ նոցա մօտ գալու պատճառը. յառաջ բերին և և երգումի աւետարանը. տուին նորա ձեռքը և և Ղասակի, միւս իշխանների և և կպիսկոպոսների ու սեպուհների նամակներն և և ասացին. «Ինչպէսոր հոգս տարաք և և խնամեցիք ձեզի, այնպէս էլ այսչափ ժողովրդի հոգիքը միք թողնիր կորչելու. մանաւանդ որ՝ այս տեղ շատերս կանք, որ ձեզ աղգական և արենակից ենք. մեզ հետ միասին ընդունեցէք ձեր պսակը Քրիստոսից, ինչպէս ցանկացած էք և և աշխատում էք՝ որ մէնակ դուք պսակուիք:»

Այս ամէնը որ լսեց Հայոց սպարապետն Ղարդան, պատասխան տուեց բոլորի համաձայնութեամբ և և ասաց. «Ես ու իմ՝ կղբարքս և և ընտանիքս աշխարհիս ամէն բանից աւելի բարձր ենք համարում մեր հոգիների փրկութեան գիւտն ընտրել՝ և և չէթէ միայն մեր հոգիների օգուտն ենք փնտռում, այլ ուրիշների փրկութիւնն էլ ենք ուզում. և և չիմի թէ ձեզանից մէկը կարծէ՝ թէ մենք որ փախել ենք, սրի ահից ենք փախել. այլ՝ ձեր նենդաւոր խարերայութիւնից է, ինչպէսոր դուք միշտ մեզ նեղ

տեղն էք ձգած եղել: Բայց սուրբ եւ երկնաւոր  
Տրաւիրակիր՝ աւետարանի առաջ մեր ազգից՝ ցեղից՝  
ոչոք դէմ չէ կացել, մենք էլ դէմ կեցողը չենք,  
քաւ լինի:» Այս ասելով սուրբ Աարդանն իւր  
եղբարց եւ սիրելեաց համաձայնութեամբ դարձաւ  
նորից դէպի իւր ընկերներն՝ Հայոց բանակը:

Երբոր եկան բազմութեան հետ միացան,  
Աարդանը հանգստութիւն չէր տալիս իւր մտա-  
դրութիւններին, եւ ոչթէ միայն տնական կերպով  
իւր դրան քահանաներով ու պաշտօնեաներով էր  
կատարել տալիս ժամասացութիւնը, այլ միաբա-  
նութեամբ բոլոր Հայերի հետ միասին ուզում էր  
գնալ եկեղեցի. բայց կամաւ յետաձգում էր առ-  
ժամանակ եւ սպասում հանգամանքին, միտք բերե-  
լով ընկերների վիճակը, մանաւանդ Ասսակի որդւոց  
եւ Աշուշայի: <sup>8</sup> Եւ այս մտածում էր սուրբ Աարդանը  
չէթէ իւր նպատակին օգնականութիւն գտնելու  
մտքով՝ այլ միայն հոգս էր քաշում իր բերեւ մի բարե-  
սէր մարդ, որ չլինի թէ թագաւորի կողմից այն մար-  
դոցը մի դժուար բան պատահի եւ վնասուին:

Բայց Ամատունեաց Ահհանն երբեմն ինքը, եր-  
բեմն ուրիշների ձեռքով ստիպում էր, որ շու-  
տով ապստամբութիւնը գլուխ բերեն՝ ապստամ-  
բին՝ որովհետեւ նա վաղուցուանից ռիսունէր Աս-  
սակի դէմ: Իսկ Աարդան ուրիշի խօսքին չէր նայում,  
այլ ընկերների հոգսն էր քաշում. եւ այնպէս  
զօռով քաշքշեց գործը մինչեւ շոքերի մօտենալը.  
յետոյ գաղթեցին բոլոր բազմութեամբ եւ եկան  
մտան Ծաղկոտն <sup>9</sup> գաւառը. մէկ ամուր բերդի մօտ  
Անգղանունով բանակ դրին եւ հանգստանում էին  
շոքերի ժամանակ:

## ԳԼՈՒԽ Ը.

Մ ի ս ի ս ն ն ի թ ի ս ն .

Մոզպեան առաջին փորձը տեսնելու համար գալիս է մի եկեղեցու դռները քանդելու : Ղեւոնդ երէցն եւ ժողովուրդը արգելք են լինում : Մոզպեաը հնար է փնտռում Հայերի կատաղութիւնից ազատուելու եւ յանդիմանում է Վասակին : Վասակը նորան հանդատացնում է եւ նենդութիւններ անում Հայոց դէմ : Եպիսկոպոսները պահանջում են Վարդանից որ բոլոր շարութիւնների վրէժն առնուի : Ռիտապահ նախարարները միարանում եւ հալածում են Պարսից բռնակը : Վասակն էլ երգումով միանում է նոցա հետ : Ռիտապահների զօրքը քանդում է մոզպերին եւ առնում է բերդերը :

«Օրէնք սաստանային կացցեն թագուարի վերայ ամենայնիւ»

Եղիշէ :

Այն օրից, երբ մոզերն ու նախարարներն եկան Պարսկաստանից եւ մտան Անդղ գիւղաքաղաքն, անցաւ քսանը հինգ օր, մոզպեան ինքը մոզերի հետ միասին մեծ զօրութեամբ եկաւ կիրակի օրն եկեղեցու դռները քանդելու . ուզում էր իւր գործն յառաջ տանելու առաջին փորձը տեսնել գորանով : Սուրբ Ղեւոնդ երէցը շատ եկեղեցականներով այն տեղ պատրաստ գտնուաւ եւ թոյլ չտուեց : Նա լաւ տեղեակ չէր նախարարների մոքին, եւ շատ աղմուկ աղաղակ թափեց զօրքերի ու մոզերի գլխին . օրովհետեւ վիրդերը ձեռքերն առած մոզերի ու մոզպետի գլուխները ջարդեցին ու հալածեցին ամէնին իւր իջեւանը եւ իրենք էլ պաշտօնը բարձրացնելով՝ եկեղեցու մէջ, կատարեցին տէրունական կանոնը :

Այսպէս տագնապ հանելուց յետոյ՝ Հայոց աշխարհի ամէն կողմերից շատ կանանց ու մարդոց բաղմութիւն եկաւ թափաւ այնտեղ . ոմանք սիրտ

առած եւ զէնքերը ձեռքերին՝ մահը կեանքից վեր էին դասում. եկեղեցականներից միքանիսն աւետարանն առած աղօթք էին անում Աստուծոն, ոմանք էլ ցանկանում էին, որ գետինը պատառուի եւ իրենց անձերին գերեզման լինի:

Այնպիսի մի իրարանցուկ բերին մոգպետի գլխին, որ նա շատ անգամ խնդրեց աղաչեց իւր օգնականներին, որ կարողանան որջանգամ հասցնել նորան թագաւորի՝ մտա: Ատիպում եւ ասում էր՝ թէ «Թողէք գրեմ ցոյց տամ թագաւորին, որ մէկդի թողնի այսպիսի գործերի հոգացողութիւնը. ըստորում եթէ աստուածներն իրենք էլ մեզի օգնելու գան, դարձեալ անհնարին բան է, որ մոգութեան ուսումը հայերի մէջ հաստատութիւն գտնի, ինչպէս որ ես նոցա եկեղեցականների միաբանութեան փորձը տեսայ: Թէ որ այս երկրի զօրքն եւս մոգեր լինէին, սոքա նոցա էլ չէին խնայեր եւ կրմեռցնէին: Մարդիկ են, որ ոչ կապանքից են վախենում, ոչ տանջանքից եւ ոչ էլ գանձերով են խարուում: Եւ ամէնից գլխաւոր փորձանքն էլ այն է, որ մահը կեանքից վեր են դասում. ո՞վ կարող է սոցա դէմը կայնել: «Աս ըսած էի, թէ Շապուհի՝ ժամանակ, երբ այդ ուսումը՝ քրիստոնէութիւնը՝ աճել ու զարգանալ սկսեց, մեր հաւատի վարդապետները թագաւորին յորդորեցին, որ դադարեցնել տայ քրիստոնէութիւնը: Եւ ինչքանոր նա ուղեցաւ արգելել, եւս առաւել աճեց ու զարգացաւ. եւ այնպէս աներկիւղ ու համարձակ էին՝ քրիստոնէաները՝ Պարսկաստանում, որ ամէն քաղաքի մէջ եկեղեցի շինեցին եւ ամէն տեղ՝ թէ շէն եւ թէ անշէն, մեռանոցներ շինեցին. աճելով աճում ու շատանալով

շատանում էին եւ մարմնաւոր հարստութիւններով լցուում: Նոցա հարստութեան պատճառը մեզ անյայտ է, այսքանս միայն հաստատ իմանում ենք, որ ամբողջ տիեզերքը նոցա հաւատն ընդունեց: Քաղաւորը խստութեամբ բռնեց շատերին ու շարչրեց եւ շատ շատերին էլ սպանել տուեց. շատ բարկացաւ ու 'մինչեւ անգամ' ձանձրացաւ նա ինքը, բայց չկարողացաւ նոցա թիւը պակսեցնել: Փակեց ու կրնքեց նոցա եկեղեցիների դռները բոլոր Պարսկաստանի մէջ. նոքա ամէն տեղ էլի իրենց օրէնքն էին կատարում: Սպանողների սրերը բթացան, նոցա պարանոցները չդադրեցան. նոցա հարստութիւնն յափշտակողներն յոգնեցան, նոցա կարողութիւնն էլի օրէցօր աւելացաւ ու շատացաւ: Երբոր տեսաւ թագաւորը, թէ ամէնքը վրայ պրծան, ինչպէս խաչինք մահ ընդունելու, արգիլեց ու դադար տուեց հարուածներին եւ տանջանքներին, եւ հրաման տուեց մոգ պետներին, որ մարդ չդիպչի նոցա: Այդ ահա լսելով գիտենք: Այս՝ որ ես ինքս իմ աչքովս տեսայ, երևում է, որ առաջուանից աւելի խիստ պէտք է լինի: Քէոր անդէն մարդիկ այսպէս ոյժ գործ դրին, բայց որ զինուորներին էլ իրենց հետ միաբանեցնեն, ո՞վ կրկարողանայ դոցա առաջը կենալ: Ես չէի իմանում, որ եկեղեցական ուխտն այդպէս անքակ է իրարուց. ուրիշ բան է՝ ինչոր մարդս լսում է, ուրիշ է՝ երբ նա աչքով է տեսնում նոյնը: Գու, որ հաստատ գիտեիր այդ մարդիկների պնդութիւնը, ինչո՞ւ տեղովը չպատմեցիր թագաւորին: Արովհետեւ դու ես բոլոր նախարարների գլխաւորը եւ բոլոր երկրի մարդպանութիւնն էլ քեզ է յանձնած. ինչո՞ւ այդպիսի խոհեմու-

Թեան գործ չտեսար: Ապա թէ ոչ՝ պարզ է, որ  
 դու էլ նոցա հետ մէկ խօսքի ես եւ քու խորհրդ-  
 դովդ է, որ այս բանը բերին իմ ու իմ զօրքիս  
 գլխին:

Այս խօսքերի վերայ խոժոռեցաւ Աստակ մարդ-  
 պանը եւ շուարած մնացել էր տրտում սրտով:  
 Մէկ՝ որ ծնողութեան բոցը պրեց նորա սիրտը իւր  
 որդւոց համար, որոնք այնտեղ թագաւորի մօտ  
 պատանդ էին: Մէկ էլ՝ որ վախում էր իւր թշնամի  
 Աշարազգաղանից, որը թագաւորի մօտն էր եւ Ա-  
 սակի մահին էր սպասում: Մէկ էլ այն՝ որ վախում  
 էր, թէ չզրկուի այն մեծ եւ երեւելի փառքից եւ  
 իւր հայրական ժառանգութիւնից: Այս երեք ան-  
 հնարին տարակուսանքները նորան մաշում նեղաց-  
 նում էին. ոչ գիշերը քուն ունէր եւ ոչ ցերեկը  
 հանգստութիւն: Եւ որովհետեւ մարդս ի բնէ անտի  
 միշտ սխալուելու եւ գայթակղուելու վիճակուած  
 է, աս էլ սխալեցաւ յետ կայնաւ սուրբ աւետարանի  
 երդումից եւ չար յուսահատութեան ծնունդ էր  
 այդ, որի ինչպէս լինիլը Աստու գատաստանը միայն  
 կարող է իմանալ եւ ոչ մէկ ուրիշը:

Սահի.  
 Եզրակ.

Պատասխան տուեց մարդպանը մոգպետին եւ  
 ասում է՝ թէ «Դու մի փոքր համբերութիւն ու-  
 նեցիր եւ քու խորհուրդներդ ումոր ասելու  
 լինիմ» նոցա յայտնէ. մինչևևոր ես ինձ ոյժ ժողո-  
 վեմ, գուցէ՝ կարողանամ եկեղեցականների միա-  
 բանութիւնն երկպառակել: Եթէ այդ այդպէս  
 անեմ, գիտեմ, որ այնուհետեւ թագաւորի հրա-  
 մանն էլ կրկարողանամ կատարել:

Եզրակ.

Եւ իսկոյն բերել տուեց Սիւնեաց աշխարհից  
 իւր գունդը մոգպետին թիկունք եւ օգնութիւն

լինելու: Յետոյ ասաց նորան. «Դէ՛հ, այժմ՝ դու մի գիր գրէ թագաւորին այն պրուծիւ համար, որ Աղուանքումն է, որպէսզի ձմերելու համար Հայաստան գան՝ Աղուանքի զօրքը՝. եւ երբ նոցա էլ մեր ձեռքը ունենանք, էլ մարդ չի մնար, որ համարձակի չընդունել թագաւորի հրամանը:

Մոգպետը պատասխան տուեց մարդպանին ու ասում է. «այդ խորհուրդդ դարձեալ իմ ասածիս հակառակ է. եթէ բռնութեամբ կոխ անենք այս երկիրը բաժան բաժան կը լինի եւ մարդիկը կը մնասուին, թագաւորին էլ բաւական մեծ կորուստ կը հասնի:»

Բայց մարդպանը չուզեցաւ ականջ գնել նորան, որովհետեւ հոգւով սրտով ընդունած էր պարսկական ուսմունքը: Սկսեց խաբխրել այնուհետեւ՝ ոմանց կարասւով՝ պարսկեներով՝ ոմանց քաղցր լեզուով. սամիկին էլ ահ բերող խօսքերով էր սրտաթափ անում. ամէն օր տաճարի ոռձիկն<sup>3</sup> աւելացնում էր եւ անմեղ մարդոցը շատ խաբեբայութիւններով հրապուրում եւ իւր կողմն էր քաշում:

Երբոր սուրբ եպիսկոպոսները տեսան այս ամէնը, աւելի սրտով միաբանեցան իրար հետ: Մի գիշեր խորհուրդ կազմեցին եւ զօրքի սպարապետին<sup>4</sup> էլ՝ Աւարդանին՝ կանչեցին խորհրդի. հարցրին, քրննեցին եւ հաւաստի եղան, որ նա իւր հաւատին հաստատ է եւ նորից ընդունեցին նորան առաքինիների խումբը ու նորանով շատերին որսացին իրենց կողմը, որոնք եկան հաւաքուան եւ մի մեծ զօրքի գունդ կազմուաւ:

Աստակն սկսեց մոգեր բաժանել նախարար-

ների աները եւ մեծմեծ ոռճիկներ նշանակել նոցա  
եւ մկրտուած <sup>5</sup> մարդոցը յազած 'զոհի' միս ու-  
տեցնել բռնի, եւ արեգակին երկրպագութիւն  
անել տալ: Երբ բոլոր երկրում սկսեց աւելանալ  
սոսպիսի պղծագործ խառնակութիւնը, փուշախ-  
պանների կանաչքն եւս համարձակութիւն առան մի-  
կիրակի օր եկեղեցու ճրագները հանգցնելու եւ  
հաւատաւոր <sup>6</sup> կանանց հագուստները պատառո-  
տելու:

Ե.յս աղմուկն եւ գոյժը որ տեսան սուրբ  
եպիսկոպոսները, ամէնքը միասին աւետարանը ձեռ-  
քերն հասան սպարապետի իջււանը <sup>7</sup>, որտեղ ժո-  
ղովուած էր Հայոց զօրքը, եւ ասացին. "Ազաշում  
ենք ձեզ բոլորիդ այս սուրբ աւետարանի անունով"  
Թէոր ձեր խորհրդովն են կատարում այն ամէն-  
անօրէնութիւնը մարդպանն ու մոգպետը, յառաջ  
մեր գլուխները կտրեցէք եւ յետոյ եկեղեցիներին  
ձեռք զարկէք: Իսկ թէոր առանց ձեր կամքին են  
գործում նոքա այն չարութիւնները, այսօր իսկ պիտի  
առնուի նոցանից վրէժ:

Երբ իմացաւ 'Աւարդան' թէ շատ տարածուում  
է ապստամբութեան գործը եւ շատ թոյլ մնալուց  
մեծ մեծ վնասներ են պատահում, առանձին ժողո-  
վեց պատուական եպիսկոպոսներին, ականաւոր քա-  
հանաներին եւ աւագ տանուտէրներին ու սեպուհ-  
ներին, եւ ասում է նոցա յայտնի կերպով, թէ  
"Մինչեւ երբ պիտի համբերենք ճշմարտութիւնը  
թագցնելով եւ վնաս կրենք: Ոստանեսոյ տանից  
մէկը՝ Զանդաղան անունով լսեց միքանիսից Հայերի  
խորհուրդը եւ գնաց շուտով յայտնեց իրեն նը-  
մանակ Աստակին: Ե.յս որ լսեցին աւագ նախարար-

ները, բռնեցին նորան 'Չանդազանին' Արծակ <sup>8</sup>  
գիւղում, եւ տարան մի Բերդկունս <sup>9</sup> անունով  
ուրիշ գիւղում կապեցին նոյն Բագրեւանդ գաւա-  
ռումը, եւ շատ օր չանցաւ քարկոծել տուին նորան  
եւ մեռցրին: <sup>7</sup>Մեծ ահ ընկաւ բոլորի վերայ: Ամեն-  
քը բարկութեան կրակով բորբոքուան եւ շուտով  
զէնքերին դիմեցին. բոլոր գիշերը կազմուան կար-  
գուան եւ արեւի ելլելու ժամանակ գունդը երեք  
մաս բաժանեցին ու բանակի <sup>10</sup> վերայ ղոկեցին.  
առաջին գունդը արեւելեան կողմից, երկրորդ  
գունդը արեւմտեան կողմից, երրորդ գունդը հիւ-  
սիսային կողմից, չորս բոլորով պատեցին փակեցին  
բանակի բազմութիւնը. շատերին կոտորեցին, շատ  
շատերին էլ երեւելի մարդիկներից կապեցին ու  
ամուր բերդերի մէջ իրենց իշխանութեան տակ  
պահեցին: Յետոյ հաւաքուան ամենքը միասին Վար-  
գանի մօտ եւ նորա հետ միասին սուրբ գրոց հրա-  
մանի զօրութեամբ մտան Միւնեսաց Վասակ իշխանի'  
'այսինքն' շայոց մարդպանի մօտ, եւ յայտնեցին  
նորան բոլորի միաբանական խորհուրդը. թէպէտ  
աշխատում էր 'բանը' յետաձգել, մէկ իւր որդւոց  
համար, որոնք թագաւորի մօտն էին, մէկ էլ՝ որ  
իւր սիրտն էլ միշտ չարի կողմն էր քաշում. բայց  
հարկից ստիպուած յանձն առաւ նոցա հետ միա-  
բանելու: Սուրբ եպիսկոպոսներն եւ քահանաներն  
հրամայեցին նորից, որ երգումի աւետարանը բերեն  
եւ երգում տուին բոլոր զօրքը թէ՛ ազաաններն եւ  
թէ՛ անաղատները Միւնեսաց Վասակ իշխանի հետ  
միասին ու հաստատեցին երգումը, ու՛մ մատանի-  
քով որ աւետարանը կնքուած չէր՝ կնքեցին, եւ  
ձեռքերը երկինք բարձրացուցին եւ ասացին. "Տէր

ՅԵՆԷԱ.

ՅԵՄԵԱ.

ընդունէ՛ մեզի ինչպէս որդին ուրացող. մեղանչեցինք երկնքի եւ քու առաջդ, լուսաւորիչ առաքեալների բարեխօսութեամբ եւ նոցա նմանի ու գործակցի այսինքն սուրբ նահատակ Գրիգորի քաջածաւրչարանքների շնորհիւ պարգևէ՛ թողու թիւն մեր մեղքերին, եւ ինչպէսոր քու սուրբ արիւնդ մեղաւորների վերայ թափեցիր, մեզ էլ շնորհք տուր, որ մեր արիւններն այս խոստովանութեան վերայ թափենք եւ ամէն մէկիս մեղքերի թողութեան վերայ: ,,

Այս ամէնը գրեցին ու կնքեցին նախ՝ Միւնեաց վասակ իշխանի մատանով եւ յետոյ բոլոր Հայոց տանուտէրների եւ սեպուհների մատանիներով. դրին երգումի աւետարանի մէջ ու տուին պատուական եպիսկոպոսներին ու աւագ քահանաներին, որ այն տեղ էին: Այս կատարելուց յետոյ՝ մեծ ուրախութեամբ եւ հոգեւոր երգերով գնացին Տիրոջ տունը եւ երկրպագութիւն տալով միակ ճշմարիտ Աստծուն աղօթք արին:

Եւ զօրքի բազմութիւնը առանց սպասելու բնաւ մեծամեծների հրամանին գնաց մոխրանոցի տունը, առաւ կրակարանը ու թափեց նորա միջի կրակը ջրի մէջ, իբրեւ իւր եղբօր գիրկը, ինչպէս որ Պարսից սուտ վարդապետներն ասում են, մոգերի բազմութեան մասին էլ հրաման արին, որ այն օրը զգուշութեամբ պահեն եւ հետեւեալ օրը արեւի ծագելու ժամանակ սպանեցին նոցա՝ մոգերին Զարեհաւանում: <sup>11</sup>

Այս ամէնը կատարելուց յետոյ՝ հանգստանում <sup>Երվան.</sup> էին շորերի ժամանակ: Նոքա, որոնք եկած էին եկեղեցու սուրբ գանձերն յափշտակելու, ակամայ

դրին իրենց անձերն ու աւարը սուրբ եպիսկոպոս-  
ների եւ բոլոր զօրքի յառաջը եւ այսպէս քան-  
դուաւ ապականուաւ թագաւորի հրամանը:

Մարդիկ եւ կանայք եւ բոլոր ուսմիկ բաղմու-  
թիւնը աղաղակում էին եւ ասում. «Պատրաստ  
ենք սուրբ եկեղեցու համար հալածանք քաշելու եւ  
մեռնելու ամէն կերպնեղու թիւնների ու շարչարանքի  
մէջ: Չէր երեւում այնուհետեւ տէրն աւելի քան  
թէ իւր ծառան եւ մէկը միւսից պակաս չէր երեւ-  
ում քաջութեան մէջ. ամէնքն առհասարակ մի  
զինուորութիւն էին կազմում, միեւնոյն ճշմարտու-  
թեան գօտուով էին ամրացրել իրենց մէջքերը՝ թէ  
մարդիկ եւ թէ կանայք: Այս խօսքն էր աւելի  
ստէպ լսուում բոլորի բերանից՝ «միմիայն քաջու-  
թիւն ցոյց տալով մեռնի՛ք, անուն ու հոգիներս  
միայն վաստկինք:»

Արկին յարձակուան այն բերդերի ու աւանների  
վերայ, որոնք Պարսիկների ձեռքն էին զանազան  
տեղերում. քանդում աւերում էին նոցա բնա-  
կութեան տեղերը՝ մեծ Արտաշատն <sup>12</sup> իւր աւան-  
ներով, Վառնի <sup>13</sup> քաղաքը, Անին, <sup>14</sup> Արտաղերսը <sup>15</sup>  
եւ ուրիշները: Արծանում քանդում էին նոցա  
չինուածները. կրակ ձգում վառում էին նոցա  
աստուածալաշտութեան տները եւ կրակի սպա-  
սաւորութեան տեղերը. բոլոր հեթանոսական տե-  
ղերում կանգնում էին Քրիստոսի խաչը եւ յոյսերը  
նորից հաստատելով՝ առհասարակ ուրախութիւն  
էին անում ամէնքը:

## ԳԼՈՒԽ Թ.

### Յղճուն թիւն:

Մտերի մի մասը մանուս է զօրքով Աղուանք եւ ստիպում է ուրացու թեան: Աղուանները խնդրում են Հայերից օգնութիւն: Հայերը խնդրում են օգնութիւն Յոյներից, Յոյները մերժում են: Եպիսկոպոսները քաջալերում են ժողովրդին: Հայոց զօրքն երեք բաժին է լինում. Վարդան Մամիկոնեանը մէկ բաժնով օգնում է Աղուանքն ազատում եւ Հորոյ պահակին տիրում. (150):

«Դուք որ կորցրէք էք՝ զտիրութիւն սկարացն բարձեք:»

Մի քանի օրից յետոյ Աղուանքի հազարապետը սուրբ եպիսկոպոսի հետ միասին սաստիկ շփոթուած եկան շտապեցնում էին Հայոց զօրքը եւ ասում. «Պարսից գունդը, որ Հոնաց աշխարհքի կողմերն էր, յետ եկաւ մտաւ մեր երկիրը, ուրիշ թագաւորական պրուծի էլ հետը. նաև երեք հարիւր մոգ վարդապետներ բերած են հետները, բաժան բաժնութիւն ձգեցին մեր երկրի մէջ. ուզում էին եկեղեցիներին ձեռք տալ ու թագաւորի հրամանով ստիպում էին եւ ասում. «Թէ ձեր կամքով չկատարէք, հրաման ունինք գիւղերում ու քաղաքներում կրակատուններ շինել եւ ձեր բոլոր երկրի մէջ օրէնսդիր նշանակել մոգերին ու մոգապետներին:

Հայոց զօրքն այս որ լսեց, բժաւ շթուլացաւ քաջասրտութիւնից եւ միաբան իրարու սիրտ տատալով՝ ճանապարհ ձգեցին նոցա, որ միտքը խաբխրելով յետ պահեն Պարսիկներին, որպէսզի եկեղեցիներն ձեռք չտան, մինչև որ մի հնարք գրանին իրենք:

Շուտով նամակ գրեցին կայսերն եւ Յունաց ղազար.

գրան մեծամեծներին. նաև Աղձնեաց բղեջխին, Անգեղ տան իշխանին, Ծովիք, Հաշտեանք, Եկեղեաց գաւառները և Անտիոքայ մեծ սպարապետին<sup>1</sup>: Պատրաստեցին Ահա՛ն Ամատունեաց իշխանին, իբրև խելացի և հաւատարիմ մարդու, Աարդանի եղբօրն Հմայեակ սուրբ սեպուհին, Արժուռնեաց տոհմից սուրբ Աղանի<sup>2</sup> եղբօրը երանելի Եփհրուժանին և<sup>3</sup> Գնունեաց տոհմից Ատովմ<sup>4</sup> մեծ նախարարին. սոցա ուղարկեցին շտապով արևմտեան երկիրն՝ օգնութիւն խնդրելու համար և ևթէ նա<sup>3</sup> կամենայ՝՝ այսինքն Յունաց կայսրը՝, նորա իշխանութեան տակ մտնելու:

Չագար.

Նորա գնացին ներկայացան Թէոդոս թագաւորին, որ լսելով նոցա գալու պատճառը յանձն առաւ զօրքով օգնել նոցա՝ Հայոց՝. և այնժամանակ, երբ պատրաստութիւն էր տեսնում իւր խոստումը կատարելու, մահը վրայ հասաւ և զրկեց նորան կեանքից: Նորա տեղը թագաւոր եղաւ Մարկիանոս, որ իմանալով Հայերի խնդիրքը, խորհուրդ՝ հարցրեց իւր գրան մեծամեծներից: Անատոլը, որ այն ժամանակ Անտիոքի սպարապետն էր, և մի Փղորէնտ անունով Ասորի մարդ, որ թագաւորի Գրան գլխաւորներինցն էր, պատասխան տուին Մարկիանոսին և ասացին. «Մեզ հաճելի չէ արհամարհել այն դաշինքը, որ գրած հաստատած են առաջին թագաւորները, և պատերազմով բաժանել մի երկիր իրենց թագաւորի իշխանութեան տակից. այլ և հարկաւոր է միտք բերել գործերի անորոշ գրութիւնը, որ մարդ չգիտէ թէ ինչպէս պէտք է վերջանայ:» Այսպէս յետ կայնեցրին թագաւորին,

Եփհր.

որն շտապեցաւ հաստատ խօսք տուեց Պարսիկնե-

րին՝ թէ ձեռնթափ է լինում Հայոց զօրքին օգնութիւն տալու:

Այսպէս՝ կարուաւ մարգիկներէից օղնականութիւն գտնելու յոյսը. նորա, որոնք Յունաց երկիրն էին գնացել, երբ տեսան թէ էլ օգուտ չկայ նոցանից, շտապեցին յետ գալ, որ գոնէ՝ իրենց ընկերների հետ միասին մարտիրոսութեան բաժակը խմել կարողանան. 'որովհետեւ Յունաց պատասխանն այնքան յետացաւ, որ Հայերի ու Պարսիկների մէջ արդէն սկսուել էր պատերազմը':

Հագար.

Եպիսկոպոսներն սկսեցին քաջալերել թէ իրենց անձերն եւ թէ Հայոց զօրքը. նայում էին իրենց սակաութեանը եւ երկու թագաւորների միաբանութեանը, բայց բնաւ չէին թուլանում. միտք էին բերում առաջին ուխտադրութիւնը, սիրտ առնում եւ ասում. "Պատրաստ ենք սպանուելու եւ մեռնելու: Աստու համար հեշտ է քիչ մարդոց ձեռքով շատերի գործ կատարել եւ անարգների միջնորդութեամբ մեծմեծ բաներ գլուխ բերել:," թէպէտ չունէին թագաւոր, որ նոցա առաջնորդ լինէր, ոչ էլ գրսից՝ օտարների միջից՝ մէկ օղնական, բայց իրենց առաքինութեամբ եւ սուրբ Աշորհապետների մխիթարելովը ամէն տնից եկան 'Հայերը' շուտով հաւաքուան միասին. բոլոր զօրքը երեք գունդ բաժանեցին. առաջին գունդը Ռմրոսեան՝ Ներշապուհին տուին, որ Հայաստանը պահպանէ՝ Ատրպատական աշխարհի սահմանների մօտ. երկրորդ գունդը Հայոց զօրավար Արդանի ձեռքը տուին, որ Արաստանի սահմաններից անցնի գնաց ճորայ մարզպանի \* վերայ, որն եկած էր Աղուանքի եկե-

Երեմ.

\* Ըստ Ապղանկատացոյն՝ 2-րդ, 7-րդ և 8-րդ:



“Գուք միամիտ եղէք այդ մարդոց կողմից, որոնք <sup>Հոգոտ.</sup>  
 Վարդանի հետ եկել են ձեր դէմ. որովհետեւ  
 զօրքի մեծ մասը այստեղ իմ մասս պահեցի եւ շատ  
 քիչն է դորա (Վարդանի) հետ:” Այս գրեց Աբբուխտ <sup>Եղիշ.</sup>  
 մարզպանին: Կա երբ ստուգեց թէ Հայոց սպարա-  
 պետը սակաւածիւ զօրքով է գալիս իւր վերայ,  
 ժողովեց իւր բոլոր զօրքի բազմութիւնը եւ շտա-  
 պով անց կացաւ Կուր անուն մեծ գետից եւ պա-  
 տահեցաւ նորան Խաղխաղ <sup>4</sup> քաղաքի \* գէմու-  
 գէմը:

Քաջ Վարդանը եւ բոլոր նորա զօրքը տեսնել-  
 լով հեթանոսների գնդի բազմութիւնը, թէեւ  
 իրենք շատ նուազ էին, ամենեւին չվախեցան, այլ  
 միարանեցան ու ասացին. “Տէր Աստուած, քու զէն-  
 քովդ ու ասպարովդ օգնէ՛ մեզի, որ ամէնքը ճանա-  
 չեն, թէ յաղթելն էլ յաղթուելն էլ քու ձեռքդ  
 է: Բնէք պատրաստ ենք քու սիրուդ եւ ճշմար-  
 տութեան համար մեռնելու:”

Կուրի ժամանակ կալգի գրեց (Վարդան) իւր <sup>Հոգոտ.</sup>  
 գունդը՝ եղած այրուծիու չափով. երեք թեւ բա-  
 ժանեց եւ ամէն մէկը մի զօրադլխի ձեռքը տուեց.  
 առաջինի վերայ զօրադլուխ նշանակեց Արշախր  
 կամսարականին, որն Հայոց զօրավար Վարդանի  
 փեսան էր՝ նորա գուստրն ունենալով իրեն կին՝  
 նորան նիզակակից տուեց Գիմաքսեան ցեղից աւագ  
 սեպուհ Մուշին. ձախ կողմը տուեց Խորէն Խորխո-  
 սունու ձեռքը, եւ նորան օգնական նշանակեց Հը-  
 մայեակ Գիմաքսեանին. ինքը սուրբ զօրավար Վար-  
 դանն էլ պատրաստում էր իրեն յարձակման մէջ-  
 տեղին: Այսպէս՝ ճակատ կազմելով եւ Աստուծոյ

\* Ըստ Գազարու. — Խ-չի-ւ զի-ւ:

Եղիշէ. Խնամոցը ապաւինելով յարձակեցաւ թշնամիների վերայ: Եւ աջ թեւը կոտորելով՝ ձախ կողմովը ձգեցին, եւ փախստական արին բոլոր դաշտի երեսով. ամենմարդ առհասարակ իւր հակառակորդին էր

Չազար. գետին խփում: Ամենից յառաջ անցան կռուի տեղն Արշաւիր Կամնարականն եւ Մուշը, որոնք այն կողմերը լաւ շճանաչելուց սաստիկ ճահիճների թանձրախոր տեղերին պատահեցան, եւ ձիերի սաստիկ արշաւելուց տղմի մէջ խրուան ձիերով միասին. այնտեղ գտաւ իւր պսակը Գիմաքսենից սեպուհ խորականցի Մուշը, իսկ Կամնարականը ձիուց ցած եկաւ ոտով՝ 'հասաւ' սպանեց Լինաց թագաւորի եղբօրը Աուրկին եւ խոր տղմի միջից գուրս քաշեց նորա ձին. այս տեղ ոտքից դուրս եկաւ մի մոյկը եւ թաղուամնաց այն խոր ճահիճի մէջ, եւ ինքը Կամնարականը միամոյկ ցնխոտուած՝ քաշեց ցամաք հանեց երիվարը զէնքով միասին եւ քաջաբար նստելով նորա վերայ՝ իւր կողմի թշնամիներին փախստական արաւ: Եւ տեսաւ, որ Հայոց երանելի սպարապետը բոլոր Հայոց գնդի հետ միասին իրենց յառաջը թափում էին Պարսից զօրքի բոլոր մարդոցը<sup>5</sup>, որոնցից կէսին իրենց սրերովն էին զիաթաւալ անում գետնի երեսը, կէսին հէնց գետի մէջն էին խեղդում, մնացածներին էլ դաշտերի ու անտառների խորքերը ցրուելով՝ Լուրնաս<sup>6</sup> գետի ձորերի մէջ՝ կորցնում էին: Իսկ Պարսիկ մեծամեծներից միքանիսը նաև եր նստելով մեծ գետի 'կուրի' միւս կողմը փախչելու էին շտապում. այս պատճառով Հայոց զօրավարը շտապեցնում էր Արշարունեաց իշխան Արշաւիր Կամնարականին, որ փախչող նաւերի հետեւից նետեր ձգէ, վստահ լինելով որ նա հաստատ եւ ան-

Մոգսն  
կազ.

սխալ նշան բռնող է: Իսկ Արշաւիր Կամսարականը նաւաւարներին եւ նաւերի մէջ գտնուող շատերին սաստիկ վէրքեր հասցնելով նաւաւարներից եւ Պարսիկ գլխաւորներից շատերին գետի մէջ խեղդեց կորցրեց: Եւ ամենեւին չգտնուաւ նոցանից <sup>Օգոստ.</sup> Պարսիկներից՝ մէկ մարդ, որ ապրել եւ անտառախիտ դաշտերի մէջ թափչել կարողանար: Մէկ մարդ միայն թշնամի զօրականներից կարողացաւ իւր գլուխը պրծացնել պատերազմի միջից եւ մնացած բուն բանակը գոյժ բերել:

Հայոց զօրքը բանակից շատ աւար ժողովեցին, շատ արծաթ ու ոսկի, զէնքեր ու զարդեր քաջ մարդիկներից եւ լաւ ձիերից մնացած: Յարձակեցան այն բերդերի եւ քաղաքների վերայ, որոնք Պարսից ձեռքն էին Աղուանից երկրում. մոգերի երամները կոտորեցին ու թուղանների եւ գազանների առաջ կերակուր թողին. եկեղեցիներն էլ սաստիկ նեղութիւնից աղատեցին:

Այսպէս՝ յաղթութիւն պարգեւեց նոցա վերին Օգնականը, եւ դարձան իրենց բանակն ու հանգստացան այն տեղ այն օրը: Միւս օրը ճանապարհ ելան եւ անցան Կուր գետը: Աղուանքի նախարարներից, գիւղականներից շատերը, որոնք ցրուել էին Կովկասու սարերի ամուր տեղերում, <sup>Օգոստ. (Մոգսու հար.)</sup> երբ որ գործի յաջողութիւնը տեսան, եկան խառնուան նոցա՝ Հայոց՝ զօրքի հետ. գնացին Հոնաց պահակի՝ վերայ որն Աղուանից եւ Հոնաց երկրների սահմանի վերայ է. քանդեցին Պահակը, կոտորեցին նորա ներսի զօրքը, եւ դուռը՝ սյսինքն պահակը՝ տուին Ղահանի \* ձեռքը, որ Աղուանից <sup>(Չազար)</sup>

\* Ըստ Կաղանկատ.՝ Ղարղանայ ու մեծ յազգէ թագաւորացն Աղուանից:.

Մտնու  
նայ .

Թագաւորների ցեղից էր . զեսպաններ զսկեցին  
Հոնաց երկիրը նոցա հետ դաշինք կապելու , որ ան-  
' քակ միաբանութիւն պահեն իրենց հետ : Իսկ նոքա  
' Հոնք ' իսկոյն եկան այնտեղ եւ ականատես եղան  
գործի յաջողութեանը . յանձն առան քրիստոնեա-  
ներին երգում տալու ' որ հաստատ միաբանութիւն  
պահեն նոցա հետ :

## ԳԼՈՒԽ Ժ.

### Վասակի նենգութիւնը:

Վասակ Սեւինն Հայոց զնդի միւս բաժնով մեռւմ է Հայաստանում եւ նորից յետ է կայնում իւր երգումից. Հայաստանի շատ տեղերը նորա նեւրով աւերուում են, Հայոց եկեղեցիները քանդուում եւ եկեղեցականները հալածուում: Վարդանը վերագանուում է Աղուանքից: Վասակը փախչում է իւր երկրի ամրոցները. Հայոց ուխտապահ զօրքը մեռւմ է Այրարատում ձմերելու: Եպիսկոպոսները մոխիթարում են ժողովրդին եւ դեսպան են ուղարկում Զազկերտի մօտ: Զազկերտն յառաջ թողութիւն է շնորհում քրիստոնեաներին, յետոյ կրկին միտքը փոխում է: Հայերի մէջ տիրում է միարանութիւն: Միհրանը սէհըր գալիս է Փայտակարան եւ Վասակի օգնութեամբ պատերազմի պատրաստութիւն տեսնում: Հայերի անօգնական վիճակը Վասակի եւ իւր արքանեակների նենգութիւնները. Միհրանը սէհըր յանձնում է Վասակին Պարսից զօրքը եւ զօրագլուխները. գլխաւոր զօրապետութիւնը տալիս է Մուշկան Նիսաւաւուրտին:

« Ամենայն թագաւորութիւն բոժանեալ  
յանձն՝ աւերի: » ԴՈՒԿ:

Այն ժամանակ երբ այս ամէնը գլուխ էր գալիս Հայերի ուղածի պէս, յանկարծ դեսպան եկաւ Վարդանի մօտ եւ ասաց՝ թէ՛ « Ահա՛ անօրէն Վասակը յետ կեցաւ Աստուծուն առած խոստումից. նմանապէս նորա մօտ մնացող Հայ իշխաններն էլ յետ կեցան եւ գլուխ բարձրացրին. դեսպան զըրկեցին Պարսկաստան եւ նամակներով խօսք կապեցին Պարսիկների հետ. Հայոց բերդերի մարդոցը՝ զուրս արին ու իրենց կողմից բերդակալ նշանակեցին, Մամիկոնեան, Կամսարական եւ ուրիշ տանուտէրների որդիքը հաւաքեց դայեակների մօտից նենգաւոր Վասակը, բերել տուեց՝ իւր մօտ եւ

Ուսն փ.  
Էդիսց.

\* Ղազարն ասում է. « ամենէլ տուեց Պարսից թագաւորի մօտ: »

Սիւնեաց աշխարհի անառիկ բերդերում պահեց :  
 Եղև. <sup>1</sup>Քանդեց թագաւորական ձմերանոցները, <sup>2</sup> որոնց  
 մէջ զօրքերի բնակարաններն էին. աւերեց նաև  
 Արտաշատ նահանգը եւ նոյնիսկ Արտաշատը միան-  
 գամայն վառեց. եւ ձեր բոլորիդ գերդաստաններն  
 իրենց բնակութեան տեղերից հալածեց. սուրբ  
 եկեղեցիներին էլ ձեռնամուխ եղաւ. քահանաների  
 ընտանիքը գերի քշեց, նոցա իրենց էլ կապեց ու  
 բանտ դրեց: Այն գունդը, որ Ատրպատականի կող-  
 մերն է, չկարողացաւ օգնութեան հասնել եւ դեռ  
 ձեզ հետ միաբան են, իսկ այն՝ որ նորա 'Վասակի'  
 հետ էին, շատերը նորա մոլորութեան յետեւից  
 գնացին:

Չագար. Այս ամէնը որ լսեց Հայոց Սպարապետ Վար-  
 դանը նախարարների եւ այն զօրքի հետ, որն իրեն  
 մօտ էր, շտրտմել չէին կարող. եւ իրենց ու գերի  
 առած երեսաներին ամենապահ Վշին յանձնելով  
 բոլորը միասին ճանապարհ ելան Աղուանքից եւ՝ երե-  
 սուն օրուայ մէջ եկան հասան՝ Հայաստանի Այ-  
 րարատ գաւառը, այնտեղ ձմեռուայ օրերը քնացին  
 անհամբեր սպասելով գարնան օրերին, որ իրենց  
 նահատակութեան օրուանը հասնին \*, որովհետեւ  
 էլ ուրիշ բան չէր անցնում նոցա մտքից յաղթե-  
 լու կամ յաղթուելու մասին. եւ մէկ ամսից յե-  
 տոյ եղաւ մեծ պատերազմը:

Եղև. Երբ ուրացեալ Վասակին եւ իշխաններին իմաց

\* Սիւնեաց Ստ. եպիսկոպոսն ասում է. «Երբոր մեծ յաղ-  
 թութեամբ վերադարձաւ Աղուանքից, միւս իշխանների  
 հետ միասին շատ օրեր մտածում էին մի հնարք գտնելու :  
 Եւ երբ բոլոր տեղերից յոյսերը կտրեցին, մահը կեանքից  
 վեր գասեցին. եւ գնալով Արտաշ գաւառը հասնելոյ յե-  
 տոյ եղաւ մեծ պատերազմը, որի մէջ նահատակուե-  
 սուրբ Վարդան. . . . .»

տուին Վարդանի զօրքի քաջութեան եւ Հոնաց միարանութեան մասին, մի գիշեր օգնական ճարեց փախաւ իւր երկրի (Սիւնեաց) ամուր տեղերն ընկաւ եւ այնպէս շտապ փախաւ, որ գերին ու աւարը, որ Այրարատ գաւառից առել էր, իրենն էլ հետը՝ թողեց ու գնաց: Եւ որովհետեւ ձմեռ ժամանակ էր ու պաշարն էլ թշնամեաց զօրքերն էին յափըշտակել, չկարողացաւ 'Վարդան' մի տեղում դարմանել բոլոր զօրքը միասին, այլ ուղարկեց զանազան գաւառներ, պատուիրեց՝ որ գարնան սկզբին պատրաստ գտնուին պատերազմի. եւ աւագ նախարարներից միքանիսին միայն թողեց իւր մօտ. իւր ձեռքն էին եւ թագաւորանիստ տեղերը. ընկճող գնդեր ուղարկեց Սիւնեաց երկրի վերայ. առաւ ու աւերեց շատ գաւառներ եւ այնպէս նեղը ձգեց նորան 'Վասակին' եւ բոլոր նորա զօրքին, որ մեռած էշեր ու ձիեր էին ուտում սովից ստիպուած: Եւ շատ վնաս հասցրին ուրացեալ Վասակին, այն աստիճանի՝ որ սուրբ եպիսկոպոսներն ու բոլոր քահանայական դասը գառն արտասուքներ էին թափում խեղճ վնասուողների վերայ:

Բոլոր եպիսկոպոսներն եւ քահանաները հրամայեցին ժողովրդին, որ ամբողջ Քաղոց <sup>3</sup> ամիսը պահք պահեն եւ աղօթք անեն Աստուծոն: Եւ մեկ Պարսկի, որ յառաջ բանտումն էր, հանեցին բերին նախարարների առաջը, խօսեցին նորա հետ եւ ցոյց տուին բոլոր վնասները, 'այսինքն' երկիրների աւերուիլը եւ թագաւորական զօրքի կոտորուիլը. հասկացրին նորան ապստամբ Վասակի խաբէութիւնը, որ Հայերի անունով <sup>4</sup> թագաւորին խաբել է թէ մոգութիւնն յանձն կ'առնեն: Նորան 'այն Պարսկին'

գեսպան զրկեցին՝ թագաւորի մօտ որ հնարք գտնի գուցէ՝ կարողանան իրենց եղբայրներին նեղութիւնից ազատել։ Այն մարդը գնաց այս ամէնը պատմեց թագաւորին. թագաւորն էլ նայեց տեսաւ, որ ինքը շատ տկար է. հասկացաւ որ՝ ինչոր ուզում է անել, գլուխ բերել չի կարող, սկսեց քաղցր ու աղաչական խօսքեր խօսել ամէնքի հետ ու ասում էր. «Ինչ վատ բան եմ արել ես, ո՞վ նեղութիւն տուեց նոցա եւ ստիպեց միւսնոյն մոգական հաւատն ընդունելու. մանաւանդ քրիստոնէութեան համար (որը մեր դէնիմազդէզի \* հետ մէկ եւ հաւասար եմ համարում). տեսէ՛ք, դուք ինձ գործել տուիք այն ինչոր ես չէի ուզում։» Այս ամէնը խօսում եւ իւր սխալուելու մեղքը մոգպետի եւ մոգերի վերայ էր գծում. նոցանից սակաւ մարդիկ (միքանիսը) ասում էին «Ճշմարիտ է, քանց թագաւոր, այդ ամէնը, ինչոր ասացիր, այդպէս է. այժմ ահա դու կարող ես ամէն բան կարգով կանոնով ձեռքիդ տակ քաշել. որովհետեւ աստուածները քեզ իրաւունք են տուել, որ ամէն բան, ինչոր կ'ուզես, կարող ես անել։ Արկայնամիտ եղիր եւ համբերութեամբ թողտուր այդ մարդիկներին քրիստոնէութիւնը պաշտելու եւ դոցա ձեռքով կարող ես հնազանդեցնել ապստամբներին։» Թագաւորը հաւանեցաւ այս խօսքերին։ Այնօրը հրաման տուեց որ քրիստոնէութեան հաւատի մէջ մնան. հրովարտակներ զրկեց քրիստոնէաների համար. «Եթէ, ասաց, մէկը կայանքի տակ է, թագաւորական հրամանով պէտք է արձակուի. եթէ մէկից մի բան յափշտակուած է, յետ պէտք է տրուի. նմանապէս հողերը թէ հայ-

\* Տես Եսայի Եւսեփ, զուխ Բ. 1. Օրէնք մոգուց։

բական լինին, թէ պարգեւած եւ թէ գնուած, թէ որ մէկը խլել է նոցանից (քրիստոնեաներից) հրամայեցինք, որ յետ դարձուին:» Նոցանից՝ քրիստոնեաներից՝ հաւատարմութեան վկայութիւն էր ուզում եւ երգումով խօսք էր տալիս թէ «բնաւ յիշելու չեմ քէն կամ վրէժ. ինչպէսոր յառաջ հաւատարմութեամբ պաշտում էիք ձեր կրօնը, այսուհետեւ էլ նոյնը արէք, միայն թէ մեր իշխանութեան տակից դուրս միք գար:» Յետոյ երբ ստուգեց թէ Հոռոմներն յետ քաջուան քրիստոնէութեանն օգնական լինելուց, նորից դարձաւ դէպի իւր առաջուայ սխալ կարծիքը:

Իսկ Հայերը զարմացած մնացել էին նորա անկատար խորհուրդների վերայ եւ ասում էին. «Ինչքան լիրբ է նա իւր խորամանկ խաբէութիւններով. ըստորում երկու երեք անգամ մեր անքակ միաբանութեան փորձը տեսաւ՝ էլ ի՞ դեռ կամենում է մեզ վհատեցնել. ի՞նչ լաւութիւն է արել նա Պարսից տէրութեան մէջ գանուող բոլոր եկեղեցիների: Նա՛ որ ինքն իրեն համար վատ է, ուրիշների համար լաւ լինել չէ կարող. որովհետեւ անիրաւութիւնից արդարութիւն չի լինիր, ստութիւնից էլ ճշմարտութիւն: Արեխայի նման խաբուելու չենք, անտեղեակ մարդու պէս մոլորուելու չենք, տգէտների նման սխալուելու չենք, այլ պատրաստ ենք ամէն մի փորձութիւն քաշելու, որպէսզի ինչ բան որ սկսել ենք, նոյնը գլուխ բերենք քաջութեամբ, այլ ոչ թէ վատութեամբ. ձեր տուած պարգեւների ու արած լաւութիւնների տեղ՝ ուզում էք մեր ճշմարիտ կեանքը խլել մեզնից, այդ գլուխ գալու բան չէ եւ լինելու էլ չէ: Նա որ քրիստոսին հայ-

Տոյում էր եւ հաւատացեալներին ուրացնել էր տալիս նորանից, երգում էր ուտում իւր սուտ ու սնոտի հաւատի վերայ, որ ամենայն չարչարանք թափէ եկեղեցու պաշտօնեաների գլխին, այժմ եկել է գողի նման շնորհակալութիւն է յայտնում, եւ այդպիսով կամենում է իւր բոլոր շարութիւնը մեր գլխին թափել: Գորան հաւատալ չենք կարող եւ չենք ընդունում գորա սուտ հրամանը:,,

Յազկերտը զօրք ժողովեց եւ շատ փղի երամակներ էլ նոցա հետ ուղարկեց Հայաստան. Հայոց սահմաններին հասնելով՝ զօրավարը մտաւ Փայտակարան քաղաքը, որ իւր չարահնար մտքերի համար պատրաստութիւն տեսնի: Այս զօրավարն էր Պարսից բոլոր տէրութեան հրամանատարն ու իշխանը Միհրնբերսէհ անունով:

Միհրնբերսէհը, որովհետեւ Աստակի ամբաբիշտ լինելը ճանաչում էր, ուղարկեց եւ կանչեց նորան իւր մօտ, ստուգեց նորա հաւատարիմ լինելը եւ Հայերի անիրաւ ապստամբութիւնը. թէեւ սաստիկ ատում էր նորան, այնու ամենայնիւ երեսանց մեծարեց եւ սխալ կարծիքի մէջ ձգեց նորան, որպէս թէ նա կարող է մինչեւ անգամ թագաւորութեան հասնել<sup>5</sup>, միայնթէ մի հնարք գտնի, որ թագաւորի կամքը կատարուի Հայաստանում:

Աստակը յանձառու եղաւ նորա կամքին հետեւելու, գողի նման սողաց մտաւ ինչպէս օձ ամբականների մէջ, առաւ դուրս բերեց շատերին ազատներից եւ իշխաններից ու միքանիսին էլ յիշեալ քահանաներից. եւ իւր ամբողջ երկիրը՝ Սիւնիք՝ ապստամբեցնել տուեց ուրացութեամբ՝ եկեղեցու դէմ:

Վասակն ամենեւին չէր դադարում. նամակներ <sup>Գրագր.</sup>  
էր գրում Հայաստանի իշխաններին, գիւղականնե-  
րին ու քահանաներին. ինչոր թագաւորից եկած  
սուտ սուտ երգումներ ու դատարկ վկայութիւններ  
էր ցոյց տալիս թէ «մեծ թագաւորը թոյլ է տալիս  
քրիստոնէութիւն պաշտելու եւ մոգերի սպանման  
վնասը չի պահանջում. ապստամբութեան մասին  
ասում է, յիշելու էլ չեմ, միայն թէ հեռու կացէք  
Վարդանի իրատից ու խօսքերից եւ միք կորչիր  
դորա հետ միասին.» իւր մասին էլ գրում էր  
ուխտանենգ Վասակը թէ «ես միջնորդ կրլինիմ այս  
բոլոր բանի համար եւ Հայաստանն անվնաս կը պա-  
հեմ.» եւ տալիս էր սուտ քահանաների ձեռքը,  
որ ման ածեն չըջեցնեն՝ Հայաստանի մէջ:

Մի երէց Զանգակ անունով եւ մի երէց Պետ <sup>Եղիշէ:</sup>  
րոս անունով, մի սարկաւազ Սահակ անունով\*  
երգում էին սուրբ աւետարանի վերայ եւ ասում  
թէ «թագաւորը կը թողնի բոլորիդ քրիստոնէու-  
թիւն պաշտելու.» եւ խորամանկութեամբ շատերին  
սուրբ միաբանութեան միջից բերում խտոնում էին  
ուրացողների գունդը:

Վասակ գրեց եւ ցոյց տուեց հազարապետին  
Վիհրներսէհին՝ սաստիկ պարծենալով թէ ինչպէս  
հեռուեցաւ խաբէութեան վատ գործին, ինչպէս  
բաժանուած ու երկցեղ ձեւացրեց Հայոց զօրքը.  
Նա եւ քանդեց Վրաց, Աղուանից եւ Աղձնեաց եր-  
կրոնների միաբանութիւնը Հայոց հետ: Ինչպէս որ  
նա շատ չար էր Վասակ, եւս առաւել ժամանակն  
էլ բերեց նորան յաջողութիւն գործերում. որով

\* Ըստ Ղազարու՝ երէք երէց էին՝ Զանգակ, Սահակ Զոյ-  
նոյ, Պետրոս Երկաթի: Սահակն ու Պետրոսը Արմենաց  
գասառից էին:

հետեւ դրսից ոչ մէկը չգտնուաւ ամենեւին Հայոց գնդին օգնող, Հոնաց ազգից զատ, բայց Նոցա համար էլ հաւաքեց Արեաց<sup>5</sup> պրուձիու բազմութիւնը եւ արգիլեց ու փակեց Նոցա ելումուտը:

Այս ամէնը գրեց եւ հասկացուց Պարօից մեծ հազարապետին, որն իւր մօտ կանչեց Աստակին եւ ովոր նորա հետ կային բոլոր իշխաններին. շատ պարզեւներ տուեց թագաւորի կողմից թէ Նոցա եւ թէ այն զօրքին, որը Նոցա հետ մէկ խօսք էին: Ուրացեալ քահանաներին էլ ցոյց տուեց Աստակ, վկայեց եւ յայտնեց թէ «աստ սոցանով պէտք է որսամ եւ քանդեմ Նոցա (ուխտապահների) միաբանութիւնը:»

Հազարապետն երբոր լսեց այն ամէնը, շատ շնորհակալ եղաւ, եւ Նոցա առաջ յոյսեր դրեց. «եթէ, ասաց, յաղթութիւնը մեր կողմը լինի, միւս քահանաների հարստութիւնն<sup>7</sup> էլ դոցա կըրաշխեմ եւ դոցա ծառայութիւնն էլ թագաւորին կը յայտնեմ:»

Այսպէս շարժեց Աստակ եւ շիտթեց Հայաստանը. մինչեւ անգամ հարազատներից շատերին բաժանեց իրարուց: Եւ ինչ էլ որ շէին իմանում անօրէն հեթանոսները, նա հասկացնում էր Նոցա:

Այս ամէն շարութիւնները որ տեսաւ Միհրներսէհ նորա մէջ, իրենից շատ նորա վերայ էր դրել յոյսը: Նորանից իմացաւ բազմութեան (զօրքի) թիւը. աւելի շատ աշխատեցաւ տեղեկանալ թէ քանի՞ մարդ են քաջ նահատակների գլխաւորները, որպէսզի ամէնմէկի դէմ երեքին պատրաստէ:

Երբ այս ամէնը տեղեկացաւ Միհրներսէհ Աստակից, կանչեց բոլոր զօրագլուխներին.<sup>8</sup> Եւ

ամենին պատուէր տուեց նորա առաջը, որ նորա  
խրատին լսեն բոլորը. և բոլոր զօրքին զօրագլուխ-  
ների հետ միասին յանձնեց մէկ իշխանի, որի  
անունն էր Մուշկան Նիւսալաւուրա: Եւ ինքը գնաց  
Արեւելեան երկիրը՝ Պարսկաստան՝ և ներկայա-  
ցաւ մեծ թագաւորին, պատմեց նորան բոլոր անցած  
բաները՝ այսինքն իւր հնարագիտութիւնը և  
Վասակի խաբէրայութիւնքը, որով քանդեց բաժ-  
նութիւն ձգեց Հայոց գնդի մէջ:

Բարկացաւ Յաղկերան ինքն իւր մէջ և ասաց  
անսուտ երգմամբ. «Եթէ այն անօրէնը՝ Վասակը՝  
ազատուի պատերազմից, մեծ անարգանքով ըմպել  
կրտամ՝ նորան մահուան դառն բաժակը:

## ԳԼՈՒԽ ԺԱ.

Ա Ն Ա Ր Ա Յ Ր Ի Կ Ո Ւ Ն Ը :

Ուխտապահները ժողովուրդում են Երատաշատ: Առանձնաբ Աժատունին գնում է լրտեսելու Պարսից զորքը եւ շփոթ ձգելով նորա մէջ յեա է գալիս: Պարսից ու՛ Հայոց բանակները տեղաւորուում են Երտազ գաւառի վերայ: Ուխտապահների նախապատրաստութիւնը. Ղեւոնդ երէցի ճառը. Աւարդանի կարգացած քաջալերութիւնը: Ամբողջ զորքը եւ զորավարները կատարում են իրենց քրիստոնէական վերջին պարտքը եւ պատրաստուում մահ ընդունելու: Պարսից զորավարն էլ իւր զորքն է քաջալերում եւ ճակատը պատրաստում: Աւարդանը բաժանում է Հայոց զորքը շորս թեւ: Պատերազմը տեւում է առաւօտուանից մինչեւ արեւի մայր մտնելը, երկու կողմն էլ յաղթուում է: Աւարդանն ուրիշ նախարարների հետ ընկում է պատերազմի գաշտում (151 թ.): Հայերի յուսահատ վիճակը:

«Մահ ոչ իմացեալ՝ մահ: Եւ մահ իմացեալ՝ անմահութիւն է:» ԵՂԻՇԷ:

Գագար. Ի՛նչոր ուխտապահները՝ որ Աղուանքից եկած եւ Այրարատում գաղարած էին ձմեռ ժամանակ՝ մեծ զատկի տօնին ուրախութեան աւետիս տուին իրարու կենարարի յարութեան պատճառով. մի քանի օրից յետոյ լսեցին, թէ զօրք է եկել Հեր եւ Զարեւանդ գաւառը: <sup>1</sup>

Եղիշէ. Մեծն Աւարդան բոլորովին չթերահաւատեցաւ եւ չվսխեցաւ. սիրտ տուեց ինքն իրեն եւ Գագար. քաջալերեց զօրքերին: <sup>2</sup> Իմաց արաւ ուխտապահներին, որոնք տօն օրերի պատճառով իրենց աներն էին գնացել եւ ասաց. «ահայ մեծ գունդ է եկել հասել ու բերում է աստուածասէրների համար երկնաւոր պսակներ. դէհ, ո՞վոր ցանկանում է առնել՝ թո՛ղ շտապի. իսկ թէ ուրիշ կերպ մտածօղ կայ ձեր մէջը, ինչպէս ուրիշներն՝ են անում», լաւ է թո՛ղ գաղարի մնայ, ուրոր հաճելի կըլինի.

որովհետեւ ոչոք պսակ ընդունել չի կարող, եթէ շտանջուի:»,

Այս որ լսեցին ճշմարտութիւն եւ անմահութիւն սիրողները, շտապեցին եկան Վարդանի յետեւից. <sup>Եղեշէ</sup> եւ հրամայեց նոցա ժողովուիլ Արտաշատում, որովհետեւ դեռ իւր ձեռքն էր բոլոր երկիրը: <sup>Չագար</sup> 'Այնտեղից' ուղարկեց Վարդան բոլոր մեծամեծների հաւանութեամբ՝ Ամատունեաց ցեղից մէկ իշխանի Առանձար անունով, մօտ երեք հարիւր ձիաւոր զօրք էլ հետը, որ գնան լրտեսեն թէ ինչքան է Պարսից զօրքը: Առանձարն եւ այն զօրքը որ նորա հետ էր, տեսան Պարսից բանակը, եւ մի զօրեղ վերջապահ թեւի վերայ ընկնելով՝ շտերին սրերի վերայ հանեցին \*, ուրիշներին էլ փախցրին Պարսից զօրքի մէջ ձգեցին. ու իրենք ողջառողջ ուրախութեամբ յետ եկան Հայոց բանակը եւ պատմեցին Աստուծոյ ցոյց տուած զօրութիւնը. զօրագլուխների մասին էլ 'պատմեցին' թէ Մուշկան 'նիւսալաուրտն եւ Գղովն են. այն էլ հազորդեցին, որ թշնամին շուտով կը հասնի Հայաստանի միջին գաւառները:

Այսոր լսեց սպարապետը՝ շտապեցան նոցա 'Պարսից' գէմ գնալու, գուցէ, ասացին, հէնց այն տեղ չեր եւ Զարեւանդ գաւառում կարելի լինի վերջ տալ պատերազմին:

Բայց աւելի շտապով գալիս էր Պարսից զօրքը, եւ հասաւ Արտաղ <sup>3</sup> գաւառը Աւարայր գիւղի մօտ մի շրջափակուած տեղ Տղմուտ գաշտի վերայ. նորա մէջ եւ բանակ գրին Պարսիկները:

Պենտեկոստէի ուրբաթօրը եկան հասան նոյն <sup>Եղեշէ</sup>

\* Այսինքն կոտորեցին, թրէ անցուցին:

տեղերին մօտ եւ Հայոց զօրքը: Եւ բոլոր զօրքին հանդէս արին տեսան, որ վաթսունը վեց հազար մարդ կայ թէ հեծեալ (ձիաւոր) եւ թէ հետեւակ (ոտնուոր): Ահեկ էին նոցա հետ սուրբ Զովսէփն ու Ղևւոնդ երէցը եւ ուրիշ շատ քահանաներ:

Չագոր.

Անպատրաստ գտնելով Պարսից զօրքը, թէ կամենային կարող էին 'Հայերը' մասնաւորապէս փնաս տալ նոցա. բայց այն օրը թող թողին ու հանգըստացան: Պարսից բանակի զօրքին մօտիկ իրիկուայ ժամանակ իրենց սովորութեամբ աղօթք եւ ժամասացութիւն արին եւ շափաւոր ուրախութեամբ եւ կերակուրներով սկսեցին զուարճանալ: Այս ամէնը կատարելուց յետոյ սուրբ քահանաներից հրաման առան, որ բոլոր գիշերը արթուն մնան եւ աղօթքով անցկացնեն: Սուրբ երէցն Զովսէփ, որ կաթողիկոսութեան ամօտն էր կառավարում, հրաման տուեց սուրբ Ղևւոնդին, որ խրատ ասէ ժողովողին եւ քաջալերէ: Սուրբ Ղևւոնդն էլ բոլոր գիշերն առանց ձանձրանալու ուսուցանում էր ամէնքին՝ առակներ բացատրելով. նոցա միտքն էր ձգում ամէնից առաջ սուրբ Գրիգորի անպատմելի համբերութիւնը, յետոյ բոլոր ուրիշներինը. «միքանիսը, ասում է, տանջանքով ու մահով, միքանիսը պահքով ու գետնատարած անկողիններով, ուրիշներն աղքատսիրութիւնով, շատերն էլ աշխարհաշինութիւնով եւ արդար դատողութեամբ երեւելի են եղել եւ Աստուծուն ընտրելի. որովհետեւ ամէնքին էլ մարդասիրութեան վիճակ չի պատահիր, այլ ժամանակին յարմար, ինչոր Աստուած կրպարգեւէ, եւ առնօղները պարտաւոր են արդար վաճառականութիւնով գնել անցաւորի տեղ

անանցը: թէ որ մահը մահով պիտի մեռնի, պէտք է չվախենանք Քրիստոսին մահակից լինելու. որովհետեւ ում հետ որ մեռնում ենք, նորա հետ եւ կենդանութիւն կ'առնինք: Բոլոր ուրիշները, որ հաւատի համար քաջութիւններ արին զանազան դարերում, մարդիկներից գովեստ ստացան եւ Աստուած էլ նոցա արդարացուց: Չէ՞ որ մի եւ նոյն Տէրն է սկզբից մինչեւ հիմայ եւ մինչեւ յաւիտեան: Այժմ մեր յոյսը մեզ երկու կերպ է երեւում, թէ որ մեռնինք, կեանք է. թէ որ մեռցնենք, դարձեալ նոյն կեանքն է մեր առաջը:»

Արիչ շատ խօսքեր ասաց եւ քաջալերեց մեծամեծներից ամէն մէկին երանելի սուրբ Զովսէփի հետ միասին: Ոոցա վարդապետութեանը ուշագրութեամբ ականջ դնելով երանելի Աշարանը խօսել սկսեց զօրքի հետ եւ ասում է. «Շատ պատերազմներ մտած եմ ես, դուք էլ ինձ հետ էք եղել. պատահել է, որ քաջութեամբ յաղթել ինք թշնամիներին, պատահել է, որ նոքա են մեզ յաղթել. բայց այն քաջութիւնները անարդ եւ անօգուտ եմ համարում եւ այն շատ պարզեւնեքն էլ ոչինչ բան են. որովհետեւ այդ բոլորն էլ անցաւ որ են: Չլինի թէ հեթանոսների շատութիւնիցը վախենանք եւ ահ քաշենք. թէ որ մեր կեանքի վերջը եկել է, այս պատերազմի՝ բերած՝ սուրբ մահովն ընդունենք նորան ուրախ սրտով, միայն թէ մեր՝ ցոյց տուած՝ քաջութիւնների մէջ վատութիւն՝ վախկոտութիւն՝ չհառնենք: Ես մոռանալ չեմ կարող, ի՛նչպէս մենք անօրէն իշխանին խաբեցինք, երեսանց նորա չար կամքը կատարեցինք մեր սիրելիների պատճառով, որ մեծ նեղութեան մէջ էին.

մենք հնար էինք փնտրում նոցա աղատելու. քանի՞ որ նոցա բնաւ օգնել չկարողացանք, անկարելի բան է, որ մարմնաւոր սիրու համար՝ Աստուծոն մարդուս հետ փոխենք: Երեք կռուի մէջ Աստուած ինքը մեզի օգնեց մեծ հրաշքով. քաջութեան անունը ժառանգեցինք, թագաւորի զօրքերը կոտորեցինք, մոգերին անողորմաբար մեռուցինք, կռապաշտութեան պղծութիւնը զանազան տեղերից սրբեցինք. եթէ ուրիշներն աստուածային օրէնքների անունով կոտորեցինք ու մեր անձերին պարծանք ժառանգեցինք, ինչքան աւելի կրլինի, եթէ մենք մեր տիրոջ Յիսուսի Քրիստոսի անունը վկայելով մեռնինք, որին երկնաւորներն անգամ փափագում են, եթէ հնար լինի: Այն օրը, երբ մարդիկ մեր չար գործի մասին լուր առան, շատ արտասուք թափեցին թէ՛ եկեղեցիներում եւ թէ՛ մեր սիրելիների մէջ. մեր ընկերներն անգամ մեզի դառն մահ սպառնացան. մեր ծառաներն անգամ մեզանից հեռու էին փախչում. եւ որ ամէնից գլխաւորն է, ոչ միայն մարդիկ աշխարհքիս վերայ, այլ եւ հրեշտակներն երկնքում իրենց երեսները մեզանից դարձրին, որ չլինի թէ տխուր դէմքով նայեն մեզ վերայ: Եւ ասա եկել հասել է ժամանակը, որ ամէն մի վատ անուն մեզանից հեռու ձգենք: Ախար թերահաւատութեան նշան է. մենք թերահաւատութիւնը մեզնից վաղուց հեռացրել ենք. նորա հետ միասին թող վախն էլ փախչի մեր մտքից ու մեր խորհուրդներից:»

Առաքինի զօրավարը կրկին քաջալերեց ծածուկ ամէն մէկին, եւ բոլոր պակասութիւնները լրացուց իրենից եւ ընկերներից. ո՞վ զէնք չունէր՝ զէնք տուեց, ով հագուստ չունէր՝ հագուստ, եւ ով ձի

չունէր ձի: Առտա ոռճիկներով \* ուրախացնում էր ամենքին. քաջ մարդիկներին յիշատակարանները միշտ կրօնէում էր նոցա առաջ. Մակարացեցւոց երեւելի նկարագրութիւնը ձեռքն առած՝ կարդում էր բոլորի առաջը. զօրականի միտքն էր ձգում, թէ ինչպէս Մատաթիայի ազգատոհմը քանդուաւ, բաժանուաւ միութիւնից, մեհեաններ շինեցին, Աստծու ճանապարհից դուրս եկան ևւ ընդունեցին մահուան պատիժը սուրբ միաբանեալների ձեռքից:

Երբոր այսպէս խօսեց պրծաւ սուրբ զօրավա- <sup>2. ԳՊԳԲ.</sup>  
րը, աբլորի կանչելու (խօրօղխօսին) ժամանակ հրամայեցին սուրբ Զովսեփն ու Ղևւծնդը բոլոր քահանաների հետ միասին ժամասացութիւնը կատարել: Սեղան կաղմեցին, ամենասուրբ Խորհուրդը <sup>ԵԿԵԿ.</sup>  
կատարեցին. աւազան կաղմեցին, թէ՛ր զօրքի մէջ մի երեսայ կար, գիշերը մկրտեցին. առաւօտեան հազրբդուան սուրբ Խորհրդին. ևւ բոլոր զօրքի բազմութիւնն աղաղակեց ու ասում էր. «Թող հաւասարէ Աստուած մեր մահը արդարների մահի հետ ևւ չմատնէ իւր եկեղեցին հեթանոսների ձեռքը: Այսպէս՝ շտապում էին առաջիկայ գործին <sup>2. ԳՊԳԲ.</sup>  
ձեռք տալու, որովհետև արևը դուրս գալուն մօտ էր, ևւ Պարսից գունդը պատրաստութիւն էր տեսնում պատերազմն սկսելու:

Պարսից գնդի զօրավարն երբ տեսաւ՝ առհա- <sup>ԵԿԵԿ.</sup>  
սարակ, թէ էլ յոյս չկայ ցրուել Հայերին անքակ միաբանութիւնից, յառաջ կանչեց անօրէն Ղասակին ևւ բոլոր ուրացեալ հայ իշխաններին, սկսեց հնարներ իմանալ նոցանից, թէ ինչպէս պէտք է

\* Օրտիկան պաշար. սնունդ:

յաղթեն. հրամայեց յառաջ բերել փղերի երամակները, և ամէն մէկ փղին երեք հազար զինուորուած մարդ նշանակեց. խօսել սկսեց արքունի հրամանով մեծամեծների հետ ու ասաց. «Միտք բերէ թող ամէն մարդ մեծ թագաւորի հրամանը. լաւ է մահ ընտրէք քան թէ կեանք վատութեան մէջ. դուք իմքերդ լաւ գիտէք Հայերի քաջութիւնը և իւրաքանչիւր մարդու անձնազոհութեան հոգին:» Նաև նոցա միտն էր ձգում շատ ընկերակիցներին, որոնք թէևս պատերազմից ապրեցան, բայց սրով ընդունեցին իրենց մահուան վճիռը, նոցա որդիքն ու աղջիկներն արտօրուան և բոլոր հայրական գաւառները ձեռքերից առնուան: Արդի բերեց բոլոր զօրքը և մեծ գաշտի երկայնութեանը ճակատ կազմեց. հրաման տուեց որ գնդի աջ կողմիցը պատրաստ գտնուին Հայոց զօրավարի դէմուդէմը:

Քաջ Ալարդանը բոլորի խորհրդով զօրագլուխներ նշանակեց. կռուի տեղը որոշեց բոլոր գաշտի երեսովը Արեաց զօրքի դէմուդէմը՝ Տղմուտ գետի ափում. առաջին գունդը Արծրունեաց Ներշապուհ իշխանի ձեռքը տուեց և նորան նիզակակից նշանակեց Մոկաց մեծ իշխանին: Արկրորդ գունդը տուեց Խորէն Խորխոռունու ձեռքը, և նորան նիզակակից նշանակեց Ընծայինին և Ներսէհ Քաջբերունուն: Արբորդ գունդը տուեց Աւանանդեցի Թաթուլին, և նորան նիզակակից նշանակեց Տաճատ Գնթունուն: Իւր վերայ առաւ չորրորդ գունդը, և իրեն նիզակակից նշանակեց Արշալիրին և իւր եղբօրն Համազասպեանին\*:

\* Ըստ Ղազարու. «մէջտեղի դնդին զլիսուոր նշանակեց

Այսպէս կազմուան, առան սուրբ քահանաների  
 օրհնութիւնը, Աստուած կանչեցին եւ 'երկու  
 կողմն էլ գազանացած զօրութեամբ յարձակուան  
 իրար վերայ: Ազմուկի խստութիւնից եւ ձայների  
 շատութիւնից սարերի քարանձաւները շարժ էին  
 գալիս: Ահա՜ անաւորների կոփկոփուիլն եւ աղեղների  
 լարերի ճարձատիլն առհասարակ ամէնքի ականջը՝  
 խլացնում էին. խումբ եղած բոլոր բազմութիւնը  
 գետը միջերն առան փակեցին. եւ Պարսից գունդը  
 գետի գծուարութիւնիցը վախենալով տեղնուտեղն  
 սկսեց որդունքի նման զեռալ, սաստիկ զարնուելով  
 իրարու, երկու կողմից էլ շատ վերաւորներ գե-  
 տին ընկած դիպածաւալ էին լինում:

2-րդ ր.  
 Եզեշէ.

Քաջ Աարդանը Պարսից գնդի աջ թևեր կոտ-  
 րելով գազանների կողմն էր ձգում. մինչեւ ան-  
 գամ մատեան գունդը քանդուաւ բաժանուաւ իւր  
 պինդ կազմուածքից՝ 'Այնպէս որ' սկիզբը Պարսից  
 զօրքը փախչել սկսեց. իսկ Հայոց զօրքի միւս բազ-  
 մութիւնից, ով որ կամաւ չէր ցանկացել երկնային  
 բարութիւններին հասնելու, նոյնպէս փախաւ կորաւ:  
 Պուշկան Նիւսալաուրտը տեսաւ, որ Հայոց գնդից  
 միքանիսը բաժանուել են եւ յետ են մնացել սա-  
 րերի հովիտների մէջ, այդ պատճառով սիրտ տուեց  
 Արեաց զօրքին, որ իւր շուրջն էին եւ Աարդանի

2-րդ ր.  
 Եզեշէ.

Արծրունեաց տէր եւ մարգպետ Ներշապուհին եւ Ար-  
 շարունեաց Արշախր իշխանին, Գակաց Արտակին եւ այլ  
 մեծ նախարարներին: Աջ կողմից նշանակեց երանելի  
 Մաղխազ խորէնին, Անանեղայ տէր Թաթուլին, Ներ-  
 սէհ Քաջբերունուն եւ այլ մեծ նախարարների հետ.  
 ձախ կողմից իրեն պատրաստեց իւր գնդով Առաւելներից  
 Փափազ իշխանի եւ ուրիշ մեծ նախարարների հետ,  
 որովհետեւ այն կողմից աւելի շատ էր երեւում Միւնեաց  
 կատիշ զօրքը եւ ուրիշ զօրաւոր մարդիկների դրօշները,  
 եւ իւր եղբորն Համազասպեանին էլ թողեց վերջա-  
 պահու:

գնդի դէմն էին տեղ առել: Այնտեղ երկու կողմն էլ զգացին իրենց յաղթուիլը. քաջ Աւարդանը իւր քաջ նիզակակիցներէ հետ միասին բաւական շատ կոտորած պատճառեց այն տեղումը, եւ ինքն էլ արժանացաւ կատարեալ նահատակութիւն ընդունելու:

Պատերազմի երկարելուց օրն էլ տարածամէլ սկսեց եւ երեկոն վերայ հասաւ. շատերի մահուան բողբոջները հասել էին, եւ երկու կողմի մէջն էլ մեծ իրարանցումն էր թագաւորած:

Նորա որոնք մնացել էին՝ ցրուեցան ամուր ձորերի լեռնադաշտերը, եւ երբ պատահում էին իրարու, մէկ անգամ էլի նորից իրար արիւն էին թափում. եւ մինչև արեւի մէր մասնէն անդադար կատարուում էր նոյն անախորժ գործը:

Արովհետեւ գարնանային էր ժամանակը, ծաղկալից դաշտերը արիւնի գետ էին դառել. մէկը որ տեսնում էր այն ընկած դիակների ահագին կոյսը, սիրաբ դող էր ելնում եւ աղիքը կտրատուում. ոչ թէ կողմ կար որ յաղթող էր, եւ կողմ էլ կար՝ որ յաղթուած, այլ քաջերը քաջերի դէմ ելան եւ երկուսն էլ յաղթուան:

Արովհետեւ Հայոց զօրավարը մեծ պատերազմի մէջ ընկած էր, չկար այնուհետեւ մէջտեղը մի գլխաւոր, որ նորա մօտ ժողովուէին մնացած գունդը. ապրօղներն աւելի շատ էին՝ քան թէ մեռնողները. եւ ընկան նորա՝ ապրօղները՝ երկրի ամուր տեղերը, զօռով տիրեցին շատ այնպէս բերդերի՝ որ ոչոք չէր կարող առնել:

Հարգութեամբ.

Արոնքոր այն ժամանակ սուրբ Աւարդանի հետ նահատակուան, այս մարդիկն են. խորխոռունեաց

ցեղից Խորէն, Պալունեաց դեղից Արասկ, Գընդու-  
նեաց ցեղից Տաճատ, Գիմաքսեան ցեղից Հմայեակ,  
Քաջբերունեաց ցեղից Ներսէհ, Գնունեաց ցեղից  
Վահան, Ընձայնու ցեղից Արսէն, Արուանձատեան  
ցեղից Գարեգին: Եւ ինչպէսոր շատ հետամուտ  
եղանք իմացանք նահատակուածների թուի մասին,  
պատերազմի տեղում աւագ նախարարների հետ  
մարտիրոսական պսակ ընդունեցին երկու հարիւր  
եօթանասունը վեց մարդ. եւ նոցա թիւը, որոնց  
ամրոցներից իջուցին սպանեցին, եօթը հարիւր յի-  
սուն մարդ. բոլորը միասին հազար երեսունը վեց  
(1036) մարդ:

Իսկ Պարսից զօրքից՝ պատերազմի օրն ընկած-  
ների թիւն է (ինչպէս որ հաստատ տեղեկացել  
Պարսից զօրագլուխներից եւ ասել են մեղ,) երեք  
հազար հինգ հարիւր քառասուն չորս (3544) մարդ:  
Սրացեալների կողմից կոտորուել են 3544 մարդ: <sup>Երեւ.</sup>  
Մուշկան Նիւսալաուրտը, երբոր տեսաւ թէ իւր  
զօրքը եօթն անգամ աւելի է վնասուել քան թէ  
Հայերինը, հանգստութիւն չէր կարող գտնել իր  
մտքի մէջ:



զրին իրենց յոյսը և Երկուերեք անգամ աւետա-  
րան տանել տուին. զօրականներից շատերը չէին  
կարող հաւատալ Աստակի սուտ խոստումին. քաջ  
զօրականներից մէկը՝ Բակ անունով՝ Ելաւ պարսպի  
վերայ և յիշեցնում էր Պարսից զօրավարի առաջ  
այն բոլոր չարութիւնները որ արել է Աստակ  
Հայաստանի գլխին: Այս միւսնոյն մարդը (Բակ)  
նոյն գիշերն եօթը հարիւր մարդով Ելաւ բերդից  
գնաց և ոչոք չկարողացաւ ձեռք տալ նորան:  
Իսկ նոքա, որոնք ամբողջի մէջն էին մնացել, ներսը  
պաշար չունէին և ակամայ դուրս եկան նորա՝ Ա-  
ստակի՝ առաջը կայնան. և հրամայեց նոցանից եր-  
կու հարիւր տասներեք մարդու սպանել. սուրբ  
քահանաները, որոնք այն տեղ պատահեցին, Յով-  
սէփն ու Ղեւոնդը շատ ընկերներով միասին իրենց  
պարանոցները սրին մօտեցուցին, որովհետև ոչթէ  
այն երանելիները մարմնաւոր կեանքի ակնկալու-  
թիւն ունէին, այլ իմաստութեամբ հնարք էին  
փնտրում աշխարհի շինութեան համար. այս պատ-  
ճառով էլ թագաւորին բողոքեցին, և բոլոր գան-  
գատներն անօրէն Աստակի վրայ էր: Այս որ լսեց  
Մուշկան Նիւսալաւօրտ չհամարձակեցաւ նոցա  
սպանել, այլ Յովսէփին ու Ղեւոնդին թակել տուեց  
և հրամայեց զգուշութեամբ պահել. իսկ միւս  
քահանաներին արձակեց իրենց տեղերը ասելով, որ  
այսուհետև պէտք է շինութիւն և խաղաղութիւն  
լինի երկրի մէջ:

Մարդիկ էլ կային, որ բոլորովին չէին հաւա-  
տում սուտ թողութեանը, այլ ասում էին, թէ  
«ի՞նչ պէտք է մեզ անցաւոր աշխարհքիս կեանքը.  
կամ ի՞նչու էլ տեսնում ենք մենք արև մեր սի-

րելիներից յետոյ, շէնք ուզում ձեր խաբերաց  
հրամաններին լսել եւ այդ անօրէն իշխանի ձեռքն  
ընկնել:», Թողին այնուհետեւ ամէն մարդ իւր գիւղն,  
աւանն ու սպարակը. ելան հարսներն առա-  
գաստներից եւ փեսաները սենեակներից. գնում  
էին երիտասարդներն ու կոյսերը, եւ բոլոր մարդոց  
ու կանանց բազմութիւնը, բռնում էին անապատի  
ամուր տեղերն եւ շատ լեռների անխար խորշերը.  
լաւ էին համարում որ գաղանի նման ապրին աս-  
տուածպաշտութեամբ քարանձաւների մէջ, քան թէ  
ուրացութեամբ փափկակեաց լինին լաւ շինուածք-  
ների մէջ. նոցանից ոչմէկն էլ յուսահատու-  
թեամբ սուգ չէր անում սրով ընկածների վերայ,  
եւ ոչոք չէր հառաչում մերձաւոր սիրելիների  
վերայ. շատերը մեծ նախարարների ազգից էին բո-  
լոր իրենց սիրելիների հետ միասին միքանիսը  
Խաղտեաց<sup>1</sup> անլոյս երկրում, շատերը հարաւային  
կողմերը Տմորեաց<sup>2</sup> անմատչելի ամուր տեղերում,  
ոմանք Արցախի<sup>3</sup> թանձրախիտ անտառների մէջ,  
ոմանք էլ միջերկրեաց տեղերում տիրեցին զօռով  
շատ ամրոցների. ամէնքը մեծ համբերութեամբ  
քաջում էին շատ նեղութիւն եւ խնդրում էին  
Աստուծոց՝ որ շտեմնին իրենց սուրբ եկեղեցիների  
աւիրուիլը:

Թագաւորական հրամանով շատ այրուծի եկաւ  
աւելացաւ ընկածների փոխարէն, եւ գնդի շատու-  
թիւնն այնքան դառաւ ինչպէս առաջ. եւ սկսեցին  
կռուել Ասպոյտ<sup>4</sup> սարի մեծ բերդերի հետ: Ներսը  
գտնուողները քաջութեամբ կռուում եւ սպանում  
էին Պարսից գնդի միջից շատերին եւ մնացածներին  
փախստական էին անում ձգում բանակը: Ոչոք

Հաւատաց գուրս գալ իջնել նոցա 'Պարսից' մօտ, բայց երդումների պատճառով հարկ եղաւ մէկ Արշէն անուեով քահանայի ցած գնալ նոցա մօտ. խնդրում ազաչում էր ուրացեալ Ասասկին եւ նորա միտն էր ձգում, որ նա յառաջ քրիստոնեաց է եղել, որպէսզի գուցէ մի փոքր քաղցրանայ 'խրղձայ', բայց նա 'Ասասկ' բողոքովին չսեց նորա խօսքերին, կասեց երանելուն եւ նորա հետ ցած եկողներին եւ տարաւ իւր հետ: Արբոր տեսաւ Ասասկ թէ Պարսից զօրավարը նորա խրատին հետեւում է, սկսեց ասպատակաւ որ զրկել եւ վառել տալ շատ տեղեր:

Նորա որոնք Տմորիքի ամուր տեղերումն էին, ամրականների օգնութեամբ վրայ պրծան եւ հասան մինչեւ Պարսից մօտաւ որ երկիրը, շատ արիւններ թափեցին այն տեղ, եւ մնացածներին էլ գերի առան տարան իրենց ամրոցները, եւ Պարսից երկրի շինուածներն էլ կրակի տուին:

Նորա, որոնք խաղտեաց սարերումն էին, յարձակեցան Տայոց <sup>5</sup> ձորագաւառի վերայ, եւ գտան այն տեղ շատ թագաւորական զօրք, որ եկել էին գերի տանել այն տեղի ամրականներին եւ կարծում էին, թէ նախարարների գանձերն էլ այն տեղ կըլինին: Արայ թափուան, կոխ բացին եւ Պարսից գնդի զօրութիւնն ընկճելով՝ մնացածներին էլ քշեցին իրենց կողմերից գուրս:

Նորա, որոնք Արցախու անտառների մէջ փախել պահուել էին, Հոնաց գնդին համոզեցին եւ յիշեցուցին նոցա դաշինքը Հայերի հետ, որ անսուտ երդումով հաստատել էին: Հոները մեծ գուեղ ժողովեցին եւ ընկան Պարսից տէրութեան սահման-

ների վերայ, շատ գաւառներ ոտնակոխ արին, և այսպիսով յայտնի ցոյց տուին թագաւորին՝ Յազկերտին՝ որ Հայոց գնդի հետ միաբանութիւն ունին:

249700 .

Մուշկան Նիւսալաւուրտը՝ վերջնապէս՝ գիր գրեց թագաւորին և յայտնեց նորան պատերազմի ելքը թէ՛ յազթութեան աւետիս տալով և թէ՛ միառ մի ցոյց տալով և սպանուածների հաշիւը երկու կողմից և և: Յազկերտը լսելով քաջ մարդոց մեռնիլը Պարսից գնդի միջէն և Վարդանի մահն և և, մեծ սուգի մէջ ընկաւ յիշելով նորա՝ Վարդանի՝ քաջութիւնն ու լաւութիւնը, որ նա շատ անգամ՝ ցոյց էր տուել Արեաց աշխարհի՝ Պարսկաստանի՝ թշնամիների դէմ: Նւ որովհետեւ՝ Մուշկան Նիւսալաւուրտը գնաց, ամէն բան գրեց և ցոյց տուեց թագաւորին ճշմարտութեամբ ու գործի փնասը՝ մեղքը՝ ուրացեալ Վասակի վերայ ձեցեց, ուստի թագաւորը կամենում էր տեսնել թէ ո՞վ կայ այնպիսի մարդ, որ կարողանայ ճշմարտութեամբ պարզել ամէն բան: Միհրանեսին ասաց թագաւորին թէ «ինչ գլխաւոր մարդիկ որ կան քրիստոնեայ Հայերի մէջ՝ կանչել տուր նոցա քեզ մօտ, և յօժարութեամբ կրգան կրպատմեն քեզ ամէն բան ճշմարիտ կերպով:»

249710 .

Արորմիզդ \* անունով մէկ աւագ նախարարի գրեց Յազկերտ՝ և յանձնեց նորան Հայոց աշխարհի մարդպանութիւնը. Մուշկան Նիւսալաւուրտին էլ Աղուանից աշխարհքը ղրկեց \*\*, և նորա հետի մնացած զօրքն էլ հաւաքեց այն ամրոցները

\* Ըստ Ղազարու. «Արշական յաշխարհէն Հայոց»:

\*\* Ըստ Ղազարու. «Մուշկան Նիւսալաւուրտին դուռը կանչեց»:

որ Հոններն աւերել էին Հայոց հետ դաշինք ունենալու պատճառով. թագաւորն աւելի շատ տրամած էր Պահակի աւերուելու վերայ, որն երկար ժամանակ հազիւ կարողացել էին շինել և այն միջոցներն այնպէս հեշտ քանդուաւ և նոր շինելու էլ յոյս չկար:

Յազկերտ հրամայեց նաև, որ Ասսակին և <sup>Զագար.</sup> գլխաւոր քրիստոնեաներին կանչեն գալ իւր մօտ: Ատորմիկդին էլ յանձնեց որ Հայերին շտրանեցնէ, այլ սիրով նուաճէ, և հրաման տուեց որ քրիստոնէութիւնը համարձակապէս պաշտուի:

## ԳԼՈՒԽ ԺԳ.

Ա զ ա տ ո ՚ ՚ թ ի ո ՚ ՚ :

Ատորովիզդ խաղաղութիւն եւ կրօնի ազատութիւն հրատարակեց. Հմայեակի Մամիկոնեանի գնդի վերայ զօրք զըկեց: Հմայեակն սպանուաւ եւ նորա գունդն էլ յիբուցան եղաւ: Հայոց բողոքները լսեց եւ գրեց Յազկերտին: Այսպէս նախ քահանաներին եւ ուրիշ կապեալներին ուղարկեց Պարսկաստան, ապա ինքն էլ գնաց (353) Յազկերտին ներկայանալու: Յազկերտը նոր հրովարտակներ գրեց ազատութեան: Հայոց նախարարները գորանից սիրա առած՝ եկան ներկայացան Յազկերտի առաջը:

«Այս պատկերն ընդ ընկերաց իւրոց  
եթէ ոչ տանջի:» Դ. ՓԼԸՊ:

Գրառք

Ատորովիզդ մարդպանն եկաւ եւ շատ խաղաղութեան գրեք գրեց Հայաստանի զանազան կողմերը, եւ յայտնեց թէ բոլորին էլ շնորհում է թագաւորը քրիստոնէութեան կարգը. այս համբաւից ուրախութեամբ եկան ժողովուան նորա մօտ Պարսկաստանից ու Սիւնեաց աշխարհից ամէնքը:

Երանելի Հմայեակի վերայ Տայոց ամուր տեղերը զօրք զըկեց Սիւնիների եւ Պարսիկների միջից, գունդը երկու բաժին արաւ եւ նոցա վերայ զօրագլուխ նշանակեց Արտէն Վաբեղեանին եւ Արաղ-Հապուհ Պալոււնուն: Եյն ժամանակները Հայ փախըստականներից շատերը՝ նախարարներ, սեպուհներ, քաղաքացիք եւ ռամիկներ՝ փախել գնացել էին Տայոց երկիրը եւ հաւաքուել Արաղան սուրբ զօրավարի եղբօր՝ Հմայեակի՝ մօտ, որն ուշացել էր Յունաստանից գալիս եւ շէր հասել պատերազմին, ու Պարսիսար՝ սարի մօտ Խաղտեաց սահմանի վերայ մնացել էր: Ատորովիզդի զըկած գունդը՝ եկաւ յարձակեցաւ նորա Հմայեակի՝ ընկերների վերայ Որջնահաղ գիւղում Տայոց գաւառի մէջ. փախստական մարդիկը շուտով ձիերը նստան, միքանիսը

մերկանդամ, միքանխը զինուորուած կռիւ բացին  
Պարսից զօրքի հետ եւ փախցրին նոցա. շատերին  
հէնց այն տեղ գեղի մէջտեղը, ուրիշներին էլ այգի-  
ների մէջ կոտորեցին. այն տեղ եւ ընդունեց կա-  
տարելու թեան պսակն եւ Հմայեակ սեպուհը. իսկ  
ուխտապահների զօրքը, երբ գործը պսպէս տեսան,  
ընկան մեծ սգի մէջ եւ յուսահատեցան. իսկոյն  
փախան եւ դէպի Պարսաւար սարը դարիվեր գնա-  
ցին: Ատրորմիզդը լսելով այնչափ լաւ մարդոց կոր-  
չիլը Պարսիկների եւ Միւնիների միջից, թէ եւ արխ-  
րեցաւ, բայց տեղեկանալով Հմայեակի մեռնելու  
մասին՝ շատ ուրախացաւ, իմանալով որ էլ բոլորո-  
վին չկայ քաջ երեսելի զօրավար Հայերի մէջ: Խորհուրդ  
կազմեց թէ ինչպէս հնարք կրլինի  
փախստականներին որսալ առանց Պարսիկների կը-  
ռուելուն եւ հարկի տակ դնել Հայոց աշխարհը. եւ  
այս կարծիքին եկան թէ միմիայն սուտ երդումով  
եւ անտափ խոստումներով կարելի կրլինի այդ: Ա-  
ղարկեց նոցա մօտ Յազկերտի բերանից ասելու, թէ  
«ոչ մէկիդ էլ չենք սպաներ, եւ ոչ էլ ձեր տէրու-  
թիւնը կամ պատիւը կրխլենք ձեռքերէդ». եւ այս-  
պէս խարերայութիւններով նուաձեց մարդիկներին  
եւ բռնեց բոլորին էլ զրկեց թագաւորի դուռը:

Յետոյ՝ թագաւորի հրամանով կանչեց իւր մօտ Երկր.  
Աշտունեաց Սահակ եպիսկոպոսին, որ նորանից իմա-  
նայ թէ ինչ գանդատներ ունին. այդ Սահակը մի  
ատրուշան էր աւերել եւ ծեծել էր կրակի սպա-  
սաւորներին: Արծրունեաց տանից էլ մէկ Մուշէ  
անունով քահանայ, որը Արծրունեաց երկրին ա-  
ռաջնորդ էր, մի կրակատուն էր աւերել եւ շատ  
նեղութիւններ էր տուել մոգերին: Երկու ուրիշ

քահանայ էլ, Սամուէլն եւ Աբրահամը, որ Արտաշատու ատրուշանն էին քանդել, ուրացեալ Ասսակի ձեռամբ բռնուած էին բանտի մէջ: Կանչեց եւ մեծ Յովսէփին, Ղեւոնդին, Քաջաջին ու Արշէնին: Երբ որ տեղեկացաւ մարդպանը նոցանից ամենից 'ինչոր պէտք էր', ամէն բան ճշմարտութեամբ գրեց թագաւորին, ինչոր լսել էր նոցա բերանից:

2ագար.

Սիւնեաց նենգաւոր իշխանը Ասսակն ինքն էլ կամենալով գնալ Յաղկերտի մօտ՝ յառաջուց ճանապարհ ձգեց Հայոց սուրբ քահանաներին, որոնց բռնել էր նա եւ գրել Սիւնեաց բերդերի ամուր տեղերը. 'այդ քահանաներն էին' սուրբ Յովսէփ երէցը, որ կաթուղիկոսութեան աթոռն էր կառավարում այն ժամանակ, տէր Ղեւոնդը, Արածայ քահանաները՝ տէր Սամուէլն եւ տէր Աբրահամը. նոցա հետ էին՝ եւ Ռշտունեաց տէր Սահակ եպիսկոպոսն եւ Արծրունեաց 'եւերշապուհ իշխանի գրան երէց տէր Մուշէն եւ սուրբ երէց Արշէնն եւ սուրբ սարկաւազ Քաջաջը:

Ուղարկեց նաեւ այն երեսնաներին, որոնց բռնել էր Մամիկոնեան, Կամսարական եւ ուրիշ հայ իշխաններից երկրից: Այս բոլորին իրենից յառաջ ճանապարհ ձգելով՝ 'դէպի Պարսկաստան', նենգաւոր Ասսակն ինքն էլ Յաղկերտի թագաւորութեան երեքտասաներորդ<sup>2</sup> տարին մեծ պատրաստութեամբ ու շատ մարդիկներով ճանապարհ ընկաւ թագաւորի մօտ գնալու, կարծելով՝ որ վարձ պէտք է ընդունէ նորանից 'Յաղկերտից' Հայոց թագաւորութիւնը: Երբ դուրս եկան այն ճանապարհի վերայ, ուր տանում էին սուրբ քահանաներին կապած եւ ջորինների վերայ նստեցրած, Ասսակի ծառաները հասան Քրիստոսի նահատակներին:

Սուրբ Յովսէփը հարցրեց սուրբ Ղեւոնդին թէ «գիտե՞մ Ղասակը կը համարձակի գալ եւ բարեւ տալ մեզ, միտք արա դու թէ ի՞նչպէս պէտք է շարժինք, եւ հրամայէ՛, որ այնպէս անենք:», Սուրբ Ղեւոնդը պատասխան տուեց ու ասաց, թէ «Քրիստոսի սովորեցրած բանը մի հետեւիր սովորել մարդիկներինց. ի՞նչ քաղաք կամ գիւղ որ մտնելու լինիք, ասացէք ողջոյն, 'այսպէս է ասել Քրիստոս:':»

Կենդանոր Ղասակն եկաւ հասաւ նոցա եւ իսկոյն իջաւ ձիուց եւ ողջունեց սրբերին, որոնք բնաւ ոչ մի թշնամութիւն ցոյց չտալով նորան, ուրախութեամբ եւ սիրով տեսան նորան, եւ մանաւանդ սուրբ Ղեւոնդն անտրտում եւ զուարթերես քաղցր լեզուով միամտութեամբ երկար խօսեց նորա հետ. նա էլ երբ լսում էր նոցա քաղցրաբանութիւնը, կարծեց թէ սոքա շնն էլ իմանում բնաւ իրենց գլխին բերած վատ բաները. այս պատճառով աւելի մխիթարուած գնում էր նոցա հետ երկար տեղ. եւ Սիւնեաց տէրը աղաչեց սրբերին այն օրը իրեն հետ ճաշ ուտել իւր օթեւանի մէջ: Երբ մի փոքր յառաջ անցաւ նոցանից Ղասակը, կանչեց յետեւից սուրբ Ղեւոնդ՝ բարձրաձայն նորա պատուի անունը տալով, թէ «Սիւնեաց Տէր, Սիւնեաց տէր»,. նա 'Ղասակ' էլ յօժարութեամբ պատասխան տուեց թէ «Տե՛սրք, ի՞նչ էք կամենում»,. սուրբն էլ 'Ղեւոնդ' ասաց թէ «ամենից օգտակարը մոռացանք հարցնել քեզ՝ թէ ո՞ւր ես գնում»: Կենդանոր Ղասակն այս լսելով զարմացած ասաց. «տիրոջ մօտն եմ գնում, որ մեծ վարձատրութիւն ստանում նորանից:», Սուրբ Ղեւոնդը պատասխան տուեց նորան եւ ասաց. «Ե՛յն գեւը, որ քեզ գրգեց

ու սուրբ աւետարանին ստել տուեց, նա քեզ այժմ  
այնպէս երեւցնում է, թէ միայն Հայոց թագաւո-  
րութիւն տալով՝ կարող են վարձատրել քեզ Պար-  
սիկները. բայց ոչ մի բան էլ չկայ, որ նորա քեզ  
փոխարէնը տան, եւ եթէ դու արդարեւ կարողա-  
նաս գլուխդ ուսերիդ վերայ մէկ էլ Հայաստան  
դառնալ, այնժամանակ Աստուած<sup>3</sup> թող պատիժս  
տայ: և Այս որ լսեց նենգաւոր իշխանը, բոլոր նորա  
եղի: 4. սնտաի յոյսը կտրուաւ: Ղատակն աւելի յառաջ  
20400. Հասաւ դուռը: Զառաջ գրան մեծամեծների հետ  
տեսութիւն արաւ, յետոյ մտաւ թագաւորի մօտ:  
եղի: 5. Ղոժամանակ ընդունում էին նորան պատուով եւ  
Հքեղութեամբ: Ղաամէն բան սուտ սուտ պատմեց,  
բայց չէր կարող թագաւորի մտքումն իրեն արդարա-  
ցնել: Մինչեւ որ բերին հասցրին սուրբ քահանաներին,  
20400. ապստամբների երեսաներին՝ թագաւորական ձմերու-  
եղի: 6. ցը<sup>4</sup>՝ երկու ամսում՝ եւ քսան օրում: Այս միջոց  
հրաման տուեց թագաւորը առաջուայ պէս յայանի  
պաշտել քրիստոնէութիւնը եւ թողնել ժողովոյի  
հարկերը, եւ որ ամէնքից գլխաւորն է, ովոր ակամայ  
ընդունած է մոգութիւն, հրովարտակ գրեց, որ  
նորից քրիստոնէութիւն պաշտէ:

Այն նախարարները, որոնք Հայաստանի բերդե-  
րումն էին, երբոր եկեղեցու հաստատուիլը տեսան,  
սիրտ առան եւ ուղեցին ներկայանալ թագաւորին:

Այս որ լսեց թագաւորը, հրամայեց նոցա՝ նա-  
խարարներին՝ էլ կանչել իւր մօտ թագաւորական  
ձմերոցը, եւ պատուիրեց, որ ատեան կազմուի հար-  
ցափորձ անելու նոցա:<sup>5</sup>

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Հ ա ռ ց ա լ ի ն յ :

Հայոց քահանաները դատուում են Միհրանների հետևում. նոցա եւ նախորդներին կապել են տալիս եւ նշանակուում է մեծ տաւան հարցափորձի :

«Որ գիտէ դեմ» ոչ երկնի ի մա-  
հաւանէ :»

Պարսից անօրէն հազարապետն յառաջ հրա-  
մայեց քահանաներին բերել տաւան եւ հարցրեց  
Արածայ սուրբ երէց Սամուէլին եւ սուրբ սար-  
կաւագ Արրահամին, որն Արտաշատու կրակն էր  
հանգցրել : «Ո՞ւմ հրամանով համարձակեցաք այն-  
պիսի մեծ կրակին ձեռք տալ. թէ որ մարդուն ցոյց  
տուած լինէիք այնպիսի յանդգնութիւն, միանգա-  
մայն մահու արժանի դորձ կատարած կը լինէիք,  
ուր մնաց՝ որ աստուածներին էք ցոյց տուել : Նո-  
քա պատասխան տուին մասամբ ստոյգ բաներ խօսե-  
լով, մասամբ ծաղրելով, եւ ասացին. «մեր հաւատքն  
եւս սովորեցնում է մեզ արժանաւոր եւ ճշմարիտ  
երկիւղ կրել թագաւորներից եւ իշխաններից, բայց  
Աստու ահը մարդու ահի հետ փոխել մենք  
յանձնառու չենք լինիր բնաւ : Այդ կրակի համար  
որ ասում ես, թէ «սպանեցիք» մենք նորան վնաս  
տուած չենք, այլ տեսնելով սպասաւորների վա-  
տութիւնը, որ իրենց աստուածների երկիւղը դա-  
տարկ բան համարելով՝ թողին ու գնացին, մենք էլ  
տեսանք որ կրակն առանց մարդու մոխիր է դարձել  
չառ ժամանակ, առանք մոխիրը դուրս թափեցինք.  
որովհետեւ նոյնը նորա սպասաւորների մէջ էինք  
տեսնում, որ միշտ մոխիրը կրում եւ թափում էին

Գագար

գետին: Բայց որովհետեւ մեր շարախօսներն իմաց են տուել ձեզ մեր մասին, թէ «կրակն առան ու ջուրը թափեցին», այդ բանի մասին էլ ձեր արդարադատութիւնը պիտի չբարկանայ մեզ վերայ, այլ գովութեան ու պատուի պէտք է արժանացնէ մեզ. որովհետեւ, եթէ ճշմարիտ, ինչպէս դուք ասում էք, ջուրը կրակի եղբայրն է, մահու արժանի են նոքա, որոնք թողին կրակն ու գնացին, այլ ոչ թէ մենք, որ առանք եւ եղբօրը տուինք, որ սիրով պահպանէ նորան եւ իւր ժամանակին բաց թողնի:»

Այս օրինակով հարցրին միւս սուրբ քահանաներին եւս թէ «ինչպիսի համարձակութեամբ աւրեցիք կրակատունները, սպանեցիք այնպիսի փառաւոր կրակները (որոնք վատ ու վնասակար բաներից անվնաս պահած էին մեզ), սպանեցիք մոզերին, ձեր կախարդութեամբ կորցրիք այնպիսի քաջ մարդուն 'ինչպէս' Արդանը, որ օգտակար էր Արեւաց տիրոջը:»

Յառաջ եկաւ սուրբ Ղեւոնդն եւ պատասխան տուեց ու ասաց. «Մոքա ամէնքը, որ ձեր իշխանութեան առաջը քննուում են, եկեղեցու կարգով ջոկջոկ պատիւներ ունին:» եւ ցոյց տուեց ամէնմէկի ո՞վ լինելը. սուրբ Յովսէփի համար ասաց. «Մորան ինչպէս տեսնում էք տարով ինձանից փոքր է, այլ պատուով նշանակուած է իւր արժանաւորութեանն համեմատ Հայոց բոլոր քահանաներին գլխաւոր:», սուրբ Սահակին ցոյց տալով ասում էր. «Սա մեր օրէնքին համաձայն ընդունած ձեռնադրութեամբն ամէնից կատարեալ օժման կարգն ունի. իսկ միւսներն, ինչպէս եւ ես, միատեսակ ենք քահանայութեան կարգով. եւ ամէնքս էլ ոչ թէ

ինչպէս անդէտ մարդիկ՝ առանց հասկանալու կատարած ենք այնպիսի մեծ ու սարսափելի գործն եւ զղջացած ենք, կամ թէ այժմ մեզ համարում են միքանիսը որպէս թէ վախով այլ ոչ ուրախութեամբ ենք եկել կոյնել ձեր ահաւորութեան առաջն. ընդ հակառակը մենք մեր գործածների վերայ ուրախ ենք. զանազան ցաւերի ենք պատահել, մահին էլ փափագելով սպասում ենք, որ արժանի լինինք: Կսկ ատրու շանների աւերելու մասին, որ ասում էք, կամ կրակի սպանելու մասին, մեր գրքի մէջ ասուած է. «Այն աստուածները, որ երկինք ու երկիր շնն ստեղծել թող գեանի տակը կորչին:» Կրակը շատ նիւթերից է լինում. կայ որ՝ ինչ նիւթից գոյացած է, նոյնից եւ հանգչում է, կայ որ՝ ինչ նիւթից գոյացած է, նոյնից եւ աճում է ու բորբոքում. այսպէս՝ կրակը երկաթից է ծնում, քարից, ջրից, փայտից: Կայ եւ մի սպիտակ հլուն, որից կրակ է լինում: Կաւարծաթից էլ կրակ է լինում եթէ մարդ նորան արեգակի դէմը դնէ եւ շողացնէ: Աւ երկաթից ծնած կրակի վերայ, եթէ երկաթ գիղես, կը հանգչի. եւ քարից եղած կրակն եթէ քարերով ծածկես, կանցնի. իսկ փայտից եղած կրակը, փայտով վառուում է եւ աւելանում. ուրեմն ոչ թէ կրակն, այլ փայտն է արժանի աստուած կոչուելու, որովհետեւ նա է ծնում եւ կեանք տալիս: Ամէն նիւթի մէջն էլ կրակը պակաս չէ. (ամէն նիւթի մէջն էլ կրակ կայ.) ուրեմն երկրիս ամէն նիւթերն էլ աստուածներ են, ինչո՞ւ կէս մասին աստուած էք կանչում եւ կէսին աղտեղի բաների մէջ գործ դնելով անպատուում: Աղիւսներով եւ քարերով՝ մասամբ ազարաններ

էք շինում, մասամբ աղբերի ու աղտեղութեան  
տներ: Արծաթից մասամբ բաժակներ էք շինում,  
մասամբ էլ աղտեղութեան ամաններ: Աստուածների  
կրակոյն արջառներ ու ոչխարներ էք խորովում,  
և փում: Ջրով աղբերը, թարախներն եւ կեղտերն  
էք լուանում, մասամբ էլ կամ առանձին եւ կամ  
գինեխառն էք խմում ու չէք զարհուրում: Միք  
բանալ տար մեր բերանը միտամի ձեր անզգայու-  
թիւնը թուելու: Աւարդան քաջ նահատակն եւ  
նորան նմանները միշտ ձեզի բողոքում էին, թէ ձեր  
պաշտամուկները սուտ են, անմիտ մարդու խելքի բա-  
ներ են, դուք չէիք լսում որովհետեւ բռնութիւնն  
իրաւունք ճանաչել տալ չի կարող. այդ պատ-  
ճառով էլ նոքա չհամբերեցին, իրենց անձերը  
մահին մատնեցին ու պսակներ ընդունեցին. մենք  
էլ քաջալերող էինք եւ իրաւ որ նոցա ճշմարիտ  
վարդապետներն էինք:»

Այս ամէնը որ խօսեցաւ պրծաւ սուրբ Ղեւոնդ,  
սուրբ քահանաները միաբերան գովեցին 'նորան'  
եւ շատ ուրախ եղան: Եւ նոցա երեսօի ուրախու-  
թիւնը տեսնելով Միհրնեսէհն ու միւս մեծամեծ-  
ները բարկացան եւ ասում են. «մեր օրէնքը թող  
չէ տալիս մէկին պատժել, մինչեւ որ նորա բերանից  
բան լսած չլինինք, արդ՝ ասացէք մեզ, թէ դուք էլ  
'միւս քահանաներդ' նոյն բանն էք ասելու, ինչոր  
այդ մահապարտն համարձակեցաւ աներկիւղ խօսել  
մեր առաջը:» Եւ սուրբ Յովսէփն ու սուրբ Սահա-  
կը պատասխան տուին եւ ասացին. «բոլոր այդ բա-  
ներն ինչոր խօսեցաւ ձեզ հետ այդ տէր Ղեւոնդը՝  
մենք վաղուց շատ անգամ մտածած ենք եւ խօսած.  
այդ մտքերի վերայ ամէնքն են եւ դորա վերայ

‘Հաստատուած’ ենք եւ մենք. եւ խնդրում ենք, որ արժանացնէք գորանով եւ վերջացնելու մեր կեանքը:» Բարկացաւ զայրացաւ սրբերի վերայ անօրէն իշխանն եւ հրաման տուեց դահիճներին ամուր շղթայել երանելիների բերաններն, այնպէս որ արիւնը լցուաւ նոցա բերաններն եւ թափում էր դուրս:

Ատեանն արձակեց ‘Միհրներսէհ’. միւս կապեալներին, որոնք այն ատենի մէջն էին, հրամայեց դահիճներին, որ տանին եւ խիստ կապանքներով պահեն ‘այսինքն նախարարներին’. մինչև որ թագաւորն ինքն, ասաց, իւր առաջն հարցնէ եւ լսէ, ինչոր խօսելու են: Այլ միւս օրը մտաւ թագաւորի մօտ, յայտնեց նորան բոլոր իւր հարցուածների ու քահանաների տուած պատասխանների մասին: Թագաւորը նեղացաւ եւ հրամայեց, որ միւս օրը մեծ ատեան լինի իւր առաջը, բայց Մամիկոնեանների եւ Կամսարականների տոհմի երեխաների մասին հրաման տուեց Միհրներսէհին, ումոր ուզում է, նորան տայ:

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Վասակի անկողնը:

Յազկերտը մեծ Հրապարակի առաջ դատում է նախարարներին եւ Վասակին: Վասակը մեղաւոր է դուրս գալիս եւ պատժուում: Վարազվադան Արեւիկն լինում է Արեւեակ տէր: Վասակը մեռնում է թշուառութեան մէջ:

«Չէր յանիրաւութենէ արգարութիւն,  
ի ստութենէ ճշմարտութիւնս» ԵՂ.ՆԸԷ:

- Չագար. Իսկոր զինուորներն, ո՞վոր թագաւորից մի պատիւ ունէր, առաւօտեան կանուխ եկան ատեանը: Արեւեակ ուխտանենգ իշխանն՝ էլ՝ եկաւ՝ բոլոր իւր նշաններով զարդարուած.՝ Տագեղ էր այն պատուական Տագուստը՝ որ բաշխել էր նորան թագաւորը՝ զլիւին՝ կապել էր պատուաժուրքն՝ եւ՝ ոսկեղէն խոյրը դրել նորա վերայ. մարդարիտներով ու պատուական քարերով զարդարուած կռանակուս ոսկեձող կամարը մէջքը. օղերն ականջը, եւ գումարտակը վիզը. սամոյրն ուսերին եւ իւր պատուի բոլոր նշանները վրէն ձգած: Միայն՝ թագաւորական պատիւն էր պակաս, որ նա չունէր, իսկ ուրիշ արքունի պատիւներից բան չէր մնացել որ չունենար. եւ այնուհետեւ կարծում էր, որ Հայոց մեծ աշխարհքի թագաւորութիւնը պիտի առնի:
- Եղբւ. Իսկ այն նախարարները, որոնք կամքով եկած էին դուռը, եւ այն սուրբերը, որոնք աւելի յառաջ էին եկած եւ կապանքի տակ էին թագաւորի դրանը, երբ տեսան Վասակին, որ զարդարուած գալիս է մեծ բազմութեամբ արքունիք, իրենց մտքում սկսեցին խնդալ նորա վերայ եւ ասել. «ո՞վ անմիտ վաճառական, որ անմահ եւ անանց պատիւը տուիր ու այդ անցաւորը գնեցիր:»

Վասակն եկաւ եւ տեղ առաւ ներքեւն այն  
գահճիճների մէջ, ուր մեծամեծների հրապա-  
րակն էր: Ատեանը բացուաւ: Թագաւորն հրամայեց, <sup>զուգար</sup>  
որ Հայոց ապստամբներին կապած բերեն նորա առաջը.  
եւ հարցրեց նոցա ու ասում է. « Ինչ համար ձա-  
կու թեամբ կամ ինչ օգնականութեան ղյժ էիք  
տեսել, որ դիմեցիք այնպիսի մէկ ահաւոր գործի,  
որի մէջ դուք ձեր անձերի ու ձեր երկրի կորուստն  
էիք տեսնում, ինչպէս որ ահա եղաւ եւ տեսաք: »

Հայոց նախարարներն ամէնքն էլ լուռ մնացին  
առժամանակ. թագաւորն յառաջուայ նման էլի  
կրկնեց իւր հարցն եւ ուզում էր ստիպմամբ, որ  
պատասխան տան: Նորա էլ պատասխան տուին եւ  
ասում են. « Թող քու բարերարութիւնդ իրաւունք  
տայ մեզ, որ մեր միջից մի մարդ ցոյց տանք եւ նո-  
րանից լսեցէք, թէ բոլոր մեր գործերն իսկզբանէ  
ինչ կերպ սկսուան եւ գլուխ եկան: Արովհետեւ  
վայելէ, որ մենք բոլորս էլ անկարգ կերպով իս-  
սինք քու առաջդ: » Թագաւորն եւ բոլոր մեծամեծ-  
ները յօժարութեամբ ընդունեցին եւ թոյլ տուին:  
Նորա էլ Արշաւիր Կամսարականին յառաջ քաշեցին.  
նորանից լսեն ամէն բան լիովին:

Արշաւիր Կամսարականն աներկիւղ յառաջ  
անցաւ. սկսեց խօսել եւ ասում է: « Վկլբից, երբ  
դուք այդ բաներին ձեռք տուիք եւ մեզ ստիպում  
էիք մի այնպիսի հաւատք ընդունել, որ ոչ մենք  
գիտենք եւ ոչ մեր նախնիքը, շատ անգամ բողբոջ-  
ցինք ձեզ, թէ անկարելի է մեզ մի այնպիսի հաւատք  
պաշտել, որը մեր նախնիքը չպաշտեցին, որը մեր  
մտքին էլ ծանր է երեւում եւ արհամարհանք է.  
եւ դուք մեզ լսել չուզեցիք ու ձեր բռնաւոր կամ-

քին համաձայն ստիպեցիք, յանձն առնել տուիք մի հաւատ, որը վախից ստիպուած բերանով պատուեցինք սուտանց, իսկ սրտով դարչնլի համարեցինք եւ ատում էինք. 'այդ միջոցին' եւ մտքերս զրինք մի հնարքով ազատուիլ եւ գնալ մեր երկիրը, թողնել մեր երկիրը, եւ կնոջով զաւակներով գնալ օտար երկիր. այս բանն ամէնից յառաջ ձեր ծառան Ղարդանն արաւ. (եւ վկայ են իմ ասածներէս Պարսիկ մեծամեծներից միքանիսը, որոնք այժմ ողջ են եւ այստեղ ձեզ մօտ են.) Ղարդանն առաւ լոկ իւր կինն եւ ընտանիքը, ձեր ահիցը փախաւ գնաց Յունաց երկիրը: Այս բանը որ իմացաւ այդ Սիւնեաց տէր Ղասակը՝ շուտով գետպաններ զոկեց աւագ տանուտէրներից եւ սուրբ քահանաներից. եւ մեր օրէնքի սուրբ գիրքն էլ իւր մատանովը կնքած, որով եւ երգուած էին, զոկեց նորան. նոցա հետ ինձ էլ զոկեց. եւ նամակի մէջն էլ այսպէս գրեց. "ինչո՞ւ փախար եւ ի՞նչից ես վախենում. դարձիր. նամակ կրգրենք կայսերն եւ նա կը հաւատայ, որ այսպիսի մի մեծ երկիր կամաւ նորան կը հպատակեցնենք, ուրախութեամբ յանձնառու կըլինի եւ զօրք կուտայ մեզ. մենք էլ կը միանանք ու անդադար կընեղացնենք Արեաց ատրոջն եւ Արիներին. իսկ եթէ կայսրը ուրիշ կերպ մտածելու լինի, ես որ Ղրաց մարդպան էի եւ Աղուանքի դուռն իմ ձեռս էր, շոնաց (Յունաց\*) շատ զօրագլուխներ ինձ հետ բարեկամացան, երգումով խօսք տուին 'բարեկամութեան' եւ այսօր էլ նոյն բարեկամութեամբ գնալ գալ ունին ինձ մօտ. Հայոց երկրի հարկերն էլ ինձ մօտ են. գործակալներն իմ ձեռիս են. ու-

\* ակն բնագիր:

րիչ շատ բաներ էլ, որ Պարսիկ գործակալներից  
հանել էի, իմ գանձերիս մէջն են. 'եթէ այսքան  
բանից' մէկ մասը շոնաց ղրկելու լինիմ, նոցա  
միջից այնքան շոն 'զօրք' հանել կուտամ, որ  
Պարսիկների հօղն էլ բաւական չի լինիր նոցա  
աւարի համար:,, Եւ զօռով յետ դարձնել  
տուեց Վարդանին, որն արդէն մօտեցել էր այն  
օտար իշխաններին, որոնք ձեր իշխանութեան տակ  
չեն: |Այն նամակը, որ Վարդանին գրեց 'Վասակ'  
ողջ է եւ կնիքն այստեղ մեզ մօտ է: | Իւր որդւոց  
համար էլ ասում էր, թէ "Հայաստանում ինչ  
Պարսիկ որ կայ՝ բոլորին կրկապեմ ամուր բերդերը  
կրդնեմ, մինչեւ որ թագաւորն իմ որդիքս ազատէ:,,  
Միքանի Պարսիկների առ ժամանակ կապեց եւ երբ  
ինքը խաբերայութեամբ մեր կորստեան խորհուրդը  
գլուխ հանեց, ապա գուրս թողեց նոցա: 'Նամակ-  
ներ գրեց եւ Վահան Ամատունուն ու միքանի  
ուրիշ նախարարների ամէն ցեղերից Յունաստան  
ղրկեց. Վարդանին ու մեզ էլ զօրքով Աղուանք  
ղրկեց. ինքն անկոպարար մեզ խաբեց այս փոր-  
ձանքի մէջ ձգեց ու ձեր այնպիսի պիտանի ծառային  
'Վարդանին' սպանեց եւ այնչափ Հայերի ու Պար-  
սիկների բազմութեան կոտորուելուն պատճառ ե-  
ղաւ: Այժմ գուք հրամայեցէք տեսնել բոլոր նա-  
մակները, որ նա գրել ու կնքել է. եւ ինչոր ձեր  
Արիներիդ կամքն է, կատարեցէք մեր գլխին. որով-  
հետեւ ինչտեղ որ գրած ու կնքած բաներ կան,  
այնտեղ աւելորդ խօսքեր ու շատախօսութիւն  
պէտք չեն:,,

Եւ Պարսից թագաւորն ու բոլոր մեծամեծնե-  
րը տեսնելով նամակները, որ Վասակ գրած էր,

Եղևի. գլխու ընկան եւ սաստիկ զարմացան: Դէ մեղաւոր  
դուքս կեաւ ուրացեալնեքի կողմը. որովհետեւ  
'բաց ի այն' ցոյց էին տալիս Աստակի թղթերը, որ  
միաբանին նորա հետ ապստամբելու համար 'նաեւ'  
Աքացիք եւ Աղուանք. 'ցոյց տուին' մի հրովարտակ  
Յունաց թագաւորին գրած եւ մի թուղթ էլ Ան-  
տիոքոս մեծ սպարապետին գրած. այս բոլոր թղթ-  
թերի վերայ էլ Աստակի վաւերական մատանին  
'կնիքը' կար գրած:

Խառն էր նա 'Աստակ' եւ մոգերի սպանման  
'գործի' մէջ Զարեհաւանում: Մուշկան Նիւսա-  
լաուրան էլ նորա վերայ գրած գանգատի մասին  
յիշեց. նաեւ ժողովրդի հարկերի մէջն էլ նորա  
'Աստակի' գողութիւնը գտան: Մոգերից ու փշտի-  
պաններից շատերն ասացին թէ "այն մեծ վնասը,  
որ թագաւորական զօրքին հասաւ եւ Հայոց երկրի  
աւիրուիլը եւ թագաւորական հարկերի կորչիլը՝  
այդ ամէն վնասների առաջնորդն ու պատճառն այդ  
մարդն 'Աստակ' եղաւ:," Աղգականներն ցոյց տուին,  
յայտնեցին նորա խարդախութիւններն ընկերների  
ու թագաւորի առաջ: Արովհետեւ նա իրաւունքով  
չէր տիրել Սիւնեաց երկրին, այլ նենգութեամբ  
սպանել տուեց իւր հօրեղբօրը Աշղինակին:

Բերին եւ Ռշտունեաց Սահակ կպիսկոպոսին,  
սուրբ Յովսէփին եւ Ղեւոնդ երէցին: Սահակ կ-  
պիսկոպոսն ասաց. "Նորա, որոնք յայտնի կերպով  
ուրացել են ճշմարիտ Աստուծոն, սատանայի բուն  
են հնչպէս այդ Աստակը: Արովհետեւ յառաջ երբ  
դա քրիստոնէութեան անունն երեսանց էր կրում,  
կարծում էր թէ կարող է բոլոր իւր շարութիւնը  
թագցնել ձեր տէրութեան առաջ. եւ բոլոր իւր

խարեքայու թիւները քրիստոնէութեամբ էր ծածկում: Գուք դորան իւր արժանաւորութիւնից աւել պատուեցիք, Աքաց երկիրը դորան հաւատացիք. մէկ հարցրէք թէ գո՞հ են դորանից. Աիւնեաց իշխանութիւնը՝ տէրութիւնը՝ դորան տուիք. դորա ազգականներիցը լսեցէք ահա, թէ ինչ են խօսում դորա վերայ. Հայոց մարդպան նշանակեցիք դորան. դա մէկ տարուայ մէջ բոլոր երկիրը կորցրեց: Գաձեղ սուտ յուսով ուրախացրեց խարեց՝ ոչ գուք, ոչ դա եւ. ոչ էլ նորա, որ ձեզանից յետոյ գալու են, այն բանը՝ յոյսը՝ մեր մէջ տեսնել չէք կարող. ուրեմն վարուէք դորա հետ ինչպէս որ կամենաք մեզ էլ ինչո՞ւ էք հարցնում:»

Այն ժամանակ յառաջ կանչեց թագաւորը Հագար.  
Աիւնեաց Աստակ իշխանին. սկսեց խօսել նորա հետ եւ ասել. «գէ՛հ ասա՛ ինձ այժմ, ինչ էիր անցնում մտքիցդ, որ համարձակեցար սիրտ տալ մարդիկներին խօսքով, ինչպէս քու գրածդ նամակներից ստոյգը իմացանք. երգմնցներով քաջ Աարդանին եւ նորա ընկերներին՝ նամակներով խարեցիր. համարձակեցուցիր նորան զօրքով Աղուանք երթալ Պարսից գումարաակի՞ վերայ. եւ պատճառ եղար իմ այնչափ ծառաներիս՝ թէ՛ Արիների եւ թէ՛ Անարիների կոտորուելուն. ըստ որում այնպիսի մի ծառայ, ինչպէս Աարդանն էր, թէ՛ ԅունաց կայսրը եւ թէ՛ Հոնաց թագաւորն աշխատում էին իմ՝ ձեռքիցս խլել զուով, բայց ես բոլոր զօրութեամբս հակառակում էի եւ չէի տալիս. եւ այժմ՝ դու քու ձեռովդ այնպիսի ծառային սպանեցիր եւ մի մեծ ու պիտանի երկիր կորցրիր: Եւ համարձակեցար լըրբարար մեզ մօտ գալ եւ մեր երեսը տեսնել՝ կար-

ծելով թէ՛ մենք անտեղեակ ենք քո նենգաւոր գործերիդ: Բայց այս մէկը լաւ իմացիր, որ այսուհետեւ Սիւնեաց տէր չես. և հրամայեցինք, որ իմ Հայոց երկրիս հարկերը, նոյնպէս և այն սպանածդ Պարսիկների հարկերն ու կարասիքը, որ խլած էիր, քու տանիցդ ու քու որդիքներիցդ պահանջեն, մինչեւ որ բոլորը վճարուի:»

Աղորմելի ուխտագրուժ Ասասկն ուզում էր խօսել և պատասխան տալ, ըստ որում որքանեւիցեօգուաներ բերած էր Պարսիկներին. և աշխատում էր այն միջոցին ցոյց տալ. բայց այն էլ նորան օգնող բան չէր, այլ ընդհակառակն աւելի մեղադրանքի պատճառ: *Եղիշէ.* ‘Այնպէս որ’ պապանձեցաւ ամենեւին և ճշմարիտ խօսք չգտնուաւ նորա բերանումը: ‘Թագաւորը՝ մահուան վճիռ դրեց նորա վերայ. եկաւ դահճապետը բոլոր մեծամեծների առաջ մերկացուց նորանից բոլոր պատուի նշանները, որ ունէր թագաւորից, և հագցուց նորան մահապարտի հագուստ. ձեռն ու ոտը կապեցին, կնիկ մարդու պէս մատակ ձիու՝ մատանի՝ վերայ նստեցուցին և տարան դրին այն զնդանը, որտեղ բոլոր մահապարտներն էին գտնուում:՝ *Չոյն* օրը նորա թշնամին ուրացող Արազվազանը Սիւնեաց վերայ տանուտէր կարգուաւ. Արազվազանը Սիւնեաց երկրում շատ մոխրանոցներ շինեց՝ իւր տունը՝ ցեղը՝ գայթակղեցնելու մտքով. և երկար ժամանակ տանջուելով դեւից, դառն մահով կնքեց իւր կեանքը:

*Եղիշէ.* Հայոց նախարարներն ու սուրբ եպիսկոպոսները քահանաների հետ միասին զարմացած էին այնպիսի մեծ յայանու թեան՝ ‘այսինքն Աստակի անկման’ վերայ: Մտիթարում էին իրարու և ասում. “ամէն

տեսակ առաքինութիւնների մէջ գլխաւորն համբերութիւնն է, եւ երկնաւոր իմաստութիւնն է կատարեալ աստուածապաշտութիւն. շարշարանքը քանի՜ երկար քաշէ, այնքան կ'աւելանայ եւ վարձատրութիւնը կամ պարգեւը. լաւ է Աստծու վերայ յոյս դնել քան թէ մարդոց. լաւ է Աստծուն ապահինել քան թէ իշխաններին:», Ուրացեալ Ղասակը նայում էր սուրբ կապեալների միաբանութեան վերայ եւ կարօտ էր մնում. բայց ոչոք չխառնեց նորան նոցա մէջ: Ամէն օր ինչպէս մի գէշ ձգում էին հրապարակի վերայ, ձաղում էին, խոցտառակում էին բոլոր կարաւանի առաջւեր. այնպէս ձաղեցին նորան աղքատութեամբ, որ ծառաները գնում էին հաց մուրալու եւ բերում տալիս էին նորան: Հօրական, պատգական եւ իւր սեփական կարողութիւնը եւ կանացի զարգերն անգամ տուեց, տուգանք քաշեց եւ էլի չկարողացաւ բոլոր թագաւորական պատքերը վճարել: Երբ այսպէս ամէն կողմից վնասուաւ, այնտեղ հէնց բանտումը վատցաւերի մէջ էլ ընկաւ. նորա վերայիցը մահուան հօտ փչեց եւ հեռու փախան նորանից մինչեւ անգամ իւր ձեռնասուն ծառաները:

Միքանի տարի 'բանտում' մնալով Ղասակն <sup>շագոր.</sup> ամէն օր, ամէն ժամ ինքն իւր ձեռքերի թաթերը բանալով եւ երեսին ձեծելով ասում էր, «Ահա՛ առ այս հարուածները, որ բերեց սուրբ աւետարանի ուխտանենգութիւնն եւ սուրբ Ղարդան Մամիկոնեանի եւ ուրիշների նահատակութեան արգար արիւնը. նոքա յաւիտենական կեանքը ժառանգեցին, բարի եւ ազգից ազգ անմոռանալի անուն գտան. իսկ դու, մեղաւոր անձն իմ, ապրում ես, որ

խղճահարու թեւամը եւ ցաւերով քու կեանքիդ սակաւ օրերն անցնես. եւ պատրաստուած ես մըշտնջենաւոր եւ անանց գեհէնի համար:» Այսպիսի հռոտաչանաց եւ լացի խօսքեր խօսում է եղել նա՝ մինչև իւր մահուան օրը, 'ինչպէս որ' պատմեցին մեզ նորա արժանահաւատ սպասաւորները: Աւ մեռաւ նա այնտեղ Պարսից երկրում:

Եզրի՛ն

Աւ այնմարդը, որ կամենում էր Հայաստանին թագաւոր դառնալ մեղքով, նորա գերեզմանի տեղն անգամ չերևցաւ. ըստ որում 'ինչպէս չուն մեռաւ եւ 'ինչպէս գէշ դուրս ձգուաւ: Չյիշուաւ նորա անունը սրբերի շարքում. նորա յիշատակը չկատարուաւ եկեղեցու մէջ սուրբ սեղանի առաջ: Այ՛ մի վատ բան չթողեց, որ չկատարէր իւր կեանքումը, եւ մեծմեծ վատութիւններից էլ բան չմնաց, որ նորա գլխին չդար մահուան ժամանակ: Այս յիշատակարանն էլ գրեցինք նորա մեղքերը վատարանելու մտքով, որպէսզի ամենայն մարդ, որ այս բանն իմանայ, նորա գործերին ցանկացօղ չլինի:

Կորա գործերին

Այսպիսի վերջ

Բարսեղ Երեմյան

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Քահանաներն ու նախարարները:

Քահանաներն և նախարարները բանտարկուած մնում են Պարսկաստանում: Յազկերտը Քուշանաց զէմ անյաջող պատերազմ ունենալով՝ հրամայեց քահանաներին սպանել. (453):

«Ամենայն մարդ յանն իւր եկեղեցի էր,  
նոյն ինքն քահանայ»:

Իսկ սուրբ քահանաներին և Հայոց նախարարներին էլ երեսուներ մէկ մարդ հրամայեց Յազկերտ կապած պահել այնտեղ Վրկանում: <sup>1</sup> Եւ իւր թագաւորութեան տասն և վեցերորդ տարին բուլսր իւր բաղմութեամբն ելաւ գնաց Քուշանաց վերայ պատերազմ: Հրամայեց Հայ կապեալներին էլ՝ քահանաներին և նախարարներին Վրկանիցը տանել իւր հետ: Երբոր եկան Ապար աշխարհի Նիւշապուհ քաղաքը, <sup>2</sup> հրամայեց, որ Հայ կապեալներին պահեն այդ քաղաքի բերդում. բայց երկու քահանայի՝ տէր Վամուէլին և Աբրահամին հրամայեց իրենն հետ առնել. նոցա խիստ կապանքներով և ծեծով միշտ նեղեցնել էր տալիս. և դորանով ահ ու երկիւղ էր ուղում ձգել իւր կարաւանում գանուօղ քրիստոնեաների սրտերը:

Եսայնդուրների թագաւորական ցեղից մէկ Հոն՝ <sup>3</sup> Բէլ անունով՝ թագուն համակրում էր քրիստոնեաններին և սիրով յօժարութեամբ սովորում էր նոցանից ճշմարտութիւնը. կամքով մտել էր թագաւորի՝ Յազկերտի՝ իշխանութեան տակ, և սաստիկ շատ նեղանում էր, երբ տեսնում էր սրբերին չարչարուած: Բայց որ էլ ոչինչ չէր գալիս ձեռքից, փախաւ ընկաւ Քուշանաց թագաւորի մօտ և պատ-

մեց Խորան բոլոր նեղութեան անցքերն Հայաստանի գլխին պատահած, ցոյց տուեց նորան Արեաց երկրի երկպառակութիւնն ու տրտունջը:

Քուշանաց թագաւորը երբոր Բէլից ստուգեց, թէ Յազկերտը Քուշանաց վերայ էր գալիս, շուտով զօրք հաւաքեց, շատ փնասներ տուեց թագաւորական զօրքերին, ասպատակով հասաւ աւերեց շատ գաւառներ ու ինքը ողջառողջ գարձաւ իւր երկիրը:

Չ. Գ. Գ. Գ.

Եւ 'Յազկերտ' միանգամայն կոտորուած ամօթալից գարձաւ յետ. որովհետեւ չէ թէ ճակատ առ ճակատ պատերազմ արին թշնամիները Պարսից զօրքի հետ, այլ անակնունելի կերպով ընկնում էին առանձին առանձին թեւերի վերայ, սրի էին հանում շատերին, եւ իրենք կրկին աներեւոյթ լինում. եւ այսպէս շատ օրեր տեւեց ու սաստիկ փնաս հասաւ Պարսից զօրքին:

Յազկերտը տեսնելով իւր այսպիսի խայտառակութիւնը, մտքի մէջ ընկաւ եւ ուզում էր իմանալ թէ ի՞նչ պատճառով պատահեցաւ նորան այնպիսի ծանր խայտառակութիւն. եւ շուարանքի մէջ լինելով՝ պատճառը մէկ իւր զօրքի անմիարանութեան վերայ էր ձգում, մէկ էլ մոգերի ծուլութեան վրայ՝ թէ ուրեմն նոքա 'մոգերը' չեն կարողացել ընծաներով եւ զոհերով ինչպէս պէտքն է քաղցրացնել աստուածների սիրտը:

Ե. Գ. Գ. Գ.

Իսկ մեծ հազարապետը 'Միհրնէրսէհ' սաստիկ վախի մէջ էր, որովհետեւ ինքն էր բոլոր փնասների պատճառը: Սկսեց մոգպետին եւ մոգերին խրատ տալ. եւ նոքա ասացին թագաւորին. "Քայ թագաւոր, մենք մեր օրէնքի վարդապետութիւնից գիտենք, որ մարդկանցից ո՛չ ոք կարող չէ քու մեծ զօրութեանդ

առաջ դիմանալ: Թող քու մտքիցդ ուրիշ բան <sup>չտղտր</sup> չանցնի այս վատ դէպքերի համար, որ պատահեցան աստուածների բարկութիւնից այն աստուածասպան հայ քահանաների պատճառով. ըստորում եթէ մարդասպան եղած լինէին նորա, շատ ծանր կը լինէր եւ մեղադրութեան արժանի նոցա գործը. ուր մնաց որ նորա համարձակեցան աստուածներին ձեռք տալ. եւ դեռ կեանք ու արեւ են տեսնում նորա. իրաւոր աստուածները մեզ պատժում եւ հարուածում են անխնայ:»

Թագաւորը նոցա սուտ պատճառն ստոյգ կարծելով, հրաման տուեց՝ իւր հետի քահանաներին՝ սուրբ Սամուէլ երէցին եւ սուրբ Աբրահամ սարկաւազին մի աներեւոյթ տեղ տանել կարաւանից շատ հեռու եւ այնտեղ գլուխները կտրել. կարաւանից շատ հեռու տանել՝ այնպատճառով, որ շինի թէ քրիստոնեաներից մէկը գտնի նոցա ոսկորները եւ պատուեն: Բայց հրամայեց, որ նոցա սպանելուց յառաջ սուրբ Սամուէլի աջ ձեռը կտրեն եւ դնեն Աբրահամի ձեռի մէջ. նոյնպէս եւ սուրբ Աբրահամի աջ ձեռը կտրեն եւ դնեն Սամուէլի ձեռի մէջ. այնպատճառով, ասում է, որ նորա համարձակեցան իրենց ձեռքը պատուական կրակին ձգել եւ սպանել նորան: Սորանից յետոյ եւ կտրել սրով նոցա գլուխները: Եւ այս կերպ նահատակուան յիշեալ սրբերը Հրոտից ամնի եօթերորդ օրը Վարդգէս գաւառի մէջ: Սորանից յետոյ հրամայեց դեսպաններ զրկել շուտով Բասնի եւ պիսկոպոս երանելի Թաթիկի համար, որը բանտի մէջն էր Ասորեստանում, եւ հրաման տուեց՝ այնտեղ սպանեն եւ անհետացնեն սրբի մարմինը, որ

քրիստոնեաները չգտնին: Մոգերն ու բախու թեամբ կատարելով թագաւորի հրամանը՝ յառաջ մի քանի օր քերեցին սրբի մարմինը ոսկորներից՝ հանեցին, և ապա սրով կտրեցին գլուխը: Միւս քաքանաների համար էլ հրաման տուեց Վեհղենշապուհ ամբարապետին, որ առնի իւր հետ քնիկան մայպետին ևւ Մովան անդերձապետին ևւ գնայ հանէ բանտիցն այն սրբերին ու տանի նոցա քաղաքից հեռու մի անկոխ անապատ տեղ ու ինչպէս կամենայ այնպէս զրկէ նոցա այնտեղ կեանքից: Բայց սաստիկ պատուէր տուեց ևւ զգուշացրեց թագաւորը. շինի թէ մէկին իմաց տաք, ասաց, ոչ ձեր առնելն ու գնալը քաղաքից, ոչ այն ճանապարհը՝ որտեղից պիտի տանիք, ոչ նոցա մահուան տեղը՝ ուր որ պիտի սպանէք նոցա: Արովհետեւ ստոյգ լսած եմ, ասաց Յազկերտ, որ քրիստոնեաներն ասում են թէ այն մարդոց ոսկորներից, որոնք իրենց Աստուծոյ համար են մեռնում, ո՞վ որ իւր տան մէջը պահէ, այն տանը վատ կամ վտանգաւոր բան չի մօտենար, ատենների մէջ մարդուս յաջողութիւն կուտան ևւ իմաստութիւն ևւ քաջութիւն. այլ ևւ այն հաւատարիմ մարդիկները, որոնք առաջ նոցա մոլար աղանդումն էին ևւ յետոյ մեր լուսաւոր ևւ ճշմարիտ կրօնն ընդունեցին, մեզ ասել են, թէ նոցա կանայք, աղջիկներն ևւ որդիք չեն արիստար վրաններիցը հանել ոսկի ևւ արծաթէ զարդերը կամ թանկագին մարգարտէ վզնոցները կամ շարաններն ևւ տալ ու գնել գոնէ մի փշրանք այն ոսկորներից:»

## ԳԼՈՒԽ ԺԷ.

Մ ո գ պ ե տ:

Այր աշխարհի գենպետ իշխանը բանտարկեալ քահանաների շնորհիւ քրիստոնեայ է դառնում եւ Յազկերտի հրամանով տարաշխարհ է լինում:

«Արպէս մեծ է հոգի քան զճարմին,  
այսպէս մեծ է տեսասրտութիւն մտաց քան  
զմարմնոյն:» ԵՂԻՇԷ:

Այր աշխարհի գենպետ <sup>1</sup> իշխանը բոլոր գի- ԵՂԻՇԷ.  
տուններից աւելի տեղեակ էր զբաղաշտական վար-  
դապետութեանը. եւ որ մեծ պարծանք էին համարում  
'Պարսիկները', համակդեն պատուանունն եւս  
ունէր. գիտէր նաեւ ամպարտքաշը, բողպայիտը,  
պահլաւիկը եւ պարսկադենը. ըստ որում այս հինգ  
հաւատի ուսմունքն (զբաղաշտական, ամպարտքաշ,  
բողպայիտ, պահլաւիկ, պարսկադեն) են, որ գրաւած  
ունին ամբողջ մոգութեան օրէնքը, բայց կայ եւ  
մէկ ուրիշն էլ, որ մոգպետ <sup>2</sup> են ասում:

Նա 'գենպետը' բաժանեց քահանաներին նա-  
խարարներից, ձգեց նոցա մի մութն եւ թաց գետ-  
նատուն եւ հրամայեց վեց մարդուն մէկ մէկ անգամ  
ամէն օր երկու քաշկէն 'գարի հաց' տան եւ դորակ  
ու կէս ջուր: Քառասուն օր այս կերպ նեղացնում  
էր նոցա, եւ չլսեց նոցանից մի թուլութեան խօսք  
անգամ: Մտքէն անցաւ թէ գուցէ՝ մէկը ծածուկ  
նոցա կերակուր է տալիս: Ինքը զնաց բանտի եր-  
դիկն ու դուռը կնքեց եւ նշանակած կերակուրն էլ  
իւր հաւատարիմներին էր տալիս նոցա տանելու:  
Եյս էլ տասնը հինգ օր արաւ. երանելիները համ-  
բերութեամբ քաշում էին չարչարանքը: Պահա-

պանները զարմացած լինելով նոցա առողջութեան վերայ, պատմեցին մոգպետին 'դենպետին' եւ ասացին. "այն մարդիկն առանց մեծ զօրութեան չեն. որովհետեւ մեր միտքը չի գալիս, որ կապեալներից մէկը կացած լինէր այդ տան մէջ՝ գոնէ մէկ ամիս. ուրեմն, ասում ենք քեզ, եթէ հրամայած է քեզ, որ նոցա մեռցնես կամ սպանես, այդ դու գիտես. եթէ ոչ՝ քեզ յանձնուած է պահել նոցա, այլ ոչ նեղացնել:"

Մոգպետն ինքը կէս գիշերին գնաց բանտի երդիկը, նայեց տեսաւ որ իւրաքանչիւր կապեալեանձը անշիջանելի կանթեղի պէս վառուած բորբոքում է: Եւ սրբերն իւրեանց խշտեակներից ելան եւ սովորական աղօթքի կայնան: Մոգպետի սիրտն ահ ընկաւ եւ ասում է. "կապեալներից ո՞ր մէկին այսպիսի հրաշք պատահած է. ես ոչ մէկին էլ չեմ ճանաչում.", եւ կեսամեռ եղաւ տանիքի վերայ մնաց մինչեւ առաւօտ: Կանչեց պահապաններին եւ ասաց. "հանեցէք կապեալներին եւ դրէք մի աւելի ցամաք տեղ վերնատան մէջ, ինչպէս որ դուք ասացիք:" Մոգպետն ելաւ գնաց նոցա մօտ միայնակ եւ անձայն, եւ երբ մի ծակից դէպի ներս էր նայում, տեսաւ առաջուայ պէս մի տեսիլք: Մտաւ սրբերի մէջն եւ պատմեց իւր երկու անգամ տեսածը:

Ղեւոնդ երէցն ասում է: "Ըստուած լոյս ծագեց այսօր քու խաւարած մտքիդ մէջ եւ քու կուրացած հոգուդ աչքերը բացուան:" Եւ ոտքի ելան բոլորն ու ասացին. "Գոհանում ենք քեզանից, Ըստուած, որ այսօր յայտնի եղաւ քու զօրութիւնդ այս խաւարազգեստ ազգի մէջ:" Նա էլ 'մոգպետը' սկսեց առանձին իւր համար ասել. "Տէր, մի՛ նայեր

իմ երկարամեայ շարութեանս վերայ, սատանան, որ  
ինձանով սիրտ առած պարծենում էր, ինձանով  
կոտորուած թող ամաչէ իւր աշակերտների մէջ:»,  
Այսպէս հանդարտեցան եւ քուն եղան ամէնքը.  
Իսկ նա ոտքի կայնած աղօթք էր անում. եւ երբ  
աչքերը երգիկին տնկած երկինք էր նայում, յան-  
կարծակի երեւցաւ նորան լուսեղէն սանդուղք, որ  
երկրից երկինք էր դրած եւ գունդգունդ զօրքեր  
վեր էին բարձրանում. եւ բոլորի տեսիլն էլ փա-  
ռաւոր էր ու զարմանալի ինչպէս հրեշտակի տես-  
քը: Տեսաւ նաեւ Վարդանին, Արտակին, Խորէնին,  
որոնք ունէին ձեռքերում իննը պսակ, խօսում էին  
իրար հետ ու ասում. «, ահա եկաւ հասաւ ժամա-  
նակը, որ սոքա էլ մեր գունդերի մէջ խառնուին,  
մենք էլ սոցա էինք սպասում, ու՞մ էլ որ չէինք  
սպասում» նա էլ եկաւ խառնուաւ 'նոցա մէջ' ինչ-  
պէս Քրիստոսի զինուորներից մէկը:» Այս բանն  
երեք անգամ երեւեցաւ: Չէն տուեց սրբերին քնից,  
եւ պատմեց նոցա ամէն բան: Արովհետեւ ինքն այն  
երկրի մոգպետ իշխանն էր, առաւօտեան համարձա-  
կութեամբ հանեց 'նոցա բանտից' եւ տարաւ իւր  
ապարանքը. լուաց ու սրբել տուեց նոցա, շինեց իւր  
տան մէջ աւազան եւ ընդունեց նոցանից սուրբ մկր-  
տութիւնը. ճաշակեց Քրիստոսի կենարար մարմինն ու  
արիւնը. նոցա առաջ բացեց կերակրի սեղան, գի-  
շերը ծածուկ հրաւիրեց եւ այն նախարարներին,  
որոնք նոյն քաղաքի մէջ բանտն էին դրած, եւ շատ  
մեծ ծախսեր արաւ: Սեղանի ժամանակ երբ ամէնքը  
կերակուրը պրծան, ոտքի ելաւ սուրբ Յովսէփն ու  
սկսեց ասել. «Աւրախ եղէք ամէնքդ Քրիստոսի ա-  
նունով. ըստորում վաղն այս ժամանակ մենք մո-

ուացած կրկինինք բոլոր մեր քաջած նեղութիւններն ու շարձարանքը:» Այս որ աւաց, բոլոր բաղմականները ոտքի ելան եւ գոհացան: Նոյն ժամին մեծ խորհուրդ եղաւ նոցա մէջ թէ ինչպէս կարող են ապրեցնել մոգպետին:

Առաւօտեան դահիճներն եկան բանտի դուռն եւ տեսան, որ մոգպետը նստած է նոցա 'բանտարկեալների' մէջ եւ լսում է նոցանից եւ սիրտ է տալիս անգամ նոցա, որ չվախնան մահից: Գնացին եւ պատմեցին Գենշապուհին, որին յանձնել էր թագաւորը սրբերին շարձարելու: Գենշապուհն հրամայեց, որ հանեն բոլորին բանտից կապած, եւ հեռու տարաւ այն քաղաքից. եւ ծածուկ խօսեցաւ մոգպետի հետ թէ ինչ է նորա կապուած լինելու պատճառը. պատասխան տուեց նա եւ ասաց. "մի խօսիր ինձ հետ թագուն, բաց հարցուր ինձ եւ ես կը պատմեմ քեզ, որ Աստու մեծամեծ գործերը տեսայ 'հասկացայ':» Արք լսեց նորանից ամէն բան եւ ստուգեց 'Գենշապուհ' նորա միաբանելու մասին, շտապեց գնաց թագաւորին պատմեց գաղտուկ ամէն բան: Թագաւորը պատասխան տուեց եւ ասաց Գենշապուհին. "Մարդ թող չսէ քեզանից այդ բանը, մանաւանդ այն մեծ տեսիլքի մասին. որովհետեւ մի շնչին մարդ չէ նոցա հաւատքին դիմօղջ, այլ մի համակզեն ամբողջ վերին երկիրների մէջ երեւելի: 'Գնա' յառաջ կանչէ' քու առաջդ այն շարացած ալեւորին. եթէ սիրով համաձայնի, մեծարէ' նորան, իսկ եթէ չկամենայ միտք դարձնել իմ խօսքերիս, նորա վերայ շատ գանդատներ հանել տուր ժողովրդի կողմից որպէս զի թագաւորական գործերի մէջ վնասակար ճանաչուի, եւ արքորէ'

նորան Աուրանի եւ Մակուրանի կողմերը. եւ այն-  
տեղ մի վիրապի մէջ թող ընկած մնայ ու գտնի  
իւր մահը: Եւ ուրիշ հաւատ ունեցողներին շուտով  
զըզէ՛ աշխարհային կեանքից, ըստորում եթէ ճար-  
տար մոգպետին այդպէս շուտ քաշեցին իրենց  
կողմը, տգէտ մարդիկն ինչպէս կարողանան պիտի  
նոցա առաջը կենալ:

Դենչապուհը կատարեց նորա վերայ թագաւորի  
հրամանը. եւ քշեցին մոգպետին դէպ ի հեռաւոր  
օտարութիւն:

## ԳԼՈՒԽ ԺԸ.

### Քանաքապուտի հրաժարականը:

Քաճանաների հրաժարուելը բանտարկեալ նախարարների մօտից եւ գէպի իւրեանց մարտիրոսութեան տեղը տարուիլը:

«Ոչ եթէ ակնկալութիւն ինչ էր բարձրագոյն կենացն, այլ հարս խնդրէին ամենայն աշխարհին շնորհեանս»

Հարգար.

Վեհազենչապուհ նոյն եւ Գենչապուհ՝ մտաւ նիւշապուհի մերդը, սուտուտ բաներ էր խօսում եւ աւետիք էր տալիս նենգութեամբ՝ թէ «Արքայից արքան հրաման տուեց ինձ, որ այդ Հայ երէցներին որ այստեղ բանտումն են՝ իրենց երկիրն արձակեմ. միւս իշխանների համար էլ թագաւորը խօսք տուեց, որ երբ ես գամ՝ նոցա էլ կ'արձակեմ կապանքից:

Այս որ լսեց շահաստանի ժողովուրդը՝ կարծեց որ ճշմարիտ է. բայց սուրբ քաճանաներն երբ իմացան, իսկոյն հասկացան որ իրենց նահատակութեան բարի ժամն հասած է: Ակսեցին խօսել Հայոց նախարարների հետ, որոնք կապուած էին, եւ ասում են. «Թէպէտեւ Վեհազենչապուհն ուզում էր ճշմարիտը թագցնել, չկարողացաւ. որովհետեւ մեր երկուսի գործերն այդպէս եւ պէտք է վերջանան. դուք կարծես թէ քրիստոսի ողորմութեամբ պիտի արձակուիք ձեր կապանքից, մենք էլ Հոգւոյն սրբոյ զօրութեամբ գնալու ենք գէպի մեր բնիկ աշխարհքն ու բոլորիս Արարիչը:»

Գահիճներից մէկը, որ սիրով ընդունում էր Հայոց կապեալ նախարարներին, ճիշտը լսեց երանելի խուժիկից, եկաւ յայտնեց թէ ինչպէս թագաւորն հրամայել է քաճանաներին սպանելու:

Այս որ ստուգեցին երանելինախարարները՝ սաստիկ լաց եղան, իսկ սրբերը սիրտ առան եւ զուարճացան, եւ Աստծուն փառք տալով իսկոյն երեկոյեան աղօթքի պատրաստուան:

Որովհետեւ ամբարակաստի Գեներալուհի՝ շահաստան գալն այնքան կանուխ չէր, այդ պատճառով հարկաւոր եղաւ գիշերը հէնց քաղաքումը մնալ:

Սրբերն իրիկուայ աղօթքը վերջացնելուց յետոյ մի փոքր բան կերան եւ ընթրիքից ելնելով էլի աղօթք արին: Հրամայեցին, որ ամէն մարդ իւր կարգին համեմատ աղօթքի եւ տքնութեան սյարապի այն գիշեր ու ասացին բոլորին. «Թէ որ դուք այսօր մէկին շայաստան ճանապարհ ձգելու լինէիք, չէ որ ձեր ամէնմէկ սիրելուն բարեւագրեր, ուրախալից պատգամներ խաբար՝ կրղրկէիք: Նաեւ Աստծուն կ'աղաչէիք, 'որ' նոքա ողջառողջ հասնին իրենց տները եւ ձեր դրած պատուէրները կատարեն. ահա՛ մենք այժմ՝ ճանապարհ ենք ընկնում՝ ձեր միջից դէպի Աստուած. ամէնքս էլ խնդրած ենք մեր փրկիչ Քրիստոսից եւ սուրբ Հոգուց, որ ամէնքս էլ արժանի լինինք երկնային ճանապարհին: Մեր բազումողորմ Արարչի գութը թող ազատութիւն տայ ձեզ այդ երեւելի կապանքներից, որոնցով դուք կապուած էք, եւ թող արժանի անէ ձեզ Աստուած, տեսնիք ձեր երկիրն եւ ձեր ընտանիքը, ձեր ամենիդ ոսկորները ձեր հայրերի ոսկորների մօտ թող ժողովէ եւ ձեր հոգիներն անմլասս պահէ:»

Երբ լսեցին նախարարները սուրբ քահանաներից այնպիսի հրաման, պատասխան տուին եւ ասացին. «Ո՞վ կըցաւի ու տխրութիւն կըզգայ արդեօք

անանցանելի բարութեան մէջ, որտեղից մերժուած են ցաւերն էլ տրամութիւններն էլ. բայց մենք որ լաց ենք լինում, 'պատճառն այն է՝ թէ ինչո՞ւ Արարչից անմահ ու անցաւ ստեղծուածներս թշնամութեամբ խարէութեանը գերի եղած՝ կրկին ընկանք հողի վերայ ցաւի ու մահու 'իշխանութեան' տակ:»

Այսպիսի խօսքեր լսելով սուրբ քահանաները, ձեռքերն երկինք բարձրացուցին եւ ասացին. «Գոհութիւն եւ փառք քեզ, Տէր Աստուած, որ սուրբ առաքեալների քարոզութեան շնորհիւ շատ առաքեալներ ու անթիւ նահատակներ ծնար՝ յառաջ բերիր՝, ինչպէս տէր Գրիգորիոս՝ Առաստորջին. սա, որ՝ ուղիղ գործեր էր գործում, մաքուր եւ կենդանի վարդապետութիւն էր սովորեցնում, ամէնքին բարի նախանձով շարժեց եւ յառաջ բերեց վարդապետներ ու անթիւ նահատակներ, շատ ձգնաւորներ եւ անչափ կուսանաց դասեր: Գոհութիւն եւ փառք քեզ, Փրկիչ, որ սուրբ Գրիգորի հօտի միջից ոչխարներին աւելի բանաւոր ստեղծեցիր քան թէ հովիւներին, եւ աշակերտներին ժողովրդի միջից աւելի գիտուն քան թէ վարդապետներին: Ահա մենք էլ այժմ սիրտ առած քաջալերուանք մեր հոգեւոր զաւակների շնորհալի խօսքերից. հայրերը որդիներից, վարդապետներն աշակերտներից, քահանաները ժողովրդից: Եւ ահա սոքա մեզ ուրախ սրտով ճանապարհ են ձգում դէպի քեզ, եւ իրենք մարմնի մէջ մնալով քեզ հետ են, քո մօտդ են եւ քեզնով են քաջալերուում. պահէ՛ սոցա քու ամենազօր արժող, մխիթարէ սոցա քու ուրախարար խօսքովդ, քու խաղաղութիւնդ պարգևէ սոցա:»

Եւ այսպէս օրհնեցին երանելի կապեալներին  
ևւ ասացին. «դուք միք տրտմիր, այլ ուրախ եղէք.  
Դա որ ասաց թէ ձեզ որք չեմ թողնիր, արձակե-  
լու է ձեզ այդ կապանքից, ձեզ ասել կրտայ թէ  
«քու անուանդ համար մեռնելու ենք ամէն ժամա-  
նակ, ինչպես մորթելու ոչխար համարել են մեզ  
'մարդիկ'»:» Եւ ամէնքի Տէրն Աստուած թող խոր-  
տակէ սատանային ձեր ոտների տակ, ձեզ այս ամ-  
բարիչտ աղգի մէջ երևելի ու պայծառ թող անէ,  
վերագարձնէ՝ ձեզ ձեր երկիրը, պահէ՝ թող ձեր  
տները, ժառանգել տայ ձեր զաւակներին ձեր հայ-  
րերի վիճակը:» Եւ բոլոր նախարարները սիրտ ա-  
ռան՝ այս խօսքերից՝ ևւ յոյսերն հաստատեցին երկ-  
նային Տիրոջ վերայ:

Այդ միջոցին եկան հասան ամբարակապետի  
'Գենչապուհի' կողմից շատ դահիճներ վառած ջա-  
հերով. հետները կային շատ դարբիններ բերելով  
իրենց արհեստի գործիքները՝ սալեր, կռաններ, մուր-  
ձեր ևւ խարտոցներ, որ խարտեն ու կտրեն ևւ հա-  
նեն երկաթները սրբերի ձեռքերից, ոտներից ևւ  
վզերից, ևւ ինչոր չկարողանան խարտոցներով կրտ-  
րել, կռաններով ջարդեն սալերի վերայ երկաթէ  
բեւեռը ևւ դուրս քաշեն. որովհետեւ հաստ էին  
ևւ աւելի ծանր քան բոլոր այն երկաթէ շղթանե-  
րը, որոնցով ուրիշ մահապարտներին կապում էին.  
ևւ այդ յատուկ նոցա համար էին շինել տուել մո-  
գերն, ինչպէս վատ, աշխարհակորոյս ևւ աստուա-  
ծասպան մարդոց համար, մանաւանդ սուրբ Զովսէփ  
կաթուղիկոսի շղթաներն աւելի հաստ էին ևւ ան-  
ճոռնի:

Սուրբ քահանաները որ տեսան դարբինների

բազմութիւնը խռովեցան առ հասարակ. որովհետեւ, երբոր մարդիկ ու կանայք, ոսկով, անգին քարերով եւ մարգարիտներով զարդարում կապում են իրենց ձեռքերը, ոտներն ու պարանոցները, եթէ թշնամիներից կամ բռնաւոր իշխաններից մէկն իրրեւ պատիժ կապէր 'այն զարդերով' նոցա եւ ստիպէր նոցանով մնալ եւ չհանել դուրս, կրակսէին լալ եւ չէին կարողանար մի փոքր էլ է դիմանալ. բայց երբ իրենք իրենց են կապում, ծանրութիւն չեն համարում եւ չեն էլ զգում. սակայն այնպէս էլ գեղեցիկ ու փառաւոր եւ ամէն նայողի համար լաւ պիտի չերեւային, ինչպէս Գրիգոր Ղուսաւորչի 'այն' հայրանման որդիքն երջանիկ ու հրեշտականման էին երևում իրենց ցանկալի շողթմաներով:

Գահիճները մօտեցան եւ երկար ժամանակ աշխատեցին չկարողացան կտրել այն հաստ բւեռները. յետոյ դրին սալերի վերայ եւ կռաններով ջարդեցին, հազիւ դուրս հանեցին շղթաները սըրբերի մարմնից, 'ի հարկէ' սաստիկ վիրաւորելով նոցա մարմինները:

Եւ հրամայեցին Վեհգենշապուհ եւ նորա օգնականները, որ քաղաքի մարդիկներին եւ մոգերից երեւելիներին գիշերը ծածուկ կանչեն 'իրենց մօտ' եւ թագաւորի հրամանով ասաց նոցա 'Գենշապուհ'. "միտք բերէք թագաւորների ահը, նոքա 'գիտէք որ' իրաւունք ունին աստուածների նման մարդուս մեռցնելու. եւ ապրեցնելու, պատուելու եւ անարգելու. այս օրուանից սկսած մինչեւ բոլոր արքունի կարաւանի հաւաքուելը եւ Վրկան հասնելը՝ չլինի թէ մի հայ մարդու, օրտեղից եւ լինի,

կամ քաղաքիս մէջ կապուած Հայ նախարարների ծառաներից մէկին, կամ այս որ մենք այժմ դուրս ենք տանում կապեալ քահանաներին, սոցա սպասաւորներից մէկին եւ կամ բնաւ մի ուրիցէ Հայի, որ յանկարծ մեկտեղից եկած լինի այստեղ, թողնիք քաղաքիս դռնից դուրս. 'եթէ ոչ' տնով տեղով փնասի տակ կ'ընկնիք առանց թողութեան 'յոյս ունելու' եւ դառն մահ կ'ընդունիք թագաւորից:

Եւ շտապեցին այնուհետեւ դուրս հանել սրբերին: Այս որ տեսան այն Հայ նախարարները, որոնք գղեկի մէջ մնալու էին, աներկիւղ համարձակութեամբ բոլոր օտարների ներկայութեանը սուրբ քահանաների ոտներն ընկան, ուրախ սրտով ինդութեամբ համբուրեցին եւ ասացին. "յիշեցէք մեզ ձեր ուրախութեան մէջ, եւ միք մոռանար". նմանապէս սուրբ քահանաները զուարթ դէմքով առան նոցա բոլորին իրենց գրկերն եւ ասացին. "զօրութեանց Աստուածը թող օրհնէ՛ ձեզի եւ տայ ձեզի տւողութիւն 'համբերութիւն' եւ զօրացնէ ձեզի այս հեթանոս ազգի առաջ եւ այդ տեսանելի կապանքներից ազատէ՛ ու հասցնէ ձեզի ձեր ծննդեան աշխարհը:"

Հեթանոսները տեսնելով քահանաների եւ նախարարների այնպէս ուրախութեամբ իրարից բաժանուիլը՝ կարծեցին թէ նոքա չգիտեն թագաւորի հրամանը:

Քահանաները ճանապարհ ընկան եւ գնում էին: Շտապով պատրաստուան նաեւ նոցա սպասաւորները, որոնք ինքնիրենց գլխուն եկած էին Հայաստանից, որ ծառայեն նոցա բանտերում, մանաւանդ Խորէն երէցն Այրարատ գաւառի Որհով

գիւղից եւ Աբրահամ երէցը Տայոց գաւառի Զե-  
նակս գիւղից: Վեհգեներչապուհն հարցուց նոցա թէ  
“դուք ո՞ւր էք պատրաստուում”, եւ լսեց նոցանից  
թէ “ուր որ մեր տէրերին ու վարդապետներին  
’ուսուցիչներին’ էք յանում, դոցա հետ պատրաստ  
ենք գնալու՝ թէ ապրինք եւ թէ մեռնինք:”, Այն-  
ժամանակ՝ հրամայեց որ բռնեն նոցա եւ պահեն  
հէնց այնտեղ շահաստանի մէջ: Դուրս եկան այ-  
նուհետեւ Գեներչապուհը նիւշապուհ քաղաքից  
սուրբ քահանաների հետ միասին ցերեկուայ վե-  
ցերորդ ժամին այն ճանապարհով, որ դուրս է գա-  
լիս դէպի Վրկան:

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Խ ու ռ ժ ի կ :

Խուժիկ վաճառականը, որ ծածուկ քրիստոնեայ էր, ընկերա-  
նում է գահճիճների հետ: Սուրբ քահանաներին վերջին անգամ  
ստիպում են ու բանալ իրենց հաւատը. նորա հրատարում են,  
ևւ նահատակուում: Խուժիկը գողանում է սուրբ քահանա-  
ների մարմինները:

« Հաւատարեցե մահս մեր ընդ մահ քաջ  
նահատակացն: »

ա) Մի վաճառական\* մարդ, որ ազգով Խու- Հագար.  
ժիկ<sup>1</sup> էր ևւ հայերէն լեզուին լաւ տեղեակ էր ու  
ինքն էլ քրիստոսասէր ու հաւատացեալ ծնողաց  
որդի էր, երանելի քահանաներին ու Հայոց նախա-  
բարներին լաւ մօտիկ ճանաչում էր ու շատ ծառայ-  
ութիւն ու ծախսեր էլ արած էր իւր ունեցածից,  
երբ նորա Արկանումն էին. լսելով թագաւորի  
հրամանը՝ քահանաներին սպանելու մասին՝ շուտով  
առաւ իւր եղների միջից տոկուն ևւ ուժեղ եղներ  
ևւ քարվանի մարդու նման՝ ճանապարհ ընկաւ  
Ահհգենշապուհի հետ. ճանապարհին ցոյց տուեց  
նորան 'Խուժիկը' շատ աչքաբացութիւն ևւ դուր  
եկաւ Ահհգենշապուհին, 'սյնպէս որ' սա շատ  
սիրեց նորան. հարցուց նորա գեղի ու ծնողաց մա-  
սին. Խուժիկն էլ պատասխանում էր նորան սյլա-  
բանօրէն: Ահհգենշապուհը տեսնելով որ սյգ  
մարդը շատ աչքաբաց է ամէն բանի մէջ, թող  
չէր տալիս նորան մի ժամ անգամ իրենից հեռանա-  
լու, բացի այն՝ հաւատաց նորան թագաւորի խոր-  
հուրդը: Յետոյ՝ Խուժիկն այնպէս ձեւացնում էր

\* Եղիչէն ասում է. « Խուժիկ անունով մի մարդ արքունի  
գորբի միջից, որ ծածուկ քրիստոնեայ էր ևւ գահճիճներ  
խմբի մէջ օրապահներից մէկն էր: »

Թէ ուրիշ տեղ բան ունի հոգալու, եւ խնդրում էր Վեհզդենշապուհին, որ թողնի նորան, որով աւելի հաւատարիմ երեւցաւ նորա աչքին: Բայց Գենշապուհը բնաւ յանձնառու չեղաւ կատարել նորա ասածը:

Այն օրը Նիւշապուհից դուրս գալու օրը՝ եկան մի գիւղ, որի անունը Ռեւան էր, եւ այնտեղ մնացին մինչեւ առաւօտուան պահը: Միւս օրը կանուխ վերկացան եւ երանելի խուժիկի ու անօրէն դահիճների հետ միասին լուռ հանդարտ դուրս եկան գիւղից, եւ լուսը բացուելուն հասան Գենշապուհ միւսների հետ՝ մի քարոտ դարիդուս անապատ տեղ, ուր ո՛չ արօտահանի ոտք էր հասնում եւ ո՛չ էլ մի ուրիշ ճամբորդի\* . այնտեղ ամօռներ գրին՝ դատաստան սարքեցին՝ երեք նախարարներն եւ նստան:

Եղիշ:

Եւ հրամայեցին դահիճներին, որ կապեն՝ քահանաների՝ ձեռներն ու ստները. եւ ձգեցին երկար պարաններ նոցա ստները, ու երկուս երկուս լծուան ու քաշքաշեցին նոցա, այնպէս որ ամենեւին՝ անվնաս՝ տեղ չմնաց երանելիների մարմնի վերայ. յետոյ քանդեցին ու բերին մի տեղ:

Հարտ:

Եւ կանգնեցուցին սուրբ նահատակներին ատենի առաջ. ասում է նոցա Գենշապուհ. «Ընհամար վնասներ էք տուել դուք, եւ շատ Պարսիկների կոտորուելուն դուք էք մեղաւոր. ըստորում եթէ լոկ երկու երեք մարդու մահուան պատճառ եղած լինէիք, արժան չէիք ապրելու, ուր մնաց՝ որ մի այնպիսի մեծ երկրի՝ վնասուելուն՝ ինչպէս Հայաստանն

\* Ըստ եղիշի «այնպէս քարոտ եւ անրոյս տեղ էր, որ նստելու տեղ անգամ չկար:»

է. ձեր խրատովն է կատարուել այդ ամէնը. եւ մեծ թագաւորը ձեզի մեծ լաւութիւն արաւ, որ հրամայեց մեզ եւ ասաց. «Թէոր յօժարին երկրպա- թիւն տալ կրակին եւ արեգակին, կըներեւմ նոցա մահապարտութիւնը. նախարարներին, որոնք բանտի մէջն են, կ'արձակեւմ շայաստան 'գնալու', եւ ամէն- մէկի տանուտէրութիւնն էլ կըվերադարձնեմ: Ուրեմն միտք բերէք ձեր եւ այնքան կապեալների անձերը՝ եւ շատերի կենդանութեանը պատճառ եղէք, ապա թէ ոչ՝ կըմեռնիք եւ ձեր հոգիներից կըպահանջուին բոլոր թափուած՝ արիւնները: 'Գուք ձեր աչքովը տեսաք այսօր, թէ մի ազնուական մարդ, որովհետեւ դէնիմազդէզը մոգութեան օրէնքն՝ անարգեց եւ խարուաւ ձեր տխմար գիտու- թիւնով, ահա ինչպէս մի անտէր 'վատ' գերի աք- սորուաւ: Ուրեմն դուք էլ ուրիշ հնար չունիք ապրելու, մինչեւ երկրպագութիւն չանէք արեգա- կին եւ չկատարէք թագաւորի կամքը:»

Եւ հրամայեցին երանելի Սահակ եպիսկոպոս- սին, որ թարգմանէ իրենց ասածը՝ սուրբ Եովսէփի եւ սուրբ Ղեւոնդի ու 'միւս' ընկերների համար. ըստորում այդ սրբերի միջից ուրիշ մարդ չգիտէր պարսկերէն՝ բացի Սահակ: Պաստասխան տուեց Սահակ եպիսկոպոսը Գենշապուհին եւ ասում է. Միք տար ինձ ասել դոցա այն խօսքերը. ըստորում այն որ ինձ ատելի է երեւում, էլ ի՛նչ ասեմ նոցա. դուք արէք ինչոր կամենաք:»

Գենշապուհն եւ ուրիշները բարկացան եւ ասում են նորան. «Գու անպատճառ ասա՛ դոցա, թող իմանանք եւ դոցա ասածը:»

Սուրբ եպիսկոպոսը կարճառօտ խօսքերով ա-

սաց ընկերներին եւ նոքա բարձրաձայն խնդացին եւ ծաղր արին այն խօսքերի վերայ:

Սակայն պատասխանեց սուրբ Յովսէփ կաթուղիկոսն եւ ասում է. «Միեւնոյն հարցումն եղաւ եւ ատենի մէջ Արեւաց հազարապետի առաջ, 'որն եւ' մեր խօսածն եւ ուղածը յայտնեց թագաւորին. 'այժմ էլ' միեւնոյնն է մեր բոլորիս կամքը եւ չենք փոխուում'. անկարելի է' որ մենք ճշմարտութիւնն ուրանանք եւ սուտ աստուածներին ծառայենք. ու մեր ուրացութեամբ էլ թող հաւատացեալ կապեալներից մէկին ազատութիւն չլինի եւ յաւիտենական անլուծանելի կապանքը չընկնին:»

Հրամայեցին, 'որ Սահակն' երանելի Ղեւոնդին էլ ասէ՝ թէ «մենք լսած ենք, որ քրիստոնեաների օրէնքները ոչոք այնպէս չգիտէ ինչպէս դու. եւ քու խրատովդ աւելի մնասուաւ Հայաստանը. ուրեմն այժմ էլ խրատատու եղիր եւ թող ապրին դոքա եւ ուրիշ շատ անթիւ անձինք. եւ այնպիսի պատիւներ կըստանաս թագաւորից, որ նոցանով անուանի կըլինիս քու երկրիդ եւ բոլոր ազգերի մէջ:»

Եւ սուրբ Սահակն համբերութեամբ թարգմանեց մի փոքր: Սուրբ Ղեւոնդը խօսել սկսեց եւ ասում է. «Մենք դոցա այնքան պիտի պատասխան տանք, ինչքան որ տուեց Փրկիչը Պիղատոսի ատենի առաջ. ասա՛ դոցա թէ «դուք ասացիք.»՝ ձեր ասածը ճշմարիտ է. թէ ես մեր օրէնքին տեղեակ եմ եւ ժողովրդի բազմութեանը ուսուցիչ եմ եղած, այդ ցոյց է տալիս իմ հասակիս մտենալն իւր կատարածին, 'այսինքն որ ես արդէն ծերացած եմ.' ուրեմն մարդուս ահից պատկառելով՝ իմ լաւ դիտութեանս գերազանցութիւնը մոռանամ եւ փոխեմ

ուրիշի հետ, քաւ լիցի. եւ յանգիմանուիմ այն  
'խօսքով թէ ինչոր շատերին իրատ էիր տալիս,  
քեզ չսովորեցրիր: 'Ասա թէ' "Միք խօսիր մեզ Եւր. Կ.  
հետ ինչպէս երեսաների հետ. որովհետեւ հասա-  
կով կատարեալ ենք եւ գիտութեանն էլ անտե-  
ղեակ չենք: Մեր օրէնքը սովորեցնում է մեզ պա-  
տուել թագաւորներին եւ ամենայն զօրութեամբ  
սիրել նոցա. ոչ թէ հպատակութեան ծառայու-  
թիւնները միայն ցոյց տալով, այլեւ մահն ան-  
գամ աչքերս առնել թագաւորի սիրու համար:  
Եւ ինչպէս որ աշխարհքիս վերայ իրաւունք չունինք  
փոխել նորան մի ուրիշ բանի հետ, նմանապէս էլ  
երկնքում իրաւունք չունինք փոխել մեր ճշմարիտ  
Աստուծոն ուրիշի հետ: Ար խելօք վաճառականը կը-  
յօժարի փոխել պատուական մարդարիտը անարգ  
թրուշայի հետ, եթէ տգիտութեամբ յիմարացած  
չլինի, ինչպէս որ ձեր մոլորութեան առաջնորդներն  
են: Դակ ինչոր այն փառքին ու պատուին է վե- Գողթաւ.  
րաբերում, որ դուք խոստանում էք մեզ, անկա-  
րելի է, որ մենք առնինք այնպիսի պատիւ, որը ցեցն  
եւ ուտիճն է փշացնում եւ գողն ականներ բաց ա-  
նում եւ տանում: Մէկ բան է միայն պակասում  
մեր այս փառաւորութիւնից 'այն է' մահուան բա-  
ժակը, որն ինչպէս սաստիկ ծարաւի մարդ շտապում  
ենք խմելու, տուէք մեզ շուտով խմել եւ էլ միք  
երկարացներ ձեր ցնորուած թագաւորի անմիտ ու  
փնասակար խօսքերը 'կրկնելով'": Մուշէն, Արշէնը  
եւ Քաջաջն աղաչեցին սուրբ Մահակ եպիսկոպոսին,  
որ իրենց կողմիցն էլ ասէ անօրէն իշխանին՝ թէ  
"ինչոր մեր սուրբ վարդապետներն ասացին, միեւ-  
նոյնն էլ մեր ուղածն ու խնդրածն է:":

Այս որ լսեցին Աւհղենշապուհն եւ իւր գործակիցները, սաստիկ գրգռուան բարկութեամբ եւ ուղեցին ուրիշ պատրողական խօսքեր ասել, գուցէ կարելի լինէր բաժանել մէկին այն գնդի միջից սկսեցին ստիպել սուրբ Սահակ եպիսկոպոսին, որ թարգմանէ նոցա համար ուրիշ ինչոր խօսել կ'ուզենան սրբերի հետ:

Եղիշ:

Պատասխան տուեց Սահակ եպիսկոպոսն եւ ասում է. «Եթէ մեր մեծերը հակառակեցան, մենք որ նոցանից ստոր ենք, ինչպէս կարող ենք հաւանել քու խօսքերիդ: — Միտրանէ՛ ջուրն ու կրակը, որ կարողանանք սովորել նոցանից խաղաղութիւն. կանչէ՛ արեգակին տանգ մէջ ինչպէս մի կրակ, որ նա չի՛ կարող դալ: Ես քեզ մեղադրել չեմ՝ կարող. նա, որ տեսած չէ մեծ թագաւորին, պատուաւոր մարդոցն է երկրպագութիւն անում. թէ կ'ուզես արեգակի մասին իմանալ, նա աշխարհքիս արարածներից մի մասն է միայն. նա ինքն առանձին խտակ եւ սուրբ լուսով չէ, այլ օդի միջնորդութեամբ է տարածում իւր ճառագայթներն եւ հրային մասերով է տաքացնում բոլոր իւր ներքեւը գտնուող արարածներին: Ինչպէսոր մի նաւ անգիտութեամբ անցնում է իւր ճանապարհը ջրերի վերայ՝ հմուտ եւ ճարտար նաւապետի միջնորդութեամբ, այնպէս էլ արեգակն իւր կառավարի ձեռքով կատարում է տարեւոր ժամանակի մէջ իւր շրջանի փոփոխումները: Եւ ինչպէսոր աշխարհքիս միւս մասերը մեր կենդանութեան համար են հաստատուած, նա՛ արեգակն՝ էլ մեզ տրուած է իբրև մի մասն միւս այլ մասերի միջից, որ առաջնորդէ լուսով, ինչպէս լուսինն եւ աստղերն եւ մշտաշարժ հողմերն եւ

անձրևաբեր ամպերը. նմանապէս և Երկրիս մասերի միջից ծովը, գետերը, բոլոր աղբիւրներն և ցամաքային 'մասերը': Սոցանից ոչ մէկին էլ Աստուած անուանել պէտք չէ: Մէկ իշխանութիւնը երկու թագաւորի ձեռք լինել չի կարող:»

«Ուրեմն եթէ ուղում ես ճշմարիտն իմանալ, սրտիդ գառնութիւնը մի փոքր անուշացրո՛ւ, և բաց մտքիդ աչքերը: Ամէնքիս Ստեղծօղը մարմնաւոր աչքերին չի երևում, այլ մտքով է հասկացուում նորա զօրութիւնը: Նա 'Ստեղծօղը' տեսնելով մեզի մեծ տգիտութեան մէջ, որով մենք էլ ձեզ նման մի ժամանակ այս տեսանելի բաներին ստեղծօղ էինք կարծում, եկաւ մարմին առաւ մարդուց և ճանաչեցրեց մեզ իւր տեսանելի աստուածութիւնը, խաչի կախազանի վերայ բարձրացնել տուեց իրեն, արեգակի վերայից հանեց նորա ճառագայթների լոյսը, որպէսզի խաւարն սպասաւոր լինի իւր մարդկութեանը: Մենք էլ մեր Տիրոջ նման պատրաստ ենք մեռնելու. ինչպէս կամենաս, կատարէ քու շար կամքդ:»

Անօրէն Գենշապուհն հրամայեց և գահիճները սրով կտրեցին Արշէն անունով քահանայի գլուխն ու ձգեցին մարմինը մի ցամաք խորխորատի մէջ:

Սկսեց Գենշապուհն եպիսկոպոսի հետ խօսել և ասում է. «Մի տարի և վեց ամիս ման եմ եկել ևս Հայաստանում. միտքս չի գալիս, որ մէկից քու մասիդ մի որևէիցէ տրտուեջ լսած լինիմ, մանաւանդ Յովսէփի մասին. որովհետեւ դա էր այն ժամանակ բոլոր քրիստոնեաների իշխանն և արքունի գործերի մէջն հաւատարիմ. և ես աչքովս տեսած եմ, որ

ամբողջ երկիրը նորան իբրև հաստատ հայր էր համարում, եւ նա էլ անաչառութեամբ սիրում էր մեծերին եւ փոքրերին: Ուրեմն խնդրում եմ՝ իւր-նայեցէ՛ք ձեր պատուական անձերին ու միք մատնել ձեզ չարչարանքի եւ մահի ինչպէս այն առաջինը, որ ահա՛ ձեր աչքովը տեսաք: Ես որովհետեւ ձեր երկրի աղուհացը կերել եմ, դու թ եւ սէր ունիմ ձեր երկրի վերայ:»

Ղեւոնդ երէցն ասում է. «Դու որ իշխանութիւն ունիս մեզ վերայ, դատէ՛ մեզ ինչպէս քու կամքդ է. մենք վախեցողը չենք այդ ահագին սարսափելի սպառնալիքներիցդ, մինչեւ անգամ ահ չենք քաշում այն դառն մահից, որ թափելու ես մեր վերայ:»

Այն ժամանակ ՚Գենշապուհն՝ մի փոքր իրարից հեռացուց երանելիներին, եւ միայն սուրբ եպիսկոպոսին՝ Սահակին՝ է ասում. «Միտդ եմ ձգում բոլոր այն վնասները, որ դու տուել ես. դո՛ւ քանդեցիր ատրուշանն Ռշտունիքում, կամ կրակը դո՛ւ սպանեցիր եւ մոգերին դո՛ւ չարչարեցիր:»

Եպիսկոպոսն ասում է. «Դու քու կեանքիդ օգուտը չես ուզում սովորել ինձանից, այլ իմ արիւնիս աչք ունիս. տունը, ճշմարիտ, ես քանդեցի եւ մոգերին էլ ես չարչարեցի ծեծով. եւ պղծութեան կահակարասին, որ տան մէջը կար, ես ձգեցի ծովը, բայց կրակն ո՞վ կարող է սպանել. Ստեղծօղը չորս տարեքի բնութիւնն անմահ է ստեղծել. մեռնում է այն բանը, որը շունչ է քաշում, շարժուն է, ման է դալիս, ուտում է եւ խմում. երբ ես տեսել դու կրակին՝ որ մանգայ, կամ խօսի, կամ հասկանայ:»

Գենշապուհն ասում է. «Խոստովանիր, դո՛ւ մարեցիր կրակը թէ ո՛չ:»

Պատասխան տուեց Երանելին. «Աս ինքս մտայ ձեր կրահատունն եւ տեսայ, որ ամբարշտութեան պաշտօնեաներն՝ այնտեղ՝ էին, եւ կրահարանը կրակով լիքը նոցա առաջ բորբոքուած վառում էր. հարցրի նոցա թէ «ձեր խելքով ի՞նչ բան է այս պաշտելու կրակը:» Պատասխանեցին թէ «մենք ոչ ինչ չգիտենք, այսքանս միայն իմանում ենք, որ նախնեաց սովորութիւն է եւ թագաւորի սաստիկ հրամանը:» Ասում եմ նոցա թէ «կրակիդ բնութիւնն ի՞նչ է ձեր գիտցածով, Արարիչ էք կարծում նորան թէ արարած:» Բոլորը միաբերան ասացին թէ «մենք դորա արարիչ լինելը չգիտենք. մեր ձեռքերը կաշի են դառել կացին խփելով, մեր մէջքերը՝ կոնակները՝ քոս է կապել փայտ կրելով, մեր աչքերը ջուր են դառել ծխի կծու թիւնից, եւ մեր երեսները մրտտել են ծխի խոնաւութիւնից. թէ շատ կերակուր տանք, շատ կ'ուղէ. թէ բնաւ չտանք, կ'անցնի. թէ մօտ գնանք երկրպագութիւն անենք, կրվառ է մեզի, թէ շերթանք բնաւ մօտիկ, մոխիր կը դառնայ: Ահա մենք այսպէս ենք հասկացել դորա բընութիւնը: Մեր օրէնք դնօղներն հոգւով կոյր են. մեր թագաւորը մարմնով միականի է, իսկ հոգին բնաւ աչք էլ չունի:» Այս պատճառով ես էլ մի փոքր չարչարեցի նոցա ծեծելով, եւ նոցա ձեռքով կրակը թափել տուի ջրի մէջ. յետոյ մոգերին բաց թողի:»

Բարկացան երեք իշխանները. ինքը Աւես-<sup>Չագար.</sup> գենշապուհը վեր կացաւ տեղից եւ սրով այնպէս խփեց սուրբ Սահակ եպիսկոպոսի ուսին, որ վէրքը մինչեւ մէջքին մօտեցաւ\*։ Աւ սուրբ ե-

\* Ըստ Եղիշէի՝ «Եպիսկոպոսի աջ ուսին խփեց սրով եւ ձեռքը թիկունքի հետ վեր ձգեց, եւ նա ահեակ կողմի վերայ դեպին ընկաւ:»

պիսկոպոսը սաստիկ խփուելուց մի քարի դէմ առաւ  
եւ իբր բոլոր սրբերի բերանից սկսեց ասել այսպէս.  
“Գոհութիւն քեզ Քրիստոս, որ շատ անգամ դու  
անմահական գառդ անծախութեամբ բաշխուար մեր  
ձեռքով՝ ժողովոյին՝, այժմ՝ ընդունէ՛ ամենիս, որ  
արժանաւորապէս պատարագ ենք լինում:” Սիրտ էր  
տալիս իւր ընկերներին եւ ասում. “Գէ՛հ քաջեր,  
Հասել է ահա մեր մահուան ժամը:”

Յետոյ հրամայեցին սուրբ Յովսէփի կաթողիկոսին  
գլխատել սրով. իսկ սուրբ Ղեւոնդի համար  
հրաման տուին մերկացնել եւ քաշ տալ խստու-  
թեամբ քարոտ խճոտ տեղերում. եւ այսպէս քաշ-  
քշեցին երկար ժամեր, մինչեւ որ սրբի լանջերի ու  
թիկունքի բոլոր մսերը քերուան պոկուան մորթու-  
հետ միասին:

Ուրիշներն էլ կտրեցին սրով Մուշէի, ‘Ար-  
շէնի՝ եւ Քաջաջի գլուխները: Եւ յետոյ սուրբ  
Ղեւոնդին էլ նոյն տեղը բերին, ուր միւս սրբերը  
նահատակուան, եւ կտրեցին սրով սրբի գլուխը.  
սուրբ Սահակ եպիսկոպոսն էլ դեռ փոքր ինչ շունչ  
էր քաշում. նորա գլուխն էլ միւսների վախճանե-  
լուց յետոյ կտրեցին սրով:

Այսպէս Յազկերտի թագաւորութեան տասն-  
եւ վեցերորդ տարին Հրոտից ամսի քսանեւհնգին  
նահատակուան Ապար աշխարհում մոգերի Ռեւան՝  
անունով գիւղի մտա վեց սուրբ, որոնց անուններն  
են՝ Սահակ եպիսկոպոս Ռշտունիքից, սուրբ Յով-  
սէփ Ասյոց ձորի Հողոցմանց գեղից, Ղեւոնդ երէց  
Վանանդի Իջւան գեղից, Մուշէ երէց Աղբակից,  
Արշէն երէց Բագրեւանդի Եղեգեկ գեղից, Քաջաջ  
սարկաւազն Ռշտունիքից:

Եւ ինչպէսոր Արշաւիր Ամասրահանն ստոյգը Հոգար.  
 հարցրել իմացել էր երանելի Խուժիկից եւ նորա-  
 նից լսածը պատմել է մեզ, գրեցինք տեղնուտեղն  
 ամէն ինչ :



բ) 'Երբ այն երեք՝ իշխանը գնացին այնտեղից,  
 իննը զինուորուած մարդ թողին, որոնց մէջ ամենից  
 յառաջ երանելի Խուժիկին. եւ հրամայեցին, որ  
 տասն օր պահեն զգուշութեամբ այն դիակները,  
 մինչև որ արքունի կարաւանը գայ անցնի: Պահա-  
 պանները մնացին այն օրերն եւ Խուժիկը մտածում  
 էր թէ ինչ հնարքով պիտի արժանանայ գողանալ  
 սրբերի նշխարները միւս պահապաններից. եւ երբ  
 նա այդ մտածութեան մէջ էր յանկարծ նոյն օրն\*  
 երեկոյին գիշերուայ գէմ մի մեծ շարժ պատահեցաւ  
 այնտեղում. բոմբիւններ եւ ահագին ձայներ էին  
 գալիս անդունդից. ամպի գոռոցն եւ կայծակը սարեր  
 էին գողացնում եւ լուսեղէն սիւնը ծիածանի օրինա-  
 կով շրջափակում էր սրբերի մարմինները: Պահա-  
 պանները գետին ընկած կիսամեռ մնացել էին ամբողջ  
 գիշերն եւ բոլոր ցերեկն ու երկրորդ գիշերն էլ  
 մինչև արևի դուրս գալը: Նոցա բոլորի վերայ մեծ Նշան.  
 սարսափ էր ընկել. ահեղ ձայներ էին հասնում  
 ականջներին. գետինը նոցա ոտքի տակ դող էր ելած  
 եւ սրերի շողողոցն ասես կայծակ էր սփռում նոցա  
 չորս բոլորը. եւ բոլորի դիակները կանգնած էին  
 երևում նոցա աչքին. եւ ատենի մէջ խօսած բա-  
 ները սարսափելի կերպով կրկնում էին ասես նոցա  
 ականջներին:

\* Ըստ Եղիշէի երեք օրից յետոյ:

Հագար

Յետոյ անդունդի ձայներն եւ որոտմունքները դադարեցան. գետինն էլ շարժ գալուց դադարեցաւ. պահապանները մի փոքր շունչ առան, աչքերը դէսուդէն էին ձգում, որ փախչին, բայց չէին կարողանում ոտքի կանգնել տեղերից: Բայց երբորդ օրուայ իններորդ ժամին մօտ՝ վեր կացաւ Խուժիկն եւ որպէս թէ կամաւ կաղիկաղ յետ նայելով փախչել սկսեց, որպէսզի միւսներին էլ սիրտ տայ տեղերիցն ելնելու եւ իրեն հետ հեռանալու այնտեղից: Նոքա էլ որ այդ տեսան, ուշքի եկան եւ նորա յետեւից վազ տուին՝ չհամարձակելով բնաւ դառնալ եւ յետ նայել. գնացին Ահհդենշապուհի յետեւից. իսկ Խուժիկն ուրիշ ճանապարհով բաժանուաւ նոցանից: Պահապաններն հասան վեցերորդ օրն եւ պատմեցին բոլոր այն պատահած փորձանքների մասին:

Եղիշ

Գենշապուհն եւ ընկերներն երկար ժամանակ ապշած՝ չէին կարող հնարք գտնել. պահապաններին լուեցնել էին աշխատում եւ իրենք առանձին մի զարմացքով անզգայութեան մեջ ընկղմած ասում էին իրարու. “Այդ քրիստոնեաների գործերը թեթեւ կամ չնչին բաներ չեն, այլ նոցա օրէնքի եւ հաւատքի զօրութիւնը մեծ է եւ հաստատ. մենք էլ անգիտութեամբ վնասուում կորչում ենք ու չենք էլ զգում: Ի՞նչ կարող ենք անել այդ քրիստոնեաների անքննին աղանդի դէմ. քանիոր կենդանի էին՝ զարմանալի էր նոցա ապրուստը. ինչպէս անկարօտ մարդիկ ընչատեաց էին. ինչպէս անմարմին արարածներ սրբասէր էին. ինչպէս արդարագատ՝ անաչառ էին. ինչպէս անմահ՝ աներկիւղ էին: Թէ լուռ մնանք, մեզ ու մեր անձերի համար մի կաս-

կած է. թէ թագաւորին յայտնենք, կարելի է մեր օրէնքը (հաւատը) քանդուի:»

Խուժիկն երբ իմացաւ այն իշխանների տուած <sup>Չօգտո.</sup> պատասխանների մասին, առաւ իրեն հետ ուրիշ տասն ընկեր, գրաստ եւ իւրաքանչիւր սրբի համար միմի շորսկողանի սապատ, ու կամաց անխօս գնացին գիշերն իրենց գործին. երբոր մօտեցան այն տեղերին, սխալուան իսկ տեղից, որովհետեւ գիշերը մութն էր. եւ երբ խռոված այս կողմ այն կողմ էին ընկնում, ահա մի լուսաւոր արծիւ թռաւ եկաւ երկնքից եւ նստաւ սուրբ Ղեւոնդի մարմնի վերայ: Նորա էլ ուրախալից սրտով ձեռք տուին գործին եւ ժողովեցին իւրաքանչիւրին միմի սապատի մէջ. այնտեղ եօթն օր մնացին, որ ահբ բուլորովին անցնի. յետոյ իստակեցին սրբերի ոսկորներն ու բերին քաղաք. անխօս սկսեցին բաժանել քրիստոնեաներից միքանիսին, որ կարաւանի մէջն էին եւ շտապով հասցնել էին տալիս զանազան երկիրներ: Այս ընծայի առաջին պտուղը տուին <sup>Եզն: 4.</sup> կապեալ՝ Հայ նախարարներին. եւ երանելի Խուժիկը, որ արժանի եղաւ ծածուկ ծառայելու սրբերին, ինչոր նոցա մահուանից մինչեւ ցայժմ վճիռներ տրուան, բոլորն երկրորդեց մեզ կարգով: Սկսեց <sup>Չօգտո.</sup> այնուհետեւ միառմի պատմել Հայոց կապեալ նախարարներին երանելի Խուժիկն (որին այսուհետեւ Խուժիկ անուանել զժուարանում եմ, իսկ այդ զարմանալի մարդու անունը ոչով չկարողացաւ իմանալ եւ ասել մեզ.) Ասածու մեծամեծ խնամքի եւ օգնութեան մասին, որ ցոյց էր տուել նորան: Միեւնոյն խօսակցութիւնն ու մխիթարութիւնն էր միշտ Հայոց կապեալների մէջ թէ մլտ-

նել ելնելու ժամանակ, թէ տանը նստած ժամանակ  
եւ թէ վերկենալու, թէ տօներին եւ թէ ամագլուխ-  
ներին: Մանաւանդ Արշարունեաց <sup>3</sup> տէր Աամարա-  
կան Արշաւիրը, որ ամէն ժամանակ սուրբ Ալեւոնդի  
վարդապետութիւնն եւ ամէնմէկի տուած պատաս-  
խանն սպանօղների հարցմունքին՝ պատմում էր միշտ  
առանց ձանձրանալու. մենք էլ շատ անգամ լսած  
լինելով՝ 'այն ամէնը' հրաշալի Աամարականից,  
գրեցինք յօժարութեամբ:

## ԳԼՈՒԽ Ի•

Խորէն եւ Արրահամ:

Խորէն եւ Արրահամ քահանաները խնդրում են, որ իրենց էլ սպանեն: Յազկերտի հրամանով նոցա խեղացնում են եւ արտորում Ասորեստանի Շահուգ գաւառը: Ասորեստանի քրիստոնեաները սիրով ընդունում եւ շահում են նոցա: Խորէնը վախճանում է Ասորեստանում, իսկ Արրահամը քրիստոնեաների թախանձանքով գալիս է Հայաստան եւ վախճանում է եպիսկոպոսութեան կարգի մէջ:

«Չեմք թու մեր լաւ քան գառափնանս»

Արրոր ժամանակն հասաւ, Յազկերտ մտաւ Ղարտոս Արկանի մայրաքաղաքը, այնուհետեւ Հայոց նախարարներին իրաւունք տուին իրենց սպասաւորներին կամ մէկ ուրիշի ուղարկել իրենց պիտոյքի համար ուր որ կամենան: Այս որ լսեցին Խորէն եւ Արրահամ քահանաները, շուտով գնացին Արկան եւ բացարձակ ընկան Գենչապուհի առաջն ու ասում են. «Թէ որ մեր հոգեւոր տէրերին տարաբմի օտար երկիր, անդառնալի արտորեցիք, չնորհարէք, ասացէք մեզ, որ մենք էլ գնանք ու նոցա հետ միասին անդարձ լինինք: Իսկ թէ նոցա սպանեցիք, բարեհաճեցէք մեզ համար էլ նոյն հրամանը տալու:»

Ահհգենչապուհն ասաց երանելիներին, թէ «ձեր վարդապետների ճանապարհը ձեզ ոչոր ցոյց տալու չէ. իսկ ձեր մասին պէտք է հարցնել մեծ թագաւորին:» Ներս մտաւ Գենչապուհ, պատմեց Յազկերտին այն քահանաների ուղածը: Թագաւորն ասաց թէ «նոցա վերայ ոչոր մի յանցանք ցոյց տուած չէ. թէ որ արեգակին երկրպագութիւն տան, մեծ պարգևներ կ'ընդունին եւ կըթողնիմ, որ իրենց երկիրն երթան. իսկ թէ որ չեն համար-

ձայնիր, խեղութեամբ<sup>1</sup> պատժէ՛ նոցա եւ թող  
երթան Ասորեստան մշակութիւն անն արքունի  
մշակների հետ եւ հարկատու մնան մինչեւ իրենց  
մահը:»

Եւս. Կ.

Եկաւ նորից նոյն դահճապետը սուրբ սպա-  
նեալների աշակերտների մօտ եւ ասում է նոցա.  
«Երդուել եմ Միհր աստծու անունով. ձեզ ա-  
պրել անկարելի է մինչեւ որ արեգակին երկրպա-  
գութիւն չտաք:» Խորէնն ասում է. «Ինչո՞վ պա-  
կաս տեսար մեզ մեր հայրերից. մէկ լաւ նայէ քու  
չարութեանդ եւ մեր բարութեան վերայ, այն ժա-  
մանակ կ'ամաչէ քու հայրդ սատանան:» Երբոր լսեց  
դահճապետը, բարկացաւ եւ քաշ տալ տուեց նո-  
ցա առաջիններից աւելի խիստ. այնպէս որ շատերը  
կարծեցին թէ մեռան 'նոքա': Նորից սկսեցին խօսել  
այն երկուսն եւ ասացին. «Այն մեծ սիրու փոխա-  
րէն, որով մեռան մեր հոգեւոր հայրերը, այդ անար-  
գանքները փոքր ենք համարում: Աւրեմն մի՛ քա-  
շուիր եւ մի՛ թոյլ թողներ, ինչոր նոցա ցոյց տուիր,  
այն էլ մեր գլխին կատարէ:»

Այն ժամանակ դահճապետը հրամայեց մա-  
հուան ծեծ<sup>2</sup> ուտեցնել նոցա. եւ երբ կիսամեռ  
ընկած էին գետին, հրամայեց երկուսի ահանջները  
մօտիկ կիպ՝ կտրել. ու ասաց. «Թէ որ էլի ուշա-  
ցնեմ ձեզ, կարծեմ, դուք ինձ էլ կըհամոզէք:  
Այդքանն է հրամայած միայն ձեզ պատժելու հա-  
մար, եւ այդ պատժից յետոյ դուք պիտի գնաք Ա-  
սորեստան եւ արքունի մշակների մէջ լինիք:»

Երբոր տարան՝ զինուորներն՝ եւ հասցրին նոցա  
Բաբելացւոց երկրի Շահուղ<sup>3</sup> անունով գաւառը.

<sup>1</sup> Ըստ Ղազարու. Շահուղ:

Թէ՛ ծածուկ եւ Թէ՛ յայտնի մեծ պատուով ընդունուան այնտեղի բնակիչներից:

Ասորեստանի հաւատացեալներն ուրախու  
Թեամբ դիմաւորեցին նոցա եւ պատուեցին. եւ ա-  
մէն մարդ ինչ կարասի որ ունէր, բերում գնում էր  
նոցա առաջը. եւ քահանաներն էլ հաւատացեալ-  
ների պղ ընծաներից ինչքան պէտք էր ընդունում  
էին մի մասն եւ նոցա ձեռքով ուղարկում էին  
Ապար աշխարհը՝ կապեալ Հայ նախարարներին:  
Աբրահամ երէցն Ասորեստանի հարաւային կողմերի  
տուրքերը ժողովելով՝ տարէցտարի՝ տանում բա-  
ժանում էր Հայոց կապեալ նահատակներին՝ իւ-  
րաքանչիւրի կարիքին համեմատ՝ շատ տարիներ՝  
մինչեւ Հայոց նախարարների ազատուիլը: Խորէն  
երէցը միքանի տարի ապրեցաւ եւ՝ սաստիկ շոքերից  
մնասուելով՝ մեռաւ այնտեղ Ասորեստանում. իսկ  
Աբրահամ երէցն այն կողմի հաւատացեալների ե-  
րաշխաւորութեամբ, որոնք իրենց տներն ու գոյ-  
քերը նորահարկերի տեղ մինչեւ նորա մեռնելը  
Թագաւորական գրեցին, արձակուաւ՝ պատժաւոր-  
ների երկօտասաներորդ տարին՝ հասնելուց յետոյ:  
Ամէնքը միաբան ազաչում էին նորան, որ յօժարա-  
նայ Հայաստան գնալու. որպէսզի նորա այնտեղ գա-  
լովը, ճանաչեն նորանով այն քաջ նահատակնե-  
րին, որոնք վախճանուան սրով, ճանաչեն նորանով  
եւ չարչարանքի սուրբ կապանքները: Եւ երբ մար-  
տիրոսները, նահատակները եւ կապեալները նորա-  
նով ճանաչուին, նորանով եւ կ'օրհնուի բոլոր եր-  
կիրը, նորանով կ'օրհնուին նորա ժողովրդի տղայքն՝  
աճելու համար, նորանով կրղզաստանան նորա երի-  
տասարդները սրբութեան մէջ, նորանով կըհամես-

Հագար.

Եզեկ.

տանան նորա ծերերն իմաստութեան մէջ, նորանով կըսովորին նորա իշխանները մարդասիրութիւն, նորանով կըպարծենան եկեղեցիներն իբրև քաջ եւ կատարեալ զինուոր. երբ խոստովանողի Աբրահամի՝ ամենավաստակ ոտները պատերազմի լայնատարած տեղերը կոխելու լինին, երբ կենդանի մարտիրոսն այն՝ դաշտի վերայ՝ ման գայ, կենդանին կենդանիների մօտ գնալով՝ կրկնապատիկ կենդանութիւն կըլինի՝ այնտեղ՝. երբ Հայաստանի միայնակեացները սորան տեսնելու լինին, սորանով մտքերը կըբերեն սուրբ քահանաներին, որոնք օտարութեան մէջ կոտորուան եւ թագաւորի բարկութիւնը նըստեցրին. սորանով միտք կըբերեն մեր կապանքներն եւ կըխնդրեն Աստուծոց, որ դարձնէ մեզ մեր գերութիւնից դէպի մեր հայրենի երկիրը. որովհետեւ շատ փափագում ենք տեսնելու մեր սուրբ եկեղեցիներն եւ այն սրբասէր պաշտօնեաները, որոնց կարգել հաստատել ենք նոցա մէջ:»

Եւ որովհետեւ սովորութիւն չունէր նա երբէք լաւ բանին դէմ կայնելու, շտապեց շուտով կատարել միաբանուածների հրամանն եւ եկաւ Հայաստան:

Շտապեցին շուտով դէմ գնացին նորան մարդիկ եւ կանայք՝ թէ մեծ եւ թէ՛ փոքր եւ բոլոր ազատների ու շինականների բաղմութիւնը. ընկնում փաթաթուում էին նորա ոտքերն ու ձեռքերն եւ ասում էին. «Օրհնեալ է Տէր Աստուածը, որ ահա՛ քու մէջդ կերպարանուած ենք տեսնում բոլոր հրաժարուածներին՝ բացականերին՝. քու մէջդ ենք տեսնում մեր երկրի շինութիւնը. քեզ նով պիտի ուրախանան ցնծան մեր եկեղեցիները.

օրհնէ՛ մեզի, հայր սուրբ, դու ես հանգուցեալ-  
ների բերանը. խօսիր մեզի հետ յայտնի օրհնու-  
թիւններով, որ մեր հոգիներն առնին աներեւու-  
թապէս այն սրբերի օրհնութիւնները. դու ճանա-  
պարհ բացիր նոցա համար, որոնք փափագում են  
իրենց երկիրը գալու. բաց՝ ուրեմն՝ երկնքի առաջ  
մեր աղօթքի դռները, որ քանի դեռ այս երանելի  
մարմիններիս մէջն ենք, ինչպէսոր քու երանելի  
սրբութիւնդ տեսանք, այնպէս էլ մեր անձկալի  
սիրելիներին տեսնել կարողանանք:»

Երանելի Խոստովանօղը թէպէտ այսպիսի սի-  
րով ընդունուաւ բոլոր երկրի մէջ, բայց չուզեց  
բնաւ մօտենալ մէկին՝ մարմնաւոր պիտոյքի՝ համար-  
այլ իրեն համար ժողովրդի բազմութիւնից ազատ  
մի տեղ ընտրեց եւ երեք առաքիլնի եղբայրներով  
'ընկերներով՝ ճգնաւորական կեանք վարեց: Թէ  
նորա տքնութիւնն ասես, ինչպէս անշէջ կանթեղ  
մնում էր ամբողջ գիշեր. թէ սակաւապիտութիւնն  
ասես, համարէ թէ անկերակուր հրեշտակներին  
էր նման. թէ հեղութիւնն ասես, կենդանիներից  
ոչ մէկը նորա նման չէ. եւ եթէ անընչասիրու-  
թիւնն ասես, ինչպէսոր մեռելը ոչ մի բանով  
չի խաբուիր, նոյնն էլ իսկապէս այդ երանելու-  
մասին իմացիր: Անհամացածների համար նա աղ-  
եղաւ եւ բոլոր ծուլացածների համար ծակօղ խթան:  
Նորա համբաւը լսելով իմաստնացան տգէտները.  
նորա մօտիկութիւնը տեսնելով զգաստացան լիտի-  
ները. նա մարմնով բնակում էր մի նեղ խցի մէջ,  
իսկ նորա սրբութեան ահը տարածուած էր թէ՛  
հեռաւորների եւ թէ՛ մերձաւորների մէջ: Յոյներն  
երանի տուին նորա համար շայաստանին, եւ շատ

բարբարոսներ շտապեցին տեսնելու նորան մարմնով :  
Իւր առաքինութեան սկիզբն հէնց տղայ հասակից  
էր արել եւ նոյն առաքինութեամբ հասաւ մինչեւ  
իւր կեանքի վերջը . աշխարհիս սուրբ ամուսնու-  
թեան կարգի մէջ չխառնուաւ . եւ եթէ պէտք է  
պարզաբար ասել, ինչպէսոր մարմնու պիտոյքը  
փոխեց հոգեւոր պիտանացու բաների հետ, այնպէս  
էլ փոխադրուաւ երկրից երկինք :<sup>3</sup>

Չագոթ .

Վերահամն՝ եկաւ Հայաստան եւ Քղնունեաց  
աշխարհի եպիսկոպոսութեան աստիճանն ընդունեց .  
այն երկրի մարդիկներին շատ բարեկարգութեան եւ  
ուղղութեան ուսուցիչ եղաւ եւ նոյն կարգի մէջ  
կնքեց իւր կեանքն ի խորին ծերութեան :

## ԳԼՈՒԽ ԻԱ.

Նախարարների վերադարձը:

Նախարարների կեանքը բանտում եւ նոցա կրած զրկողութիւնները տեսնելով Յազկերտ ուզում է օգուտ քաղել եւ կրկին ստիպում է ուրանալ իրենց հաւատը: Նախարարները չեն յօժարանում: Շղամշակուհի իշխանի միջնորդութեամբ նախարարներն արձակուում են կապանքից եւ Պարսից զօրքի հետ պատերազմի են գնում: Յազկերտ նոցա սիրել է սկսում: Յազկերտը մեռնում է (456) եւ թագաւորում է Պերոզ (458): Նախարարները Պերոզի թագաւորութեան վեցերորդ տարին ներուժ են գտնում եւ վերադառնում են Հայաստան. (463թ):

«Չիք ումիք քաղցրագոյն քան զմտոյ  
եւ ոչ քան զգաւտ իւր:»

Արեսուն եւ հինգ մարդ նախարարական ցեղից\* եւ ուրիշ շատ մարդիկ էլ քաջ նահատակների նիզակակիցներից եւ մարտակիցներից՝ բոլորը միասին գնացին մտան փորձանքի տակ: Այն մարդիկը, որ 'յառաջ' ազատ էրէի նման ծաղկաբեր սարերի մէջ ման էին գալիս, ընկան 'այժմ' արեւելքի բոցակէզ երկիրները՝ կապած ոտներով եւ կապած ձեռքերով. հացերը շատ սուղ, ջրերը նուազ, ցերեկը խաւարի մէջ փակուած, գիշերն անլոյս, իրենք անվերարկու եւ անանկողին, գաղանի պէս գետնի վերայ էին պառկում իննը տարի ու վեց ամիս. այնու ամենայնիւ մեծ ուրախութեամբ քաշում էին այդ նեղութիւնը. որովհետեւ մարդ չկայ, որ լսած լինի ամենեւին նոցա բերանից մի անբաւականութեան տրտունջ. 'ես սարսափում եմ' նայելով նոցա կամաւոր տանջանքների վերայ, տեսնելով նոցա մեծ համբերութիւնն եւ գիմանալը, որ մեծութիւնն արհասարհեցին, իշխանութիւնը ոչինչ բան

\* Տես գլ. ԺԳ. 5:

Համարեցին, Հեռացան Հարստութիւններից եւ ան-  
երկիւղ տուին իրենց անձերը մահի ձեռքը. 'իսկ'  
նոցա երկար ժամանակ կապանքին համբերելը,  
փառքի տեղ անարգութիւն յանձնառնելը, սովա-  
ծութիւնից տանջուիլը, ծարաւութիւնից մաշուի-  
լը. . . : Կապեալ նախարարներից (որին ահանատե-  
սեղած ենք) միքանիսն արդարեւ երկրիս վերայ երկ-  
նաւորներին էին նման եւ մարմնի մէջ հրեշտակ  
էին երեւում: Իրենք իրենց անձերին դպրոց էին  
եղել եւ եկեղեցու կտակարանները սովորելով ան-  
երկիւղ սաղմոս էին քաղում եւ զօր ու գիշեր  
կարդում էին սուրբ գիրքը գումարտակի մէջ 'պա-  
տերազմի դէպքերում' այնպէս՝ ինչպէս տան մէջ  
երբեմն յայտնի եւ երբեմն՝ ժամանակին նայելով՝  
ծածուկ: Նոքա որոնք ծերութեան կամ ծանրա-  
մտութեան պատճառով ուսանել չէին կարող, առ-  
հասարակ երկար աղօթքի մէջ յօժարութեամբ  
անբուն էին մնում: Այն երանելիների միջից աւելի  
մատաղահասները սովորեցին իրենց հայրենի երկրի  
դպրութիւնը, որով իրենց քաջալերում եւ ընկեր-  
ներին էլ մխիթարում էին. եւ այնպէս զմայլեցան  
իրենց հոգու եւ մտքի մէջ, որ նոքա, որոնք աւելի  
ծեր էին, մատաղացան մանկացան. թէպէտ կարգա-  
լու ժամանակներն անցել էր, բայց շատ սաղմոս ան-  
գիր արած երգում էին մանուկների հետ միասին.  
եւ այնպէս բարձրացնում էին սուրբ պաշտօնը, որ  
մինչեւ անգամ խիստ դահիճներից միքանիսն, ինչ-  
քանոր ձեռքերից գալիս էր՝ թագաւորի հրամանից  
դուրս՝ գիւրութիւն էին ցոյց տալիս նոցա եւ շատ  
անգամ էլ նոցա մարմնաւոր պիտոյքը լրաց-  
նում էին:

Երկր.

Յազկերտի մտքէն անցաւ թէ գուցէ Հսոց նախարարները՝ սաստիկ նեղութեան պատճառով ձանձրացած լինին իրենց դառն կեանքից. զրկեց նոցա մօտ մեծ հազարապետին եւ ասում է. «Երկրպագութիւն տուէք արեգակին եւ կ'արձակուիք այդ ծանր կապանքներից ու կրստանաք նորից ձեր հայրական կայքերը:»

Պատասխան տուին երանելիներն եւ ասում են. «Փորձի համար ես եկել հարցնում մեզ. ո՞վոր միանգամ ճշմարտութեան աշակերտ է եղել, նա երբէք նորանից յետ չի մնար, այլ ինչոր է՝ նոյնն էլ կըմնայ. միթէ յառաջ չիմանալով դէմ կեցանք եւ այսօր այս նեղութիւնը մեզ խելքի՞ բերեց. ուրեմն աղաչում ենք քեզ եւ քեզնով էլ թագաւորին, որ ձեր մտքում ինչոր դրած ունիք մեզ համար, կատարէք:»

Հազարապետը՝ շատ գովեց իւր մտքում նոցա հաստատամտութիւնը. եւ այնուհետեւ սկսեց սէր ձգել նոցա վերայ. շատ համոզական խօսքերով թագաւորին յօժարացնել էր ուզում, որ թողութիւն տայ նոցա: Թէպէտեւ նա ինքը հազարապետութեան գործից ելաւ եւ շատ բաների մէջ վնասակար գրտնուաւ, (որովհետեւ ինքն էր մեղաւորն Հայաստանի աւիրուելուն, այդ պատճառով էլ մեծ անպատուութեամբ ուղարկուաւ իւր տունը,) բայց կապեալների մասին բնաւ չարախօս չէր ուզում լինել մինչեւ իւր մեռնելու օրը: Նաեւ այն երկրի մեծ իշխանը, որի անունն Հարեւ Շղոմշապուհ էր եւ որին յանձնուած էին բոլոր պատժաւորները, շատ սէր էր ձգել բոլոր նախարարների վերայ. նոցանից ծերերին

\* Միհրնբոսէն է այս հազարապետը:

Տօր տեղ էր ընդունում, մատաղահասներին սիրելի որդու պէս էր գգուում: Շատ անգամ գրեց եւ յայտնեց թագաւորին կապեալների քաշած նեղութեան մասին. մեծամեծների առաջ ջանք էր դնում, զանազան հնարներով աշխատում էր, մինչեւ որ շատ բարեխօսներով յօժարացրին թագաւորին: Յազկերտ հրաման տուեց քանդել նոցա կապերը, վերցնել նոցա վերայից պատուհասի սուգը՝ եւ հագցնել նոցա նախարարական զգեստ. եւ ոռճիկ նշանակեց նոցա. եւ սպառազինութեան պատրաստիւնը հրամայեց թագաւորականից տալ. գրեց եւ յանձնեց մեծ սպարապետին, որ արքունի զօրքերի հետ պատերազմի գործերի մէջ մտնին: Շատ տեղ ուրոր հասան նորա, քաջութեան մէջ լաւ դուրս եկան. մինչեւ անգամ նոցա համար գովութեան հրովարտակ էր հասնում Գուռը: Յազկերտն հրամայեց բոլորին էլ իւր առաջը բերել: Ական եւ ներկայացան Յազկերտ մեծ արքային. տեսաւ նոցա զուարթութեամբ. խօսաւ նոցա հետ խաղաղութեամբ. եւ խոստացաւ տալ նոցա ամէնմէկի իշխանութիւնը՝ հայրենի պատիւների կարգին նայելով, եւ արձակել նոցա՝ քրիստոնէութեան օրէնքը շնորհելով: Աւ երբ որ նորա մեծ ուրախութեամբ ման էին գալիս բանակի մէջ, այն ժամանակն հասաւ թագաւորի կեանքի վերջն իւր թագաւորութեան իննեւտասներորդ տարին: Աւ նորա երկու որդիքը տէրութեան համար իրար հետ կռուում էին երկու տարի. եւ երբ նորա այդ խռովութեան մէջ էին, ապստամբեցաւ Աղուանքի թագաւորը: Յազկերտի կրտսեր որդու դայեակը յարձակուաւ նորա մեծ որդու վերայ եւ բռնեց ու հրամայեց սպանել. եւ

Թագաւոր նստեցուց իւր սան Պերոզին: Աղուան- 458.  
քի Թագաւորը չէր ուզում հպատակ լինել 'Պար-  
սիկներին', այլ միաբանեցուց տասնեւմէկ լեռ-  
նական Թագաւորներին, եւ հակառակում էր պա-  
տերազմով Պարսիկների զօրքին: Երկու երեք  
անգամ ազաչական հրովարտակներ զրկեցին 'Պար-  
սիկները' եւ ոչ մի կերպով չկարողացան <sup>2</sup> համոզել  
այն մարդուն 'Աղուանից Թագաւորին', որը թէ'  
գրով, թէ' պատգամներով նոցա երեսներին էր  
տալիս Հայաստանի զուրաւերուելու մեղքը. "Այն-  
քան սէր ու ծառայութիւն ցոյց տալու համար'  
լաւութիւն անելու փոխարէն կեանքերը խլեցիք,  
ասում էր նա. լաւ է, որ ես յանձս առնիմ նոցա  
չարչարանքները քաշելու քանթէ ուրանամ քրիս-  
տոնէութիւնը:» Երբոր տեսան 'Պարսիկները' թէ  
բնաւ չեն կարող համաձայնեցնել նորան, շատ  
գանձեր զրկեցին Խայնգուրների երկիրը, բացին  
Ալանաց <sup>3</sup> Գաները եւ շատ գունդ հանեցին Հոնաց  
միջից, եւ մի տարի կոխ արին Աղուանների հետ:  
Եւ այնքան ժամանակուայ մէջ պաշարումը երկա-  
րելուց աւերուաւ 'Աղուանքի' երկրի մեծ մասը:

Այս բոլոր խռովութիւնները որ եղան մինչեւ  
Պերոզի Թագաւորութեան հինգերորդ տարին,  
պատճառ եղան Հայոց նախարարների շարձակուե-  
լուն: Եւ նոյն տարին 'Պերոզ' նոցա շատերի կեանքը  
'կայանքը' բաշխեց. եւ միւսներին էլ խոստացաւ  
վեցերորդ տարին ազատել միանգամայն բոլոր կայքե-  
րովն ու պատուովը:

Նախարարների ազատելու մասին Ղազար Փարպե-  
ցին այսպէս է պատմում:

2<sup>ագար</sup>.

Իւր թագաւոր գառնալու միւսնոյն տարին  
Պերողն ուղարկեց իւր գայեկորդուն Յզատվնաս-  
պին եւ հրամայեց Հայոց նախարարներին կապան-  
քից արձակել եւ ոռճիկ նշանակել նոցա Հրեւում.  
«Թող մնան, ասում է, այնտեղ այրուծիով միասին  
եւ կատարեն ինչոր կրդնէ նոցա վերայ Յզատվնաս-  
պի հայրն Աշտատ:»

Յզատվնասպը տեսնելով Հայ նախարարներին  
եւ հետզհետէ ծանօթանալով նոցա, սիրեց Ար-  
շաւիր Կամսարականին:

Տանելով նախարարներին Հրեւ՝ տուին նոցա  
Աշտատի ձեռքի տակ պատերազմի համար: Եւ Հրեւի  
իշխանն՝ Հրեւ Շղումչապուհ շատ սիրում էր Հայոց  
կապեալներին. եւ նոցա քաջութիւնը, լաւ բարքն  
ու ճարպիկութիւնը շատ անգամ գրով յայտնում  
էր դրան մեծամեծներին եւ իւր սիրելիներին, որոնք  
'արքունի' հրապարակումն էին:

Ամենողորմ Աստուածը յիշեց բոլոր միաբա-  
նեալների նահատակութիւնն եւ պարգեւեց կա-  
պեալներին գառնալ Հայաստան Պերողի թագաւո-  
րութեան վեցերորդ տարին:

463.

Եւ ապրեցաւ իւրաքանչիւրն՝ այնքան՝ ինչքան  
որ Տէրը սահմանել էր. եւ վախճանեցան ու թաղուան  
իրենց հայրերի գերեզմաններում խաղաղութեամբ.  
Եւ ամէնքն էլ առան սուրբ կաթուղիկոս Գիւտի  
օրհնութիւնը:

# Գ Լ Ո Ւ Ն Ի Բ .

Կանայք :

Կանանց գրութիւնն Հայաստանում առհասարակ թշուառ է երեւում: Այբիբ եւ կապեալ նախարարների կանայք գարմանայի համբերութեամբ տանում են շատ զփոքութիւններ: Նոքա հոգս են տանում եւ իրենց զաւակների դաստիարակութեան մասին:

«Միով գտեաւ ճշմարտութեան պըն-  
դեցի՞ն զմէջ աբբ եւ կանայք:»

Իսկ թէ բոլոր Հայաստանի մէջ բնդհանրապէս <sup>եւ շէ-  
'որքան են՝</sup> երանելի առաքիներների կանայքը՝ թէ՛ կապուածների եւ թէ՛ պատերազմում սպանուածների, 'այդ՝ ես համարել չեմ կարող: Մօտ հինգ հարիւրին անունանուն ճանչում եմ: Թէ մեծ, թէ փոքր ամէնքն էլ առհասարակ միմիայն հաւատի առաքինութիւնն ունէին զգեցած. 'եւ կանանց բնա- <sup>զարք:</sup> կան տկարութիւնը զօրացնելով մարդիկներից աւելի քաջ եւ յաղթող գտնուան:

Այն քնքոյշ կանայքն՝ առհասարակ՝ թէ նախարարների աղջիկներն եւ թէ մեծամեծների կանայքը՝ շարմղուն հացի տեղ կորեկ էին ուտում. անարատ գինու տեղ՝ ջուրը չափով էին խմում. կերպասի եւ ոսկեկար հագուստի տեղ՝ հասարակ բրդէ հալաւ էին հագնում. եւ զանազան տեսակ անկողինների փոխարէն՝ չոր խոտի վերայ էին պառկում գտնի երեսին. եւ նոքա՝ որ յառաջ քնկոտ եւ քնասէր էին, հրեշտակների նման անքուն էին մնում: Իւզով չօճեցին, սանտրով չկոկեցին իրենց գլխի մազերը: Եւ ինչոր անկարելի է կանանց համար չկատարել, այն է՝ շատախօսութեանն եւ շուտ շուտ քօղի տակից այս կողմ՝ այն կողմ՝ աչք ձգելուն՝ 'նոյնպէս յաղթեցին'. եւ իրենց լեզուներին կապ գրին աւելորդ խօսք չխօսելու համար:

Եղիշ:

Թեպէտեւ ամէնքն էլ ձեռնասուն սպասաւորներ ունէին, բայց չէր երեւում նոցա մէջ թէ որն է տիկինն եւ որն աղախինը. ամէնքն էլ մէկ հագուստ ունէին եւ երկուսն էլ միակերպ չոր գետնի վերայ էին պահուում. մէկը միւսի համար տեղ չէր ձգում. չունէին նորա ջոկ կերակուր եփօղներ եւ ոչ առանձին հացթուխներ, ինչպէսոր իշխանների տներում կարգ էր. մէկը միւսի ձեռքին ջուր չէր ածում եւ ոչ էլ փոքրերը մեծերին երեսարբիչ էին տալիս: Այն քնքոյշ կանանց ձեռքերին սապոն չդիպաւ եւ հանդէսի ժամանակ զուարթութեան համար իւղ չմօտեցաւ 'նոցա'. առաջներն իստակ ամաններ չդրուան եւ ուրախութեան 'համար' բաժկակալներն յառաջ չեկան. նոցա դռները մի խնդրակ էլ է չբացեց եւ պատուական մարդիկներից ոչոք չհրաւիրուաւ. նոցա գահլիճները. նոցա մտքից չանցաւ թէ մի ընտանի դայեակ կամ գոնէ մի հարազատ սիրելի ունին 'աշխարհիս վերայ': Փոշի ու ծուխ նստաւ նորեկ հարսների սրահակների եւ լուացարանների վերայ. եւ սարդի ոստայններ ձգուան նոցա հարսութեան սենեակներում. նոցա սեղանի պարագաներն անշքացան, նոցա ապարանները քանդուան եւ կործանուան. եւ տակնուվրայ եղան նոցա ապահովութեան ամրոցները: Չորացան սեւացան ծաղկալից բուրաստաններն եւ գետնի հետ հաւասար եղան գիներէր այգիների տնկերը: Նոքա 'կանաչք' իրենց աչքերովը տեսան իրենց աշխատանքի յափշտակութիւնը եւ իրենց ականջներովը լսեցին իրենց սիրելիների շարժարանքը: Նոցա գանձերն առան, թագաւորական արին. եւ չմնաց ամենեւին մի զարդ անգամ նոցա երեսի վերայ:

Հայաստանի այն փափուկ մեծցած տիկիները\*, որ պահուել մեծացել էին զանազան կակուղ ծածկոցների տակ եւ պատգարակների մէջ, միշտ բոբիկ եւ հետիոտս էին գնում ժամ՝ աղօթելու: Նոքա, որ երեսայութիւնից հորթի ըզուզով եւ որսի փափուկ մտով էին սնուել, վայրենիների նման խոտակեր կեանք էին վարում մեծ ուրախութեամբ: Նոցա մարմինների կաշին սեւացաւ, ներկուաւ. որովհետեւ ցերեկն արեւից էին պրուում՝ եւ բոլոր գիշերն էլ գետնի վերայ էին ընկած: Նոցա բերանից միշտ եւ հանապազ սաղմոս էր լսուում. եւ նոցա գլխաւոր մխիթարանքը մարգարէների գրքեր կարդալն էր. կոխ էին բացել եւ հակառակում էին կարեւոր մեղքերին. սիրով լուացին նախանձի կապուտագոյն ներկուածը. ազահութեան արմատը կտրեցին եւ խոնարհութեամբ ոտնակոխարին ամբարտաւանութիւնն ու հասան երկնաւոր բարձրութեան:

Այն այրի՝ կանայքը, որ նոցա մէջն էին, նորից առաքինութեան հարսներ եղան. իսկ կապուած՝ նախարարների՝ կանայքը կամաւ կապեցին իրենց մարմնաւոր ցանկութիւններն եւ հաղորդակից եղան սուրբ կապեալների շարշարանքին: Իրենց կեանքում՝ նմանեցան մահուամբ նահատակուած քաջերին, եւ հեռուից վարդապետ եւ մխիթարող եղան բանտարկուածներին: Իրենց մատներով աշխատեցան ու կերակրուան, եւ թագաւորական նշանակած ոռձիկը տարեցտարի թոշակ էին անում եւ ուզարկում էին նոցա՝ մարդիկներին՝ մխիթարելու: Շատ ձմեռների ձիւներ հալան. գարուն եկաւ, նորեկ ծիծառներ հասան. կենցաղասէր մարդիկ տեսան

\* Խանութները:

այդ եւ ուրախացան, բայց նոքա 'կանայք' երբէք չկարողացան տեսնել իրենց անձկայիններին: Գարնան ծաղիկները նոցա միտն էին ձգում իրենց հաւատարիմ ամուսիններին, բայց նոցա աչքերը կարօտ մնացին նոցա երեսի ցանկալի գեղեցկութիւնը տեսնելու:

Որսի բարակներն\* անհետացան, որսորդների ճանապարհները փակուան ջնջուան: Նոցա 'մարդիկների' անունները բնագիրների մէջ յիշուան, եւ ոչմի տարեկան տօն չկարողացաւ բերել նոցա հեռու երկրից: Նոցա ճաշակատեղերի վերայ նայեցին 'կանայք' եւ լաց եղան. եւ ամենայն ատեանի մէջ յիշեցին նոցա անունները. շատ արձաններ գրած էին նոցա անուանը եւ նոցա վերայ նշանակուած կար իւրաքանչիւրի անունը:

Եւ երբ այսպէս ամէն կողմից նոցա մտքերն այլեկոծ էին լինում, նոքա 'այնու ամենայնիւ' չթուլացան ամենեւին երկնաւոր առաքինութիւնից: Էլ սովորութիւն չարին հարցնելու հեռուից եկած մէկին, թէ երբ կը լինի, որ տեսնինք մեր սիրելիներին. այլ այն էր նոցա փափագն եւ խնդրուածքն առ Աստուած՝ թէ քնչպէսոր սկսել են, այնպէս քաջ սրտով եւ լիքն երկնային սիրով գլուխ հանեն 'իրենց սկսածը':

200707.

Եւ թէպէտ նահատակուած ու կապուած նախարարների կանայքը նեղութեան մէջ էին, սակայն իրենք սովորեցնում եւ մեծ հոգացողութեամբ սովորեցնել էին տալիս ու խրատում, քնչպէս քաջ մարդիկ իրենց զաւակներին՝ եւ մանուկների 'կրթութեան' առաջիկայ օգտաբեր խորհուրդները կատարում էին անդադար:

\* Թագիները:

# ԳԼՈՒԽ ԻԳ.

## Գրիստ կաթոնիկոս:

Գրիստի կաթոնիկոսութեան ժամանակն՝ անարժան մարդիկ տանուտէրութիւն են գտնուում: Բարիկ Աբելի, Առնակ Ամատունի եւ այլ բարեպաշտ նախարարք Գրիստի հետ խորհուրդ են անում ազատուել Պարսից ծառայութիւնից: Նոցա խորհուրդը յաջողութիւն չգտաւ: Գրիստը յայտնի կերպով յանդիմանում է ուրացեալներին: Մաղխազ Գաղիշուն գանդատ է անում Պերոզին Գրիստի վերայ: Գրիստը կոչուում է Պարսից դուռը եւ գրկուում է կաթոնիկոսական պաշտօնից:

« Զովի քաջ զանն իւր զնէ ի վերայ ոչխարաց: »

Սուրբ Յովսէփի կաթոնիկոսի նահատակուելուց յազար՝ յուր յետոյ շարաց կաթոնիկոսութիւնն անցաւ տէր Մելիտէին Մանազկերտեցեաց ցեղից. եւ նորանից յետոյ տէր Մովսէսին նոյն ցեղից. եւ յետոյ տէր Գրիստին, որ Տայոց գաւառի Արահեզայ գիւղից էր: Սա գիտուն մարդ էր. հայերէնից զատ գիտէր եւ յունարէն. պարզ սովորեցնում էր բոլոր ժողովրդին եւ 'կրթում' էր՝ դեռ եւս տղայութեան մէջ մնացած Մամիկոնեան, Ամասարական եւ ուրիշ այլ ցեղերի մանուկներին: Նա Պերոզի թագաւորութեան տարիներում բարձուած էր մէջ տեղից ամէն տեսակ իշխանութիւն, բարեկարգութիւն եւ բրիստոնէական կարգ. եւ նեղութեան, հալածանքի անպատուութեան միասններն էին թափուում իշխանների գլխին: Այնպէս որ մինչև և անգամ ուրացութեամբ գնելով՝ Պարսիկներից տանուտէրութիւն՝ էին առնում անմիտ եւ միասակար մարդիկ, 'որոնք' անպիտաններ էին՝ եւ ոչ քաջեր. միքանիսը սարերի աւազակների մէջ ուրացութեամբ թափառում էին. միքանիսը ծաղրի համար աստուածներ

Ստրանս.

Պարսի.

էին գնում. մարդկութիւնից զուրկ էին եւ անար-  
ժան եւ աղնուականներին միանգամայն անձանօթ:

‘Այս պատճառով’ պէտք էր տեսնել ‘թէ ի՞նչ-  
պէս’ հեռացել էր Հայաստանի միջից լաւութիւնը.  
‘ինչպէս’ կորել էր իմաստութիւնը, մեռել քաջու-  
թիւնը, ծածկուել պահ մտել քրիստոնէութիւնը:  
Այն որ մի ժամանակ Հայոց զօրքն ու բիշ զօրքերի  
մէջ ամենից քաջանուն էր երեւում եւ զօրագլուխ-  
ներն անուանի էին ու յաղթօղ, ‘այժմ’ ամենքի  
համար ծաղրի ու կատակի բան էր դառել: Մինչեւ  
անգամ ինքը Պերոզ թագաւորը յայտնի ասում էր  
թէ “անպիտան մարդ կամ յետնեալ զօրք թէ որ  
իմ իշխանութեանս մէջ կայ, Ասորին է, բայց Ասո-  
րուց էլ անպիտանն ու յետնեալը Հայն է:” Եւ այս  
լուրն արժանի է միայն լալու եւ ողբալու:

Լաւ մարդ թէպէտ կար այն ժամանակ, ինչպէս  
Քարիկ Միւնին եւ Առնակ Ամատունին եւ կամ սոցա  
նման մէկ ուրիշը, բայց ուրացեալ ամբարիշտ իշ-  
խանների կատաղութիւնից թագչում պահուում  
էին: Աւելի կարեւոր էին համարում համբերու-  
թեամբ քրիստոնէութեան մէջ մեռնել՝ քան թէ  
փառք խնդրելու ձգտումներով ուրացութեան պա-  
տահել եւ կորչել: Երբ տեսնում էին, որ ամբարշ-  
տութեան ‘ուրացութեան’ բոցը բորբոքուած է եւ  
մարդ չկայ, որ հանդցնէ, ժողովում նստում էին  
Հայոց սուրբ քահանայապետի ‘Վիւտի’ մօտը, որ մի  
հնար գտնին օգնութիւն ստանալու եւ ապստամբե-  
լու: Ծածուկ պատգամաւորներ ուղարկեցին մի  
երկու անգամ Յունաց Աւոն թագաւորի մօտ, բայց  
գործն երկարացաւ եւ խորհուրդները խափանուան  
‘դարձեալ’:

Գիւտ կաթուղիկոսն սկսում էր այնուհետեւ յայտնի կերպով գրգռել ուրացողների դէմ եւ սիրել ու պատուել խեղճ հաւատացեալների կողմը. եւ գլխաւորապէս վատերի շարքն էր դրել ու արհամարում էր Գաղիշոյ Մախազին, որ բոլոր ամբարիշտների զօրագլուխն ու քաջալերողն էր: Սա չկարողանալով Գիւտի արհամարհանքներին դիմանալ՝ գնաց գանգատ արաւ նորա վերայ Պերոզ թագաւորին եւ ասաց. «Այն մարդիկներին, որոնք ուզում են քու հաւատդ ընդունել եւ սիրել, նա՛ Գիւտը՝ կանչում է իւր մօտ եւ ոմանց բան տալով, ոմանց քաղցր խօսքերով խաբում ու յետ է կայնեցնում. նաեւ մեզի, որ քեզ սիրում ենք եւ աւրեգակին ու կրակին երկրպագութիւն ենք անում, ատում է եւ անպատուում. ինքն էլ կայսեր հետ գործ ունի ու պատուական ընծաներով հպատակում է նորան:

Պերոզը որ այս գանգատը լսեց Գաղիշոյից, հրաման տուեց, որ կաթուղիկոսը Գուռը գայ: Գիւտը յօժարութեամբ գնաց եւ ներկայացաւ Գրան մեծամեծներին. ամէն մարդ տեսնում էր նորա երեսն ինչպէս հրեշտակի երես. հեթանոսները պատկառում էին նորանից, իսկ քրիստոնեաներն եւ Տիգրանի, Խուժաստանի, Հրեւի եպիսկոպոսն ու բոլոր այն կողմերի քահանաներն եւ սարկաւազները վախում եւ գողում էին սրբի առաջ: Պերոզը լսելով Գիւտի գալը՝ Յղատվնասպին զրկեց նորա մօտ՝ Մախազի գանգատի բոլոր խօսքերը միառմի նորան՝ «ասելու»: Գիւտը պատասխան տուեց՝ թէ «Մախազի բոլոր ասածները ճշմարիտ չեն. որովհետեւ քրիստոնէութիւն եւ քրիստոնեայ մարդ սի-

րելս մէնակ այսօրուանից շեմ 'սկսել', այլ իմ մանկութիւնիցս. եւ բոլոր այն մարդիկներին, որոնք ճշմարտութիւնը թողել են, ատում եմ. եւ ո՛վ որ ճշմարտութիւնից հեռանալ է ուզեցել, թող չէի տալիս, որ այնպիսի մարդը կորչի: Իսկ որ ասում են թէ Յոյների հետ գնալ գալ ունիմ 'գործ ունիմ', ինչպէս դա է կարծում, այդպէս չէ. որովհետեւ գիտութիւնս եւ բանաւոր ուսումնս Յունաց երկրում եմ առել. այնտեղ շատ ծանօթներ եւ ուսումնակիցներ ունիմ. եւ այս ձեւի հաղուստն էլ, որ ունինք այնտեղից ենք գնում: Իսկ ինչոր հնազանդութեանը կրվերաբերի, այդ մեր օրէնքն էլ հրամայում է տալ տէրերին ինչոր արժանն է եւ պէտք:»,

Թագաւորն, իսկոյն հասկացաւ թէ ստոյգ եւ մտացի է նորա ասածը եւ Մախաղը սուա է խօսում նորա վերայ. բայց որ չլինի թէ իւր օրէնքի կարգերը թեթեւ երեւնան քրիստոնեաների աչքին, ձայն չհանեց եւ մէկկողմ թողեց Մախաղի իօսքերը. եւ զրկեց Գիւտին ասելու՝ թէ "մինչեւ հիմաց քու իշխանութիւնդ առանց իմ հրամանիս ես ունեցել եւ ծառայ մարդիկ են, որ քեզ այդպիսի մեծ գործ են տուել. թէ որ իմ կամքս կրկատարես եւ արեգակին երկրպագութիւն կ'անես, այդ գործը քեզ ու քու ցեղիդ՝ կամ ում որ դու կամենաս, թուղթուգրով կը շնորհեմ մինչեւ յաւիտեան. քեզ էլ պատուով կը թողնիմ երթաս Հայաստան. իսկ եթէ չես յօժարանոր, եւ զիսկոպոսութիւնդ քեզանից կըխլում եւ այդ գործից կը հանեմ քեզի. եւ անպատուութեամբ ու խայտառակուած կ'երթաս դէպի քու տունդ եւ երկիրդ:»,

Գիւտ կաթուղիկոսը պատգամաւորին ասաց թէ  
“ գնա՛ թագաւորին ասա՛ այս գործիս համար, որ ա-  
սու՛մ ես, թէ ինձանից կ'առնիք, ուրախ եմ եւ ու-  
ղու՛մ եմ. բայց եպիսկոպոսական ձեռնադրութեանս  
համար, որ ասու՛մ ես թէ կ'առնիմ, այդ ոչ թա-  
գաւորները կը համարձակին եւ ոչ իշխաններից մի  
մարդ: Իսկ հաւատքիդ համար որ հրամայու՛մ ես  
ինձ ընդունել եւ պատիւներ ես խոստանում, աշ-  
խարհիս վերայ ոչորի պատիւն այնպէս մեծ չէ եւ  
իշխանութիւնն այնպէս հզօր ինչպէս այն, որ դու  
ունիս. բայց գարշելի հաւատքիդ պատճառով՝ դու  
որ թագաւոր ես եւ բոլորեքեան, որ այդ հաւատն  
ունին, իմ աչքիս մեռած էք՝ միանգամայն՝. եւ քու  
պատիւդ՝ անգամ՝ անպատուութիւն եմ համարում: ”

Պատգամաւորը գնաց թագաւորի առաջն եւ  
ասաց. “ չեմ համարձակու՛մ այն մարդու ասածները  
յանդգնաբար երկրորդել քու առաջդ, մինչեւ որ  
չհրամայես: ” Թագաւորն էլ հրամայեց համարձակու-  
թեամբ ասել ամէն բան. եւ լսելով Գիւտի բոլոր  
խօսածներն՝ ասաց. “ Չեմ թողներ, որ համբուրեն  
քրիստոնեայք նորա կապանքներն եւ երկրպագու-  
թիւն անեն նորա ոսկորներին, ինչպէս որ նոցա սո-  
վորութիւնն է. միայն ասա՛ նորան թէ կայ՛ ուրոր  
ուղենաս, բայց կաթուղիկոսութեան գործից հե-  
ռացած ես եւ էլ քուկդ չէ: ”

Այնուհետեւ իւր կամքով մնաց Գիւտ արքու-  
նի Գրանը՝ Տիգրանու՛մ. եւ շատ համարձակու-  
թեամբ պատուում էին նորան ոչմիայն քրիստո-  
նեաններն, այլ եւ հեթանոսները. միքանիսին եպիս-  
կոպոս էր ձեռնադրում. ուրիշ շատերին քահա-  
նայութեան կարգ էր տալիս: Աւ փառքով պատուով

Հեռացաւ գնաց Հայաստան եւ յառաջուանից աւելի  
չատ պատուով մնաց Հայաստանում. եւ վախճա-  
նեցաւ խորին ծերութեան մէջ ու 'Թաղուաւ' իւր  
Հայրերի գերեզմանոցում Վանանդ<sup>1</sup> գաւառի Ող-  
մաւ գիւղի մէջ. 'տասը' տարի Հայրապետութիւն  
անելուց յետոյ:

\* Ըստ Վարդանայ "վեց տարի.."

## ԳԼՈՒԽ ԻԴ.

Վախում Մարտիրոսեան:

Վրաց Աշուշայ իշխանն ազատում է Հմայեկի որդւոցը. (354 թ.)  
Չուիկը կրթում է նոցա Վրաստանում: Ժամանակի իշխան-  
ները նախանձում են նոցա վիճակին: Նոցանից անդրանկի՝  
Վահան Մամիկոնեանի՝ յաջողումը: Ուրացեալ նախարարների  
բանասարկութիւնից ազատուելու: Համար Վահանն ուրանում է  
իւր հաւատը: Վրիւ Ասորին ամբաստանութիւն է անում Պե-  
րոզի առաջ Վահանի վերայ: Վահանը գնում է Պարսից  
Դուռը եւ վերադառնում է արդարացած:

«Մեծ իսկ քան զամենայն՝ սեր սուրբ  
յաննենդ մտաց գիտեմք:»

Յագիկերտի թագաւորութեան եօթնեւտասն Չափոր.

երորդ տարին Վրաց Աշուշայ իշխանն արքունի  
Գրան մեծամեծներից իւրաքանչիւրին անհամար ըն-  
ծաներ տալով՝ մանաւանդ Միհրներսէհին՝ խնդրեց  
եւ ասել տուեց թագաւորին, որ նորան բաշխեն  
Մամիկոնեան Հմայեկի որդւոցը, որոնց առել էր  
Վասակ դայեկների ձեռքից. եւ նոքա՝ դեռ՝ շատ  
երեխայ էին: Մեծամեծներն էլ յօժարեցրին թա-  
գաւորին եւ նա կատարեց Աշուշայի խնդիրքը:

Մամիկոնեան Հմայեկի կինն անուանի էր. եւ  
Հայաստանի կանանց մէջ ամէնից բարձր էր ընտիր  
եւ խոհեմ կողմերով. նա մեծացրեց Վրաստանում՝  
եւ ուսում տուեց իւր այն որդւոցը, որոնց Աշուշան  
իրրեւ պարգևե խնդրեց Յագիկերտից եւ բերեց  
իրենց մօր՝ Չուիկի մօտ.\* այնտեղ Վրաստանում  
մեծացան մանուկներն եւ ուսում առան ու ամէն  
բանի մէջ յառաջադէմ ու հռչակաւոր էին. ամէն  
հասկացող մարդու երեւում էին նոքա յաջողակ եւ

\* Չուիկի բոլորն Աշուշայ բղէջի կինն էր եւ անունն Ա-  
նուշգում էր:

զարմանալի. առաջին՝ որդու՝ անունն էր Վահան, երկրորդինը՝ Վասակ եւ երրորդինը՝ Արտաշէս. նոքա մի ուրիշ եղբայր էլ ունէին Վարդ անունով, որ՝ մնացել էր Տայքում գայեակների մօտ:

Այն ժամանակուայանպիտան իշխաններն օրէցօր տեսնում էին յառաջագիմու թեան աճումը Մամիկոնեանների որդւոց մէջ. ըստորում նոքա՝ որդիքը՝ խորհուրդի մէջ ականաւոր էին, խելացի եւ հնարագէտ. նետաձգութեան մէջ սիրուն եւ իսկ տեղին խիօղ. որսի մէջ թեթեւ շարժօղ եւ ամէնից յառաջ սպանօղ. երկու ձեռքից էլ յաջողակ էին. նոցանով փայլում էին բոլոր Հայոց տանուտէրների ընթրիքները. նոցանով զարգարուում էին ամէն տան մէջ օտարներն ու ընտանիները: Նոքա՝ որդիք՝ եւ հօգս էին քաշում Արշարունեաց տէր երանելի Արշաւիր Ամսարականի որդւոցը (որոնք Վարդանի դստեր ծնունդն են) խրատելու եւ ուղղութիւն տալու իրենց իմաստութեանն ու արուեստին համաձայն: Եւ այսպիսի բարեմասնութիւններ անելուն աւելի արի էր Հմայեկի մեծ որդին Վահանը, որովհետեւ խելացի, առողջախորհուրդ եւ բարեսէր մարդ էր նա: Մինչեւ անգամ պարսիկ գործակալները, թէպէտ ահամայ, բայց սիրում եւ պատուում էին նորան եւ թագաւորի առաջը գովում էին այն մարդու լաւութիւնը. այնպէսօր թագաւորն ինքը կատարեալ ծանօթացաւ եւ լաւերի շարքն էր դրնում նորան՝ Վահանին՝ ու բոլորի առաջը գովում եւ պատուի արժանի էր համարում. բայց նորա նախահարց գործերը մտաբերելով քաշուում էր արժանաւոր պատիւը տալու նորան, մանաւանդ երբ վրայվրայ լսում էր այն նախանձորդների բանսար-

կութիւնը, որոնց սաստիկ վախեցնում էր Մամիկոնեան Վահանի յաջողութիւն ունենալը:

Մաղխազ Գաղիշոն եւ ուրացողների խմբերը՝ երբ տեսնում էին Մամիկոնեան Վահանին լաւ կողմերով այնպէս երեւելի զարգացած, հնար էին փնտրում, թէ ինչպէս նորան ու նորա եղբայրներին կորցնել կարողանան. Պարսիկների միտն էին ձգում նորա նախահարց մասին՝ թէ նոցանից որ մէկը չէ խռովեցրել Պարսկաստանը. «ուրեմն, ասում էին, երբ եւ իցէ, սա էլ նոյն խռովութիւնները պիտի հանէ ձեր գլխին»:

Վահանը որ իւր նախանձաւորների այսչափ գրգռուիլը տեսաւ, գնաց Գուռը եւ հաւատք փոխեց. բայց այնու ամենայնիւ չկարողացաւ՝ դորանով՝ կապել չարախօսների բերանը. որովհետեւ այն՝ որ մի ուղիղ խօսք խօսել՝ «անգամ» չգիտէր հրապարակի մէջ մի իշխանի առաջ, նորան՝ Վահանին՝ ասում էր. «նստում է, ասում էին, եւ ամէնքին քիթուպուռնկ է շինում. ամէն բանի մէջ մտնում է եւ ո՛չքի չի թողնում՝ գործ կատարելու: Վահանը՝ մի գործակից ունէր Վրիւ անունով՝ Ասորի մարգու որդի, որ չկարողանալով արքունի գործը կատարել, գանգատաւոր էր լինում Վահանի վերայ Պերողի առաջ թէ «ոսկէհատի՝ գործին ինձ մօտիկ չի թողնում եւ ինքն է երկրի բուլոր ոսկին ժողովել ու մտածում է կայսեր մօտը կամ շոնաց երկիրը գնալ եւ ոսկին նոցա տալով ուզում է զօրք խնդրել եւ գլուխ քաշել՝ քեզանից»:

Վահանն էլ շուտով վեր առաւ բոլոր ոսկին ու գնաց Գուռն եւ ներկայացաւ թագաւորին: Թագաւորն իմացաւ նորանից թէ ինչքան է ոսկին, որ

նա բերել է իւր հետ, եւ շատ ուրախացաւ. յետոյ  
Վահանի առաջը նորէն ասել տուեց Վրիւին այն  
խօսքերը, որ յառաջ խօսել էր նորա վերայ: Վա-  
հանը պատասխանեց թագաւորին եւ ասում է. «Ես  
այնքան կոյր չեմ, որ Արեաց ղոժը տեսնել չկարո-  
ղանամ. ես որ՝ դորա ասելովն՝ ապստամբել եմ  
ուզում, դա ինքն էլ լաւ գիտէ, որ մի ծառայ ան-  
գամ չունիմ, որ ինձ համար խոհարարութիւն անէ  
եւ երկու երեք պատանի անգամ ձեռքիս տակ չու-  
նիմ, որ ինձ ծառայեն: Իմ զօրքիս ղոժն այդքան է-  
թէ որ մի օտար երկիր փախչել ուզենայի, ինչու  
այսքան ոսկին սյստեղ կրբերէի:», Եւ Վահանն ար-  
դարացած դուրս եկաւ այն ատենից եւ պատուով  
ճանապարհ ընկաւ եկաւ Հայաստան:

# ԳԼՈՒԽ ԻԵ.

Այս սուսմբն հն թիսն:

Աշահան Մամիկոնեանը մատանջութեան մէջ է ընկնում իւր ուրացութեան պատճառաւ: Արաց Աազգէն բզեշի մահն եւ Ախթմանդի ապստամբութիւնը. (382 թուին): Հայոց նախարարները խորհուրդ են անում ապստամբելու: Աշահանը միայնում է նոցա խորհրդին: Արագղապուհ Մամուռնին յայտնում է նախարարների գաղտնիքը Ետրփնասպ մարզպանին: Ետրփնասպ եւ Ահհփեհնամ փախում են Ընի բերդը, եւ այնտեղից գնում ամրանում են Երտաշատու բերդում: Ախտապահները յափշտակում են Պարսից դրաստը, բռնում են Փաղիչը Մաղխազին եւ պաշարում են Երտաշատու բերդը: Ետրփնասպն եւ Ահհփեհնամը գիշերով փախում են Ետրպատական. եւ ուրացեալների թելադրութեամբ գալիս են զօրքով ուխտապահների վերայ:

« Երկիւզ՝ թերահաւատութեան է նշանակւոյն »

Արովհետեւ նորա 'Աշահանի' միտքն ուրացութեան վատ անուան պատճառով՝ խաղաղ չէր, ըստորում իւր հայրերի նման առերեսս էր կրում այդ անունը, ուստի յայանեց ջերմ սիրողներին՝ հաւատարիմներին՝ իւր սյդ հոգսը եւ հնար էր փնտրում: Եւ երբ այսպիսի վողովմունքի մէջ շուարած մնացել էր, Արաստանում Պերողի թագաւորութեան քսանեւ հինգերորդ տարին Ախթմանգն սպաննեց Աազգէն բզեշին: Հայ քրիստոնեայ մարդիկ, որ այն տարին այնտեղ կուռի մէջ էին, երբ լսեցին Արաց ապստամբութիւնը, վախեցան՝ չլինի թէ պարսիկ զօրադուլները Հայոց գունդն առնին ու գումարեն 'Հոնաց դէմ': Բայց Քրիստոս այդպիսի կասկածանքից ազատեց նոցա եւ եկան Հայաստան՝ Շիրակ գաւառի այն գաշտը, ուր բնակում էր Ետրփնասպ Յողմանդեան՝ Հայոց մարզպանն եւ նորա հետ էլ Հայոց հազարապետ Ահհփեհնամը:

Հոգսն.

Այնտեղ միքանի հայ նախարարներ, որոնք գիտէին Վահանի տրտմիլն ու տարակուսիլը մոգութեան անուան համար, խորհուրդ արին իրենց մէջ եւ ասացին, թէ «չատ յարմար ժամանակ է, որ մենք էլ Պարսիկներին նեղութեան մէջ ձգենք:» Եւ մի գիշեր իրենց խորհուրդը յայտնեցին Մամիկոնեան Վահանին, որը լսելով 'նոցա միտքը' ասաց ամենքին. «Թէպէտեւ ոչ ամենքը՝ բայց միքանի մարդ, որ այս խորհրդի մէջ են, գիտեն թէ ինչպէս ամենայն ժամ նեղանում, հոգս եմ անում այս սուտ անուան վերայ, որն ատելութեամբ եմ կրում իմ մէջս. եւ կ'ուղենայի հնարք գտնել ազատելու ինձ այս խղճահարութիւնից, որն ինձ տանջում է. բայց այն՝ ինչոր դուք էք մտածում, դորա մասին ասել թէ «լաւ է, կատարեցէք», չեմ կարող. որովհետեւ Պարսիկների զօրութիւնն ես լաւ գիտեմ. միայն ամենից աւելի դուք ինքերդ ձեզանից վախեցէք. որովհետեւ խաբերայ ու վախկոտ մարդիկ էք. թէ ինձ էք հարցնում, 'լաւ է' ձեր դատարկ եւ անպէտք խորհուրդների համար ինձ նեղութիւն չտաք:»,

Պատասխանեցին 'նախարարներն' եւ ասում են. «Այդ ինչոր ասացիր, ինչպէսոր քու իմաստութեանդ վայելուչ է, ճշմարիտ եւ ուղիղ ասացիր. բայց մենք մեր յոյսը յառաջ Աստծու վերայ ենք դրել եւ յետոյ մեր մեռնելու վերայ՝ մեր գլուխը դնելու վերայ՝. ըստորում լաւ ենք համարում մի ժամ մեռնել քանթէ ամէն օր տեսնել եկեղեցու եւ քրիստոնեաների անպատուութիւնն ու քանդուիլը:» Մեռնելու անունը որ լսեցին Մամիկոնեան Վահանն եւ նորա եղբայրը Վասակ՝ սիրտ առան զօրացան: Խօսել սկսեց Վահանն եւ

ասում է: «Գիտէ՞ք որ իմ Աւրդ եղբայրս Գուռն է, եւ թէոր Պարսիկների ականջին հասնի մեր խորհուրդը, նորան կրկապեն եւ կըշարշարեն. բայց ես էլ յօժար եմ մեռնել քան թէ ապրել այսպիսի ուրացութեան մէջ. եւ Ամենագէտը տեսնելով իմ զղումս, թող մի բարի նշան ցոյց տայ եւ վերագարձնէ ողջամբ դէպի ինձ իմ Աւրդ եղբօրս եւ արժանացնէ ինձ աչքովս տեսնել նորան եւ ուրախանալ:» Այս որ ասաց՝ ամէնքը միասին ոտքի ելան թէ ուրացեալներն եւ թէ՛ քրիստոնեաներն եւ աղօթք արին եւ ուղեցին սուրբ Աւետարան. եւ սուրբ Աթիկ քահանան, որ նոցա հետ բանակուին էր, երևելի թցնի՝ գիւղից, բերեց սուրբ Աւետարանն եւ ամէն մէկը դրեց իւր ձեռքը նորա վերայ, երգում կերաւ. եւ հաստատուան՝ նորից՝ քրիստոսի հաւատի մէջ. 'յետոյ՝ ամէնն իւր օթեւանը գնաց հանգչելու: Ամատունեաց տոհմից մի Հայ նախարար Արաղչապուհ անունով՝ այն խորհուրդից գուրս գալով՝ Յուդայի նման նոյն իսկ գիշերը գնաց եւ պատմեց մարդպանին եւ միւսներին բոլոր Հայոց նախարարների միաբանութեան խորհրդի, Աւետարանով երգուելու եւ 'ուրիշ՝ խօսուածների մասին: Ատրվնասպն եւ ուրացող Հայերի խմբերն երբ լսեցին, սրտերը կոտրուան եւ չկարողացան քնել. առաւօտը փախան այնտեղից եւ գնացին բանակ դրին Անի՝ բերդի պարսպի մօտ եւ կասկածի մէջ մնացին այն ամբողջ ցերեկն այնտեղ. եւ գիշերը մարդպանն ու հազարապետը՝ եւ ովոր նոցա հետ միաբան էին, ամէնքը փախան. եւ որովհետեւ տեղեակ առաջնորդների հետ էին փախչում, 'ուստի՝ ազատուան հասան Արտաշատի բերդը: Հայոց նախարար-

ները հասան բռնեցին Պարսիկները ի բոլոր գրաստը ճանապարհի վերայ. եւ Գաղիշոյ Մաղխազին էլ բռնեցին. եւ հասնելով Գուին<sup>3</sup>, եկան պաշարեցին Արտաշատի բերդը. իսկ մարզպանն ու հազարապետը գիշերը գողտուկ բերդից դուրս եկան, փախան գնացին Ատրպատականի կողմերը:

Մուկփ.  
և պիսկ.

Թէպէտեւ Սիւնեաց իշխանութեան<sup>4</sup> երեւելի իշխանները հին խարօղից խարուելով աշխարհական, առօրեայ եւ ապականելի փառք վայելեցին, բայց նոցանից միքանիսը, որ մարմնով եղբայրներ էին նոցա եւ արենակից, երկնային իմաստութեամբ իմաստնացան. նոցա անուէն է Քարպէն, Քակուր եւ Յազդ. սոքա Սիւնեաց գնդից դուրս եկան եւ այն ուխտապահներին հետեւեցան, որոնց գլխաւորն էր քաջ Ղազան Մամիկոնեանը. միայն թէ Գդիհոն անունով անհեղեկ հսկան, որը Սիւնեաց տէր էր եւ շատ ուժով մարդ էր, պատերազմ էր անում միւս Հայերի հետ, այսինքն թէ հակառակ էր ուխտապահներին<sup>5</sup>: Աւրծայ<sup>5</sup> իշխանի կողմ եկի որդին Ղարապնեւսէհը, որ Հայոց նախարարների հետ միասին երդում էր տուել, յետ կայնաւ սուրբ ուխտից եւ աւերեց Քոնավիժի քաղաքն. ու քաղաքի բոլոր կարասին առաւ գնաց եւ ամրացաւ իւր իշխանութեան մէջ՝ գտնուող՝ Սադրայ բերդում: Իսկ ամբարիշտ՝ ուրացեալ՝ հոյ նախարարներից միքանիսը խրատ տուին Հայոց մարզպան Ատրվշնասպին եւ ասացին թէ՛ «դեռ նոքա՝ ուխտապահները՝ լաւ պատրաստուած չեն. թէ՛ որ դու հիմայ շուտով գնաս նոցա վերայ, հեշտութեամբ կարող ես մի շատ մեծ գործ գլուխ հանել:», Մարզպանն հաւանեցաւ այդ խորհուրդին եւ շուտով զօրք առաւ եկաւ Հայաստան՝ Արասի գետի ափը:

Հագար.

## ԳԼՈՒԽ ԻԶ.

Ա կ ո ո ո ո կ ո ի ո ը :

Ուխտապահները հաստատուում են Գուին քաղաքում: Սահակ ասպետը Հայոց մարզպան է ընտրուում եւ Վահան Մամիկոնեանն Հայոց սպարապետ (482 թ ու ի ն): Հայոց դունդը մի քանի նախարարների առաջնորդութեամբ դուրս է գալիս Ատրվինասպի զօրքի դէմ: Ահոսի պի դի մտ պատերազմ է լինում եւ Պարսիկներն յաղթուում են: Պատերազմի ժամանակ Գարջոյլ Մաղխազն անցնում է Պարսից կողմը. Ատրվինասպ սպանուում է: Ուխտապահները վերադառնում են Գուին յաղթութեան սոն կատարելու եւ ձմեռն հանգստանալու:

«Գիւրին եւ Աստուծոյ՝ սակաւուք զմեծամեծ իրս գործել:»

Սահակ ասպետը մարդպանութիւնն ընդունեց <sup>շարժառ.</sup> Հայերից եւ Վահանն էլ սպարապետութիւնը. այս երկուսին եւ հաղորդեցին թէ Պարսիկները գալիս են. եւ միտք արին թէ պէտք է շուտով նոցա 'Պարսիկների' դէմը դուրս գալ. այս էլ մտածեցին, որ Սահակ մարդպանը, Վահան սպարապետը եւ մի քանի ուրիշ նախարարներ մնան նոյն խակ ոստանում 'Գուինում', որ կարողանան քաջալերել եւ բարի յոյս լինել գնացողների համար եւ ահ ու սրտաբեկութիւն պատճառել անօրէնների կողմին: Եւ պատրաստուան այնուհետեւ պատերազմի համար Բարգէն Սիւնին, 'Վահան սպարապետի եղբայր' Վասակ Մամիկոնեանը, Գարջոյլ Մաղխազը, երանելի Արշաւիր Կամսարականի երկու որդիքը՝ Շիրակայ տէր Ներսէհը եւ 'նորա եղբայր' Հրահատը, նաեւ Գնունեաց իշխան Ատոմը եւ նորա եղբայր Առաստոմը եւ նոցա հետ էլ զօրք՝ մինչեւ չորս հարիւր մարդ: 'Յառաջ' մտան եկեղեցի, երկրպագութիւն տուին բողոքիս Ստեղծողին. երկրպագեցին եւ Յոհան կա-

Թուղիկոսին.<sup>1</sup> յետոյ մնասբարով ասին Սահակ ասպետին, Ահա՛ն զօրավարին եւ միւս ընկերակիցներին՝ «ու գնացին»։ Արազկերտ գիւղը որ եկան, լսեցին թէ Պարսից գունդը գետն անցել եւ թուով եօթն հազար է։ Ասասկ քաջ սեպուհը, որովհետեւ այն օրն առաջապահ էր, յառաջ գնաց գէպի Առուակք գիւղը, որ Պարսից զօրքի հանգամանքներն իմանայ. Առուակքի մէջ գիշերը մնալու էր եկել Ատրվճնասպ. եւ առաւօտուն յանկարծ լսեց թէ Ասասկ Մամիկոնեանն այնտեղ է։ Ասասկն էլ նոցա մասին իմանալով՝ ազատուելու հնար մտածեց, որ իւր գունդն ապրեցնէ. այն միջոցին հրաման տուեց, որ երկ'երկու կամ երեք եւ աւելի մարդիկ անյայտ տեղերով եւ փողոցների միջով գուրս գան գիւղից եւ իրարուց ջոկջոկ շտապին Արազկերտ գնալու, որտեղ Հայոց նախարարներն ու այրուծին էր։ Ինքը Ասասկն էլ սուտսուտ բաներով խելքից հանում էր Ատրվճնասպին՝ «եւ ասում» թէ «ես քեզի պատգամ՝ եմ բերել։» Ատրվճնասպն այս լսելով թէ եւ իւր մտքումն ուրախանում էր, բայց՝ «մարդ» զրկեց խստութեամբ ասելու թէ՝ «մի ապստամբ երկիր ինձի ինչ պատգամ ունի ուղարկելու։» Ասասկն երբ իմացաւ, որ իւր այրուծին անվտանգ ազատուել է, Ատրվճնասպից եկած՝ «մարդիկներին» ասաց թէ՝ «մենք արքունի գործերին ո՛չմի մնաս չենք տուել, դու հրաման տուր, որ մեր պատգամն ասենք, յետոյ տեսէ՛ք ինչոր արժանն է։» Եւ պատգամաւորներին արձակելուց յետոյ ինքը ձին նստաւ եւ ասաց միւս Պարսիկներին թէ՝ «ես ոչոքի կողմից ձեզի պատգամ բերած չեմ։» Երբոր Հայոց զօրքի մօտն եկաւ, պատմեց նոցա թէ՝ «Պարսիկների՝

զօրքը մեծ է, բայց նոցա մէջ մեծ մասը անպիտաններ են: Հայոց զօրքի մարդիկը խորհուրդ արին իրար մէջ եւ ասացին, թէ պէտք է դաշտից դէպի սարի կողմն անցնել, որ դիմադէմ կռուել կարողանանք. եւ եթէ մի ուրիշ բան պատահի, մեզ համար սարի ամրութիւնները կարող են պահուելու տեղ լինել: Եւ գնացին բանակ դրին Մասիսի տակ Ակոռի<sup>2</sup> գիւղի մօտ:

Միւս օրը, ինչպէս սովոր էին, գիշերուայ ժամը կանուխ կատարեցին. եւ պատրաստուան պատերազմի՝ զօրքը չորս մաս բաժանելով. միջին բաժնին զօրագլուխ դրին Միւնեաց Բարդէն իշխանին եւ Ալասակ քաջ սեպուհին. ձախ կողմը տուին Քարջոյլ Մաղխաղին. եւ աջ կողմը Գնունեաց Ատոմ իշխանին եւ նորա եղբօրն Առաստոմին. եւ այդ երկու մասի մէջ նշանակեցին Շիրակայ իշխան Ներսէհ Կամսարականին եւ նորա եղբօրը Հրահատին՝ պատրաստ գտնուելու, որ եթէ մի կողմը տկարանայ, նոքա օգնութիւն հասնին. ըստորում ամէնքն էլ վստահ էին այդ մարդոց՝ Կամսարականների՝ վերայ՝ իբրեւ արգար եւ խօսք պահօղ մարդոց: Այսպէս դասաւորելով չորս հարիւր մարդը՝ ամէնքը միաբերան աղաղակում էին. «Օգնէ՛ մեզ, ո՛վ փրկիչ Աստուած, երբէք թող չասեն հեթանոսները թէ ո՛ւր է նոցա Աստուածը:»

Հայերի սակաւութիւնը որ տեսան Պարսիկներն, էլ ուրիշ բան չկարծեցին, այլ թէ՛ կամաւ խելքերը կորցրել են եւ եկել մահ գտնելու. երբոր յարձակուան Հայերի զօրքի վերայ, լաւ ձիաորներն անցան յառաջ դէպի պատերազմի տեղը. այս ժամանակ Քարջոյլն առաւ իւր հարիւր՝ մարդը՝ եւ

գրեցելով Աւետարանի ուխտը՝ Պարսից զօրքի կողմն, անցաւ. եւ մնացին երեք հարիւր զօրք Հայոց մէջ, որոնք յառաջ քշելով՝ պատերազմի ընտիր մարդիկններին հէնց այնտեղ տեղնուտեղը գետին էին կործանում գիւթաւալ. եւ Պարսից զօրքի մնացած բաղմութիւնն էլ ձորերի եւ քարուտ տեղերի մէջ քշեցին ցիրուցան արին: Այնտեղ Աշոտկի եւ Բարգէնի կողմում ընկան մեռան Ատրվշնասպ մարդպանն եւ ուրիշ մարդիկ ուրացող Հայերից եւ շատ Պարսիկներ: Կոյնպէս Ատովի եւ Առաստովի կողմում շատ քաջ մարդիկ մեռան: Բայց ամենից յառաջ Պարսից գնդից վրայ քշող մարդուն նիզակով տուօղ սպանօղն էր Հրահատը: Եւ երբ նոքա սյսպէս քաջալերուած էին, Պարջոյն առաւ Կատիշների գունդն ուրիշ հայ մարդիկների եւ այն գնդի հետ, որ իւր մտն էր, աներեւոյթ ձորերի խոր տեղերովն հասաւ Հայոց ուխտապահ զօրքի յետեւից եւ ուղում էր թիկունքի կողմից ընկնել նոցա վերայ: Այնչափ բաղմութեան վերայ յարձակուան երկու եղբարքը քիչ մարդիկներով. այնտեղ եւ Կերսէհ Կամսարականը նիզակով խփեց եւ մեռուց Կատիշների զօրագլխին, որը հզօր եւ քաջ կռուող մարդ էր, եւ բոլոր գունդն էլ ջարդեց:

Եւ այն օրը նշանաւոր ուրախութեան օր էր Քրիստոսին հաւատացողների համար եւ ամօթի օր Քրիստոսին ուրացողների համար:

Առագոյը գնթունեաց տոհմից եւ Աշոտկը Սահառունեաց տոհմից լուսը բացուելու ժամանակ եկան գոյժ բերին Յոհանն Հայրապետին եւ Հայոց աւագ իշխաններին ու ասացին՝ թէ «Պարսիկների կողմը զօրացաւ եւ Հայոց զօրքը յաղթուաւ. ու մե-

ուան քաջ Ղլասակ Մամիկոնեանն եւ Բարգէն Սիւ-  
նին եւ Ներսէ՛Տ Շիրակայ տէրն իւր Հրահատ եղբո-  
րով եւ Ատոմն ու Առաստումը. եւ Հայոց մնացած  
զօրքը բոլորն էլ Ակոռու ստորոտներում ընկան  
գէշ դարձան եւ միայն մենք մնացինք:»

Գեռ այս համբաւը չէր տարածուել Գուինի  
մէջ, խեղճն եկաւ հասաւ մի աւետարներ Գնունեաց  
տոհմից գողալով՝ թէ «սուրբ Խաչի զօրութիւնը  
յաղթեց եւ միշտ յաղթելու է:»

Այս որ լսեցին Յոհան հայրապետն եւ աւագ  
իշխաններն ու բոլոր Հայ նախարարներն եւ ռամիկ-  
ները, միաբանութեամբ գնացին Աստու տունն եւ  
գոհութիւն մատուցին: Եւ ուրախութեան տօն կա-  
տարեցին. նախ՝ աղքատներին կշտացնելու հոգս  
քաշեցին եւ ապա՝ իրենք էլ ուրախութիւն արին:  
Եկաւ հասաւ պատերազմից եւ Հայոց զօրքն. եւ  
համբուրում էին իրարու:

Չմեռը հանդստանալ սկսեցին. եւ հոգս էին  
անում՝ դարնան համար պատերազմի պատրաստու-  
թիւն տեսնելու:

## ԳԼՈՒԽ ԻԷ.

Ներսէսի սպաստի կոխը:

Ուխտապահները Աբաց թագաւորից օգնութիւն են խնդրում եւ շնն դանում: Աւհան Մամիկոնեանը մարդիկ է ուղարկում Հայոց նախարարներին օգնութեան կանչելու: Միքանի նախարարներ ընդունում են Աւհանի հրաւերը: Պարսից զօրքը գալիս է Հէր եւ Զարեանդ: Ուխտապահներն հանդիպում են նոցա Աբասզ պաւառում եւ Ներսէսապատ գիւղի մօտ լինում է սլատերազմ. (483:) Պարսիկները յազթուում են եւ ուխտապահները մեծ աւարով վերադառնում են Գուին: Աարդ Մամիկոնեանն ազատուում է Պարսից կապանքից:

«Անանք իրենցոց ի մահ համարեալ էին եւ մահ իրենցոց անուշա կեանքս:»

Գագար.

Եւ շուտով դեսպան ուղարկեցին Աբաց Ալաթանկ թագաւորի մօտ, որ նոցա Հոն տայ իւր խոստումին համաձայն. նա էլ դատարկ պատճառներով երկարացնում էր գործը. եւ յետոյ մի տեղից երեք հարիւր Հոն ժողովեց եւ ուղարկեց Հայաստան. մի ամիս չանցած՝ դեռ ձմեռուայ միջին՝ նորէն շտապաւ յետ կանչեց՝ դատարկ՝ պատճառներ բերելով:

Եւ էլ մարդ չկար՝ որ Հայաստանին օգնել ուղենար: Աւհան զօրավարը մարդ զրկեց Արծրունեաց երեւելի ազգին եւ Անձեւացեաց ու Մոկաց գաւառի ցեղերին եւ Ռշտունեաց իշխաններին. իմաց տուեց նոցա, թէ ինչպէս յառաջ օգնեց Աստուած իւր վերայ յոյս դնողներին. եւ ասում էր՝ «Ովոր փափաքում է անմահ կեանքը ժառանգել, թող գայ եկեղեցու անպատուութեան վրէժը խնդրելու. այն անպատուութեան», որ նա երկար ժամանակ եւ տարիներ կրել է արհամարհող ուրացեալների երեսից: «Այս պատգամը որ լսեցին

այն շորս գաւառի նախարարները, կէսը վրայ պրծան  
ուրախութեամբ ոչխարների հօտին հասնելու, միւս-  
ներն էլ այծերի խմբերի մէջ մտնելով գէպի ար-  
տաքին խաւարը գնացին անդարձութեամբ: Ան-  
ձեւացի նախարարներից մի Սեպուհ Յոհան անունով  
և մէկ ուրիշն էլ Ներսէհ Երուանդունի անունով՝  
միաբանեցան այն բարի առաջարկութեանը եւ գնա-  
ցին Մամիկոնեան զորավարի գնդի հետ խառնուե-  
լու. ճանապարհին՝ զատկի շաբաթ օրը մօտեցան  
Առեստ գիւղաքաղաքին. եւ յանկարծակի անակնու-  
նելի կերպով առաւօտեան կանուխ հասան նոցա  
վերայ Անձեւացեաց Սեւուկ իշխանն եւ Մոկաց Յո-  
հան իշխանը շատ այրուձիով միասին: Եւ իրար գէմ  
կոխ բացին աներկիւղութեամբ. յառաջ Ներսէհ  
Երուանդունին յարձակուաւ Մոկաց Յոհան իշխա-  
նի վերայ եւ խփեց նորան նիզակով. նորան օգնում  
էր եւ Անձեւացեաց սեպուհ Յոհանը, եւ ձգեցին  
նորան 'Մոկաց Յոհանին' գետին: Այս որ տեսան  
զօրքերն սկսեցին փախչել:

Այնուհետեւ եկան հասան 'Դուին' Անձեւա-  
ցեաց Յոհանն եւ Ներսէհ Երուանդունին. եւ երբ  
տեսան նոքա Յոհան կաթուղիկոսին՝ ուրախութեան  
տօն եւ Աստուծոն ընդունելի պատարագներ մատու-  
ցին:՝ Եւ ձմեռուայ օրերն անցնելով հասան գարնան  
ժամանակին: Լսեցին թէ Պարսկաստանից շատ զօրք  
է եկել շեր եւ Զարեւանդ գաւառի սահմաններն  
եւ այդ զօրքի հրամանատարն ու գլխաւորն էլ սա-  
ղար փուշտիպանն է:

Եւ Հայոց զորավար Վահանը Հայոց զօրքը  
գումարեց եւ շտապեցաւ դուրս գալ հէնց նոյն

\* Մատաղ արին եւ պատարագ առան:

տեղերումը կուուելու, որ չլինի թէ Պարսիկների բազմութիւնը կարողանայ մտնել Հայաստանի միջին երկիրները. եկան հասան Արտաղ գաւառն եւ մօտենալով Պարսից զօրքին՝ բանակ դրին մի գիւղում, որի անունն է Ներսէհապատ: Սուրբ Եօհան կաթուղիկոսը հրաման տուեց Հայոց բոլոր գնդին, որ ամբողջ գիշերն աղօթքի լինին. եւ գիշերային սովորական ժամերգութիւնը կատարեցին. եւ երբ լոյսը բացուաւ սուրբ կաթուղիկոսն օրհնեց ամէնքին:

Հայոց զօրավարն սկսեց այնուհետեւ ինչպէս պէտքն է ճակատի ամենմի կողմը պատրաստել. միջին կողմը շատ զօրքով տուեց Սահակ մարզպանի ձեռքը. աջ թևի կողմը տուեց Վահեուունի Բաշղին, Սիւնեաց Բաբգէնին, Գնունի Ատոմին եւ Պալուսի Փափակին իրենց զօրքերով եւ էլի ուրիշ աւելորդով. ձախ կողմից՝ ուխտասէր Կամսարականների՝ Վահանի, Ներսէհի եւ Հրահատի աջ կողմից նոցա ամենակէի զօրքի հետ միասին պատրաստեց իրեն. պատրաստեց ուրիշ ընտիր մեծամեծ մարդիկ էլ զօրքով ու Վրեն Վանանդեցու ձեռքի տակ. նոցա մօտ զրկեց Արտակունեաց Պապին, որ ուստանիկ մարդ էր եւ Բաբոցի որդուն, որ ամենակէ մեծաւորին ասէ թէ «աւելի զօրեղ Պարսիկների, Կատիշների եւ Սիւնեաց գնդի նշաններից երեւում է, որ մեր կողմն են գալիս. ուրեմն՝ դուք կամաց գնացէք, ու շագրութեամբ նայեցէք դէպի մեզի. թող յառաջ մենք վրոյ պրծնինք. եւ եթէ մենք մեր կողմը շարժելու փախցնելու լինինք, յետոյ միւս կողմերը թող յարձակուին». մեր ու ձեր առաջը՝ նոքա՝ չեն կարող կայնել:»

Թէպէտ ուղում էին զօրավարի հրամանին հա-

մաձայն կատարել, բայց Պարսից զօրքը շուտով  
հասաւ իւրաքանչիւր կողմի թեւի վրայ եւ չտուեց  
պարապ ժամանակ, այլ շարժեց աջ կողմը, որտեղ  
Ղահսեուծի Բաշըն էր, եւ փախուց. եւ Սահակ  
ասպետը նիզակով յարձակուաւ փուշտիպանների  
սաղարի վերայ. երկուսն էլ սխալ զարկին նիզակ-  
ները. եւ ձիերն իրար մօտեցած լինելով նոքա Սա-  
հակն եւ սաղարը՝ իրարու մազերից բռնեցին եւ  
կռուում էին. Ղահակնն էլ որ տեսաւ թէ Հայոց  
զօրքն իրար անցաւ եւ թոյլ գտնուաւ, ձէն տուեց  
Ղրէն Ղանանդացուն. «յառաջ քէ՛, ասաց, թշնա-  
միների վերայ եւ սկսէ՛ պատերազմել.» նա էլ վա-  
խեցած՝ ասաց թէ «ես չեմ կարող, ինձ վերայ հէչ  
յոյս մի՛ դներ:» Ղահակնն էլ սիրտ առաւ, երեսը  
խաչ հանեց եւ երկու պամսարականների հետ միա-  
սին յարձակուաւ նոցա մօտն հասած թշնամիների  
վերայ, եւ սաստիկ կերպով շարժեցին իրենց կողմն  
ու փախուցին. եւ շատ քաջ մարդիկների էլ գետին  
թափեցին: Եւ Հայոց գունդը բարի անունով ու  
շատ մեծ աւարով վերադարձաւ Յոհան կաթուղի-  
կոսի մօտ, որն ուրախալից սրտով դուրս եկաւ.  
յաղթող գնդի առաջ եւ օրհնեց նոցա: Այն ժա-  
մանակ երբ նոքա վերադառնում էին կուռի տե-  
ղից, յանկարծ մի ուրախութեան լուր տարածուաւ  
եւ խօսուում էր Հայոց բոլոր բանակի մէջ, թէ՛  
եկաւ Ղահակն զօրավարի եղբայր՝ Ղարղը մայրա-  
քաղաքի Տիգրանի՝ ամուր տեղերից, բարձր պա-  
րիսպներից եւ պահապանների ասպարափակ բազ-  
մութիւնից ողջ առողջ ազատուելով՝ ոչ միայն ինքն  
անձամբ այլ եւ իւր ծառանների հետ միասին:

## ԳԼՈՒԽ ԻԸ.

Վախժմանգի խարդախութիւնը:

Պարսից զօրքը մտնում է Վրաստան: Հայոց ուխտապահները գնում են Վրաց օգնութեան: Վախժմանգը խարխրելով նեղացնում է Հայերին: Կուր գետի մօտ լինում է պատերազմ եւ Հայերը յաղթուում ու ցիրուցան են լինում (183): Վահան Մամիկոնեանը փախում է Տայք, իսկ Սահակ մարզպանն եւ Վասակ Մամիկոնեանն ընկնում են պատերազմում: Միհրան Պարսից զօրավարը գնում է Վահանի յետեւից եւ հաշտութիւն է առաջարկում: Միհրանը կոչուում է Պարսկաստան եւ Վահանը գալիս է Գուին (184): Սուտլուր է գալիս Սահակ մարզպանի կենդանութեան մասին եւ Մուշեղ Մամիկոնեանը գնում է Վրաստան:

«Բարի է յուսուի Տէր քան յուսուի մարդիկ:»  
ՍԵՂՄՈՍ:

Հարցք.

Այնուհետեւ եկան Ծաղկէտոն՝ կամենալով մի փոքր հանգստանալ Վարչակ ասուած ջերմուկի մօտ: Վրաց Վախժմանգ թագաւորից դեսպան եկաւ 'այդ միջոց', թէ "չատ մեծ զօրք է եկել Վրաստան, եւ նս տեսայ, որ չեմ կարող նոցա դէմը կայնել, փախայ ընկայ Հայոց սարերը Վրաց սահմանին մօտ եւ սպասում եմ ձեզ:," Վախժմանգը խարէութեամբ նամակ էր գրել թէ "Հոնաց զօրքին էլ հրաման տուի գալու եւ դեռ չեն հասել, բայց մինչեւ ձեր գալը, նոքա կըգան կըհասնին:,"

Որովհետեւ Վախժմանգի հետ խաչով Աւետարանով երգում ունէին արած Հայոց զօրքը, վասնորոյ վերկացան առանց ուշանալու եկան Վրաց թագաւորի մօտ եւ մի փոքր միջոց մնացին Կանգարաց՝ գաւառում: Այնտեղ Վախժմանգը խարբւււլակն խօսքերով ժամանակ էր կորցնել տալիս Վահանին եւ ուրիշ հայ տանուտէրներին. նա ա-

ասում էր՝ թէ «Միհրանը որ ձեր գալը լսեց՝ վա-  
խիցը փախաւ Վրաստանի սահմաններից եւ Աղուանք  
գնաց.» թէ «երկու օր էլ՝ որ սպասէք՝, Հոնաց  
գունդը կըգայ կըհասնի.»: Յետոյ երրորդ եւ չոր-  
րորդ օրն էր ձգում բանը. եւ յետոյ էլի վեց  
եօթն օր՝ էր ասում: Նաեւ լրտեսներ էր ուղար-  
կել տալիս Վրաց եւ Հայոց զօրքի միջից դէպի  
դաշտային տեղերը, շատ կրակների լոյսեր էր ե-  
րեւեցնել տալիս եւ ծառերի կոճերը մարդու նման  
զինուորուած էր՝ երեւցնել տալիս, Աղէքսանդր  
Մակեդոնացու խաբէութեան օրինակին՝ հետեւե-  
լով: Նաեւ ասում էր՝ թէ «Հոնաց զօրքը մեզ մօտ  
այս սարերը չի գար, այլ ասում են թէ բեր Հայե-  
րին ցոյց տուր մեզ այս դաշտիս վերայ, եթէ ոչ՝  
մենք չենք հաւատում, որ Հայերը քեզ հետ միա-  
բանուած լինին. ուրեմն եթէ դուք դաշտ չգաք,  
Հոնաց զօրքը տեղից շարժ չի գար. եւ Միհրանը  
կըվերագանայ եւ Վրաստանը կ'աւերէ. ինձ ձեր  
գալն էլ ի՞նչ օգուտ կըլինի:»

Հայոց գունդն էլ Աւետարանի երկիւղիցն աշ-  
խատում էր ամէն բան կատարել. ըստօրում թէ-  
պէտեւ շատ շոք ժամանակ էր, այնու ամենայնիւ  
ստիպուան իջնել դէպի ճարմանայնի դաշտը. հայ  
խիսաններից միքանիսը յաջող բան չէին համարում  
զօրքի իջնելը դէպի Վրաստան: Երեք չորս օր չան-  
ցած՝ Միհրանն էլ եկաւ հասաւ եւ իւր բանակը  
դրեց Հայոց բանակի դէմուգէմը Վուր գետի միւս  
կողմը: Հայոց բանակը Պարսից բանակից աւելի հե-  
ռու մի ուրիշ տեղ փոխուաւ. եւ այնտեղ ընտրե-  
ցին իրենց բնակութեան տեղ. եւ շատերը Հայոց  
գնդի միջից այն գիշերն Աւետարանի սարսափելի

երդումը մոռանալով՝ ծածուկ պատգամներ տալով  
առնելով Պարսից զօրքի մէջ գտնուող սիրելիներէ  
հետ, 'ասում էին՝ թէ "մենք Հայոց զօրավար  
Վահանի բռնութիւնից, այլ ոչ թէ յօժարութեամբ  
մտել ենք այս գործի մէջ. մեր խելքն ու միտքը  
ձեզ հետ է. թէ որ մեզի թողութիւն տաք, դուք  
եղէք մեր իշխանը:"

Վահան Մամիկոնեանը Վրաց թագաւորի սուտ  
և անպիտան խօսքերի վերայ բարկացած լինելով՝  
երեք Վամսարական եղբարց հետ դուրս եկաւ իւր  
կողմի թշնամու դէմն և փախուց. այնպէս որ  
շատերին տարան անցուցին Վուր գետի միւս կողմն  
և Պարսից զօրքից շատերին կոտորեցին քաջու-  
թեամբ: Եւ երբ այսպէս կռուում էր 'Վահան',  
յանկարծակի սկսեցին փախչել առհասարակ բոլոր  
զնգերը թէ՛ Հայերի և թէ՛ Վրացւոց. նենգաւոր-  
ների մեծ մասն իրարու գոռում էին անհանգստու-  
թեամբ՝ թէ "Հայերը փախան, գլուխներդ ազատե-  
ցէք:" և դարձնելով այնուհետև ձիերի երասա-  
նակները նոքա էլ զնում էին փախստական Հայերի  
յետեւից: Եւ Վահանն եկաւ պատահեցաւ Սիւ-  
նեաց Բարգէշին, որ Պարսիկների ձեռքից վերաւո-  
րուած ընկած մնացել էր. նստեցուց նորան իւր  
ձիու վերայ և ազատեց նորա կեանքը պատերազմի  
միջից: Բայց նոքա, որոնք արժանի եղան ընտրու-  
թեանը Սահակ ասպետի և Վասակ Մամիկոնեանի  
հետ՝ նոյն օրը մեռան. իսկ Հայոց զօրքը, որոնց  
հետ և Վրացւոց անպիտան զօրքն իրենց Վախ-  
թանգ թագաւորի հետ միասին՝ փախան ցիրուցան  
եղան: Նոքա յետեւից ընկած Պարսից զօրքը շատե-  
րին կոտորեց. և շատերն էլ զանազան տեղեր ըն-

կած ազատուան. բայց Հրահատ Կամսարականին ձին տարել էր եւ վար ձգել. 'այնպէս որ' երբ նա դեռ ոտքով էր գնում՝ Պարսիկները վերայ հասան եւ բռնեցին բերին Միհրանի մօտ. 'յետոյ յետեւից ընկան եւ բռնեցին Յազդ անունով գովելի սեպուհին. 'Միհրանը տեսաւ եւ շատ ուրախացաւ. եւ կապեց ու զգուշութեամբ պահել տուեց, եւ Հայաստանում ուրոր գնում էր՝ հետը ման էր ածում. 'եւ ամէն օր յառաջ էր բերել տալիս կապանքներով եւ դառն տանջանքներով շարշարում, անպատուում էր նոցա եւ հնարք էր փնտրում իրենց հաւատին դարձնել. 'իսկ Ահահանը մի ժամանակ գնաց Տայքի ամուր տեղերը, որտեղ եւ ժողովուան նորա մօտ անպիտան հայ փախստականները, բայց երկու Կամսարականները միշտ նորա հետ էին:

Մտե՛ք.  
Նայ՛ե՛ք:

Չոգո՛ք:

Մտե՛ք.  
Նայ՛ե՛ք:

Չոգո՛ք:

Միհրանն իւր գնդով նորա յետեւից եկաւ եւ աշխատում էր համոզել եւ նուաճել 'Ահահանին'. եւ Պարսից զօրքի բանակը Գու<sup>2</sup> գիւղումն էր Պարսից եւ Յունաց հողերի սահմանի վերայ: Եւ Հայոց զօրավարը նորան մօտիկ համարեա՛ երկու հրասախ հեռու մի գիւղի մէջ էր Մկնառիճ<sup>3</sup> անունով, մօտ հարիւր մարդ հետը. եւ այնտեղն էլ Պարսից իշխանութեան մէջն էր: Այնքան զօրաւոր մարդիկներին բազմութեան մէջ դողն ու սարսափը պատել էր Միհրանին եւ չէր վստահանում վերայ գնալ, այլ ազաչական խօսքերով պատգամներ էր զրկում նորան 'Ահահանի' թէ "մի վնասուիր եւ մեծ թագաւորի հպատակութիւնից դուրս մի գար եւ Հայաստանը կորուստների մէջ մի՛ ձգեր, եկ հնազանդիր թագաւորին եւ ես կ'ազաչեմ թագաւորին եւ

կըհաշտեցնեմ քեզ հետ, եւ ինչոր արժանն է քեզի տալու՝ կ'աշխատիմ որ տայ:»

Վահանն էլ պատասխան տուեց եւ ասում է Միհրանին. «Մի թագաւոր մարդ, որ արդար աչքով չնայէ իւր հպատակների վերայ եւ արդար լսողութեամբ ականջ չդնէ մէկի խօսքին եւ ինչպէսոր արժանն է իրաւասէր հոգւով քննութիւն չանէ, մանաւանդ՝ որ ամենից վատն է, միշտ կամենայ ուրիշի աչքով տեսնել եւ ուրիշի ականջով լսել, այնպիսի թագաւորին ծառայելը ծանր է եւ անսխորժ եւ երկիւղալի. որովհետեւ ինչ տէր որ իւր ծառաների միջից լաւն ու վատը ջոկել չգիտէ, նա դժուարութեամբ կարող է լաւ ծառայի տէր լինել: Տես շայաստանն ինչպէս մեծ եւ պիտանի երկիր է. ցոյց տուր ինձ այդպիսի երկրի մէջ մի մարդու, որ արժանաւորութեամբ հասած լինէր տանուտէրութեան. աւազակ, անպիտան, հացկատակ եւ վատ սոհմի մարդիկ գալիս այնպիսի մեծ թագաւորութիւնը խաբում են եւ կրակի համար փառք ու տէրութիւն են գնում՝ ձեզանից՝. եւ յետոյ ձեզանից հեռու գնալով վաճառքի ու վաճառականի վերայ միակերպ ծաղր են անում. իսկ լաւութիւն եւ քաջութիւն եւ միտք եւ գիտութիւն, որոնցով երկիր է շինուում եւ պահպանուում, պահանջող չկայ եւ արհամարհուած է: Ես ահա երկու կռիւ արել եմ ձեզ, Պարսիկներից հետ, եւ երրորդն էլ այս է, որ քեզ հետ արինք. երկու կռիւն այնպիսի քաջ ու երեւելի մարդիկների հետ արինք, որ թագաւորն ինքը եւ բոլոր Պարսիկները ճանաչում էին թէ ինչպէս մարդիկ էին. մէկ օտար մարդ անգամ մեզ օգնած չէր, բայց միայն այս շայերն էին այնպիսի մեծ գործ

կատարողը, ոչ թէ շատ պարուծիով՝ այլ հարիւր կամ աւելի պակաս մարդով հազար երկու հազար մարդ փախուցինք: Այս կռուի մէջն էլ չլինի մըտքերիցդ անցնէք եւ պարծենաք թէ աւելի քաջութեամբ յաղթեցիք մեզի, այլ մեր երկպառակութիւնից եւ նենդութիւններից եղաւ այդ վնասը: Այն մարդիկը, որոնց դուք վատ տոհմերից ու անպիտանների միջից շայաստանի վերայ իշխան էք դրել, նոքա իրենց յետնութեամբը կորուցին շայաստանի միջից քաջութիւնն ու բարի անունն եւ լաւութիւնը. բոտորում ինչ գնդի զօրավարը որ վատ է, այն գնդին լաւ լինելու հնար չկայ. եւ ինչ աշխարհի իշխանները որ յետին են, այն աշխարհը յառաջադէմ ու անուանի լինել չի կարող: Իսկ իմ մասին՝ դուք ամէնքդ էլ գիտէք, որ ես երեխայ ժամանակս եմ զրկուել հօրիցս եւ մեծերիցս. ոչ նոցա ծառայութիւնները, որ Արեաց երկրին ցոյց են տուել, գիտեմ, եւ ոչ էլ նոցա սխալմունքներին մասնակից եմ եղել. բայց երբ ես հասակս առայ եւ ձեր Արեաց տիրոջը ծառայելուն արժանի եղայ, միտքս դրի արդար հոգւով տիրոջս եւ ձեզ ծառայութիւն անեմ. ինչքան ես լաւի մասին էի հոգս քաշում եւ լաւ գործերի մէջ յառաջ էի գնում, այդ անարժան վատ շայ իշխաններն ինչ տեսակ բանսարկութիւն ասես անում էին եւ դուք ինքերդ ուշադրութեամբ ականջ էիք դնում եւ ինձ վերայ ծուռն էիք նայում. եւ երբ ոչ մի հնար չգտայ՝ մի շար խորհուրդ անցուցի մտքիցս եւ ճշմարտութիւնն ուրացայ ու ստութեանն եւ մոլորութեանն երկրպագութիւն արի, որն այսօր ձեր եւ բոլոր աշխարհիս առաջ խոստովանում եմ թէ

ստուծիւն է եւ պիղծ խարէութիւն. եւ այն կործանումիցս յետոյ վախիցս ամենայն օր մաշուում էի՝ չլինի թէ այս մեղքովս մեռնիմ.՝ ուստի՝ հետու քչեցի թագաւորների երկիւղը. ուրացութեան խիղճը ոտքիս տակ առայ եւ աչքերս բացուան. այսուհետեւ ուրախ եմ ես. եւ պատրաստ եմ հալածանքի, աղքատութեան, ցաւերի եւ մահուան առաջ. ըստորում ինչ բանի որ հանդիպելու լինիմ քրիստոնէութեամբ, ուրախ եմ եւ առանց ահի: Բայց դու ինչոր ասացիր, արդարեւ կարող ես կատարել եւ թագաւորը յօժար կըլինի մեզ նուաճելու: Միայն թէ՝ ամենից յառաջ թող նա քրիստոնէութիւնը շնորհէ Հայաստանին. եւ այդ աղտեղի վաճառքը՝ կտրէ վերցնէ մեր երկրից. եւ լաւ մարդն ու անպիտանը ջոկեցէ՛ք. եւ ամենմէկից գործ պահանջեցէ՛ք, այլ ո՛չ կատակարանութիւն՝ քեօջակութիւն՝. եւ գործին նայելով օգուտին համաձայն տուէք վարձ, այլ ո՛չ խարէրայական լկտէբանութեանը՝ նայելով: Եւ կարող էք գրով կնքով վըկայել թէ՝ «մեր բռնութիւնից եղաւ ձեր յանցումը եւ ո՛չ թէ ձեր անհնազանդութիւնից եւ յանդրգնութիւնից»:» Եւ տոհմաւոր մարդուն տոհմաւորի պէս պատուեցէք, վատ տոհմաւորին էլ ինչպէս անտոհմակ. եւ եթէ այդպէս նուաճելու լինիք մեզ, մեր բնիկ տէրերն էք եւ կըհպատակինք ձեզի: Իսկ թէ որ յետեալ մարդիկներին լաւերի տեղն ընդունէք եւ լաւերին յետ տանիք եւ այս երկրի իշխանութիւնները, ինչպէս որ իրաւունքն է, արժանաւոր ու պիտանի մարդիկներին չտաք, մենք, որ ապստամբել ենք, ո՛չ թէ գիտէինք որ Պարսիկներ-

\* Հաւատափոխութիւնը:

րին դէմ կենալ կարող ենք, այլ միայն մեռնելն ենք աչքերս առել եւ նոյն բանին էլ պատրաստ ենք եւ աւելի ուրախ. որովհետեւ անուանի ուրնտիր մահով կրմեռնի՞ք քրիստոնէութեան մէջ քան թէ 'կրկամենանք' ուրացութեամբ անցաւոր փառքեր գնել։”

Եւ երբոր Միհրանն եւ Հայոց զօրավարն այսպէս խօսում էին իրար հետ, յանկարծ դեսպան եկաւ Գոնից եւ Միհրանին Գուռն էր կանչում շտապով։ Նա էլ բոլոր բազմութեամբ գնաց շտապով դէպի Գուռը. իւր հետ առաւ կապուած Հրահատին եւ ուրիշ կապեալներին։ Նորա 'Հրահատի' եղբայրը՝ Շիրակայ տէր Ներսէճը՝ Հրահատի բռնուելու օրից դեռ լացը չէր կտրել եւ անկողնի վերայ չէր հանգստացել եւ առանց արտասուքի բերանը հացի կտոր չէր դրել. եւ գնաց Պարսից գնդի յետեւից՝ միտք անելով թէ ո՞վ գիտէ, կարելի է մի տեղ լրտեսել կարողանայ եւ ազատէ նորան. եւ երբ մտեցան մի օթեւան հեռու՝ Գրիգոր Նահատակի տան սուրբ տեղին, բարձր ձայնով եւ արտասուքով լցուած կանչեց այն սրբի անունն ասելով. “Տէր Գրիգոր, դու որ մեր մեղքերի ամբարշտութեան սաստիկ մէզը փարատեցիր քչեցիր Հայաստանից, փարատէ՛ սրտիս միջից եւ իմ տրրտմութեանս սաստիկ մէզը եւ արժանի արա՛ ինձ տեսնել իմ փափագելի եղբօրս առողջ մարմնով ինձ մօտ։” Նա էլ լսեց եւ շուտով ազատեց կապուած Հրահատին պահապանների ձեռքից, 'եւ բերեց' խաղաղութեամբ իւր սիրելի եղբօր մօտ եւ իւր հայրենիքը։

Պարսից զօրագլուխ Միհրանը տեսնելով Հրա-

Հատ Կամարականի աներկիւղ եւ քաջասիրտ դուրս  
գալ փախչիլը՝ հրաման տուեց բերել Սիւնեաց  
երանելի սեպուհ Յաղգին, եւ նոյն իսկ օրն իւր առա-  
ջը սրով կտրել տուեց երանելու գլուխը սուրբ  
Գրիգորի մատուռի տեղին մօտ՝ Բագրեւանդ գաւա-  
ռի Բագաւան գիւղումը՝ նպատ սարի ստորոտը՝ Հո-  
ռի ամսու Ժ.Ձ.ին. եւ նորա նշխարներն ամփոփե-  
ցին պնտեղ հէնց սուրբ Գրիգորի մատուռի մէջ:

Եւ Վահան զօրավարն ելաւ եկաւ Այրարատ  
գաւառը. եւ Վաղարշապատ քաղաքում ուխտա-  
պահ նախարարների հետ միասին իւր ուխտացած  
մատաղներն անելուց յետոյ՝ նախ աղքատներին  
կերակրեցին եւ ապա իրենք ուրախութիւն արին:  
Եւ պնտեղից եկան Հայոց իսկական մայրաքաղաքը  
Գուին ձմեռուայ ժամանակն հանգստանալու:

‘Այդ միջոցին՝ յանկարծ Վրաստանի կողմից մի-  
քանի զիւտած խելագարուած մարդիկ եկան եւ  
ասում են ամէնքին՝ թէ “Սահակ ասպետն եւ Վա-  
սակ սեպուհը կենդանի եւ ողջ են. եւ մեզ ուղար-  
կեցին ձեզ մօտ՝ ասելու՝ թէ “դուք որ Վրացուց  
պատերազմիցը փախաք, մենք մնացել էինք կռուի  
տեղումը սաստիկ վերաւորուած ընկած. եւ Աստծու  
նախախնամութեամբ մի քահանայ կամենալով  
մեզի ապրեցնել՝ բերեց մեզ իւր վանքը եւ պահեց  
ծածկութեամբ շատ օրեր իւր մօտ եւ բժշկեց մեզ.  
այժմ լաւացել ենք. եւ կամենում են մեզ բռնել.  
եւ այս սուրբ վանականը ծածուկ ման է ամում  
մեզ շատ անապատ տեղերով եւ խոր ձորերի ու  
քարանձանների միջով, բայց ձեզ մօտ այդ կողմը  
բերել վախենում է: Ուրեմն՝ շտապեցէք այդ տե-  
ղից մեծ զօրք զրկեցէք եւ մի հաւատարիմ զօրա-

գլուխ, որ մեզ բերէ ձեզ մօտ, որպէսզի ձեզ մօտ  
գալով միանանք ու ճշմարիտ հաւատի համար  
վրէժխնդիր լինինք:»

Այդ անմիտ մարդոց այսպիսի սատանայական  
խօսուածքը որ լսեց Հայոց զօրավարն ասաց. «Այդ  
խօսքերը վատախորհուրդ եւ անիմաստ մարդու  
խօսքեր են. բայց որ ուրիշներն ինձ բարենախանձ  
չհամարեն, ահա՛ զօրքն ու նախարարները ձեր ա-  
ռաջն են. ո՛վոր գնալ կամենայ՝ ես արդեւ չեմ  
միայն շնորհակալ եւ լաւ գիտցէք թէ ինչքան վնաս  
կր լինի Հայաստանին այդ ձեր անօգուտ ճանապար-  
հորդութիւնից:»

Այնժամանակ անխորհուրդ եւ թեթեւամիտ  
մարդիկ, մանաւանդ այն նահատակեալների կանայքն  
ու ընտանիքն եւ դայեակները՝ յօժարեցուցին Մամի-  
կոնեան սեպուհ Մուշեղին, եւ շատ այրուձիով  
ուղարկեցին այն խաբեբայ մարդիկների հետ անօ-  
գուտ գործի համար եւ այնպիսի մի տեղ, որ իրենք  
էլ չգիտէին. եւ ման էին ածում Մուշեղին ու նորա  
զօրքին մինչեւ ձմեռուայ վերջը:

---

## ԳԼՈՒԽ ԻԹ.

Պ Ե Ր Ո Ղ Ի Մ Ս Ի Ն :

Զառմիչք Հազարաւուխտը զօրքով մտնում է Հայաստան եւ բանակ դնում Դուին քաղաքի մօտ: (484 թուին): Հայերը դուրս եկան պատերազմ, բայց չկարողացան վերջացնել. վաճան Գամիկոնեանն իւր գնդովն հեռացաւ Խաղտեաց ամուր տեղերը: Զառմիչք վաճանի յետեւն է ընկնում, բայց չի կարողանում բռնել: Կամսարական Հրահատի եւ Ներսէճի կանայք գերի են ընկնում նորա ձեռքը: Զառմիչքը գնում է վրաստան. նորա տեղը թեում է Հապուհ Միհրանեան: վաճանը զանազան քաջութիւններով անհանգիստ է անում Հապուհին: Պարսից դուռը մեծ կորուստների մէջ է ընկնում. Գրիհոն Սիւնին սպանուում է ուխտապահների ձեռքից: Պարսիկներն այլատուում են Դուին հասնել եւ ազատուել վաճանի ձեռքից: Պերոզի մահը (484 թուին): Հապուհ վերադառնում է Պարսկաստան եւ Կամսարականների կանանցը թողնում է Բողբերդում: վաճան Գամիկոնեանը վերադառնում է Դուին:

«Թագաւոր ոչ միայն զիւրն սոցէ ըզպարսիս, այլ եւ որոց եղև պատճառք ի կորուստի»

Հագար.

Կարնան ժամանակը որ եկաւ՝ յանկարծակի մեծ զօրքով մեր երկիրը մտաւ Զառմիչք Հազարաւուխտ. շուտով Երասխ գետի կամուրջն անցաւ ու բնակութիւն դրեց Արտաշատ գիւղաքաղաքում:

Որովհետեւ Հայոց ուխտանենգ մարդիկը իմաց էին տուել նորան թէ գնդի կէսը վրաստան է գնացել, միւս օրը դիմեց Հայոց զօրավարի վերայ. Դուին քաղաքի մօտ ճակատի կռուի՝ տեղը որոշեց՝ Խոսրովակերտի անտառի մէջտեղից անցնելով դէպի դաստակերտը մինչեւ սարի այն կողմը, որ Զքվէժ են ասում:

վաճանը որ Պարսից զօրքի այսչափ բազմութիւնը տեսաւ, թէեւ գիտէր որ իրենք այնպէս քիչ են, որ դէմ կենալ չեն կարողանար, այնու ամենայն

նիւ այնքան էլ չվախեցաւ, այլ իւրեանց ունեցած զօրքը տուին մի մի կամ երկու երկու նախարարների ձեռք եւ յարձակուան. ու քաջութեամբ առնելով Պարսից գնդից մի մասը՝ շատ ընտիր մարդոց գետին թափեցին. եւ իրենք իրենց ձիերի երասանակները դարձնելով քաջութեամբ հեռացան այնտեղից. բայց այնտեղ նահատակուան հայ նախարարներից երկուսը՝ Գիմարսեան տոհմից երանելի Որդին եւ Սահառունեաց տոհմից երանելի Քաջաջը. սուրբ Յովհաննէս հայրապետին էլ ձիուցը վար ձգեցին եւ թողին կիսամահ:

Նոյն օրն եկաւ հասաւ իւր զօրքով Մուշեղ սեպուհը եւ շկարողանալով վրայ հասնել պատերազմի գործին՝ յետ գնաց:

Այսպէս՝ Հայոց զօրքն այս ու այն կողմ՝ ցրուելով ամէնն իւր տեղը գնաց. Հայոց զօրավարն ինքն եւ նախարարներն էլ գնացին մի ժամանակ հանգստանալու Խաղտեաց սահմանների ամուր տեղերում:

Հաղարաւուխտը քշեց բոլոր զօրքը, շատ Հայոց ամուր տեղեր առաւ, քանդեց, աւերեց եւ անցաւ. շատերին էլ կոտորելով արեան ճապաղիներ հանեց. հնարք էր փնտրում, որ կամ բռնէ քաջ Ահասան Մամիկոնեանին, կամ սպանէ նորան պատերազմի մէջ ու միամտի: Եւ գնաց Յոբաղ՝ ու բանակ դրեց Գիւղիկ եւ Ալարզաշէն գիւղերի մօտ. միւս օրը լսեց թէ Ահասանը նորանից մօտիկ է Արայրվարդյնում մէկ Ուռու մի տանը Շաղագոմ՝<sup>2</sup> գաւառի մէջ: Տեղեակ առաջնորդների օգնութեամբ բարի լուսին հասաւ եւ գտաւ այնտեղ ուրիշ մարդիկների խումբ, որի մէջ ներսէհ ու Հրահատ Աամսարականների կանայքն էլ կային: Հայ ուսմիկ

մարդիկներից շատերին սպանեցին եւ Ամսարական-  
ների կանանցն էլ բռնեցին տարան Պարսից բանա-  
կը. բայց Հայոց զօրաւարին չպատահեցան եւ յետ  
դարձան: Ամսարականների կանանց մասին ստոյգ  
տեղեկանալով, որ իրաւի նոցա կանայքն են, ուրա-  
խացաւ ‘Հաղարաւուխտ’ մտածելով թէ “ահա՛ նո-  
ցանով անպատճառ կրկարողանամ որսալ եւ բռ-  
նել Ահաճանին: Հրամայեց, որ կանանցը քրիստո-  
տոնեաների օրէնքին համաձայն պահպանեն սրբու-  
թեամբ եւ մեծ զգուշութեամբ. եւ ինքը Յոբաղից  
իջաւ գնաց Բասեն գաւառն եւ բանակ դրեց Գու-  
գիւղի մօտ այն աղբերակների դաշտում, որ Արծաթ-  
աղբիւր<sup>3</sup> են կոչում: Այնտեղ մի օր մնալուց  
յետոյ Գունից դեսպան եկաւ նորա մօտ եւ իմաց  
տուեց, որ ինքը ‘Թագաւորը’ Հեփթաղի վերայ է  
գնում եւ հրամայում էր, որ նա էլ ‘Հաղարաւուխտ’  
Արաստան գնայ եւ Արացւոց Ալիսթանդ թագաւո-  
րին բռնէ կամ սպանէ կամ այն երկրից փախցնէ:  
Հապուհին էլ Միհրանեան տոհմից՝ Հայաստանում  
թողնի մարզպան զօրքի հետ միասին:

Հաղարաւուխտը գնաց, այնտեղ ‘Արաստանում’  
ժողովեց իւր մօտ ուխտանենգ մարդիկներին. մէկին  
թագաւորութիւն խոստացաւ, միւսին՝ գահ, պատիւ-  
ու շատ պարգեւներ եւ ուրիշ շատերին էլ՝ ամէնին  
ինչոր պէտք էր: Եւ միաբանեցնելով շատերին,  
Արաստանի միջից մի գունդ պատրաստեց: Այս որ  
տեսաւ Ալիսթանգը, փախաւ Արաստանից եւ Եգեր  
ասուած երկրի կողմերն ընկաւ:

Իսկ Հապուհ Ամսարականների կանանցը Բա-  
սենու Բողբերդ ասուած ամուր բերդը տարաւ ու  
այնտեղ թողեց եւ բերդակալ Յզատվնասպին

յանձնեց ու պատուիրեց նորան մեծ զգուշութեամբ պահել նոցա քրիստոնեաների սովորութիւններով. որովհետեւ Աամսարականների կանայք իրեն միեւնոյն բանն էին ասում համարձակ՝ թէ «Գուք որ մեր ամուսիններին նուաճել էք ուզում, այս միայն իմաց տուէք նոցա՝ թէ մենք հանգիստ ենք. այն ժամանակ՝ ինչոր հրամայելու լինիք նոցա՝ կրլսեն ու կրկատարեն. իսկ թէ մեր վերայ մի ուրիշ բան լսելու լինին, ամօթից ու նախատանքից ստիպուած՝ աւելի շուտ իրենց գլուխն կրզոհեն՝ մեզ համար»։ Ինքը Շապուհն ստեպ հասցնում էր Աամսարականների ականջը՝ թէ «միք կորչիր, այլ եկէք մտէք մեր ձեռքի տակ եւ ձեր կանանցն առէք. եւ եւս կրմիջնորդեմ, որ մեծ թագաւորը, ձեր մեղքը թողնի եւ քրիստոնէութիւնը, որ դուք սիրում էք, թող տայ ձեզ. եւ եթէ կարողանաք մի լաւ ծառայութիւն էլ ցոյց տալ մեծ թագաւորին՝ հնար գտնէք Աահանին սպանելու, թագաւորից այնպիսի պարգևներ ու պատիւներ կրզանիք, որ ոչոք տեսած չէ»։

Ներսէհն ու Հրահատն էլ պատասխանում էին թէ «մեր գործն ու աշխատութիւնը երկրաւոր փայելքների համար չէ եւ ոչ էլ կնոջ ու որդւոց համար. մեր հաւատքի խորհուրդը մեծ է եւ պատուական. մենք այսպիսի ահաւոր խորհրդի համար աշխարհիս բոլոր փայելութիւնները փոքր ենք համարում եւ դատարկ»։

Եւ Շապուհն աշխատում էր Հաղարաւուխտի հրամանը կատարել եւ պտըտցնում էր Աահան Մամիկոնեանին գտնելու։ Բայց Աահանն իւր զօրքերով չէր թողնում, որ Պարսիկները հանգստութիւն

առնին բանակի մէջ. եւ գնաց բանակ դրեց մի մօտիկ գիւղում՝ Մամիկոնեանց իշխանութեան մէջ՝ որի անունը Ծաղիկ էր, 'եւ' ուղում էր Հաշտենքի սահմանակցութեան կողմն անցնել, որ այնտեղ օգնութիւն գտնի:

Հապուհին իմաց տուին, թէ Ղահանը մի գիւղում բանակ է դրել եւ նորա հետի մարդիկն էլ թուով շատ սակաւ են: Եւ Պարսից զօրագլուխը յանկարծակի բոլոր բազմութեամբ ելաւ Հայոց գնդի վերայ. բայց ուրիշների մասին բնաւ հոգս չէին անում. Հայոց զօրավար Ղահանի յետեւն ընկան. ըստորում ասում էին "Թէոր նորան՝ բռնելու՝ հնար գտնինք, բաներս պրծած է՝ միանգամայն":

Եւ Հայոց զօրավարը կարնու ծովի արեւելեան կողմից էր գնում եւ Պարսիկ քաջերի գունդն էլ նորա յետեւից: Եւ Մամիկոնեան տոհմից Մուշեղն եւ կամնարական Ներսէհը ծովի հիւսիսային կողմից էին գնում դէպի կարնու գիւղերից մէկը, որի անունն Արծաթի էր, ուղենալով մի փոքր հանգչել 'այնտեղ'. արտ քաղօղներն այն տեղերում աշխատում էին. եւ Պարսիկներն ուղեցան այն տեղի մշակներին վնաս տալ ասելով թէ "ինչո՞ւ մեծ թագաւորի ծառաներին այսպէս թողնում էք ձեր երկրումը ման գալու:": Եւ Խուրսը, որ Արշարունեաց գաւառի Շիրմաց գիւղից էր եւ Շիրակայ տիրոջ գայեկորդին տեսաւ, որ Պարսիկ զօրքից մէկ մարդ ուղում է սպանել կարնեցի մշակներից մէկին. եւ մշակը շուռ գալով մտաւ մի բարդի յետեւ եւ փախաւ սպանողի ձեռքից. եւ Խուրսը յարձակուաւ նիզակով Պարսիկի վերայ եւ հէնց այնտեղ սատկեցուց

նորան ու ազատեց Վարնեցուն սպանողի ձեռքից. Կուչեղն ու Ներսէ՛՛՛ն էլ Խուրսի գործը տեսնելով եւ նկատելով իրենց յետեւից եկողներին էլ, որ այնքան շատ չեն, քիչ մարդով յարձակուան նոցա վերայ եւ շատ արեան լճեր հանեցին այնտեղում ու մնացածներին էլ յետ փախուցին ամօթով. եւ մեռնողների թիւն այնտեղ եօթանասուն եւ երկու մարդ էր: Արբոր պսպիսի յաջող գործի մասին լսեց Հայոց զորավարը, Աստուան փառք տուեց եւ ինքը գնաց Հաշտենքի սահմանները. եւ հասաւ Արշարունեաց գաւառն ու բանակ դրեց Արէզ գիւղում. եւ գոնէ այն գիշերը հանգիստ քունն առաւ. 'միւս օրը' Արէզ գիւղի մարդիկներին իւր զօրքի հետ միասին առաւ ու կէս գիշերին եկաւ 'Պարսից' բանակի վերայ. եւ երկզացիներով պատեց կռուի տեղը. եւ իրենք նետեր արձակելով՝ ահաւոր ձգեցին Պարսից մէջ. նոքա իրար անցնելով իրենք իրենց խփում կոտորում էին. ու լացի յուսահատ ձայներով լցուաւ անօրէնների բանակը. իսկ Հայոց գնդից միայն Վաբաղ Վաբեղեան սեպուհը մեծ քաջութիւն ցոյց տալուց յետոյ արժանացաւ կատարելութեան պըսակին: Աւ Ահհանը թշնամիների կոտորածից վերագառնալով՝ գիշերուայ մնացած մասն էլ հանգստացաւ Շտէ գեղի քամակում՝ այնտեղի գոմերի մէջ. եւ լուսը բացուելուց յետոյ գնաց բնակեցաւ Շտէ գիւղում: Աւ երբ ուղում էր մի փոքր հանգստանալ գիշերուայ աշխատութեան ծանրութիւնից՝ աչքը բարձրացուց տեսաւ, որ ահա՛ հասել է նոցա վերայ Պարսից զորագլուխ Շապուհը: Ահհանը որ զօրագլխի յանկարծակի քշելը տեսաւ՝ հրաման տուեց, շուտով պատրաստուան ինչ 'մարդիկ'

որ կային այնտեղ. առիւծի նման գուռաց՝ թէ «մի մարդ, որ երկու բանից մէկին է հաւատում, անհնար է, որ սխալուի. բայց երկու բանի մէջ, որն աւելի մեծ է, այն եւ աւելի բարձր է ու փափագելի. թող ոչոք չվստենայ եւ չզարհուրի՝ թերահաւատութեամբ. Տէր Աստուածն իւր սիրելիների ձեռքով կարող է՝ մէկով հաղարին հալածել եւ երկուսով բխրերին շարժել:» Եւ երբ նա պատրաստուում էր յարձակուելու՝ նայեց տեսաւ, որ բոլոր Հայերի գունդը Աւետարանի երդումից եւ զօրավարի խրատից երեսները դարձնելով՝ փախան գնացին ամէնքն էլ. եւ մնաց ինքն ու Մուշեղը եւ երեք Կամսարականներն իրենց գայեակների հետ միասին, եւ ուրիշ մարդիկ էլ թուով քառասուն կամ պակաս: Մէկ մարդ ասաց զօրավարին. «Զգո՛յշ եղի՛ր տէր, զգո՛յշ. այսինքն՝ թէ որ հնար կայ իսկոյն փախիր եւ անձդ պահպանէ:» Բայց Աշահան երեսը խաչահանեց ու ասաց բարձր ձայնով՝ թէ «էլ ինձ հիմայ «Զգո՛յշ», միք ասեր. որովհետեւ ես էլ մարդու վերայ յոյս դնելու չեմ. քա՛ւ լիցի. այլ իմ յոյսս միայն Տիրոջս Խաչի վերայ է:» Եւ քաջութեամբ իւր ուխտապահ փոքրաթիւ մարդիկների հետ միասին պատանեց Պարսիկների բոլոր գունդը. եւ բոլորի միջիցն անցաւ դուրս եկաւ միւս կողմը. եւ ինքը՝ «Աշահան» շատ հզօր պատերազմող մարդիկ սպանեց Պարսից զօրքի միջից. զարկին սաստիկ վիրաւորեցին Յիւնեաց հպարտ իշխանի Գդիհոնի թեւի տակը. այն մարդու, որ պարձենում էր թէ ես Աշահանի ու բոլոր այդ Հայերի հետ ո՛չ թէ նետով կռիւ կանեմ, այլ նետիս կոթովը բոլորին կը քշեմ կըցըրուեմ:»

Բայց Վահան զօրավարն իւր գործակիցների  
հետ միասին այն քաջութեան գործը կատարելուց  
յետոյ անհոգս ման էր գալիս. եւ զօրավարի  
ահն ու երկիւղն այնպէս ընկել էր Պարսից զօրքի  
վերայ, որ կարծում էին՝ թէ մէկ էլ այդ Մա-  
միկոնեանի եւ նորա հետ գտնուող մարդիկների  
երեսը տեսնելու լինին, առանց փնասի պրծնելու չեն:

Իսկ Միւնեաց զօրքն իրենց 'Գդիհոն' իշխանի  
փորոտին՝ սաստիկ վատ հոտած լինելու պատճառով՝  
թափեցին. եւ 'մարմինը' եղեգով պատեցին առան  
տարան Միւնեաց երկիրը. երբոր այս տեսաւ Միւ-  
նեաց այրուծին, բոլորը քանդուաւ եւ զանազան  
ճանապարհներով ամենն իւր տեղը գնաց:

Եւ Պարսից զօրքի գլխաւորը Շապուհ, երբոր  
Միւնեաց զօրքի քանդուիլն եւ իւր հակառակօրդ  
Վահան Մամիկոնեանի ահաւոր զօրութիւնը տեսաւ,  
սկսեց սրտմտիլ եւ զարհուրիլ. ինչ կարող էր  
անել արդեօք՝ ինքն էլ չգիտէր, որովհետեւ ասում  
էր՝ "Թէոր լոկ երեսուն մարդով չորս հազարի վրայ  
ընկաւ. եւ բոլորիս սիրտը կոտրեց, այժմ ինչպիսի՞  
վտահաճութեամբ պիտի կարողանանք այնպէս քաջ  
մարդիկների դէմն ելնել այսքան պակասած թուով:  
Զլինի թէ Վահանն այս մօտիկ սահմանակից տեղերից  
օգնականներ առնի եւ չկարողանանք մինչև ան-  
գամ մեր գլուխն ազատել այնուհետև: Եկէք  
շտապով գնանք Հայոց մայրաքաղաքի 'Գուինի'  
կողմերը. եւ շուտով դեսպան զրկենք մեծ թա-  
գաւորին իմաց տալու: " Եւ յսպէս մտածելով հե-  
տեւեալ օրը գնաց Բասեն գաւառը. Ալվար ա-  
սուած գիւղը որ հասաւ, դեռ Հայոց զօրավարի  
ահիցը շուարած մնացել էին, որ Պարսկաստանից մի

դեսպան եկաւ՝ շատ վատ լուր եւ անողջոյն նա-  
մակներ բերելով այն Պարսիկների կողմից, որոնք  
Հեփթաղի անթիւ կոտորածից ազատուել էին:  
Երբ Արեաց աշխարհի յազթուելու մասին տեղե-  
կացաւ գրեթից, մեծ տրտմութեան մէջ ընկած  
վախեցաւ Շապուհ. եւ կանչեց այն մարդուն եւ  
առանձին հարցուց թէ ի՞նչպէս եղաւ, որ այնպիսի  
վախճան եւ կոտորած հասաւ Արեաց գլխին: Գես-  
պանն էլ պատասխանեց թէ «քու հարցնելդ յար-  
մար է եւ հարկաւոր, բայց ինձ համար շատ ծանր  
է այդպիսի վատ բանը պատմել. մանաւանդ այն  
բանը որի մէջ ուրիշ մարդ չէ այնչափ վնասի  
եւ կորստեան պատճառ, այլ միայն Արեաց տէր  
Պերոզը: Առաջինը որ՝ երբ դեռ Պրկանում զօրք էր  
հաւաքում եւ ուզում էր Հեփթաղի դէմ գնալ, ոչ  
մի մարդու չհարցուց թէ արժան է գնալ թէ ոչ:  
Ամէն բերան ազաղակում էր՝ թէ «լաւ է՝ թող  
ինքը Պերոզն այստեղ իսկ սուրն առնի եւ հրամայէ  
մեզ կոտորել քանթէ տանի Հեփթաղի սրովը  
կորցնել տայ: Եւ այնչափ բազմութիւնը թէ՛  
Արիք եւ թէ՛ Անարիք ինչպէս մէկ մահապարտ  
դէպի մահն էին գնում, այլ ոչ ինչպէս պատերազմող-  
ներ դէպի կռուի՝ դաշտը: Երբոր մօտեցան թըշ-  
նամուն՝, Հեփթաղը՝ մարդ՝ զրկեց մօտն՝ եւ ասաց՝  
«Գու ինձ հետ գրով կնքով երդում՝ ունիս արած,  
թէ «քեզ հետ կռուելու չեմ», եւ սահմաններ  
որոշեցինք, որոնցից անցնելու համարձակութիւն  
պիտի չունենայինք՝ թշնամութեամբ իրարու դէմ.  
այժմ՝ միտդ բեր այն խոստումդ եւ յետ դարձիր  
խաղաղութեամբ ու մի՛ մեռնիր. որովհետեւ ես եւ  
ուխտապահութեան արդարութիւնը մէկտեղ ենք

կոուում, իսկ դու եւ ուխտադանցութեան ստու-  
թիւնն էլ մէկ. ուրեմն դու ինձ ի՞նչպէս կարող ես  
յաղթել:»

Պերոզն էլ սաստիկ զայրացած հպարտու-  
թեամբ պատասխան տուեց շեփթաղին եւ ասաց, թէ  
«այս գնդի բազմութիւնը որ դուք տեսնում էք,  
սորա կիսով ձեզ հետ պիտի կռուիմ եւ ձեզ կոր-  
ցնեմ, կիսովն էլ այդ տեղերի հողը, ուրոր դու ես,  
պիտի կրել տամ, որը ծովը թափել, որն էլ այն  
փոսը որ փորել են:», Եւ անզգայ սիրտ ունենալուցն  
էլ չգիտէր նա թէ իւր ծառաների դիակներով  
պիտի լցնէ այն փոսը, որն իւր անձի եւ բոլոր Ա-  
րեաց աշխարհի կորստեան համար փորեց: Եւ իրար  
գալուց ու կռուելուց յետոյ կորաւ ինքն իւր բոլոր  
որդիքների եւ ժողովրդի հետ:»

Այս որ լսեց դեսպանից՝ հրաման արաւ Շա-  
պուհ՝ իւր զօրքին եւ եկան հասան Պարսկաստան.  
բայց Կամսարականների կանանցը թողեց Շապուհ  
այնտեղ թողբերդում, եւ յանձնեց բերդակալին  
պատուիրելով մեծ զգուշութեամբ պահելու քրիս-  
տոնեանների օրէնքին յարմար:

Եւ Հայոց զօրավար Աշահանն եկաւ այնուհե-  
տեւ Աղարշապատ քաղաքը հաւատարիմ եւ ող-  
ջախորհուրդ ուխտապահ Հայ նախարարների հետ  
միասին. եւ կատարեց սովորական ուխտերն ու պա-  
տարագները Կաթողիկէ սուրբ եկեղեցու մէջ. նա  
նորոգեց մեծ շքեղութեամբ այդ իւր նախնեաց  
հնացեալ գործը. այստեղից եկան մտան Գուին մայ-  
րաքաղաքը եւ միքանի օր մնացին այնտեղ ու սպա-  
սում էին տեսնին թէ Աստուած ինչ կ'առաջնորդէ:

## Գ Լ ՈՒ Խ Լ .

Հ Ա Ղ Մ Ա Ն Թ Ի Ն Լ :

Ղաղարչը թագաւոր է լինում Պարսից (481 թ) : 'Նիխորը գալիս է Հայաստան ու խտապահանքին խաղաղութեամբ նստեցուցուց : 'Նուարասիկի գաղնադրութեամբ Ղազանի երեք գլխաւոր պայմաններն ընդունում է 'Նիխոր (485) : 'Նիխորը վերագտնում է Գուռը գաղնադրութիւնն հաստատել տալու : Ղազան եւս կարճ ժամանակից յետոյ գնում է Գուռը :

« Բարեկէք եւ բացցի ձեզ . խնդրեցէք եւ սացի : »

Չարար .

Չարարաւուխտը լսելով Ղրատտանում թէ Պերոզն սպանուել է, շուարած մնացել էր . եւ երբ եկաւ հասաւ Գուռը, նորամտ հաւարուան Պարսից մեծամեծներին մնացորդները . խորհուրդ արին իրենց մէջ թէ ո՞ւմ կարող են թագաւորութեանն արժանաւոր ճանաչել . եւ միաբանութեամբ հաստատեցին ընտրութիւնը Ղաղարչի\* վերայ, որը Պերոզ թագաւորի եղբայրն էր . եւ վկայութիւններ տալով բազմեցուցին նորան Պարսից թագաւորութեան գահի վերայ :

Այնուհետեւ խորհուրդ արաւ Չարարաւուխտը 'միւս' մեծամեծներին հետ եւ Ղաղարչի թագաւորութեան երկրորդ օրը՝ խօսեցաւ թագաւորի առաջնայսպէս՝ . « Ամենից յատաջ ասում է, թէ ինչպէս Հայաստանի նման մեծ երկիրը հնազանդութիւնից հրաժարուել է . եւ այն մարդը, որ Պերոզին պիտանաւորութիւն չճանաչելուց՝ Արեւաց ծառայութիւնից հեռացուց այնպիսի մի երկիրը, ինչքան վնաս էր տալիս, այդ ամէնին յայտնի է . 'գիտէ' եւ Շապուհ Միհրաւնը . թէ որ ուղում էք լսել, նա ինքը ձեզ կ'ասէ : »

\* Սերէոսն ասում է « Աւաստ, որդի Պերոզի : »

Հարցուց Միհրան Շապուհին Հայոց գործերի մասին. և տեղովը լսեց՝ Վաղարշ՝ Միհրանի, Հաղարաւուխտի և ուրիշ բոլոր պարսիկ մեծամեծների բերանից ինչ որ պէտք էր՝. և շուտով Նիխոր Վըշնասպգատին, որ հեղ խելացի և աշխարհաշէն մարդ էր, շատ երևելի մարդիկների հետ ուղարկեցին Հայաստան. ինքը թագաւորը պատուիրեց նորան թէ «գնա՛ Հայաստան և ինչ կերպ որ կարելի է, շատ քաղցրութեամբ և սիրով՝ Վահանի ու նորա ընկերների ուղածին համաձայն՝ նուաճէ այն մարդիկներին և Արեւցը հնազանդեցուր:»

Նիխորն եկաւ Հայաստան և չվտահացաւ Հայոց տեղերը մանել, այլ դադար առաւ Հեր դաւառի Նըւարսակ գիւղում. Վահանի մօտ պատգամաւոր ուղարկեց Խորհրդեան դպիր Շապուհին և ճուարչացի Միհրովշնասպին, որոնց ձեռքով իմաց տուեց նոցա թէ «Վաղարշ թագաւորից հրովարտակ ունիմ՝ ձեր վերայ ձեզի խաղաղութեամբ նուաճելու: Աւրեմն վերկացէ՛ք, եկէ՛ք և լսեցէ՛ք. և ինչպէսոր ձեր սրտի ուղածն է և կրցանկաք, ընտրեցէ՛ք ինչոր բարին է:»

Վահանը որ այս բոլոր բաները լսեց՝ հաւաքեց իւր մօտ բոլոր հաւատարիմ ուխտապահների գունդը. և հրամայեց Նիխորի կողմից եկածներին, որ բոլորի առաջն ասեն Վաղարշ թագաւորի պատգամը. և ասաց պատգամաւորներին թէ վաղը նոցա պատասխան կուտայ: Միւս օրը նախապէս իրար հետ խորհուրդ արին և Մամիկոնեանն սկսեց խօսել և պատասխան տալ Նիխորի խօսքերին թէ՛ «մեր ապստամբութեան բաները շատ են և կարեւոր. և մեզ հնար չկայ գրով կամ պատգամով ամէն բան

Հասկացնել. բայց երեք բան ունիմ՝ ձեզ ասելու, թէ այս երեք բանիս այնպէս պատասխան կուտաք, ինչպէս ես եմ կամենում եւ կարող էք տալ մեզ թագաւորի գրովն ու կնքովը, ամէն բան ինչոր ասելու լինիք, ինչպէս պէտքն է կրկատարենք եւ ձեր խօսքերին կըլսենք, ինչպէսոր մեր նախնիներն էլ լսած են. եթէ չհամաձայնիք յանձն առնել եւ խստութիւն ցոյց տաք, դուրս կ'երթանք այս երկրից եւ կրկորինք. եւ 'աւելի' ուրախութեամբ կըմեռնինք, քանթէ պարսիկ մարդու առաջը կըխոնարհեցնենք մեր գլուխը:»

«Առաջինը՝ թէոր մեր հայրենի բուն հաւատք թող կըտաք մեզի՝ պաշտելու՝. եւ հայ մարդուն մոգ չէք դարձներ. եւ մէկին գահ ու պատիւ չէք տար մոգութեան համար. եւ կրակարանը դուրս կըտանիք մեր երկրից. եւ չէք թողնիր, որ այսուհետեւ էլ կեղտոտ ու անպիտան մարդիկ թշնամանեն մեր եկեղեցին, ինչպէսոր մինչեւ հիմայ լինում էր:»

«Երկրորդ՝ եթէ բռնակալի նման չվարուիք մարդուս հետ. այլ արդարութեամբ կարողանաք ջոկել լաւին ու վատին. ընտրել պիտանուն եւ անպիտանին. իմանալ ազնուականին եւ ռամկին. լաւերի շարքն ընդունել քաջ, պատուական եւ օգտակար մարդուն. սիրել օգուտ տուողին եւ ատել անօգուտին. հասկացող մարդիկներին մօտիկ պահել եւ խորհուրդ անել նոցա հետ. եւ անմիտներին չմօտեցնել, բացի այն՝ հրապարակի 'գիւանի' միջից էլ դուրս քշել:»

«Եւ երրորդ՝ ովոր Արեաց տէրն ու երկրի թագաւորն է, ուզում ենք, որ նա իւր աչքերով տեսնի եւ իւր ականջներով լսէ եւ անձամբ ճանաչէ

լաւին ու վատին: Այն թագաւորը, որ իւր առողջ աչքերովն է նայում եւ աննախանձ լսողութեամբ է ականջ գնում եւ արդար բերանով է խօսում, նորա ծառաներն օրէցօր կեանք առած կ'աշխատին բարին աճեցնելու, որով երկիրն էլ շէն կը լինի եւ տէրն էլ կը պայծառանայ:»

«Ուրեմն եթէ այս ամէնն այսպէս խոստանալ կարող էք, խոստումներդ էլ գրով ու կնքով հաստատած կուտաք մեզի, այն ժամանակ կանչէ՛ մեզ, կուգանք յօժարութեամբ եւ կը լսենք ձեր խօսքերին եւ թագաւորի հրամանն էլ, ինչոր ասելու լինի, կ'ընդունենք:»

Այս ամէնը խօսեցաւ 'Վահան' Խորհրդեան գլխի Շապուհի եւ ճուարչացի Միհրվշնասպի հետ եւ ճամբու գրեց նոցա. ուղարկեց եւ իւր ուխտակիցների միջեց Յաշուր Արծրունուն եւ Սահակ Կամարականին՝ երանելի Արշաւրի որդուն, եւ Վասուուրտ Կարբայինին եւ Առաւան Աղբիւրկացուն եւ Պաճոկին մարդպետական գնդից:

Նիխորն երբոր տեսաւ այն Հայերին, որոնք Վահանի կողմից գնացին նոցա մօտ, ուրախ եղաւ. եւ հրամայեց ընթրիքին 'հրաւիրելու'. եւ մեծ շնորհակալութեամբ ու սիրով ընդունեց նոցա՝ իւրաքանչիւր բաժակի ժամանակ միշտ յիշելով քաջ Մամիկոնեան Վահանին: Կէ առաւօտը Պարսիկների ամբողջ ատենը ժողովուաւ Նիխորի առաջը՝ թէ՛ աստուածուրաց մարգիկ, թէ՛ Նիխորի պատգամաւորները եւ թէ՛ հայ նախարարները. բոլոր ժողովի առաջ հրապարակաւ լսեց Նիխոր Վահանի պատգամը եւ ուրախացած մի նամակ գրեց Վահանին այս օրինակով: «Լսեցի, ասում է, պատգա-

մաւորների բերանից բողոր քու խօսածներդ. վեր կաց, առանց քաշուելու եկ ինձ մօտ. Արեւաց տէրն եւ բողոր Արեւաց մեծամեծները խօսք են տուել, որ բողոր քու ուղածներդ եւ ուրիշ ինչ էլ որ ասելու լինիս՝ լիովին տան քեզ եւ կատարեն:»

Եւ այն նախարարներին, որ Աշահանի կողմից եկել էին, պատիւ արաւ ու արձակեց իւր պատգամաւորների հետ միասին: Եւ պատգամաւորները տուին Աշահանին Նիխորի նամակը եւ շուտով յօժարացուցին նորան գնալու:

Ճանապարհ ընկան այնուհետեւ Հայոց զօրավար Աշահանն եւ բողոր ուխտապահները եւ շատ մարդիկ նոցա հետ՝ եւ եկան Արտաշ գաւառի Եղինդ գիւղը. այնտեղ զաղար առաւ ինքը՝ Աշահան՝ իւր հետի մարդոց հետ եւ մարդ զրկեց Նիխորի մօտ եւ իմաց տուեց իւր գալու մասին. եւ պատգամ զրկեց՝ Նիխորին եւ ասում է. «Թէ որ գու հարկաւոր կըհամարես, որ ես գամ քեզ տեսնելու, զրկէ՛ ինձ մօտ միքանի մեծամեծ մարդիկ ցեղով երեւելի Պարսիկներից, որ գան մնան այստեղ իմ՝ մարդիկներինս մօտ, մինչեւ որ ես գամ տեսնիմ քեզ եւ խօսելով իրար հետ իմանանք թէ ինչ կայ անելու:»

Նիխորը լսելով Աշահանի գալու մասին եւ իմանալով նորա կամքը՝ շուտով ուղարկեց Շիրակայ տէր Ներսէհ Ամասրահանի մօտ Ատրպայական Շահապապ Բաղէին եւ Հայոց հաղարապետ Ահհապահանն եւ Միհրանի եղբայր Ներշապուհին եւ էլի ուրիշ հինգ մեծամեծ Պարսիկների:

Աշահանը որ տեսաւ՝ այն՝ մեծամեծներին, ուրախ սրտով ընդունեց նոցա. եւ այն օրը միասին

ուրախութիւն արին. եւ միւս օրը թողեց այն ութը մարդին իւր հաւատարիմների մօտ ու ինքը ճանապարհ ընկաւ իւր գնդովն ու պատրաստութեամբ գնաց Նիխորին: Եւր մօտեցան այն գիւղին, ուր Նիխորն էր, հրամայեց զօրքին գրօշակները բանալ ինչպէսոր պատերազմի պատրաստուելիս սովոր էին անել. եւ հրաման տուեց պատերազմական փողերը փչելու, որից Նիխորի զօրքի մարդիկը վախեցան եւ կարծուժ էին թէ Ղազանը նոցա վնասելու է եկել խարէութեամբ: Եւ Նիխորը մեծամեծ մարդիկներ զրկեց նորան գիմաւորելու եւ ասելու Մամիկոնեանին՝ թէ «գու Պարսիկների սովորութեամբ չես անում՝ այդ բանը, այլ մի նոր բան ես երեւում՝ մեր աչքին՝ որովհետեւ ճանապարհ գնալիս միմիայն Արեաց սպարապետը կարող է Արեաց բանակը մտնել փողեր փչելով. եւ ուրիշ մարդ Պարսիկների մէջ իրաւունք չունի այդպիսի համարձակութիւն անելու: Ղազանն էլ պատասխան տուեց եւ ասաց. «Գեո մէկ յառաջ ինձ Արեաց թագաւորին հպատակ շինէ, յետոյ առանց քու ասելուդ՝ կարծեօք ես ինքս էլ լաւ գիտեմ՝ Արեաց երկրի կարգն ու վայելուչը:»

Յետոյ ինքն անձամբ եկաւ տեսութիւն արաւ Նիխորին դեռ Ատենի ժամանակ. (որովհետեւ արեւի ծագելու ժամանակն եկաւ Մամիկոնեանը Նիխորի մօտ): Եւ Նիխորը Ղազան Մամիկոնեանին եւ նորա ուխտակիցներին տեսնելով՝ տուեց նոցա Պարսից թագաւոր Ղաղարչի եւ բոլոր մեծամեծների օղջոյնը: Եւ Ղազանը Պարսից թագաւորի եւ Գրան մեծամեծների օղջոյնը որ լսեց, շնորհակալութեամբ ընդունեց: Նիխորն հրամայեց Ղազանի զօրքի բոլոր

մարդիկներին ներս թողնել. նմանապէս հրամայեց  
Պարսիկ մեծամեծներին եւս ներսը մնալ Ատենի  
ժամանակ. եւ սկսեց խօսել Վահանի հետ ու ա-  
սաց. «Պատերազմի գործը քաջութեամբ եւ մա-  
նաւանդ խելքով ու իմաստութեամբ միայն կարող  
է գլուխ գալ. դու այդ երկու բանն էլ քու ան-  
ձիդ մէջ լրիւ ցոյց տուիր բոլոր Արեաց աշխարհի  
առաջ եւ ճանաչեցուցիր. որովհետեւ սակաւածիւ  
մարդիկներով շատերի հետ կռուելով քաջութիւնդ  
ցոյց տուիր. եւ կռիւ անելու կամ չանելու ժամա-  
նակը գիտենալով քու իմաստութիւնդ երեւեցուցիր:  
Արդարեւ թէ որ այդ երկու բանը քու մէջդ ե-  
ղած չլինէին, ի՞նչպէս հնար կրլինէր այդքան փո-  
քրածիւ մարդիկներով այնքան անթիւ պատերազ-  
մող մարդիկների բազմութեան դէմն ելնել ու եր-  
բեմն յաղթել սաստիկ եւ երբեմն վախեցնել ու  
նեղը ձգել: Այս պատճառով՝ ես քու այդպիսի  
գործդ ու խելքդ միտք բերելով՝ շատ լաւ իմա-  
նում եմ այն բոլոր պատասխանները, որ դու տա-  
լու ես մեր ամենմէկ խօսքին, ինչոր լսելու ես  
մեզանից: Որովհետեւ՝ թէ որ քու ապստամբելուդ  
մասին հարցնելու լինինք թէ ի՞նչպէս համարձակե-  
ցար մտքէդ անցնել՝ թողթէ եւ անել, դու պա-  
տասխան պիտի տաս եւ ասես թէ՛ Պերողի չճանա-  
չողութիւնն էր որ ստիպեց ինձ մահն աչքս առնել:  
Եւ Պարսիկների միջից ոչմէկը չի կարող քեզի  
մեղադրել: Այժմու Արեաց տէրը եւ բոլոր մե-  
ծամեծները միշտ այդ բանն են խօսում միայն՝ միտք  
բերելով Պերողի անհաւան եւ անբարհաւաճ քար-  
քր: Գու թէ որ յօժարութեամբ կընուածուիս եւ  
քու նախնեացդ բնիկ տիրոջը ծառայութիւն կ'անես

և և կրմոսանաս ինչոր մեր և և ձեր միջից վատ բաներ և զան, ու մէկդի կրթողնիս այդ 'ամէնը', այստեղ Հայաստանում կ'աց, մինչև որ թագաւորն ինքը 'Հաստատէ' և և ուղարկէ քեզ 'այդ դաշինքը', և և երբ բարով Արեաց տիրոջ մօտը գալու լինիս, ամէն բան ինչոր բարին և և արժանն է՝ քեզ կամ ումոր դու կամենաս, տայ սիրով և և յօժարութեամբ կատարէ:,,

Եւ վահանն այս լսելուց յետոյ պատասխան տուեց ու ասաց. "երբոր բարին սիրող, լաւը ճանաչող ու աշխարհքը շէնացնող իշխաններ է տալիս Աստուած, տկարամիտ մարդս պիտի Հասկանայ, որ աստուածային այցելութիւնն Հասել է: Մենք տեսնում ենք քեզ, որ յօժարութեամբ սիրող և և բարին. իսկ ինչոր Պերողի Համար ասացիր թէ առանց ընտրողութիւն անելու ընդունում էր իւր Հպատակներին, 'գորա Համար' բաւական Համարութիւն թող քու տիրոջ խօսքերը. և և շնորհակալ եմ Աստուծոց, որ ինձ նեղութիւն չէք տալիս Հարցմունքներիդ Համեմատ պատասխաններ 'տալու': Իմ բոլոր տրտունջս Պերողի վերայ էր, թէ ինչպէս միշտ խաբում էին նորան այնպիսի մարդիկ, որոնք բոլոր սրբասէր մարդիկներին ատելի էին և և իրենց աղտոլի գործերի պատճառով՝ երկրից փախած, սարերը թափառող, աւազակապետ, արիւնապարտ, հացկատակ, բանսարկու, խաբերայ, դատարկախօս, անհաշտ և և ռամիկ մարդիկ. և և գալիս ընկնում էին մոխրի վերայ և և դուք էլ նոցա ուզածը տալիս էիք և և ճանապարհ էիք ձգում՝ դահ, պատիւ, տուն տեղ ու մեծութիւններ բաշխելով նոցա. և և այնպիսի խաբւերայ մարդիկ տեսնելով որ խելքն ու քաջութիւն

նը չէ, որ մարդուս կեանք ու մեծութիւն է տալիս, այլ սուտ վաճառականութիւնը մոխրով, հոգս էին քաշում միեւնոյն բանը սովորեցնելու եւ իրենց որդւոցը. այս պատճառով Հայաստանից պակասել էր եւ կորել միանգամայն աշխատանքի եւ մտածութեան հոգին, քաջութիւնը, աղնուականութիւնը, արդարութիւնը: Գուք Արիքդ էլ այդ ամէնը նկատելով եւ չհասկանալով թէ “նորքա ոչինչ ուսած չեն, չեն հասկանում, մեղադրելի չեն, բոլոր վատ եւ յետնեւլ մարդիկների համար Հայերին էիք օրինակ բերում, նախ Ասորիներին (էիք նմանեցնում”, յետոյ՝ վհատածներին, յետոյ քանդուածներին եւ յետոյ անգամայոյժներին: Քայց սոցա նման մարդ հէնց ձեր գարշելի հացկատակների ջոկն էր, որ մինչեւ անգամ չէր էլ ամաչում ու գետին մտնում. նոցա համար այդպիսի լուրը մինչեւ անգամ խնդութիւն էր համարուում: Այլ նա որ մարդ էր եւ երեսին ամօթ ունէր ու այնպիսի խօսքեր էր լսում Արեաց տիրոջից, չէթէ մեկ կամ երկու անգամ միայն, այլ տասն անգամ էլ որ պատահելու լինէր եւ միշտ նոյն բանը լսէր, տասն անգամին էլ արժան կը համարէր մեռնել: Այս պատճառով մենք էլ երբոր համարձակութիւն առանք այս բանը մտքերիցս անցնելու, թէպէտ մտածեցինք երկրից դուրս գնալ գլուխներս առնել կորչել, լաւ գիտենալով, որ մենք այնքան զօրքի բազմութեանը դէմ կենալ չենք կարող. բայց յետոյ այս էլ մտաբերեցինք, որ եթէ միանգամայն թագուն վերկենանք վախեցածի պէս գնանք՝ աւելի հաստատ կերպով կը ժառանգենք այն վատութեան անունը, որ մեզ վերայ կար (եւ կ'ասէիք) թէ մար-

դիկն յիրաւի այնպէս յետին եւ անպիտան էին, որ կորան եւ անհետ եղան ու ոչ մի տեղ չեն երևում. ուստի մենք որոշեցինք՝ յառաջ մեզ ճանաչեցնել եւ յետոյ կամ մեռնել կամ կորչել: Այս թող ապացոյց լինի ձեզ. փորձեցէ՛ք այն մարդիկն երին էլ, որոնց Պերողն իւր թագաւորութեան միջոցին մի ժամանակ մոգութեամբ տանուտերութիւն է տուել եւ հիմայ գահ ու պատիւ ունին եւ ամենմէկը մի դաւառի իշխան է եւ ձիու, ղէնքի ու զօրքի տէր. հրաման տուէք, որ միասին ժողովուին ամենքն իրենց զօրքով եւ մենք էլ այս փոքրաթիւ մարդիկներով, որոնց դուք լաւ ճանաչում էք, որ ոչ տուն ունին, ոչ ծառայ, ոչ զօրք եւ ոչ տանուտիրութիւն. եւ դուք Արիքդ առժամանակ միք օգներ եւ Հայաստանը մեզի ու նորանց թողէ՛ք եւ ովոր կարողանայ միւսի ձեռքից հանել, նորան տուէք՝ երկիրը՝ եւ թող ձեզ հպատակի:»

«Բայց՝ լուռ մնալ եւ բազմութեան օգուտը չխօսել անհնար է. եւ որովհետեւ մի մեծ երկրի մասին է խօսքս, որ մեր գլխից անցանք եւ Արեաց տիրոջիցը բաժանուանք, այդ երեք բանը պատգամաւորների ձեռքով ուղեցի քեզանից. մեզ միայն այդ խնդիրքն է պէտք, թող շնորհուի մեզ թագաւորի գրոյն ու կնքովը, այնժամանակ դուք մեր բնիկ տէրն էք եւ մենք էլ ձեր բնիկ ծառան. եւ այն յանցանքին էլ, որ ձեր բռնութիւնից մենք ստիպուանք գործել, թողութիւն տուէք:»

Նիխորը լսելով Աշահանից այսպիսի մի բացատրութիւն Ատենի առաջն ասաց թէ «Աշահանի խօսածը արդար է եւ իրաւացի, եւ այս նուաճման աւետիքը ինձ միտթարեց եւ ուրախացուց:»

Եւ այն օրն հրաման արաւ, որ Վահանը բոլոր ուխտակիցների հետ իւր մօտ ուրախութիւն անեն եւ ուխտանենդներին եւ ուրացողներին ամօթալից դուրս հանեն ընթրիքից:

Միւս օրը բոլոր մարդիկ ժողովուան Հրապարակ: Նիխորն հրամայեց քանի դեռ ինքն առանձին էր՝ որ Մամիկոնեան Վահանին ներս տանին սենեակը. եւ խօսելով նորա հետ մենակ երկար ժամեր երկրի կարեւոր պիտոյքների վերայ՝ երկուսը միասին եկան Ատենի տունը: Նիխորն հրամայեց բոլոր Վահանի հետ եկածներին՝ նախարարներին եւ ուսմիկներին եւ Պարսից մեծամեծ մարդիկներին՝ գալ նոցա մօտ Ատեանը. բայց այն մարդիկներին, որոնք Պարսիկներին էին հաւատարիմ, հրամայեց, որ նուիրակները չթողնին մինչեւանգամ դռանը մօտենալու: Եւ այնտեղ պէտք էր տեսնել մոխրապաշտների երեսի վերայ հէնց նոյն մոխրի կերպարանքն իջած եւ ամօթով լցուած. եւ նոցա բոլորի գոյներն արդարեւ թռել էին՝ եւ երևում էին նորա՝ մաշուած ու խայտառակուած. մեծ գնով գնել էին ցանկանում ապստամբութեան անունը, թէ որ հնար լինէր, բայց այդ ոչոք չէր տալիս նոցա. որովհետեւ այնպիսի անձանօթներից ովոր ուզում էր Ատեանը մտնել՝ ասում էր նուիրակներին թէ ապստամբների գնդից եմ:

Եւ Ատենի մէջ նոյն խօսքերը կրկնելով Վահան Մամիկոնեանն սկսեց միւս անգամ խօսել Նիխորի հետ եւ ասաց. «Ինչոր թէ պատգամաւորներով, թէ գրերով երէկ ու այսօր դիմադէմ խօսեցանք քեզ հետ, դու թագաւորի հրամանովը խօսք տուիր՝ այն ամէնը՝ մեզ տալու. առանց այդ՝

մեզ անկարելի է ապրել եւ ծառայել ձեզի: Քրիստոնէական հաւատի հաստատութիւնը, մոգութեան եւ կրակատունների վերցուիլը Հայաստանի միջից, եկեղեցու պայծառութիւնն ու կարգերը՝ մեր ուզածի պէս թագաւորի կնքովն հաստատէ՛. ուրիշ ինչ էլ որ գրած է նամակի մէջ՝ նորա մասին՝ երկարել պէտք չէ քու առաջդ. գահի, պատուի եւ շքեղութեան համար էլ ամէնմէկիս ծառայութեանը նայելով տուէ՛ք անտրտունջ եւ միք զրկեր:»

Այս ամէնն ակործութեամբ յանձն առաւ Նիխոր. Հայոց բնիկ այրուծին ուզեց Վահանից. «Պատրաստէ, ասաց, շուտով եւ ուղարկէ՛ Գուռը. որովհետեւ Պերողի որդին Զարեհը Արեւաց վճռին դէմ է կանգնել եւ գունդը գեռ պատրաստուում է նորան կորցնելու համար:»

Եւ բաժանուան իրարուց եւ ճանապարհ ընկան խաղաղութեամբ. Նիխորը՝ գնաց՝ թագաւորի Գուռը, Հայոց զօրավարն էլ Գուին:

Վահանն Հայոց այրուծին պատրաստեց եւ ուղարկեց Գուռը Վրեն Վանանդացու ձեռքով. ուղարկեց եւ իւր եղբօր տղին՝ Վասակ նահատակի որդուն Գրիգորին: Նոքա վրայ հասնելով պատերազմին եւ երկու գունդն իրար դէմ դուրս գալով, Զարեհի գունդը փախստական եղաւ: Այնտեղ Գրիգոր սեպուհ Մամիկոնեանը մեծ քաջութիւն ցոյց տուեց եւ յայտնի եղաւ զօրավարի եւ բոլոր զօրքի առաջ:

Իսկ՝ Վահանն եւ ուխտակիցները՝ գետի ափին որ հասան, տեսան որ Արտաշատի կամուրջը քանդուած է. եւ անցնելու տեղ չգտան. բայց Վահան քաջ զօրավարը մօտենալով գետի ափին մի տեղի

երևար խաչ հանեց մտաւ դէտը եւ ինչպէս մի շատ  
ճանճաղ տեղից՝ խաղաղութեամբ անցաւ ջրի այն  
կողմը. եւ այնտեղը բոլոր գնդի համար ապահով  
անցնելու ճանապարհ հղաւ: Յետոյ մտան Գուին  
մայրաքաղաքը, շնորհակալութեան պատարագն անել  
տուին. յառաջ աղքատներին, ինչպէս սովոր էին,  
տուրքեր բաժանեցին. յետոյ իրենք ուրախութիւն  
արին: Միքանի օրից յետոյ 'Ահահանն' շայտց այրու-  
ձին ժողովեց եւ գնաց Աղարշ թագաւորի մօտ:

## ԳԼՈՒԽ ԼԱ.

Վահանի մարգարանութիւնը:

Վաղարշը հրապարակաւ գովում է ուխտապահների քաջութիւնը. ներում է ապստամբութեան վնասը. Վահանին Մամիկոնեան տանուտէրութիւնն ու Հայոց սպարապետութիւնն է շնորհում եւ պատուով արձակում է Հայաստան. (485.)  
Վահանի միջնորդութեամբ կամսարականներին էլ շնորհում է տանուտէրութիւն: Ընդեկանը գալիս է Հայաստան Մարզպանութեան եւ կարճ ժամանակից յետոյ վերադառնում է: Ընդեկանի յորդորմամբ Վաղարշը մարգարան է նշանակում Վահանին. (486 թ. ուին.) Յովհան Մանգակունի կաթուղիկոսը դուին յաղաքի Մայր եկեղեցու մէջ մտղթանք է կատարում եւ ճառ ասում այս առթիւ:

« Բազում ինչ է սրբութիւն սատար լինել անսարութեան, որպէս ազթթ՝ գիտութեան եւ սէր սուրբ՝ միտքան սգոհց: »

Թագաւորն եւ Պարսից մեծամեծները Վահանի <sup>շարքս.</sup> գալը որ լսեցին. շուտով ժամ նշանակեցին, եւ 'Վահանը' ներկայացաւ թագաւորին:

Վաղարշը Մամիկոնեան Վահանի առողջութիւնն հարցուց. եւ ուրիշ աւելի բան չհարցուց այն օրը. միւս օրը մեծ Ատեան 'ժողով' եղաւ շատ մարդիկ ներով լիքը: Վաղարշ խօսել սկսեց Վահանի հետ. « Լսեցի՞ք, ասում է, բոլոր քու խօսածներդ Նիխորի հետ թէ պատգամաւորների բերանով, թէ գրով եւ թէ անձամբ: Պերողի ամբարտաւանութիւնը թէ որ միայն քեզ կորուցած լինէր Արեւաց ձեռքից՝ էլի թեթեւ կը լինէր այդ վնասը. դու մէկ ծառայ էիր, թէ որ կորչէիր քու տեղդ գուցէ ուրիշը գտնուէր: Բայց նա 'Պերող' անթիւ լաւ մարդիկ կորուց, որոնց տեղն այսօր ուրիշ մարդ չկայ: Թէպէտ դու այսօր արժանի էիր հարցափորձի եւ պատժի եւ չարաչար մահուան, բայց որովհե-

այդ բոլոր գործերի պատճառը, որ դու գործեցիր, ուրիշ բան է, ուստի մեր օրէնքը թոյլ չէ տալիս քեզ պատժելու: Որովհետեւ այդ գործը, որ դու գործել կարողացար Պերողի արհամարհոտ եւ կամակոր բարքի երեսից՝ Պարսիկների մէջ շատերը մտածում էին գործել, բայց ձեռքերը չհասաւ, որովհետեւ չկարողացան այդպէս աներկիւզ իրենց անձերը մահին տալ, ինչպէսոր դուք տուիք:»

«Գուք միանգամայն ոչինչ համարելով այս աշխարհը՝ մեռնողները մեռան եւ ապրողներդ էլ՝ եւս առաւել քաջութեամբ կեանք վաստակեցիք: Երանի՛ թէ այն մարդիկը, որոնց Պերողը կորուց, կարողացած լինէին այդպիսի քաջասրտութիւն ցոյց տալ. գուցէ այսօր նոքա էլ ձեզ նման կենդանի լինէին եւ մեր ձեռքը մնացած:»

Պատասխան տուեց Ահահան բոլոր բաղմութեան առաջ եւ ասում է. «Աստու եւ ձեր թագաւորներիդ առաջը երկար խօսելն անվայել է. որովհետեւ ես մեր բոլոր խօսածը, ուզածը եւ գործի պատճառները Նիխորի ձեռքով ցոյց տուի գրով ու կնքով: Գուք մեզ հոգեւոր կողմից էիք վնաս տալիս, որին ո՛չ մեր նախնիքը եւ ո՛չ մենք զիմանալ չկարողացանք. եւ միշտ բողբոսում ենք՝ թէ ձեր հաւատը սուտ է երեւում մեր աչքին, միք ստիպեր մեզի թշնամանել այն բանը, որ մենք կամաւ գիտութեամբ պատուել չենք կարող. որովհետեւ մեր հաւատը սրբութիւն է պահանջում եւ ամէն աղտոյղութիւն, որով մարդուս հոգին կորչում է, մեր հաւատը չի ընդունում եւ չի էլ կամենում: Բացի այն՝ նա մեզ չի արգելում տէրերին ծառայելու եւ հնազանդելու, ինչպէս Աստուծուն: Ա՛պա ցոյց

տուէ՛ք մի մարդ, որն իւր պիտոյութեան կամ կռուի մէջ գործ ու քաջութիւն ցոյց տալու համար պատիւ ստացած լինի. նոցա կեղտոտ գործերը եւ մահապարտութիւնը յայտնի ծանաչում են նոցա գաւառակիցները եւ Հայաստանի այլ մարդիկ. Հայաստանի հասարակ գիւղականներն անգամ խորշում էին նոցա հետ հաց ուտելու կամ գոնէ նոցա մօտիկ գնալու. գալիս էին խարէութեամբ հաւատներդ ընդունում էին եւ կրակը կամաւ պղծում ու ձեզ էլ յիմարի տեղ դնում:»

«Այս պատճառով համարձակ ասում եմ պսօր ձեր առաջը, «Ա՛ւերուցէ՛ք այդ խարէական առեւտուրը Հայաստանի միջից: Գուք մեզանից ինչպէս ծառաներից ձեր տիրական պատիւը պահանջեցէ՛ք եւ գործ, արդիւնք ու հպատակութիւն 'ուղեցէ՛ք'. եւ Աստու նման ամենմէկի ծառայութեանն արժանի հատուցում տուէ՛ք: Եւ այս մեր խնդիրը, ինչպէս թագաւորներին վայել է, գրով ու կնքով մեր վերայ հաստատեցէ՛ք եւ մեզանից ինչպէս ծառայող մարդուց գործ ու հպատակութիւն ուղեցէ՛ք:»

Ազգարչը պատասխան տուեց եւ ասում է. «Ամէն բան ինչոր Ահահանը խօսած է՝ թող շնորհուի մեր գրովն ու կնքովը մինչեւ յաւիտեան: Եւ այդ ապստամբութեան գործը, որ Պերոզի բռնութիւնից այլ ոչ ձեր կամքովը գործեցիք, թող ներուի ձեզ պսօր:»

Եւ արձակեցին Ատեանը: Միւս օրն ուղելով Ահահանին Մամիկոնեան տէրութիւնն ու Հայոց սպարապետութիւնը տալ՝ բաղմեցուցին նորան Մամիկոնեան տէրութեան գահի վերայ, տալով նորան ինչպէսոր իւր նախնիքներն էլ ունէին, Հայաստանի

սպարապետութիւնն եւս: Հայոց միւս ուխտապահ նախարարներին էլ իւրաքանչիւր անձի արժանաւորութեան համեմատ շնորհեցին ինչոր պատշաճն էր:

Եւ երբ մնաս բարով էին ասում Արեաց թագաւորին եւ բոլոր Գրան մեծերին՝ հարցուց Վաղարշն եւ ասում է. «Վահան սպարապետ Հայոց, գո՞հ ես մեզանից. թէ ուրիշ էլ բան պէտք է, ասա՛:»

Վահանն էլ պատասխան տուեց ու ասաց. «Ինչ բարերարութիւն որ մեզ արիր, այն Աստուածը, որ բոլորիս ստեղծօղն է, նա միայն կարող էր եւ նորան էր վայելուչ անելու. որովհետեւ մեր յանցանքը ներեցիք. գահ ու պատիւ տալով մեծարեցիք. մի գլորած կորած երկիր գտաք ոտքի կանգնեցուցիք. բայց այժմ որովհետեւ հարցուցիք, ինչպէսոր իմ մեռելութեանս կենդանացնօղ եղաք, կրկամենայի, որ բովանդակ անձս յարութիւն առնէր, այլ ո՛չ թէ կէսս. որովհետեւ իմ մէկ կէսս տակաւին մեռած եմ տեսնում:» Վաղարշն էլ հարցուց ու ասաց թէ «ասա՛ մեզ այդ ուղածդ բանը, որ իմանանք:» Եւ Վահանն ասաց որ «եթէ հնար լինէր Աամսարականին իւր տանուտէրութիւնը շնորհել, ապա միանգամայն տեսած կը լինէի բոլոր անդամներիս մեռելութիւնը դէպի կեանք դարձած:» Վաղարշը պատասխան տուեց. «Քեզ շատ շարտմեցնելու համար, ասաց, այս անգամին, որովհետեւ ամենից յառաջ այդ պարգևը խնդրեցիր մեզանից, քու սիրուդ համար թող Աամսարականին տրուի տէրութիւնը: Բայց դու այս անգամուայ մեր պարգևից գո՞հ եղիր եւ աշխատիր ամենայն ուժով այսուհետեւ տիրասէր, արդարամիտ եւ աշխարհաշէն լի-

նելու: Եւ բարով երթաս քու ընտանիքդ եւ քու երկիրդ 'տեսնիս'. եւ ինչ հրաման որ մեղանից հասնի քեզ, պատրաստ գտնուիր 'կատարելու':»

Եւ Վահան Մամիկոնեից տէրն եկաւ Հայաստան բոլոր ուխտապահ նախարարների հետ միասին. եւ դէմ եկաւ սուրբ Յովհան կաթուղիկոսը պատուական խաչի նշանով եւ ճգնազգեաց Գրիգոր նահատակի սուրբ մասունքով. եւ որչունեց նոցա օրհնութեան համբուրով եւ ասաց ուրախայից սրտով. «Թող ուրախանայ իմ անձս այն Տիրոջ շնորհիւ, որ իւր եկեղեցու վերայ նեղութիւն քաշօղ որդւոց քրտինքը սրբեց, նոցանեղութիւնը հանգստացուց, խտակեց զէնքերի կեղտը, լուաց հաւատարիմների հոգին ուխտապահութեան ջրով եւ բոլորին հագուց փրկութեան հագուստը եւ ուրախութեան պատմուճանը:»

Եւ բոլորին օրհնելուց յետոյ՝ եկան Վաղարշապատ, որ այժմ՝ Նոր քաղաք է կոչուում. եւ իրենց սովորութեամբ Վահան սպարապետն եւ ուխտակից նախարարներն իրենց ուխտերն եւ նուէրները կատարեցին՝ յառաջ սուրբ Աթուղիկէ եկեղեցու մէջ եւ յետոյ՝ նահատակեալ կոյսերի տեղերում, հոգալով գլխաւորապէս աղքատների կարօտութիւնը: Նախարարներն ամենքն ուրախութեամբ եկան սուրբ եկեղեցու հոգեւոր վարդապետների հետ միասին ձառերով եւ սաղմոսներ երգելով: Եւ մնացին այնտեղ մի քանի օր. յետոյ Վահանն եկաւ բոլոր բազմութեամբ մտաւ Հայոց բուն մայրաքաղաքը Գուին:

Այն ժամանակներն Հայաստան եկաւ Անդեկան մարզպանը. 'սա' մի խելացի, մտադիր եւ հասկացող

մարդ էր եւ կարող էր ճանաչել եւ ջոկել իմաստունն յիմարից, լաւը վատից. նա հետզհետէ նրկատելով Աշահանի խելօքութիւնն ու հեռատեսութիւնը, արդարաւսոհոթութիւնն, երկրի վերայ հոգս քաշելն եւ սրտի քաջութիւնը՝ յայտնեց Ազղարը թագաւորին լիով ամէն բան:

Անդեկանը Հայաստանից եկաւ անձամբ թագաւորի մօտ եւ ասում է. «Համարձակութիւն եմ առնում յայտնի ասել ձեր առաջը թէ անյարմար է ուրիշ մարդպանի նշանակել. որովհետեւ ուրիշ մարդպանը, որ Հայաստան է գնում, երկու երեք տարի հազիւ կարող է ճանաչել նախ՝ այն երկրի հեշտն ու դժուարը եւ ապա նորա մարդիկների լաւն ու վատը:»

«Եւ Աշահանի պէս մարդու լաւութեան ու յաջողակութեան վերայ նայելով՝ երկար ժամանակ մտածում էի, եւ երկրի ու թագաւորական գործերի համար լաւ համարելով նորան վստահութիւն գտայ ասել, որպէսզի ինչոր արժանն է մտածէք եւ կատարէք:»

Անդեկանից որ լսեց այս ամէնը, Ազղարը շուտով հրաման արաւ հրովարտակ գրել Հայաստան եւ Մամիկոնեից տիրոջն ու Հայոց զօրավարին Հայաստանի վերայ մարդպան նշանակել:

Իսկ Աշահանը թէպէտ Հայ մարդիկներին նախանձոտութիւնը ճանաչելով՝ դժուարանում էր ընդունելու, բայց թագաւորի հրամանին հակառակելու էլ իրաւունք չունէր. եւ երբ հրովարտակն առաւ, շուտով մի անդրուվար ուղեց, որ Աստծոտունը գնայ. այս որ լսեցին քաղաքի մարդիկն առհասարակ թէ՛ նախարարներն եւ ազատները, թէ՛

քաղաքացիք եւ ռամիկները, մարդ ու կին, ծեր ու տղայ — մինչեւ անգամ հարսներն եւ ուրախութիւններից առժամանակ մոռացան իրենց հարսնութեան ամօթն ու դուրս եկան առագաստներից — եւ ամէնքը քշեցին դէպի եկեղեցի. եւ Աստծու տունը բաւական չեղաւ բոլորին իւր մէջն ընդունելու. եւ դուրսը լցուան եկեղեցու սրահներն եւ փողոցներն եւ շրջակայ հրապարակի բոլոր տեղերը:

Եւ այն օրը բարեսէրների համար անյագ ուրախութեան օր էր, իսկ խարդախների համար անմխիթար տրտմութեան օր:

Եւ սուրբ Յովհանն կաթողիկոսն ուրախ սրբտով եկաւ լսողութեան տեղն եւ խաղաղութեան ողջոյնը տալով ասաց:

“Եկեղեցին սիրօղներ, Առաքեալների որդիք, Քրիստոսի արիւնով փրկուածներ. միք ծառայեցներ ձեր հոգիները մարդկանց երկիւղին. տուէք կայսրինը կայսրին եւ Աստծունն Աստծուն:”

“Ահա դուք Եկեղեցին սիրեցիք եւ Եկեղեցին էլ ձեզ սիրեց. թագաւորներին գութ տուեց Եկեղեցին. գայլերին գառ դարձուց. ձեզի փառաւորեց եւ ճշմարտութեան թշնամիներին ամաչեցուց:”

“Իսկ ես այսօր սրտիս ուրախութիւնից եւ մտքիս ցնծութիւնից ձեռքերս երկիւնք եմ բարձրացնում եւ աղաղակում. “Օրհնուի՛ այն Տէր Աստուածը, որ իմ զաւակիս նստեցուց իմ աթոռիս վերայ. եւ ես իմ աչքովս տեսնում եմ այդ: Օրհնուի՛ այն Տէր Աստուածը, որ ինձ արժանի արաւ Եկեղեցու որդւոցը, որ ինձ էր յանձնել, պատուով ու շքեղութեամբ պայծառացած տեսնելու: Ո՞րք են առանց Աստծու գոռողացածները. ո՞ր են արիւն

Թափօղնէրը. ո՞ւր են պոռնկութիւն սիրօղնէրը, ո՞ւր են Եկեղեցին արհամարհօղնէրը, օրէնքը ոտնատակ անօղնէրը, սրբութիւն պղծօղնէրը, մօխբատուն շինօղնէրը, ճշմարտութիւն մոռացօղնէրը, արդարութիւն հայհօղնէրը. փախան, կորան, ամօթով մնացին:»

«Ո՞վ կուտայ իմ գլխիս ջուր եւ աչքերիս արտասուքի աղբիւր, որ նստէի ողբայի այն ողորմելիների կորուստը: Ահա տեսէ՛ք, մեռնում է իգատենչը, բայց միք թօղնիր մեռնելու: Մեղանի առաջ սատկում է արիւն թափողը, բայց շտապեցէ՛ք օգնելու: Մեմէին գլխատուում է, բայց ձեռք տուէք նորան գթութեամբ: Այստեղ, ասացէ՛ք, Սողոմոն չկայ եւ ոչ էլ քարեղէն սալերի վերայ դրուած անթողութեան օրէնքներ: Քրիստոսն է այստեղ. ամէնքդ էլ ծափ տուէք, ո՞վ հեթանոսներ. նա, որ ասաց թէ «եկէ՛ք ինձ մօտ ամենայն նեղեալներ եւ ո՞վոր ծանր բեռ ունի, ու ես կըհանգստացնեմ ձեզ:»

«Նաեւ ձեզ՝ աւելի զօրեղ եւ կարող մարդիկներից պատուէր տուեց թէ դուք՝ որ կարողութեան տէր էք, տկարների տկարութիւնը վերուցէ՛ք: Դուք՝ որ Քրիստոսից հրաւիրուած էք երկնաւոր հացն ուտելու, կանչեցէ՛ք ձեզի հետ կաղերին, կոյրերին եւ հիւանդներին: Տգէտներին համոզեցէ՛ք կաթ ծծել՝ սնունդ գտնելու համար եւ ուրախարար բաժակից խմել սովորեցուցէ՛ք՝ հոգւով անուշաբար ուրախութիւն գտնելու համար: Իսկ դուք, որ այժմ ներսումն էք, խնդրակ ու հրաւիրակ եղէ՛ք դրսի անցաւորներին. դուրս եկէ՛ք հրապարակներն ու փողոցները եւ ժողովեցէ՛ք ամէն հոգւով հիւանդ-

ներին. և մեղքի տակ ճնշուածներին. բերէք նոցա  
այստեղ և ամէնքը բժշկութիւն կրգտնին՝ բերե-  
լով իրենց հետ խոստովանութիւն և արտասուք:  
Ամէն ցաւի համար էլ բժիշկներն յայտնի են ու  
պատրաստ. մաքսաւորին Մատթէոս աւետարանչի  
ու Զաքէոսի մօտ տարէք. պոռնիկներին՝ պոռնիկ  
կնոջ մօտ, որ այսօր Քրիստոսի դուտարն է. աւա-  
զակներին՝ գրախտաբաց աւազակի մօտ. ուրացօղ-  
ներին՝ արքայութեան դռնապան ու փակակալ Պետ-  
րոսի մօտ: Եւ աղօթքից ու արտասուքից աւելի՛  
ուրիշ գին ուզող չկայ:»

«Աւստի՛ աղաչում եմ՝ ձեզ հաստատուն մնա-  
ցածներիդ և տակաւին անգայթներիդ. միք նմանե-  
ցնէր ձեր աղօթքը փարիսեցու աղօթքին, թէ եւ  
բիւրաւոր բարիքների պատճառ եղած գտնիք ձեր  
անձերը. այլ ասացէ՛ք թէ անպիտան ծառաներ ենք:»

«Աւրեմն տայ Աստուած այգպիսի զարդի հետ  
և ևրկնային փափագելի զարդն էլ ունենաք և լսէք  
փառաւորեալ ու ևրանելի բարբառը՝ թէ «եկէ՛ք,  
իմ Հօրս օրհնածները, ժառանգեցէ՛ք ձեզի համար  
աշխարհիս սկզբից պատրաստած արքայութիւնը:»  
Աստուած տայ արժանանանք մենք ամէնքս այդ ու-  
ղորմութեանը՝ Տիրոջ շնորհիւն ու մարգասիրու-  
թեամբը:»

Վ Ե Ր Ջ



## Ց Ա Ն Կ

ԳԼՈՒԽ Ա. — Արշակունեաց անկումը . . . . .	5
Բ. — Հալածանք . . . . .	12
Գ. — Առաջարկութիւն . . . . .	20
Դ. — Պատասխան . . . . .	26
Ե. — Նախարարների զնալը . . . . .	29
Զ. — Նախարարների խորհուրդը . . . . .	36
Է. — Ուրացութիւն . . . . .	43
Ը. — Միաբանութիւն . . . . .	50
Թ. — Օգնութիւն . . . . .	59
Ժ. — Վասակի նենգութիւնը . . . . .	67
ԺԱ. — Աւարայրի կռիւը . . . . .	76
ԺԲ. — Մաքառումն . . . . .	86
ԺԳ. — Ազատութիւն . . . . .	92
ԺԴ. — Հարցափորձ . . . . .	97
ԺԵ. — Վասակի անկումը . . . . .	102
ԺԶ. — Քաջանաներն ու նախարարները . . . . .	111
ԺԷ. — Մոզպետ . . . . .	115
ԺԸ. — Քաջանաների հրատարականը . . . . .	120
ԺԹ. — Խուժիկ . . . . .	127
Ի. — Խորէն եւ Աբրահամ . . . . .	141
ԻԱ. — Նախարարների վերադարձը . . . . .	147

ԻԲ.	— Կանայք . . . . .	153
ԻԳ.	— Գիւտ կաթուղիկոս . . . . .	157
ԻԳ.	— Վահան Մամիկոնեան . . . . .	163
ԻԵ.	— Ազոտամբռութիւն . . . . .	167
ԻԶ.	— Աղոսու կոխը . . . . .	171
ԻԷ.	— Կերսե Հապատի կոխը . . . . .	176
ԻԸ.	— Վախթանգի խարդախութիւնը . . . . .	180
ԻԹ.	— Պերսոյի մահը . . . . .	190
Լ.	— Հաշտութիւն . . . . .	200
ԼԱ.	— Վահանի մարդպանութիւնը . . . . .	213

